

ԱՌ ՉԵՌՆ

ԳՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԿԱՄ

ՀԱՄԱՌՕՏ ԸՆԹԱՑՔ

ՏՐԱՄԱԲԱՌԹԵԱՆ, ՃԱՐՏԱԲԱՌԹԵԱՆ

ՆՐ

ԲԱՆԱՍՏԵՂՆՈՒԹԵԱՆ

ԸՍՏ ԼԸ ՃՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱՄԻՐՈՒԹԻՒՆ

Ե. ՄՈՒՐՄԱՏԵԱՆ



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. ԳԱԳԱՅԵԱՆ

— 1872 —



16

Մ-93

USNOԳՎԱԾ Ե 1961 թ.

ԱՌ ՁԵՌՆ

# ԳՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

100mg.  
808.5

ԿԱՄ

## ՀԱՄԱՌՈՑ ԸՆԹԱՑՔ

ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՐՏԱՍԱՆՈՒԹԵԱՆ  
ԵՒ

ԲԱՆԱՍՏԵՂՅՈՒԹԵԱՆ  
ԷԾՑ ԱԲՁԲԱՆԻ



ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Ե. ՄՈՒՔԵՏԵԱՆ

0905



Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՑՈՎՍԷՓ ԳԱՎԱՅԵԱՆ



A  $\frac{I}{869}$

## ՅԱՌԱՋԱՐԱՆ

Տասներկու տարիէ ի վեր ազգային երիտասարդութեան մէջ եռանդ մը կը տեսնուի՝ բերլու, գովելի՛ եռանդ. և սակայն մեր լեզուն օր ըստ օրէ՛ փոխանակ զարդանալու կընկնի, մեր բացատրութիւնները փոխանակ դիւրանալու կը դժուարանան, մեր ոճը փոխանակ սահուն, յարդարեալ և վայելուչ ըլլալու՝ խելմը նորածին, քմածին բառերու կուտակութեան վրայ կը կայանայ, կամ բառերու ծայրատութեանց և բարդութեանց առաւել կը հակամիտի: Ի՞նչ է ասոր պատճառը. — պատանեկութեան ճաշակին կրթութենէ՛ զուրկ ըլլալը, հմտութեան պակասութիւնը, վարժարանի գրասեղանէն դեռ նոր ելած՝ խումբ մը պատանեկաց գրիչ առնելու, բանաստեղծութիւն գրելու, սէր երգելու, ճառ խօսելու, լրագրի մէջ երեւելու մանկական տհաս փափազը: Սակայն պէ՞տք է բոլոր յանցանքը պատանեկութեան, երիտասարդութեան վրայ ձգել. — ոչ երբէք. Սիրտը՝ նման երկրի արաադրելու միտում ունի, եթէ՛ վարդ տնկես՝ վարդ կը քաղես, եթէ՛ շուշան՝ անոր ծաղկին կ'ըզմայլիս, իսկ եթէ՛ խոպան թողուս՝ սէզ եւ տատասկներ կը բուսցնէ: Ի՞նչ է այս ամուռ-

թեան պատճառը : — Մեր երիտասարդութիւնը  
ընդհանրապէս անառաջնորդ ձգուած է . դա-  
սագիրք և դասատու միանգամայն կը պակսին  
մեզ : Սակաւաթիւ անձինք՝ զորս յականէ յան-  
ուանէ կրնամք համրել՝ շնն բաւեր այսչափ վար-  
ժարանաց , այսչափ պիտոյից՝ զորս դարը կը  
պահանջէ . աւելցուր ասոնց վրայ նաև վերջին  
ատեններս ազգին մէջ երեւցած ամեն տեսակ  
նիւթերու վրայ գրողներ՝ որոնք իրենց ճառած  
նիւթին վրայ ոչ գիտակցութիւն ունին և ոչ  
գաղափար , և ահաւասիկ այն ատեն կիմանաս ,  
ընթերցող բարեկամ , մեր ճաշակին խանդար-  
ման , իմաստակութեան յառաջադիմութեան  
պատճառը :


Այս տողերը կը դրեմք՝ ոչ թէ գրքոյկիս յա-  
ռաջարանը վիճարանութեան ասպարէզ մ'ընե-  
լու , այլ ազգային դպրութեան իր սկսած օրէն  
ի վատթարն դիմելուն վրայ ունեցած կսկիծս  
բացատրելու համար :


Ինչ է ասոր դարմանը . — խիստ պարզ և  
դիւրին . պատանեկաց ուսուցանել հաստատուն  
ուսումն , պիտանի ծանօթութիւններ , տնտե-  
սական , քաղաքական , ուսումնական և գրագի-  
տական . ով որ այս ճիւղերուն մէկը , կամ միւսը  
ազգին մէջ զարգացնելու կաշխատի , ով որ մեր  
արդի մտլար գրութիւնը տեսնելով լաւագոյնը  
և դիւրինը կառաջարկէ ազգին , նա իրաւամբ

իր պարտքը կատարած ըլլալով, հայրենեաց ար-  
ժանի զաւակ կը սեպուի: Պործը նուիրական  
է և ստիպող. ուլ որ կարողութիւն ունի և կանք  
չունի՝ այն վատ է, ուլ որ տաղանդ ունի և  
զայն շահասիրութեան միայն և երիտասարդու-  
թեան կիրքերը ու հարուստին մոլորութիւնները  
զրդուելու կը դործածէ՝ դաւաճան է:

Իսկ ես՝ որ դասատուաց խմբէն համարուե-  
լու պատիւն ունիմ տասն տարիներէ՝ ՚ի վեր՝  
որ իմ դոյզն ծանօթութիւններս պարտիմ տըք-  
նութեանցս և ոչ ումեք, ահաւասիկ վարժա-  
պետացս լըֆրանի, Քօնտիյաքի, Մարմօնթէլի  
խրատները կընծայեմ իմս բարեկամ երիտա-  
սարդութեան: Իրբեւ հեղինակ չեմ հրամայեր  
իրեն, վասն զի այս դործոյս մէջ իրբեւ հեղի-  
նակ երեւելու սնապարծութիւնը չունիմ. ե-  
թէ այս փոքրիկ աշխատութիւնս ցուցնէ իմս  
բարեկամ երիտասարդութեան իմաստակու-  
թեան տղեղութիւնը, ճշմարիտ տաղանդին ար-  
ժէքը. եթէ անոր ցուցնէ ճշմարտին, բարւոյն  
և զեղեցիկին յարգը և զանոնք մեծարել տայ՝  
այն ատեն ես իմ վարձս առած կըլլամ, այն  
ատեն իմ պզտիկ փառասիրութիւնս (եթէ ու-  
նիմ) զոհ եղած կըլլայ, փոյթ չէ թէ համարին  
զիս այս զրքոյկիս հեղինակ կամ թարգման՝

Ե. ՄՈՒՐԱՏԵԱՆ







# Հ Ա Մ Ա Ռ Օ Տ

## Գ Ր Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Ի Ի Ն



### Մ Ա Ս Ն Ա Ռ Ա Ջ Ի Ն



#### Գ Լ Ո Ւ Խ Ա

1. - Ի՞նչ է ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

1. - Տրամաբանութիւնն է որչեւս իւր-  
հետ :

2. - Խորհելու արհեստը մտաց կարող-  
ութեանց միջոցաւ իր գործողութիւնը  
կընէ գաղափարաց վրայ :

3. - Մտաց գլխաւոր կարողութիւն-  
ներն են Ձգողութիւնն և Իրողութիւնն :

4. - Տրամաբանութիւնը կը բովանդա-  
կէ . Ա. գործը . Բ. իրողութիւնն . Գ.  
իրողութիւնն և Դ. իրողութիւնը կամ Բնութիւնն :



2. - ՅԱՂԱԳՍ ԳԱՂԱՓԱՐԱՅ . ԱՆՈՆՑ  
ԲՆՈՒԹԵԱՆՑ ԵՒ ՏԵՍԱԿԱՑ

1. - Գիշուլը մտօք տեսնել է , այսինքն  
դաղափար մ'ունենալ :

2. - Գաղափարները տարբեր բնու-  
թիւններ ունին . եթէ դաղափարը անմի-  
ջապէս մտայ տեսութեան ներքեւ իյնող  
առարկայէ մը դայ՝ կըսուի ընդհանուր . ե-  
թէ մասնաւոր թափանցումներէ յառաջ  
դայ՝ կըսուի յշտ . եթէ անցեալ իրաց  
պատշաճի՝ կըսուի յիշատակ . վերջապէս եթէ  
իրականութիւն չունենայ՝ կըսուի երեւոյթ .  
յանքի :

3. - Գաղափարները զանազան տեսակի  
կը բաժնուին՝ ըստ ընդհանուրի , ըստ ընդհանուրի կամ  
ըստ բնութիւնի :

1. - Գաղափարները ըստ առարկայի  
նկատուելով կըսուին նիւթիկ ( physique ) ,  
բնական կամ վերջին , ընդհանուր կամ  
հատուկ :

— Նիւթիկական գաղափարները նիւթիկ-  
բու կը պատշաճին , ինչպէս , երկր , ընդ .  
— բարոյականները բարոյական իրաց , ինչ-  
պէս . դիւրեւանքի , հարստութիւն . — վե-  
րացեալները վերացական իրաց , ինչպէս .

ժամանակ, պարտաւոր . — անհատականները՝ անհատներու, ինչպէս, կէտեր, Պարտեւ, Հարկ . — ընդհանուրները միևնոյն տեսակէ ամեն անհատներու կը սլատշածին՝ ինչպէս, Տարրիկ, Կարմիր :

2. Գաղափարները ըստ ծագման նըկատուելով՝ կ'ըսուին զգուշ, վերցեւ, վերցեւիկ կամ եկամտ, ցնորակ կամ արտարակ :

— Զգալի գաղափարները զգայարանաց իջոցաւ կուգան մեղի, ինչպէս, Երան, Գրան . — վերացականները՝ վերացմամբ կամ աւանց առարկայի, ինչպէս, Բնութիւն, Գեղեցիկութիւն . — վերքերականները՝ մտաց ուղղակի առարկային վրայ ազդելովը, ինչպէս, Կրօն, Կրօն . — ցնորականները՝ մտաց հնարողութեամբ՝ ինչպէս, Կրօն, Կրօն :

3. — Գաղափարները ըստ բնութեան նկատուելով կ'ըսուին, Երան կամ Կրօն, Կրօն . — Գաղափարը յստակ է՝ երբ բաւական կըլլայ իր զցուցած առարկան մեղի կատարելապէս ճանչցնելու, ինչպէս, Կրօն, Կրօն . — մթին կըլլայ՝ երբ իր առարկային վրայ անստուգութիւն մը ձգէ,

ինչպէս , Գրեթե-նիւն . — ճշմարիտ՝ երբ իր առարկային համաձայն ըլլայ , ինչպէս , Գրեթե-նիւն . — սուտ՝ երբ իր առարկային համաձայն չըլլայ , ինչպէս . Գրեթե-նիւն :

4. — Քաղափարաց մէջ երկու բան կայ որոշելու , Տրեթե-նիւն և Իմանալիտ-նիւն :

Տարածութիւնը անհատներու թիւն է որուն կը պատշաճի այս գաղափարը :

Իմանալիտ-թիւնը մասնաւոր գաղափարներուն թիւն է՝ որոնցմէ կը բաղկանայ ամբողջ գաղափարը : Այսպէս . Գրեթե գաղափարին տարածութիւնը Գրեթե-նիւն է . իսկ այս գաղափարին իմանալիտ-թիւնը կազմութեան , կենաց , իմացականութեան եւ այլն մասնաւոր գաղափարներն են :

5. — Ըստ գրագիտութեան՝ գաղափարաց ճշմարտութիւնը կը կայանայ բացատրութեան մտքին հետ և մտքին դատողութեան հետ ունեցած ճիշտ վերաբերութեան մէջ : Քանի մը օրինակ .

Ղափոնթէն կը պատմէ որ՝ երինջ մը , այժմ մը և մաքի մը առիւծին հետ ընկերութիւն ըրին և այժը եղջերու մը որսաց :

Այս իմաստը սխալ է , վասն զի ասանկ ընկերութիւն մը խելքի գէմ է՝ մասնաւոր

երկչոտ ու տկար կենդանիներու համար ,  
 Բայց երբ Լաֆոնթէնը դուռը կաշնիին  
 բերանը արհամարհոտ լեզու մը կը դնէ և  
 խոնարհ եղեգին ալ պարզ և խոնարհ պա-  
 տասխան մը տալ կուտայ՝ իր իմաստը ճշ-  
 մարիտ է . վասն զի եթէ ասոնք խօսէին  
 իրենց լեզուն այսպէս պիտի ըլլար :

6. - Իմաստները երբեմն բացարձակ  
 ճշմարիտ կ'ըլլան . ինչպէս . երբեք-բեր-  
 քեմն ճշմարիտ կ'ըլլան և երբեմն սուտ .  
 ինչպէս , երբ Լաֆոնթէն կ'ըսէ ,

Հըբէն իբրև-նախ Գըր լա-բըն է . հոս Լա-  
 ֆոնթէն փորձառական ճշմարտութիւն մը  
 կը ցուցնէ , իբր թէ ըսէր՝ հըբէն ընդ-  
 րեւ սկզբունքի ճշմարտութիւն նկատենք՝  
 կը սխալինք , վասն զի տկարին իբրև-  
 տկարութեան համար ընդ-նախ չըլլար .

Նոյնպէս այս իմաստը՝

Մեր- լըբէն-ն ըն-ն Բըբէ-ն ըն-ն ինչ-  
 ասիկա դարձեալ փորձառական ճշմար-  
 տութիւն մ'է՝ և մինչեւ անդամ շատ նը-  
 կատմամբ փիլիսոփաներէն ընդունելի Բայց  
 հարցուր քրիստոնեայ ճարտարախօսի մը՝

քեզի պիտի պատասխանէ որ ասիկա ամբարշտութիւն է . վասն զի կրօնքը մեզի կը սորվեցնէ որ շարերուն համար մեր ըրած բարեաց վտխարինութիւնը պէտք է երկինքէն սպասենք :

Յարաբերութեանց այս զանազանութիւնը առատ աղբիւր մ'է վրիպակաց , վասն զի շատ անգամ իրերը մէկ կողմէն կը տեսնենք և կատարեալ ճանչցածի պէս անոնց վրայ դիտողութիւն կընենք : Ուրեմն նախ քան վճիռ տալ՝ պէտք է զգուշութեամբ խորհրդածենք և ջանանք աղէկ ճանչել այն բանը որուն վրայ կուզենք խօսիլ : Ասիկա ամենէն ապահով միջոցն է սխալ դատումներէ խորշելու :

7. - Ճշմարտութիւն ըսել է՝ վասն զի ճշմարտութիւնը մը ճշմարտութիւն կը գնէ ճշդութեանը և ճշմարտութեանը մէջ . այսինքն ճշմարտութիւնը կը նշանակէ որ իմաստը առարկային ճիշդ համապատասխան է , իսկ ճշդութիւնը անոր տարածութիւնը և յտակութիւնը աւելի որոշ կը ցուցնէ :

Ուրեմն հարկ է լաւ ճանչել գաղափա-

բաց տարածութիւնը և զանոնք բացատրող բառերուն արժէքը : Մանաւանդ երիտասարդները պարտին ուշի ուշով սոյն կանոնը ի միտ առնուլ, վասն զի իրենց երեւակայութեան վստահելով շատ անգամ առանց խորհելու կը գրեն :



## ԳԼՈՒԽ Բ.

### ՅԱՂԱԳՍ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆՅ ՄՏԱՅ

#### 1. - ՁԳԱՅՈՒՆՈՒԹԻՒՆ

1. - Ձգայունութիւնը այն կարողութիւնն է որով հոգին տպաւորութիւն մը կ'ընդունի : Արդ հոգին երեք ընդհանուր իրողութեամբ տպաւորութիւն կառնէ, այսինքն նէ-մի-ն, բ-բոյ-ն և իմ-ց-ն : Ասկէ երեք տեսակ զգայունութիւն յառաջ կու գայ . — նէ-մի-ն, բ-բոյ-ն և իմ-ց-ն :

2. - նէ-մի-ն շփոթութիւնը զինքը յառաջ բերող առարկային նայելով կամ հաճոյական կըլլայ կամ անհաճոյ : Տոտոտ-մի-ն կըսուի՝ զգայաբանաց կրած շարժմանը . Ձգոյն-մի-ն կըսուի հոգւոյն այն տպաւոր-

բութեան վրայ ըրած դատողութեանը, և շփոթելով ըստ ի այս երկու քէն այսինքն զգացողութենէ և տպաւորութենէ յառաջ եկած արդիւնքին:

Եթէ տպաւորութիւնը զգայարանքին դպչի այսինքն զկծեցնէ՝ զգացողութիւնը ցաւազին կըլլայ, և հոգին այս բանը յառաջ բերող առարկային դէմ ատելութեան զգացում մը կունենայ, եթէ ընդհակառակը ըլլայ զգացողութիւնը հաճոյական կըլլայ և հոգին հաճոյքով կը դիմէ զայն պատճառող առարկային: Ասկէ յառաջ կուգայ Հ-ի-ն-ը՝ որ ամեն -ի-ն-ը սկիզբն է, և Հ-ի-ն-ը՝ որ ամեն զ-ն-ը սկիզբն է:

Նի-ն-ը շփոթելով հինգ զգայարանաց միջոցաւ յառաջ կուգայ զգայարանք են՝ շփոթել, հոգեւոր, տեղեկ, և լեզու, որոնք հոգւոյն համար հաճոյից կամ վշտաց հինգ աղբիւրներ են:

3- Բ-ն-ը շփոթելով յոգեւորութիւնը ազատ կամք ունեցող էակի մը գործողութենէն յառաջ կուգայ ասիկա կը պարունակէ սրտի ամեն վիշտեր և հաճոյքները:

4- Ի-ն-ը շփոթելով մեր իմացա-



կանութեան զանազան ծանօթութիւններէն յառաջ կուգայ . ասիկա կը պարունակէ մտաց ամեն հաճոյքները և վիշտերը :

Ծ. - Գրագիտութեան մէջ զգայունութիւն ըսելով կիմանանք սրտի այն բնական բերմունքը որով մարդս գիւրաւ կ'ընդունի սուրբութիւն, որբութիւն, գիւրբութիւն ևւայլն տպաւորութիւնները :

2. ԻՄԱՅՈՂՈՒԹԻՒՆ

1. - Իմացողութիւնը՝ ճանչելու ընդհանուր կարողութիւնն է , ասիկա ամեն բանի վրայ կը տարածի . այսինքն՝ առանց իմացողութեան թէ մտաւոր, թէ նիւթական, թէ բարոյական գործողութիւն չըլլար . ասիկա բն և իելէ ալ կ'ըսուի :

2. - Իմացողութիւնը ութը գլխաւոր կարողութիւններ կը բովանդակէ իր մէջ՝ որք են , ինչն , սուրբութիւն , որբութիւն , իմացութիւն կամ որբութիւն , վերացութիւն , ինչն , սուրբութիւն և վերբութիւն գուրբութիւն :

3. - Խնայէ կամ գիւրբութիւնն այն կարողութիւնն է՝ որ հոգին կ'արթնցնէ իր գործողութեանց մէջ :

4. — Ուրախութիւնն այն կարողութիւնն է՝ որով միտքը կը գիտէ առարկայի մը և անոր վրայ կը կեդրոնանայ զայն ազէկ ճանչելու համար : — Զգացողութեամբ կը բնականաբար կը շարժուի, ուշադրութեամբ կը նայնի, հետեւ կը նայնի և այլն :

5. — Գործնական այն կարողութիւնն է որով միտքը երկու ծանուցեալ առարկայից վրայ հարկադրաբար կամ հարկադրաբար թիւն մը կը հաստատէ : Այս հարկադրութիւնը գատում ալ կըսուի :

— Որեւիցէ գատում՝ բաղդատութիւն յառաջ կը բերէ :


— Եթէ խօսքով յայտնենք՝ գատումը կ'ըսուի ներհարկաբար :

Երկու տեսակ նախադասութիւն կայ՝ հաստատական և մերժողական . — Երկրէն հարեւ, ասիկա հաստատական նախադասութիւն մ'է . երկրէն չի, աս մերժողական նախադասութիւն մ'է :

6. — Ինքնուրուշ կամ արեւելահարկաբար կարողութիւն մ'է, որով միտքը մէկ գատումէ ուրիշ գատում կը հանէ . այս գործողութեան արեւելահարկաբար արամախոհութիւն կ'ըսուի :

— Տրամախոհելու կարողութիւնը երկու կերպով կը դործէ, 1<sup>o</sup>. ընդհանուրէ մասնաւոր իջնալով, 2<sup>o</sup>. մասնաւորէ ընդհանուր ելնելով, ինչպէս. հընդհանուրէ — Արեւի ստորոգելին կը պատշաճի այն ամեն մասնաւոր տարրերուն՝ որոնցմով հընդհանուր ամբողջ գաղափարը բազկացած է, ինչպէս են, բարկութիւն, հպարտութիւն, ստախոսութիւն եւ այլն. ուրեմն կրնանք ըսել. հընդհանուրէ — Արեւի քրտնաբերութիւնէ, հոգորդութիւնէ — Արեւի քրտնաբերութիւնէ, հոգորդութիւնէ — Արեւի քրտնաբերութիւնէ և այլն: Հոս ընդհանուրէ՛ի մասնաւոր տրամախոհութիւն ըրինք: Կամ, հընդհանուրէ — Արեւի քրտնաբերութիւնէ. — Հոս ատելի ստորոգելին՝ որ մասնաւորապէս ստութեան կը պատշաճի՝ պէտք է նաև պատշաճի այն ընդհանուր գաղափարին որուն տարրն է հընդհանուր. այսպէս կրնանք ըսել. հընդհանուրէ — Արեւի քրտնաբերութիւնէ: Հոս մասնաւորէն յընդհանուր տրամախոհութիւն ըրինք:

7. — Վերջինս այն կարողութիւնն է՝ որով միտքը թանձրացեալ առարկայից յատկութիւնները իբարմէ կը զատէ: Ինչպէս շատ անգամ մասնաւոր մարմիններ թուելէ ետքը կը հասնինք թուոց վերաց-



եալ գաղափարին . զորօրինակ , երբ կը տեսնենք որ շատ մարդիկ կը մեռնին , ասկէ մահու վերացեալ գաղափարին կը դիմէ մեր միտքը . և ուրիշ ասանկ շատ օրինակներ : Այս գործողութեան *բարեփոխ* ալ վերացում կ'ըսուի :

— Ամեն լուծում հարկաւ վերացման պէտք ունի . ասիկա մարդկային մտաց առաջին պէտքն է , վերջապէս գաղափարներու և զանոնք ներկայացնող բառերուն սկիզբն :

Տ. — Թե՛ղբո՛ցս այն կարողութիւնն է որով միտքը վերացեալ ծանօթութիւն մը կը պատշաճեցնէ ամբողջ կարգ մը իրաց կամ էակաց : Ինչպէս երբ վարդ մը կը տեսնենք և վարդի գաղափար կ'ունենանք՝ ալ այնուհետեւ զայն ուրիշ մէկ առարկայի մը հետ չենք շփոթեր՝ այսինքն այս կամ այն մարմնոյ . կը ճանչնանք որ վարդը ծաղկի կ'ըլլի մ'է , այս կարգին մէջ յետոյ *բարեփոխ* կ'որոշենք , ապա *բարեփոխ* . վերջապէս *բարեփոխ* այս գործողութեան *բարեփոխ* ալ *բարեփոխ* կ'ըսուի :

Ամեն գիտութիւն ընդհանուր գաղափարաց վրայ կը հաստատուի :

9. - Յիշուհիւնք կարողութիւն մ'է, որով միտքը կանխաւ ստացած ծանօթութիւնները կը պահէ կամ կը յիշէ :

10. - Գիշտութիւնք լինելու ծանօթութիւն մ'է որով միտքը կարգաւ կը պահէ կամ կը յիշէ այն գաղափարները զորս առաջ կարգաւ ըմբռնած է :

— Մեր գատողութեանց իրաւ կամ սուտ բլլալը շատ անգամ գաղափարաց լծորդութենէն կախում ունի: Անկանոն կերպով ստացած ծանօթութիւնները մեզ կը մոլորեցնեն. զգայական կարգին մէջ անոնք մեզ կը խաբեն իրաց վրայ, իմացական կարգին մէջ՝ գաղափարաց վրայ, բարոյական կարգին մէջ՝ մարդոց և նոյն իսկ մեր վերայ. ասկէ յառաջ կուգան վրիպակք, թերի ծանօթութիւնք, իմաստակութիւնք, նախապաշարմունք եւայլն: Ուրեմն հարկ է գաղափարները իրարու հետ ունեցած սերտ կապակցութեամբ ընդունիլ և լծորդել:



# Գ. ԼՈՒԻՍ Գ.

ՅԱՂԱԳՍ ԿԻՐԱՌՈՒԹԵԱՆ ԿԱՐՈՂՈՒԹԵԱՆՑ  
ԿԱՄ

ՅԱՂԱԳՍ ՄԵԹՈՏԻ

## 1.- ԼՈՒԾՈՒՄՆ ԵՒ ՅԱՂԱԳՐՈՒԹԻՒՆ

1.- Մեթոտը այն ընթացքն է զոր իմացողութիւնը կը դորձած է ճշմարտութիւնը խուզարկելու կամ զայն ապացուցանելու մէջ :

2.- Եթէ խուզարկութեան կամ ապացուցման առարկան պարզ ըլլայ, միտքը առանց զայն ուրիշ առարկայի մը հետ շրջիթելու կը ճանչէ իւր յատկութիւններովը մէկտեղ :

— Եթէ բաղադրեալ ըլլայ առարկայն միտքը զայն իր տարերքներուն կը վերածէ իւրաքանչիւր մասը մի ըստ միովէ ուսանելու համար : Այս մասնաւոր ուսումը կամ քննութիւնը անոր մասնաւոր ծանօթութիւններ կուտայ . բայց ինչպէս որուիցէ առարկայի մը տարերքները զատ զատ այն առարկային ամբողջութիւնը չեն ներկայացներ այնպէս ալ անոնց զատ զատ ծանօթութիւնները առարկային ամբողջ

ճանօթութիւնները չեն ներկայացներ՝ մինչեւ որ ամենքը ՚ի միասին չի հաւաքուին :

Ուստի առարկայ մը կատարելապէս ճանչնալու համար պէտք է միտքը նորէն բաղադրէ ինչ որ լուծած է : Այս երկու գործողութիւններէն մին կ'ըսուի Լ-ձ-ձ և միւսն Բ-չ-դ-ը-ն :

3. - Լ-ձ-ձ-ը ընդհանուրէն մասնաւոր կ'իջնէ . իսկ Բ-չ-դ-ը-ն մասնաւորէն յընդհանուր կ'ելնէ : Ճշմարտութիւնը հետազօտած ատեննիս՝ լուծումը կ'սկսի և բաղադրութիւնը կը վերջացնէ մեր գործողութիւնը . իսկ ապացուցման մէջ ասոր հակառակը կըլլայ :

4. - Գրական կտոր մը լուծելը՝ զայն իր մասերէն բաժնել , պարզ իմաստներու վերածել , իր բոլոր զարդերէն մերկացնել է , տեսնելու համար թէ , մերկ գաղափարները ճշմարիտ , հաստատուն և բարւոք կապակցեալ են թէ ոչ : Այս վարժութիւնը կրկին օգուտ ունի . - նախ մեզ կը սորվեցունէ ճիշտ խորհրդածել և ոճին ոին զարդերէն չխաբուիլ . յետոյ մեզ կը ցուցընէ թէ աղէկ գրագէտները ինչ արհեստով կրցեր են իրենց իմաստները գեղեց-

կացնել և աչաց, սրտի ու մտաց միանգամայն խօսիլ :

2.- ՍԱՀՄԱՆ . ԲԱԺԱՆՈՒՄ ԵՒ  
ԴԱՍԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ

1. - Սահման է բառի մը կամ իրի մը բացատրութիւնը : Երկու տեսակ սահման կայ՝ բնական և երբայ :

2. - Բնական սահման բառերուն իմաստը կը բացատրէ . այսինքն թէ ինչ նշանակութեամբ գործածուած են բառերը :

Այս տեսակ սահմանը շատ կարեւոր է : Յիրաւի բառերը շատ անգամ զանազան առումներով կը գործածուին . եթէ իւրաքանչիւր առումը լաւ չ'որոշենք՝ միտքերնիս ընդ ազօտ կը հասկցունենք կամ բնաւ չենք կրնար հասկցնել . ասկէ յառաջ կուգան վրիպակք, վէճեր և սխալ հասկցողութիւն :

3. - Երբայ սահման նպատակն է առարկայ մը այնպէս ճանչցնել որ զայն ուրիշի հետ չի շփոթենք :

4. - Որեւիցէ սահման կը բաղկանայ ընդհանուր գաղափարէ մը, որուն կ'ըսուի հիմք և հանրապարհ գաղափարէ մը որուն կ'ըսուի



էրէ եւ : Մեծ եզրը եւր կը ցուցնէ և փոքր  
 եզրը բեռնը կամ բարեբերութիւնը .

Օրինակ .

Մարտն է բնական կենդանի . - կենդանի բա-  
 ռը ընդհանուր գաղափարը կամ սեռը կը  
 բովանդակէ . բնական բառը մասնաւոր գա-  
 ղափարը կամ տեսակը կը ներկայացնէ :

Յ. - Որևիցէ լաւ սահման չորս պայման  
 ունի :

1<sup>o</sup>. - Պէտք է որ յարկ ըլլայ՝ ապա թէ  
 ոչ անօգուտ է :

2<sup>o</sup>. - Պէտք է որ ճշտ ըլլայ ( précis )  
 այսինքն աւելորդ խօսքեր չպարունակէ :

3<sup>o</sup>. - Պէտք է որ ինքնուրու ըլլայ , այ-  
 սինքն չհարկ ընդհանրելու և ինչ որ հարկ  
 յարմարի և եթէ կարգը փոխենք իմաս-  
 տը չփոխուի . Օրինակ .

Մարտն է կենդանի բնական . - կրնանք նոյն  
 ճշմարտութիւնը այսպէս ալ ըսել . կենդանի  
 բնականը մարտն է :

4<sup>o</sup>. - Պէտք է որ սահմանը հարմար եւր  
 և հանաւոր բարեբերութիւնը պարունակէ իր մէջ .  
 այսպէս չըսուիր , մարտն է եւ կ'ընդհանր . վասն  
 զի եւ գաղափարը շատ հեռաւոր սեռ մը  
 կը ցուցնէ , այսինքն՝ կը նշանակէ ինչ որ

Կայ . իսկ Կեդրոնի գաղափարը է-ի գաղափարէն աւելի սահմանաւոր առում մ'ունի և հետեւաբար Բն-ի-ն բառին այսինքն Գե-ն-ն աւելի մօտ է :

6.- Բն-ն-ն է ամբողջ մը իր մասերուն վերածել . բաժանումը հետեւեալ կանոնաց ենթակայ է :

1<sup>o</sup>.- Պէտք է որ բաժանումը ամբողջ ըլլայ՝ այսինքն բաժանեալին ամբողջ գաղափարը բովանդակէ իր մէջ , բաժանման կանոնին դէմ մեղանշած կ'ըլլանք՝ եթէ բոլոր մարդիկ երկու դասի վերածենք՝ այսինքն Գե-ն-ի և Գ-ն . վասն զի մարդկային տեսակը տակաւին շատ բաժանումներ ունի . այսինքն՝ Գե-ն-ի , Գ-ն-ի և այլն :

2<sup>o</sup>.- Պէտք է որ ըլլայ Գ-ն և Գ-ն-ի , այսինքն այնպիսի կերպով բաժնուած , որ մէկ մասը միւսին մէջ չմտնէ :

3<sup>o</sup>.- Պէտք է որ բաժանումը անմիջական ըլլայ , այսինքն երկրորդական մասերէն առաջ գլխաւորը բովանդակէ :

7.- Գ-ն-ի-ն-ն կ'ըսուի անհատները իրենց նմանութեամբը դասաւորել :

— Ընդհանուր նմանութեան վրայ հիմնուած կարգերը Գ-ն կ'ըսուին , մասնաւոր

նմանութեան վրայ հիմնուածները եւ կ'ըս-  
ուին, ներքին և սերտ կապակցութեան  
վրայ հիմնուածները եւեւ կ'ըսուին: Այս-  
պէս՝ հարցնելուց ետեւ, սակայն զատ  
սեռ մ'ունի՝ այն է հարցնելու ետեւ. այս  
սեռը շատ տեսակներ ունի՝ ինչպէս, ճիշ-  
տ, եւ, որոշուած և այլն:

Ծ - ՅԱՂԱԳՍ ԻՄԱՍՏԱԿՈՒԹԵԱՆ ԿԱՄ  
ՏՐԱՄԱԽՈՂՈՒԹԵԱՆ  
ԵՒ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿԱՆԱՑ ՆՈՐԱ

1. - Տրտման հետեւին է մտաց այն գոր-  
ծողութիւնը որ արդէն և զամ գատումէ մը  
ուրիշ գատում կը հանէ: Չեւեւեւեւեւեւ կ'ըս-  
ուի տրամախոհութեան ընդունած ձեւը  
բերնով կամ գրով:

2. - Տրամախոհութեան ձեւերը եօթն  
են գլխաւորաբար. հետեւեւեւեւեւ, հետեւ,  
(անդիմէմ), ջնդ, (էրիքէրէմ), հետեւեւ-  
եւեւեւ, (սօսիդ), երկուցեւեւեւեւ, (տի-  
լէմ), շիւնդ, հետեւեւեւեւ՝ որոնք աւելի  
կամ նուազ վերաբերութիւն ունին հա-  
ւաքաբանութեան հետ:

3. - Հ---+---Բ---ԲԻ՛-նը երեք առաջարկութիւններէ բաղկացած ձեռնարկութիւն մ'է՝ որոնց վերջինը առջի երկուքին հետեւութիւնն է . օրինակ .

Պէտք է սիրել այն որ զմեզ երջանիկ կ'ընէ .  
Արդ առաքինութիւնը զմեզ երջանիկ կ'ընէ .  
Ուրեմն պէտք է սիրել առաքինութիւնը :

— Առջի երկու առաջարկութիւնները՝ որոնց մէկը ԲՅ-ԳԻ՛ն կ'ըսուի և միւսը Գ-ԳԻ՛ն՝ երկուքը մէկէն Գ-ԳԻ՛ն-ԳԻ՛ն կը կոչուին , երրորդը ելլ-ԳԻ՛ն-ԳԻ՛ն կամ ԳԻ՛ն-ԳԻ՛ն :

— Առաջին առաջարկութիւնը մեծագոյն կ'ըսուի՝ որովհետեւ ԲՅ ելլը կը պարունակէ . ինչպէս է վերի օրինակին մէջ , ԳԻ՛ն ԳԻ՛ն ելլ-ԳԻ՛ն կ'ընէ խօսքը . - երկրորդը փոքրագոյն կ'ըսուի՝ որովհետեւ Գ-ԳԻ՛ն կը պարունակէ՝ ինչպէս է դարձեալ նոյն օրինակին մէջ ԳԻ՛ն-ԳԻ՛ն-ԳԻ՛ն ԳԻ՛ն ելլ կ'ըսուի այն գաղափարը որ մեծագոյնը փոքրագոյնին հետ կը կապէ՝ ինչպէս է ԳԻ՛ն ԳԻ՛ն-ԳԻ՛ն խօսքը :

4. - Հաւտքաբանութեան կանոնները երկու են՝ 1<sup>o</sup>. ԳԻ՛ն ելլ պէտք է իւրաքանչիւր նախընթացին մէջ պարունակի :

2<sup>o</sup>. Եղբակացու թիւնը բնաւ ընդարձակ ըլլալու չէ նախընթացներէն :

Այս երկու կանոնները կրնան միայն մէկ սկզբան մը վերածուիլ՝ այսինքն, եւ ընդհանրապէս գեղեցիկ է Բ-ընդհանրապէս նախընթացներէն : Եւ նախընթացները գեղեցիկ է ըստ որոշութեան :

5. - Հետեւ (անդիմէմ) հաւաքարանութիւն մ'է՛ որուն մէկ նախընթացը զօրութեամբ դրուած է՝ օրինակ .

Առաքինութիւնը զմեզ երջանիկ կ'ընէ ,  
Ուրեմն պէտք է առաքինութիւնը սիրել :

Հոս, գեղեցիկ է իրեն յո՛ր ընդ երջանիկ կ'ընէ խօսքը զօրութեամբ դրուած է :

Գարձեալ . Մանկանց , մեծն ինչ որ  
նոր : Այս ալ հնարք մ'է :

6. - Տրամախօհութիւնը դրական գործոց մէջ հաւաքարանութեան չոր ու ցամաք ձեւով պէտք չէ գործածել, այլ ջանալու է զայն քողարկել, զարդարել և ընդլայնել, որպէս զի առանց իր ձեւը երեւելու բոլոր ուժը յայտնի տեսնուի ինչպէս .

Մերէ առաքինութիւնը եթէ կ'ուզես երջանիկ ըլլալ :

Կամ աւելի ազդու կերպով ,

Կուգես երջանիկ ըլլալ , և շե՞ս սիրեր ա-  
քինութիւնը :

— Ձկայ իմաստ մը որ հաւաքաբանու-  
թեան չկարենայ վերածուիլ . օրինակի  
համար .

Այն որ ալեաց կատաղութեան սանձ կը  
դնէ՝ կրնայ նաեւ շարերուն դաւաճանութիւն-  
ները խորտակել . իր սուրբ կամաց հպատա-  
կելով՝ ես միայն անկէ կը վախնամ , սիրեցեալդ  
Ապնէր , և ուրիշէ վախ չունիմ :

Եթէ այս իմաստը իր զարդերէն մեր-  
կացնենք՝ կ'ունենանք .

Ես իմ բոլոր վստահութիւնս Աստուծոյ վը-  
րայ կը դնեմ՝ որ կարող է շարերուն դաւաճա-  
նութիւնները խորտակել . հետեւաբար պէտք  
չէ որ ուրիշէ վախնամ :

Այս իմաստը հետեւեալ հաւաքաբա-  
նութեան կը համապատասխանէ .

Այն որ իր բոլոր վստահութիւնը Աստու-  
ծոյ վրայ կը դնէ՝ պէտք չէ շարերէն վախնայ :

Արդ , ես իմ բոլոր վստահութիւնս Աստու-  
ծոյ վրայ կը դնեմ :

Ուրեմն ես ուրիշէ չեմ վախնար :

Եթէ մէկը կ'ուզէ ուղղախոհ միտք ունենալ, պէտք է որ այս վարժութիւնը շատ կրկնէ :

7. - Զուլը (երկօքէրմ) հաւաքաբանութիւն մ'է յորում իւրաքանչիւր նախընթացը իր փորձը ունի . օրինակ .

Պէտք է սիրել այն որ զմեզ կատարեալ կ'ընէ (մեծագոյն) , ասիկայ ճշմարտութիւն մ'է որ մեր սրտին մէջ քանդակուած է և որում ահուրանալի փորձեր կուտան ողջամիտ դատաւութիւնը և անձնական սէրը (փորձ) :

Արդ դպրութիւնք զմեզ կատարեալ կ'ընեն (փոքրագոյն) . ո՞վ կրնայ տարակուսիլ ասոր վրայ՝ անոնք կը ճոխացնեն միտքը , կ'ամօքեն բարքը , և մարդուն քաղաքավարութեան և զգաստութեան կերպարանք կուտան (փորձ) :

Ուրեմն պէտք է սիրել դպրութիւնները :

Բայց կիրթ ախորժակը այս ձեւէն չախորժիր՝ որ խօսքին ջամաք կերպարանք մը կուտայ . ուրեմն պէտք է քողարկել ասիկա աւելի ախորժ ձեւով մը : —

— Ով կրնայ չսիրել դպրութիւնները , անոնք են որ միտքը կը ճոխացնեն , բարքը կ'ամօքեն . անոնք են որ կը կրթեն և կը կատարելագործեն զմարդկութիւն :

Անձնական սէրը և ողջամիտ դատողութիւնը բաւական են մեզ սիրելի ընելու դպրութիւնք և յորդորելու զմեզ որ անոնց մշակութեան հոգ տանինք :

Տ. - Համարարդութիւնն (սօսիդ) խումբ մ'առաջարկութիւններէ կը բաղկանայ որոնց երկրորդը առաջինին ստորոգելին կը բացատրէ , երրորդը՝ երկրորդին ստորագելին կը բացատրէ՝ և այսպէս կը շարունակուի մինչեւ որ եզրակացութիւնը ելնէ : Առնենք ապացուցանելու համար - ֆ-հ-նէրը Բ-ը--- Էն խօսքը : —

Ազահները փափաքով լի են ,

Անոնք որ փափաքով լի են շատ բան չունին ,

Անոնք որ շատ բան չունին թշուառ են ,

Ուրեմն ազահները թշուառ են :

Զ. - Երկու-յոթ-ն-ը երկու հաւաքաբանութեանց միութիւնն է՝ որոնք միեւնոյն եզրակացութիւնը կուտան :

Զօրապետ մը իր բանակետը անզգուշութեամբ թշնամիէն կոխել տուող պահապանին կ'ըսէր :

Կամքու տեղդ կեցած էիր՝ կամ ոչ .

Եթէ տեղդ կեցած էիր՝ ուրեմն մասնութիւն ըրիր ,



Եթէ տեղի չէիր՝ պատերազմական հրահան-  
 ՚ի դէմ գործեցիր :

Ուրեմն մահուան արժանի ես :

10 . - Օրհնելու հաւաքարանութիւն մ'է  
 որուն մէջ մէկ առաջարկութենէ մը դա-  
 տողութիւն կը հանենք այն առաջարկու-  
 թեան նման , հիւսիս կամ ձեռ առաջարկու-  
 թեան մը հետ բաղդատելով . ասկէ կը  
 հետեւի որ երեք կերպով օրինակ կը բեր-  
 ուի , հաստատելու համար , Բժէ - - - - - ,  
 Գժէ - - - - - , կամ ուրիշ կերպով մը ըսենք  
 նմանէ , 'ի հիւսիսի , 'ի շէրտի : Ինչպէս .

Աստուած ներեց Դաւիթին՝ անոր զղջման  
 նայելով . ուստի Աստուած պիտի ներէ նման-  
 ակն անոնց՝ որ կը զղջան (նմանութեամբ) :

Դատարկութիւնը ամեն մոլութեանց մայրն  
 է , ուրեմն աշխատութիւնը ընդհանրապէս մո-  
 լութեանց դեզ և դարման և անոնցմէ զգու-  
 շացուցիչ է :

Հեթանոսները շատ անգամ նախատանաց  
 ներել գիտցեր են . ուրեմն առաւել եւս քրիս-  
 տոնեայ մը պէտք չէ անողոք ըլլայ իր ատելու-  
 թեանը մէջ :

Օրինակը դրական ոճի մէջ գործած-

ուած ժամանակ դրեթէ միշտ ելէով կ'սկսի  
և աւելցնել կը վերջանայ . ինչպէս :

Ելէ հեթանոսները գիտցեր են շատ ան-  
գամ նախատանաց ներել . աւելցնել պէտք է որ  
քրիստոնեաները առաւել եւս ներողամիտ ըլ-  
լան :

ԱՂ. - Մակաժուծիւնը կամ ընծայու-  
թիւնը հաւաքարանութիւն մ'է որ մաս-  
նաւոր իրողութիւններէ ընդհանուր հե-  
տեւութիւն կը հանէ :

Այսպէս իրենց սճրագործութեամբ նը-  
շանաւոր եղող անձանց վախճանը քննելէ  
ետք՝ մանաւանդ յաջողութեան մէջ կար-  
ծուած ժամանակնին , Տիրերի մը տան-  
ջանքը ներոնի մը արհաւիրները եւայլն  
թուելէ ետք կը յաւելունք որ շարերուն  
համար երջանկութիւն չկայ :

Մակաժուծիւնը ըստ ինքեան ճարտա-  
սանական է :

#### 4. - ՅԱՂԱԳՍ ԻՄԱՍՏԱԿՈՒԹԵԱՆՑ

Ղ. - Իմաստակութիւնք կ'ըսուին այն  
մասնաւոր դատողութիւնները որուն ստու-  
գութիւնը զգալի է ակներեւ , բայց ճշմար-

տութեան կերպարանք ունին : Ութը դըլ-  
խաւոր տեսակ իմաստակութիւն կայ :

2.- Աճիւրդն շիւն : Ասիկա կը կա-  
յանայ խնդիրէն դուրս բանի վրայ խօսե-  
լու մէջ : Այսպէս են ընտանեկան շատ վի-  
ճաքանութիւնք . տաքութեամբ կը վիճին  
և շատ անգամ իրարու խօսք չեն հասկը-  
նար՝ խնդիրին սահմանը լաւ մը չորոշել-  
նուն համար : Ուստի պէտք է ուշադրու-  
թիւն ընենք հակառակորդնիս խնդրոյն  
վրայ հրատարակելու՝ եթէ անկէ շեղի :

3.- Աճիւրդն շիւն : Այս իմաստա-  
կութիւնը կը կայանայ հաւաքականէ ի  
մասնաւոր և մասնաւորէ ի հաւաքական  
իմաստ ելնելու մէջ . օրինակ :

Մարդ կը խորհի :

Արդ , մարդը հոգիէ և մարմինէ բաղկա-  
ցած է :

Ուրեմն մարմին և հոգին կը խորհին :

Մարդը կը խորհի բանական կամ մաս-  
նաւոր իմաստով մը , այսինքն իր մէկ մա-  
սովը , և ասկէ կ'ըսենք որ ամբողջ մարդ-  
կը խորհի , բայց անիկա հաւաքական կեր-  
պով չխորհիր , այսինքն իր բոլոր մասե-  
րովը :

4. - Կրկնութիւնն սկսեալ . Այս իմաստակութիւնն է խնդիրը ուրիշ խօսքերով կրկնել : Մոյիէր՝ Երեւելոյնն ինչոք կատակերգութեան մէջ հարցունել կուտայ մէկուն թէ :

Ինչո՞ւ համար ամփօնը քուն կը բերէ :

Արտհետեւ՝ կը պատասխանէ միւսը : ամփօնը քնացնելու յատկութիւնը ունի :

Ասիկա բացատրութիւն մը չէ , այլ հարցումը ուրիշ խօսքով կրկնել :

Կրկնութիւն սկզբանը յոր՝ յըն՝ կըսուի՝ եթէ ճշմարիտ ենթադրենք ինչ որ արդէն խնդրոյ ներքեւ է :

5. - Արդեօք զորո՞ք : Այս իմաստակութիւնն է պատճառ կարծել այն բանը որ իրօք պատճառ չէ : Երբ այնպէս գործ մը տեղի ունենայ՝ որուն պատճառը մեղի անծանօթ է , փոխանակ մեր տգիտութիւնը խօստովանելու իրին անյարմար պատճառ մը կուտանք : Ահաւասիկ այս իմաստակութեամբն էր որ նախնիք բնական երեւոյթներու գուշակութիւն կընծայէին . օրինակի համար գիսաւորաց երեւիլը ժանտախտի , սովի և ուրիշ աղետից գուշակ կը կարծէին . ասոր նման շատ իմաստակութիւններ ալ կան արդի

աամկութեան մէջ . օրինակի համար՝ այս ինչ տունը կամ այս ինչ անձը շարագուշակ է (ուղութեամբ) կ'ըսեն : Այս իմաստակութիւնը մեծ մասամբ յառաջ կուգայ բնագիտութեան և բնական օրինաց տեղեկութիւն չունենալէ :

6.- Անհատը ինչպէս : Ասիկա կը կայանայ անկատար թուումէ մը ընդհանուր եղբակացութիւն հանելու մէջ . օրինակի համար .

Հայը , Գաղղիացին , Անգղիացին սպիտակ են ,

Ուրեմն՝ բոլոր մարդիկ սպիտակ են :

7.- Պարզապէս զոչնչով չէ բացընդհանուր ընդհանուր եղբակացութիւն հանել՝ ինչպէս կ'ըսէր ժան-ժազ-Ռուսօ .

Բժիշկներ կան որ իրենց արհեստին տղէտ են և միաս կը գործեն ,

Ուստի բժշկութիւնը դատապարտելի է :

Ուսմունք և գիտութիւնք բարուց ազականութեան և զեղծման սրտաճառ կըլլան իրենց շարաշար գործածուելովը ,

Ուրեմն ուսմունք և գիտութիւնք մերժելի են :

8. — Մեկ +նի նկատմամբ ճշմարիտ ելածը էքրե-  
 քացւոյնի ճշմարիտ ընդունելը: Եպիկուրեանք կը  
 սէին .

Մարդկային ձեւը ամեն ձեւէ աւելի գեղե-  
 ցիկ է :

Ուրեմն դիք այս ձեւը ունին :

9. — Բռնաշէտ իմաստէն բազմաթիւ իմաստի , և  
 բազմաթիւն բռնաշէտ իմաստի Գիտել : Բազմաթիւ  
 իմաստը բառի մը կատարեալ և անժխտելի  
 իմաստն է . բռնաշէտ իմաստը՝ բառին պա-  
 տահական կամ սեղմեալ իմաստն է :

Երբ աւետարանը կ'ըսէ .

Այրք տեսանեն , կաղք գնան , խուլք լը-  
 սեն և այլն ,

Պէտք է հոս կոչ , կու , եւ և այլն բա-  
 ռերով իմանալ իրօք կոչը , կաղ , խուլ մար-  
 դիկ . եթէ այս բառերը իրենց բաղադ-  
 րեալ իմաստովը առնէինք՝ իմաստակու-  
 թիւն մը կ'ըլլար :

10. — Որեւիցէ սխալ դատում յառաջ  
 կուգայ եզրակացութեան նախընթացնե-  
 րուն մէջ չի պարունակելէն . ուստի մէկ  
 հնարք մը կայ իմաստակութիւններէ խոր-  
 շելու , այսինքն է եզրակացութիւնը սկզբ-

բունքի մը մերձեցնել . պէտք է դիտել որ իւրաքանչիւր նախընթացին մէջ միջին եզրը նոյն նշանակութիւնը կը պահէ թէ ոչ , և թէ՛ եզրակացութեան մէջ նախընթացներէն տարբեր իմաստ չկայ :

11. Ժան - Ժաք - Ռուսոյ իր «*Լե-տ-է-ն-ճառին*» մէջ կը ջանայ ցուցնել որ արհեստները մարդուս աւելի վնասակար են քան թէ օգտակար . և Ֆասպրիքիոսի բերանը հետեւեալ կշտամբանքը կը դնէ առ Հռովմայեցիս :

Ո՛վ Ֆասպրիքիոս , քու մեծ հոգիդ ի՞նչ պիտի խորհէր՝ եթէ դժբաղդարար ՚ի կեանս վերածնելով՝ տեսնէիր քու բազուկներովդ աղատեալ Հռովմայ պերճափայլ դէմքը , զոր քու պատկառելի անունդ իր աշխարհակալութիւններէն աւելի մեծարոյ ըրած էր . «Ո՛վ դէք , պիտի ըսէիր , ո՛ւր մնացին այն յարգածածուկ խրճիթները և գեղջուկ տնակները որոնց մէջ երբեմն կը բնակէին զգաստութիւն և առաքինութիւն : Ի՞նչ փայլ աղէտալի յաջորդած է հռովմէական սլարդութեան : Ի՞նչ է այս օտար լեզուն , ի՞նչ այս կնատեալ բարքեր . ի՞նչ կը նշանակեն այս արձանները , նկարները , շէնքերը : Անդդամք , ի՞նչ ըրիք : Դուք՝ տեա՛րք ազգաց , ինքզինքնիդ գերի ըրած էք թեթեւամիտ

մարդոց՝ որոնց յազթեցիք : Հռետորներն են որ զձեզ կը կառավարեն . ճարտարապետներ , նկարիչներ , արձանագործներ և պատմագիրներ հարստացնելու համար է որ ձեր արեամբ ներկեցիք Յունաստան և Ասիա : Կարկեղոնի աւարները սրնդահարի մը որս եղած են : Հռովմայեցիք , փուլթացէք ուրեմն կործանելու այս ամբի-թատրոնները , փշրեցէք այս մարմարիոնները , արձանները . հրձիգ ըրէք այս նկարները . վանտեցէք այս գերիները որ ձեզ կը գերեն և որոնց աղէտաբեր արուեստները ձեր բարբը կ'ապականեն : Քող ուրիշ ձեռքեր պերճանան սին տաղանդներով . Հռովմայ արժանի տաղանդը աշխարհի տիրել և հոն առաքինութիւն թագաւորեցնելն է :

Այս կտորը անտարակոյս ճարտար գըրուած մ'է . բայց իր հետեւութիւնը իմաստակութիւն մը կը պարունակէ : Միթէ Հռուովմայեցիք առաքինութեան դառնալու համար հարկ է որ ամբի-թատրոնները կործանեն , մարմարիոնները փշրեն , պատկերները հրձիգ ընեն , գերիները վանտեն : Բոլոր այս մտածութիւնք սնտոի փայլ մը ունին : Ասոր համոզուելու համար բաւական է զանոնք հաւաքաբանութեան վերածել . — Այսպէս .



Մարդիկ պէտք է որ հրաժարին այն բանէն որ զիրենք կ'ապականէ .

Արդ՝ ճարտարապետութիւնը , արձանագործութիւնը , նկարչութիւնը զմարդիկ կ'ապականեն .

Ուրեմն պէտք է մարդիկ չմշակեն ճարտարապետութիւնը , նկարչութիւնը եւ այլն :

Ասոր մէջ իմաստակութիւնը յայտնի կերեւայ , վասն զի ամեն մարդ գիտէ որ արհեստներ չ'են զմարդիկ ապականողները այլ կիրքերը որ շարաշար գործածել կուտան զարհեստս :

5. ՅԱՂԱԳՍ ՆՇԱՆԱՅ . ԼԵՂՈՒԻ ԵՒ ՄՏԱՅ  
 ՀԵՏ ԱՆՈՆՑ ՈՒՆԵՑԱԾ ՎԵՐԱԲԵՐՈՒԹԵԱՆԸ

1. - Նշն կրտսին մեր զգացմանց և գաղափարաց արտաքին ցուցմունք , և լնն կրտսի այն գաղափարները և զգացումները պատկերացնող նշաններուն ամբողջութեանը :

2. - Երկու տեսակ լեզու կայ . — Բնական լեզու և արհեստական լեզու :

3. - Բնական լեզուն՝ որ գործողութեան լեզու ալ կը կոչուի , կը պարունակ

կէ դէմոց շարժումը , յետէր կամ շարժումներ , և  
 նշոյթելի կամ շարժումներու յայնք :

Գիմոց շարժում կամ ինչ ըսելով պէտք է  
 հասկնալ այն ջղային շարժումները , որոնք  
 իմացական շարժումներէ դրդեալ դէմքի  
 վրայ կերելին . շարժում կամ յետ ըսելով կը  
 հասկնանք այն դիրքերը կամ կեցուածք՝  
 զորս կը ցուցունէ մարմինը հողիէն մկուե-  
 լով . իսկ նշոյթելի յայնք ըսելով պէտք է հաս-  
 կընանք այն զանազան աղաղակները՝ որ  
 մեր այլ եւ այլ դրացմանց համեմատ կ'ար-  
 ձակենք ՚ի խորոց սրտէ :

Բնական նշանները դիպուածի ճնունդ  
 ըլլալով անկախ են որ և իցէ մարդկային  
 կանոնէ կամ դաշինքէ : Այս նշանները  
 սահմանափակ ըլլալով չեն կարողացեր ի-  
 մացականութեան պէտքերը յազեցնել .  
 ուստի հարկ եղած է արհեստական նշան-  
 ներու գիմել՝ ոչ թէ դիպուածի ճնունդ  
 այլ դատողութեամբ որոշուած նշաններու՝  
 որոնք ժամանակին և տեղին համեմատ կը  
 փոխուին՝ վասն զի պայմանի վրայ կը կա-  
 յանան :

Կ. - Արհեստական լեզուն կը պարու-  
 նակէ՝ գործիչներ կամ յետէ , իրհարհար-ն շարժ-

Կէր այսինքն Բնիկ-դրոշմ և Իւս :

Պատիկեր ըսելով պէտք է հասկնալ այն աւելի կամ նուազ թանձր արտայայտութիւնը , որ դէմքը , շարժումները և անարտաբերեալ ձայները չէին կարող մէկ իմացականութենէ մը միւս իմացականութեան փոխադրել կամ դաղափարներ ուրիշի հաղորդել :

Խորհրդ-ի-ն Նշ-ն ըսելով պէտք է հասկընալ այն ձևերը՝ որ ՚ի սկզբան մասնաւոր նշաններ ըլլալով ըստ ինքեան , յետոյ նման առարկայի մը նշաններ կղած են .

Ինչպէս :

Ասիւծը կորովոյ պատիկեր է , աղուկսը նենդութեան պատիկերն է . մանուշակը պարկեշտութեան , եւայլն :

Իս-+ կամ լեղուն խորհրդածութեամբ յօդուած իմաստի արտայայտութիւնն է :

Ուրեմն մարդ չէր կրնար չ'խօսիլ որովհետեւ կը խորհի , միայն թէ իր ծննդեան տարբեր տեղերուն և պարագայներուն նայելով տարբեր կերպով կը խօսի :

Կ. - Ըստ Ուուսոյի՝ Իս-+ը կ-րե-որ էլ- Իս-+ին Գ-ը-ը-ն-ի-ն-ը հ-ո-ր-ի-ն-ը հ-ո-ր . ըստ Պ.

Պոնալտի՛ հարդ անհար իւր իորհարարը իւրիւ հոռոց  
 իորհելու իր իւրիւ : Այս երկու փիլիսոփանե-  
 րուն նայելով խօսակցութիւնը մարդուս  
 արարչագործութեան ժամանակակից է :  
 Ոմանք ալ կը կարծեն թէ մարդոց հնարո-  
 ղութենէն է լեզուն , բայց ասոնց դրու-  
 թիւնը ընդունելի չէ :

Ինչ և իցէ՛ խօսքը իմաստ կը ներկա-  
 յայցնէ . և այրբենական գրերն ալ խօսք  
 կը ներկայացնեն . այս գրերուն բաղադ-  
 րութիւնները բառեր յառաջ կը բերեն .  
 ուրեմն բառերը մեր գաղափարաց նշան-  
 ներն են :

Որովհետեւ բառերը մեր գաղափարաց  
 նշաններն են հետեւաբար միայն այս գա-  
 ղափարները կրնան ներկայացնել : Արդ ,  
 գաղափարները բոլորն ալ կը վերածուին  
 երեք կարգի , այսինքն , է-ի-ն կամ գոյ-  
 ւն , որդի-ուն և վերքեր-ւն : Ուրեմն բուն  
 բառերը երեք տեսակ են . գոյ-ւն , ն-ւն  
 և քոյ :

Խօսքին միւս մասերը այս երեք կար-  
 գէն յառաջ կուգան . ինչպէս յար , որդի-  
 նաւը ուրիշ բան չ'են , բայց եթէ գոյական  
 կամ ուրիշ բառ մը . ընդունելու-նիւնը՝ բայ և

ածական է . Եւ-դէ-ն-ն և շահ-դէ վերա-  
բերութիւն մը կը ցուցնեն . Բն-դէ նախագ-  
րութենէ մը և գոյականէ մը բաղկացած  
է , իսկ Եւ-դէ-ն-ն գալով ասիկա զեղ-  
ջեալ ամբողջ խօսք մ'է , որ իր մէջ կը պա-  
րունակէ երեք տեսակ բառերն ալ . այսինքն՝  
գոյական մը , բայ մը և ածական մը , ինչ-  
պէս՝ -ւէ բառը կը նշանակէ՝ Կ-ւ-ւէ՛ մ-մ-  
ն-ն-ն-ն կամ Կ-ւ-ւէ՛ մ-մ և կամ ուրիշ  
խմաստով մը :

Լեզուն իմացականութեան թարգմանը  
ըլլալով որչափ որ այս թարգմանը յստակ  
և կանոնաւոր ըլլայ՝ այնչափ ալ լեզուն  
բարեոք կըլլայ . կատարեալ կ'ըլլայ լեզուն՝  
եթէ իր արտայայտութիւնը՝ գաղափարին  
ճշգրիտ պատկերը ըլլայ . կամ ուրիշ կեր-  
պով մը խօսելով , լեզուն այնչափ կատար-  
եալ կըլլայ՝ որչափ որ աւելի ճիշտ նշան-  
ներով բացատրէ իմաստը : Բայց այս նոյ-  
նութիւնը և ճշգրութիւնը միայն հաշուող  
լեզուներու մէջ կրնայ գտնուիլ ուր ամեն  
բան անփոփոխ է , մինչդեռ փիլիսոփայա-  
կան , բարոյական , գրագիտական ուսմանց  
մէջ միեւնոյն բառերը իմաստը կը փոխեն  
տարբեր մտքերու նկատմամբ : Այսպէս

որևիցէ լեզու մը՝ բաց ՚ի հաշուոյ լեզուէն՝  
աւելի կամ՝ նուազ կատարեալ կրնայ ըլլալ ,  
իսկ բացարձակ կատարեալ ոչ երբէք :

Քարուք լեզուի մը յատկութիւններն  
են . Երբեք չեն կամ Գրեք , Գրուք ,  
Հարեք և Երեք կամ Երեք ( ana-  
logie ) :

Կատարեալ լեզու մը պէտք է յստակ  
ըլլայ , այսինքն՝ բառերը պէտք է լոյսի  
պէս ցոլացնեն իրենց ցուցըցած գաղա-  
փարը :

Լեզուն պէտք է ունենայ կամ Գրե-  
ք . այսինքն՝ ամենայն կերպով գիւրա-  
հասկանալի . որովհետեւ լեզուն ուրիշի բան  
հասկցնելու համար սահմանուած է : Պէտք  
է Գրեք ըլլայ . այսինքն՝ այնպէս որ իւրա-  
քանչիւք գաղափար մէկ բացատրութեամբ  
մը յայտնուի : Պէտք է Գրեք ըլլայ . այսինքն՝  
բառը միայն գաղափարի պէտք է պատշա-  
ճի և ոչ թէ ըստ հաճոյս զարդի տեղ գոր-  
ծածուած :

Եթէ լեզուն ճիշտ ըլլայ՝ հարկաւ հա-  
րուստ կ'ըլլայ . վասն զի եթէ իւրաքան-  
չիւք գաղափարը իրեն սեպհական նշան  
մը ունենայ՝ հարկաւ լեզուին մէջ շատ մի-

ջոյներ պէտք կըլլան մտաց պիտոյքները յազեցնելու համար, այսինքն ամեն դադափարի սեպհական բառեր հարկ կըլլան որով լեզուն կը հարստանայ :

Վերջապէս պէտք է լեզուն նշն-նշն ըլլայ . (analogique) այսինքն՝ պէտք է որ իւրաքանչիւր բառ ճիշտ բացատրէ իր ցուցըցած գաղափարը կամ անոր հետ նոյն ըլլայ : Ահա այսպէս լեզու մը ոչ անկանոն հոլովմունք և ոչ խոնարհմունք պէտք է ունենայ . իր խոնարհմունքները և հոլովմունքները սակաւաթիւ ըլլալու են . և լեզուին արմատները սորվելուն պէս, մարդս կարենայ անմիջապէս այն լեզուն սորվիլ :

Չկայ լեզու մը, որ այս հինգ յատկութիւնները միանգամայն ունենայ :



# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

## ԳԼՈՒԽ Ա.

ՅԱՂԱԳՍ ԴՊՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ

### ՅՕԴՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

1.- ՅԱՂԱԳՍ ԳԵՂԵՑԻԿ ԵՒ ԲԱՐԻ ԳՐՈՑ  
ԿԱՄ ԴՊՐՈՒԹԵԱՆՑ

1.- Իմացական աշխարհին մէջ միայն  
երեք բան կայ . հմտութիւն , բարի , և գիշտիկ :  
Այս երեք բաները ուսման մէջ իրարմէ  
բաժնելը ուսումը և միտքը խամբել է .  
ուսումը այն ժամանակ յարգի կըլլայ , երբ  
գիտութիւնը և առաքինութիւնը տաղան-  
դը և բարոյականը , հանճարը և ճշմար-  
տութիւնը իրարու հետ կցորդուին :

2.- Ահաւասիկ ասոր համար է որ նախ-  
նիք դպրութիւն նշանակել ուղած ատեն-  
նին , բարի ԳՐՈՒԹԻՒՆ , բարի ԳՐՈՒԹԻՒՆ ,  
և ԳՐՈՒԹԻՒՆ կը կոչէին . այսինքն՝ կիրթ ,  
սիրուն դպրութիւնք՝ որ կ'ամօքեն բարքը  
և կը քաղաքակրթեն զժողովուրդս . քրիս-



տոնէութեան ժամանակ զբնական զգացումսն ըսել :

3.- Գեղեցիկ Գործնական անունը հին լեզուաց մէջ չգտնուիր, ասիկա նոր ժամանակաց ասացուած մ'է. բայց և այնպէս անիկա արգելք մ'ըլլալու չէ քանի որ Գործնական բառը գործածելու՝ որ մարդկային ուսմանց ճշգրիտ առարկային բացատրութիւնն է :

4.- Բարի դպրութիւնք անունը երկու իր կը սլարունակէ. այսինքն՝ դպրութիւնը բարի կ'ընէ զմարդ, և մարդ պէտք է որ բարի ըլլայ՝ որ կարենայ զանոնք կատարեալ յաջողութեամբ մշակել : Դպրութիւնք բարձր մտածութեանց կը հանեն զմեզ, կը վարժեն վսեմ խորհրդածութիւններու, առաքինութիւնը սիրելի կ'ընեն, մարդկային բնութեան մէջ գտնուած վայրենութիւնը և թանձրամտութիւնը կը մաքրեն, կը յստակեն. անոր բուռն փափաքներուն սանձ կը դնեն, մարդկային ընկերութեան մէջ սիրուն, անուշ կասկածութիւն մը հաստատելով կը զարդարեն զայն և կը բարդաւաճեն :

5.- Ուստի կարող ենք ըսել որ՝ գեղեցիկ

յնկե զբնիչ Բ-ն չէ, Բ-ոց երէտ յն՝ որ Բ-բն է:

Գրագիտութեան մէջ գեղեցիկին հա-  
կառակը Գ-ն բառը չէ, այլ Գ-ն. այսպէս՝  
առաքինութիւնը Բ-բն է՝ ընդ զգրութիւնս,  
ճաշակը ինքնին զանոնք. ինչպէս կ'ը-  
սէ փիլիսոփայ մը. Գ-ն ինքնին չէ՝ երբ  
չ'ընդ է՝ Բ-բն զբնիչ-ն զ-բնիչ-ն:

### ՅՕԴՈՒԱՆՍ Բ.

#### 2.- ՅԱՂԱԳՍ ԳԵՂԵՑԿԻ ԵՒ ՃԱՇԱԿԻ

1.- Գեղեցիկը այն է՝ որ մէկ մասին  
հաճելի չ'ըլլար, այլ ամեն մասին և ամե-  
նուն առհասարակ. կամ՝ գեղեցիկը այն է՝  
որ ամենէն գեղեցիկ գատուած է: Այսպէս՝  
Հ-Բ-ն ինքնին էն հաստատելու համար.  
բաւական է գիտնալ որ զայն կարգացող  
բոլոր ժողովուրդները այնպէս գատուած են,  
և բարբարոսներն ալ նոյնը պիտի վկայե-  
ին, եթէ կարենային զայն հասկընալ:

2.- Արդ՝ եթէ գեղեցիկը այն է՝ որ  
ընդհանրապէս գեղեցիկ ընդունուած է,  
բնիչ Գ-ն ինքնին չ'ընդ է՝ այսինքն ճշմարիտ  
այն է՝ որ այս տիեզերական գատման կը

համապատասխանէ : Լատինք դատում կանուանէին զճաշակ : Սակայն ճաշակի և դատման մէջ խտրութիւն կայ . վասն զի դատումը արհեստներու մէջ բանաւորը կընտրէ , իսկ ճաշակը՝ հաճոյականը : Արդ այս երկու իրերը միարանելով կընանք ըսել՝ որ ճշմարտութիւն և ընդհանուր հասկացումն է :

Յ.- Ճաշակի սկզբունքները տրամաբանական սկզբանց պէս բնական են մարդկային մտաց : Յիրաւի ամենէն անուսումն և թանձր մարդիկ անզգայ չեն երկնից և երկրի գեղեցկութիւններուն , որ իրենց աչաց առջեւ կը պարզուին . ամենէն անվարժ ականջը կընայ հասկնալ ներդաշնակութեան մը մէջ տեղի ունեցած անհաճոյ և խառնաձայն եղանակ մը . գեղեցիկ նկար մը , նկարչութեան վտարիկ գաղափար , մ'իսկ չունեցողին աշադրութիւնը կը գրաւէ . եթէ իրեն հարցնես ասոնց պատճառը՝ ստոյգ է որ կարող չէ իր տրաւորութիւնները բացատրել , սակայն զգացումը իրեն համար նոյնն է , ինչ որ է ուսումը գիտնոց համար : Աստի կերեւի որ ճաշակին սկզբունքները իներքս մար-

դոյ կան, թէպէտ և մշակութեան սակա-  
սութենէն քիչ զարգացած ըլլան կամ յու-  
ռի դաստիարակութեամբ, դարուն նա-  
խասպաշարմամբը և ուրիշ սլատճառներով  
խամբած :

Կ. - Ճաշակը ուղղութեան կարօտ է :  
Իշխանութիւնը մտաց առաջին սէտքն է :  
Եթէ իշխանութիւնը կամ կառավարութիւ-  
նը բարոյական օրինաց վրայ հիմնուած է,  
կարող է գպրութիւնները անեղծ սլահել,  
իսկ եթէ իշխանութիւնը վատթար է, ըն-  
կերութեան հիմը խարխուլ է. ընտիր ճա-  
շակը կը կորսուի և իրեն կը յաջորդեն ան-  
սլիտան գաղափարներ, շողօքորթութիւն-  
ներ ու իմաստակութիւնք : Այս իշխանու-  
թիւնը նոյն իսկ մարդկային բնութեան  
յարմար ճաշակն է : Գեղեցիկը այն է՝ որ  
հաւասարասլէս ամեն ճաշակի տէր մար-  
դոց զարմանքը կը գրաւէ :

Ճ. - Ճաշակը ընտիր հեղինակաց ըն-  
թերցմամբ կը կրթուի : դարձեալ ճաշակի  
ուղղութեան և կրթութեան մեծասլէս կը  
նսլաստեն միևնոյն սեռի գեղեցկութիւնք  
իրարու հետ ուղիղ բաղդատել, դատո-  
ղութիւն և հետաղօտութիւն :

Այսպէս՝ ճաշակը իր խիստ կատարեալ  
 վիճակին մէջ նկատուելով ուրիշ բան չէ,  
 բայց եթէ բնութեան և արուեստի ար-  
 տադրութիւնը: Պէտք է որ գեղեցկու-  
 թեան բնական զգացումը իրօք գեղեցիկ  
 եղած առարկայներու վրայ ուշադրութիւն  
 բնեւոր զարգացնենք և մտաց լուսով ա-  
 ռաջնորդենք:

Կիրթ ճաշակը բարւոք սիրտ և բար-  
 ւոք միտք միանգամայն կը սլահանջէ. կամ՝  
 զգայուն, փափուկ սիրտ և ուղղախոհ միտք  
 կ'ուղէ: Բարոյական գեղեցկութիւնները  
 ըստ ինքեան ոչ միայն դերազանց են  
 միւսներէն, այլ նաեւ ճաշակին վրայ աւե-  
 լի ներգործութիւն կ'ընեն քան թէ միւս-  
 ները:

Զգացում, բարուց բոյս (caractère),  
 մարդկային արժանաւոր գործ ըսելը ազ-  
 նիւ զգացմունք ունենալ, աղէկ գրել ը-  
 սել է. և սով որ առաքինական զգացում  
 չունի՝ ոչ տաղանդ, ոչ սիրտ և ոչ գրիչ ու-  
 նի: Այն՝ որուն սիրտը խիստ է, որ փափ-  
 կութենէ զուրկ է, որ չգիտէ զարմանալ  
 մեծին և վսեմին վրայ, որ քաղցր և գորո-  
 վական զգացում չունի՝ բնականապէս միշտ

Թերի կը հասկնայ ճարտասանութեան և բանաստեղծութեան գեղեցկութիւնները և վսեմութիւնները :

6. - Կիրթ ճաշակին հանդամանքները կրկին են՝  $\frac{1}{2}$ - $\frac{1}{4}$ - $\frac{1}{8}$ - $\frac{1}{16}$  և մտրո- $\frac{1}{2}$ - $\frac{1}{4}$ - $\frac{1}{8}$ - $\frac{1}{16}$  :

Փափկութիւնը կը կայանայ զգայունութիւնը լաւ մշակելու մէջ : Փափուկ ճաշակ ունեցող մարդիկ՝ ստոյգ է որ՝ միւսներուն պէս մեծ սաստկութեամբ կ'զգան ազդու բաները, բայց ուրիշներէն աւելի ճշդութեամբ կ'որոշեն, կը փնտռեն ամենանուրբ կէտերը. և փոքրիկ գեղեցկութիւն մը ինչպէս նաեւ փոքրիկ արատ մը չկրնար անոնց ուշադրութենէն փրկել :

Ճաշակին յստակութիւնը կը կայանայ անոր՝ դատողութեան հետ ունեցած սերտ կապակցութեան մէջ :

Յստակ ճաշակի տէր մարդ մը ոչ երբէք կը խաբուի սին գեղեցկութիւններէ. ճշդութեամբ կը հաշուէ, ուղղութեամբ կը բաղդատէ, և հանճարին զանազան դործոց գեղեցկութիւնները անաշուուութեամբ կը դատէ :

7. - Ճաշակը՝ իբրեւ հոգւոյն մէկ զգա-

ցումը նկատուելով ուսման, կազմութեան, ունակութեանց համեմատութեամբ կը փոփոխի. այսինքն՝ կիրթ ակործակը այնչափ աւելի բարգաւաճ կ'ըլլայ որչափ որ միտքը զարգացած վարժ և կազմութիւնը փոփոկ կ'ըլլայ :

Այս տեսակ ճաշակը չը դատեր՝ այլ կղզայ : Իր սնունդն են թէ ցնորք և թէ իրողութիւնք . ստութիւնը ճշմարտութեան պէս իր հաճոյքները կը գդուէ, և սրտաշարժ ցնորքներու այնչափ սիրահար է, որչափ որ կաթոգին պատմութիւններու :

Սակայն պէտք է դիտել որ ճաշակի այս տարբերութիւնը արդեւք մը չէ ճաշակի միութեան, քանի որ մարդիկ կրնան իրենց հաճոյքները այլ և այլ կերպով վայելել :

Այսպէս Պուալօ և Ռասին միեւնոյն ճաշակը ունէին, բայց նոյն զգացումը չունէին : Պուալօն Ռասինի պէս կը դատէր, բայց անոր պէս չէր զգար : Ռաստի ճաշակը կատարեալ ըլլալու համար պէտք է որ ուղիղ գատման հետ հոգւոյ զգայունութիւն, հաճոյից և վշտաց սաստիկ բերում մ'ունենայ :

Տ. - Ճաշակը դրադիտու թեան մէջ եւ  
 աւանդուն և արագ զգացում մ'է, զոր մարդ  
 կ'ունենայ արհեստի նրբութեանց, անոյ  
 փափկութեանց, անոր գեղեցկութեան և  
 մինչեւ անգամ անոր ամենափոքրիկ սլա-  
 կասութեան վրայ: Ճաշակը գրուածոց մէջ  
 բնական դատում մ'է, որ կ'առաջնորդէ մը-  
 տաց: Կը կանսնաւորէ երեւակայութիւնը.  
 որ կը մերժէ ըստ տեղւոյն՝ գրուածոց զար-  
 դերը և շնորհքները. վերջապէս միշտ զմեզ  
 բարւոյն, գեղեցկին և ճշմարտին մէջ սահ-  
 մանափակ կ'ընէ:

ՅՕԴՈՒԱՄ Գ.

Յ. - ՅԱՂԱԳՍ ԲԱՆԱԴԱՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԿԱՆՈՆԱՅ

Ա. - Բանադատութիւնը՝ (critique) տը-  
 բամարանութեան և ճաշակի արհեստից  
 վրայ սլատչածիլն է:

Բանադատութեան առարկան է՝ իւ-  
 բաքանչիւր գրուածի կամ գործի մէջ որո-  
 շել ընտիրը յոռիէն և ճշմարտը սուտէն.  
 ասիկա մասնաւոր սլատահմունքներէն ընդ-  
 հանուր սկզբունքներու կ'եննէ, և այսպէս



կանոններ կամ հետեւանքներ յառաջ կը բերէ, որոնք հանճարին արդեանց հիմն են. այսինքն՝ այնպէս կանոններ կուտայ՝ որոնց մէջ կը բովանդակին գեղեցիկը, բարին և ճշմարիտը, և որոնցմէ գուրս չկայ կանոնաւոր և ընտիր գրուած :

2. - Որեւիցէ գրագիտական գրուածի մը հիմնական կանոնը հետեւին է՝ այսինքն՝ նիւթոյ միութիւն :

Բոլոր երկրորդական գաղափարները պէտք է այս միութեան հետ կցին : Միութիւնը կարգ է և կարգը ամեն արհեստներուն առարկան է . բոլոր գիտութիւնները այս կանոնին հպատակ են, վասն զի անիկա բնական օրէնք մ'է :

3. - Միութեան կանոնը առ մեզ հասած չէ՝ ոչ առաջին հաւատորներուն և ոչ առաջին բանաստեղծներուն ձեռօք, անիկա ոչ հաճոյից և ոչ գիպուածոց ծնունդ է, այլ միւս ընդհանուր օրէնքներուն պէս մարդէն ճանչցուած է : Մարդ զայն գտեր է՝ ոչ միայն ներշնչութեանց մէջ, այլ նաև ընկերութեան բարոյական օրինաց մէջ, որոնք ամեն ժամանակ գեղեցիկին և բարւոյն յայտնութիւններն են :

Կ. - Ուստի՛ միութիւնը գրական օրէնք մը ըլլալէ առաջ բարոյական օրէնք մ'է. նա է որ մարդուն առ ընկերութիւն և ընկերութեան առ Աստուած ունեցած յարաբերութիւնները կը կանոնաւորէ. ասիկա նոյն իսկ մարդկային կենաց սկզբունքն է: Սա կը գտնուի թէ բարոյական և թէ քաղաքական կարգին մէջ, թէ հասարակապետութեան և թէ միապետութեան սկզբանց մէջ:

Բայց ընկերութեան մէջ իբրեւ կանոն ընդունուելուն համար է որ՝ միութիւնը գրադիտական գրուածոց մէջ ալ իբրեւ օրէնք կ'ընդունուի: Այն է որ բանաստեղծին կը ներշնչէ, գրուածի մը այլ և այլ մասանց մէջ ներդաշնակութիւն կը գնէ, միաբանութիւն և համընթացութիւն կը հաստատէ անձանց և դորձոց, մասնաւոր և հասարակաց բարուց, կացութեանց, ճառից մէջ, գաղափարները կը կարգաւորէ, առաքինութեան յարգ, ամենակային պաշտօն կը ներշնչէ, լեզուին փափկութիւն կուտայ և գրուածոց՝ վսեմու ապաւորիչ յատկութիւններ:

Այս միութիւնը որ ընկերութեան կու-

տայ իր զարմանալի կապերը, ճարտարա-  
խօսութեան՝ իւր վեհութիւնը, բանաստեղ-  
ծութեան՝ իւր հրապոյրները, արհեստներ-  
ուն ալ կուտայ ակնախտից վայելչու-  
թիւններ, վրձինին՝ իւր արգասաւոր գոյ-  
ները, քնարին՝ իւր յափշտակութիւնը և  
ճարտարապետութեան՝ իւր վսեմութիւնը :

Յ.— Կանոններու ուսումը անհրաժեշտ  
է : Անտարակոյս մեծ հեղինակները զա-  
նոնք ուսած չեն Հռետորներու վարժարա-  
նին մէջ :

Մոֆոզլ հրաշակերտներ (chef-d'oeuvre)  
գրած էր՝ գեռ Արիստոտէլ թատերական  
արհեստի վրայ կանոն չգրած : Հոմերոս  
վեմ եղած էր Լոնգինոսի ի՞նչ է ի՞նչ ֆէրե  
չկարգացած . սակայն ասկէ չհետեւիր թէ  
կանոնները աւելորդ են : Ասիկա այն ը-  
սել կ'ըլլար թէ մարդկային օրէնքները  
անօգուտ են, վասն զի առաքինիք օրինա-  
գիրքերէն չեն ուսած առաքինութիւնը :  
Հանճարը կանոնէ ըմբոստ է . անիկա ըս-  
տորին մտքերու պէս կամայ ակամայ և  
բռնի չհսպատակիր կանոնաց, այլ ինքնաբեր  
կը գիմէ անոր . աստի կիմացուի որ մար-  
գոց համար առ հասարակ, օրոնք հաւա-

առապէս մեծ հանճար շնն կրնար ունե-  
նալ, կանոն՝ այս փրկարար առաջնորդը՝  
պէտք է, որպէս ղի երեւակայութեան  
ուժգին թափէն մղուելով չմեղանշեն վը-  
սեմին դէմ, որ միայն բարի գեղեցիկ և  
և ճշմարիտ է :

### ՅՕԴՈՒԱՄ Դ :

#### 4.- ՅԱՂԱԳՍ ՀԱՆՃԱՐՈՅ . ՏԱՂԱՆԴԻ ԵՒ ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԵԱՆ

1.- Հանճարը բնական բերում մ'է, որ  
մեզի այս կամ այն ճիւղի մէջ գերազանց  
մարդ կրնէ. ասիկա մտաւոր կարողու-  
թեանց նրբութիւնը և բարձագոյն կէտն  
է. այսպէս, Ռիչլիէօ կամ Պիլմարք  
քաղաքագէտ հանճարներ են, վասն զի  
իրենց աստղագին մէջ պէտք եղած կա-  
տարելութիւնները գերազանց աստիճա-  
նով ունին. նոյնպէս էր Նիւթոն մաթե-  
մաթիքի մէջ, Թիւռէն, Նարօլէան՝ պա-  
տերազմական արուեստի մէջ, և այսպէս  
են ուրիշներ :

2.- Հանճարը ոչ թէ միայն իրեն ներ-

կայացած գեղեցկութիւնները դատելու  
կարող է, այլ նաև նորանոր շնորհներ և  
գեղեցկութիւններ հնարելու յատկութիւնն  
ունի. ճաշակը կ'ընդունի և կը քննէ, հանձա-  
րը կ'ընդունի: Ուստի մէկը կրնայ ճաշակ  
ունենալ, այսինքն՝ այս կամ այն բանի  
վրայ դատողութիւն ընել և հանձար  
չ'ունենալ կամ բան մը չկարենալ գրել:  
Վերջապէս հանձարը բնութեան տուրք է,  
արհեստը և ուսումը հանձարը կը կատա-  
րելագործեն. բայց ոչ կ'ստեղծեն:

3.- Տաղանդը այս կամ այն բանի մէջ  
յաջողելու յատկութիւնն է. գրագիտու-  
թեան մէջ տաղանդը կը կայանայ ճաշակի  
յարմար գործեր գրելու և գաղափարներ  
արտայայտելու վրայ: Տաղանդին բաժինն  
են կարգը, յատկութիւն, սահունութիւն,  
բնական, ուղղութիւնը և շնորհը: Հանձա-  
րը վայրկենական և բուռն ներշնչութիւն  
մ'է, որ կուգայ և կանցնի, և իր սեպ-  
հական յատկութիւնն է ստեղծել: Աստի  
կը հետեւի որ հանձարեղ մարդը իր ներ-  
շնչութեան չափովը կը բարձրանայ և կը  
խոնարհի: Տաղանդը ճարտար նմանող է,  
իսկ հանձարը նմանութիւն չափեր:

Կ. - Երեւակայութիւնը հողւոյն այն կարողութիւնն է, որ առարկայները կը պատկերացնէ մտաց առջեւ, ասիկա, ստացուած ծանօթութիւնները իրենց ամենանուրբ և կենդանի գոյներովը ներկայացընող յատկութիւնն է :

Երեւակայութիւնը որչափ ալ զօրաւոր ըլլայ՝ կը սլարտաւորի ուշադրութիւն ընել իրեն ներկայացուած առարկայներուն, ապա թէ ոչ խառնիխուռն և անորոշ կերպով կը պատկերացնէ զանոնք :

Մարմննթէլ կ'ըսէ :

Փոթորկի բռնուած և խորասուզելու մերձ նաւ մը պիտի նկարագրես : Նախ՝ այս նկարագիրը հետու և անորոշ կերպով կը ներկայանայ մտացդ : Բայց եթէ կ'ուզես որ աւելի մերձ ըլլայ և որոշ, մտաց աչօք զննէ՝ նաւակօժու թեան բոլոր հանգամանքները . օդին մէջ, ջրոց վերայ, նոյն իսկ նաւուն մէջ, քննէ՝ երեւակայէ թէ ի՞նչ կ'անցնի . ըսէ, որ օդին մէջ շթայազերծ հողմունք կատաղարար կը պատերազմին . ամպերը կուտակելով արեւը կը խափանեն, կ'ընդհարին կը բաղխին և իրենց հերձեալ կողերէն փայլակները կը ժայթքին և ահագնագզորդ կայծակը անկէ բաժնուելով կը սլանայ : Ջրոց մէջ՝ այս է տեսարանը . - ալիքները փրփո-

բաղէզ կը բարձրանան մինչեւ յամպս և անոնց վրովուրը կ'անդրադարձէ երկնից փայլակները և ջրային լեռներ կարծես թէ անդունդին վրայ կախուած են և որոնց մէջ նաւը պիտի ընկղմի և նաւը լեռներէ յանդունդ գահավիժելով և անդունդներէն լերանց կատարը բարձրանալով կը տատանի . ավիքները կ'ամեհեն ժայռերուն դէմ և որոց վրայ կը փչին մոնչելով : Նաւը միշտ վտանգէ 'ի վտանդ կը գահավիժի և նաւաստիները՝ ոմանք պարաններու հետ դրաւաժ են և այլք հեղեղօրէն ներս հասող ջուրը պարպելու կը ջանան և նաւուղիղը վաստակարեկ կը թողու զեկը և կը յուսահատի . նաւորդները ողորմագին ճիչ կը բառնան յերկինս և օգնութիւն կը հայցեն : Աուզե՞ս այս նկարագրութիւնը աւելի սրտառուչ և ահարկու ընել և ենթադրէ հայր մը՝ որ իր միակ որդին իր բազկաց մէջ կը սեղմէ և սիրելիք և ամուսինք գիրկ ընդ խառըն կը գոչեն , ա՛նի՛ մե՛ն և եւայլն , եւայլն .

Այսպէս ահա երեւակայութիւնը կ'արգասաւորէ նիւթ մը և անոր ամեն հանգամանքները գիտելով զանոնք ուրիշին մտաց մէջ կը թափանցէ :

ՅՕԴՈՒԱԾ Ե.

Կ - ՅԱՂԱԳՍ ՊԱՏԿԵՐԱՅ ԿԱՄ ՁԵՒՈՑ

1. - Պատկերները կամ ձևերը նկարադիր ցուցնող խմաստներ են : Պոսիւէ փոխանակ ըսելու որ, ԲԵՐԷՆԻՆ՝ ԵՐ ԸՄ ԵՐԷ ԼԵՐԵՆԷՆ՝ ԿԵ ԵՐԷՆ՝ կ'ըսէ որ՝ ԲԵՐԷՆԻՆ՝ ԶԵՊՆԵՐԷՆ՝ ԿԵ ԲԵՐԷՆԷՆ՝ ԲԵՐԷՐԸՆԷՆ՝ ԲԷՂ : Այս ձևով ոչ միայն կը կենդանացնէ և կը զարդարէ իւր գաղափարը՝ ԲԵՐԷՐԸՆԷՆ՝ խորանգունդ և անբաւ վիճ մը ներկայացնելով մեր աչքին՝ այլ նաեւ ահագին աստիճանադարձութիւն մը կ'ընէ ըսելով ԶԵՊՆԵՐԷՆ՝ ԿԵ ԲԵՐԷՆԷՆ՝ ԲԷՂ :

2. - Բուն ձևերը կը դոյանան միակ բառի մը կամ համառօտ շրջաբանութեան մը մէջ : Ինչպէս են այս ասացուածները, ԲԵՐԷՐԸՆԷՆ՝ ԲԵՐԷՆԷՆ՝ դիշերոյ :

Ուստի ձևը տեսակ մը փոխաբերութիւն է, որ անզարդ բացատրութիւնները կը զարդարէ նման առարկայներու զարդերը անոնց սեպհականելով :

3. - Նկարագրութիւնը պատկերէն (image) տարբեր է, վասնզի պատկերը հաստատուն տեղի մը և վայրկեան մը ու-



նի , իսկ նկարագրութիւնը կրնայ շատ մը պատկերները ներկայացնել և պատկերներն ալ ձեւեր . ձեւը գաղափարի մը նիւթական վարագոյրն է , իսկ նկարագրութիւնը և պատկերը շատ անգամ նոյն իսկ առարկային հայելին են :

Այսպէս՝ Անտրոմաքի մէջ Որէստէսի դիտուն վրայ --- ընդ նկարագրութիւն մ'է . իսկ Որէստէսի յուսահատութիւնը ձեւ է :

Կ - Որե իցէ ձեւ փոխարեութիւն մ'է , բայց ամեն փոխարեութիւն ձեւ չէ : Բառերու փոփոխութիւններ կան՝ որ նոր առարկայն այնպէս կը ներկայացնեն , ինչպէս որ է ըստ ինքեան , ինչպէս լեռան --- . մինչդեռ ձեւ ներկայացնող բացատրութիւնը աւելի գոյներով կը ներկայացնէ իր նոր առարկայն . երբ Աքէսիզասի հարցուցին թէ ինչն համար Սպարտա Եղարիսպ չունի . --- Սպարտայէ գոյներն , պատասխանեց , զօրքեր ցուցըներով . այս պատասխանը ձեւ է , որ ինչպէս կը տեսնուի՝ տարբեր է ինչ --- բացատրութենէն :

Ծ - Պատկերը նմանութիւն պէտք է

ունենայ և հետեւաբար բաղդատութիւն մը պէտք է յառաջ բերէ . սլատկերին յըստակութիւնը և թափանձկութիւնը բաղդատութեան ճշգրութենէն կախում ունի . սակայն այս տեսակ ձեւի մէջ բաղդատութիւնը զօրութեամբ , յայտնի՝ կամ ընդլայնուած կըլլայ . բարկացած մարդու մը համար կըսուի , - կը հռչակէ դարձեալ կըսուի , - - - - - , և դարձեալ - - - - - :  
 Ինչ - - - - - :  
 Ինչ - - - - - :

Կը մունչէ խօսքը բաղդատութիւն մ'է , որ - - - - - խօսքովը յայտնուած և - - - - - խօսքովը ընդլայնուած է :

6. - Նխթական առարկայի մը և գաղափարի մը կամ զգացման մէջ եղած նրմանութիւնը շարժման կամ արտադրութեան հաւասարութիւն մը կը նշանակէ : Օրինակի համար , երբ հանճարեղ ճարտարախօս մը մեր մտաց մթապատ ամպը ցրուելով՝ առարկայները աւելի որոշ և յստակ ներկայացնէ մեր երեւակայութեան առջեւ , կըսենք որ այս հանճարը լուսատու է արեւու նման , այսինքն՝ ինչպէս որ արեւը մթութիւնը կը փարատէ՝ այս

հանճարն ալ գաղափարաց քասոխն մէջէն  
ճշմարտար կը յատակէ :

7. - Շատ անգամ ոգատկերով գաղա-  
փար յղանալու գիւրութիւնը ունակու-  
թիւն մ'է և սովորութեամբ նուիրագոր-  
ծուած : Սակէ կը հետևի որ ամեն սլա-  
կեր կամ ձեւ մէկ լեզուէն միւս լեզուի  
ոչ սլեաք է թարգմանուիլ և ոչ կրնայ  
թարգմանուիլ :

Շատ անգամ այնպէս կը սլատահի որ  
մէկ լեզուի մը մէջ այս ինչ ասացուածը  
ձեւ կըլլայ և ակտորժական , հաճելի կամ  
ժողրաչարժ արդիւնք մը յառաջ կը բերէ ,  
մինչդեռ նոյն ձեւը եթէ ուրիշ լեզուի  
թարգմանել ուղենք՝ բոլորովին տարբեր  
արդիւնք մը յառաջ կը բերէ և կամ բնա-  
արդիւնք չունենար . այսպէս Մոլիէր իր  
մէկ կատակերգութեանը մէջ ( grammaire )  
քերականութիւն և ( grand'-mère ) մեծ մայր  
բառերը իբրև համանիշ կարծել տալով  
պարզ գիւղացիի մը՝ շատ զուարթ կատա-  
կերգական ձեւ մը կ'յօրինէ , մինչդեռ նոյն  
ձեւը եթէ ուղենք հայերէնի կամ ուրիշ  
լեզուի յեղուլ արդիւնք մը չենք ունենար :

8. - Կան այնպէս ձեւեր ալ որոնք

ժամանակին հետ կը փոփոխին և այն որ դար մը կամ կէս դար առաջ մեծ ազդեցութիւն ունէր՝ այժմ նայնը չ'ընէր :

9. - Կան ձեւեր՝ որ իբրև պարզ ասացուած հաճելի և յստակ կըլլան, բայց երբ զանոնք ընդլայնենք՝ իրենց յստակութիւնը և ուժը կը կորսնցնեն, ինչպէս . Գ-ձե-տէ -բբէն-ը, ասիկա պարզ և ընտանեկան բացատրութիւն մ'է, բայց երբ փոխանակ ըսելու Գ-ձե-տէ -բբէն-ը այն Գ-ձե-տէ Բ-ձե-տէ-բբէն-ը որ շատ-բարեբախտ իրեն կը հասնանք՝ ըսենք՝ Գ-ձե-տէ -բբէն-ը այն Գ-ձե-տէ Բ-ձե-տէ-բբէն-ը որ իրեն շնչել կ'արան շատ-բարեբախտ, այն ատեն այս ձեւը անյարմար և ծաղրելի կըլլայ . վասն զի հեղուկը չի շրնչուիր՝ այլ առաւել անուշահոտութիւն մը, ինչպէս խունկ, հալուէ եւ այլն՝ ասոնք կը շնչուին :

10. - Լեզուներ ուրիշ բան չեն՝ բայց եթէ սլաակերներու կամ ձեւերու հաւաքածոյ մը, զորս սովորութիւնը զատ զատ անուններով որոշած է և զորս ամեն մարդ կը գործածէ առանց զգալու : Կան ձեւեր որ ժողովրդական են, այլք՝ ազնուական, սմանք ալ ամեն ոճի յարմար : Ուստի հե-

զինակը պէտք է դիտէ որ իր գրուածը վերոյիշեալ երեք կարգէն որոնն կը պատկանի՝ և ըստ այնմ գործածէ ձեւերը :

11. - Իսկ եթէ նորանոր ձեւեր գործածես՝ ընթերցողը իրաւունք ունի պահանջելու որ ճիշդ, յստակ, զգալի և իրարու յարմար ըլլան : Կան ձեւեր, որոնք թէպէտ և բողոքովին կեղծ և սխալ չեն՝ բայց դիւրամբուներէ և զգալի չեն : Լաֆոնթէն ըսած է .

Վասցէք նսեմաստուեր անտառներէն և իրենց լայնածաւալ լուծենէն :

Հոս պատկերը այնչափ զգալի չէ, և լայնածաւալ լուծիւն ձեւը ականջի օտար կը հնչէ :

12. - Պէտք չէ շփոթ պատկերը տարտամ պատկերին հետ շփոթել. վասն զի տարտամը կրնայ յստակ ըլլալ թէպէտեւ անորոշ, տարածութիւնը, բարձրութիւնը, խորութիւնը տարտամ ասացուածներ են՝ բայց յստակ : Երբեմն պէտք կըլլայ խօսքը տարտամ ձգելով ազդու ընել, ինչպէս է հետեւեալ խօսքը .

Յ--ի--ի--ի--ն--ն--ն--ն--ն : ը--ը--ը--ը--ը և ուրիշ ան-

ջըրպետ մը շունենալով իւր և իր Աստուծոյ  
մէջ բայց եթէ իր մեղքը :

Այս անորոշ ասացուածը շատ անար-  
կու է :

13. - Պատկերի մը ճշդութեան և յըս-  
տակութեան վրայ ասպաճով ըլլալու հա-  
մար՝ գրած ժամանակդ ինքնիրենդ հար-  
ցուր , — Ի՞նչ պէտք է ընեմ գաղափարս .  
սիւն մը , գետ մը , տունի մը : Հետեւա-  
բար գաղափարդ ասոնց որի վրայ դառ-  
նայ՝ պէտք է որ ձեռն ալ անոր յարմա-  
րի : Կանոնը պարզ , տպաճով և գիւրին է՝  
բաւական է քիչ մ'ուշադրութիւն ընել .  
և սակայն շատերը այս կանոնին դէմ կը  
մեղանչեն՝ մանաւանդ նոր ուսանողները ,  
որոնք իրենց լեզուին վիլիստովայութիւնը  
տակաւին ուսած չեն :

14. - Պատկերին գաղափարի հետ ու-  
նեցած նմանութիւնը աւելի ուշադրու-  
թիւն կը պահանջէ քան թէ նոյն խիստ պատ-  
կերին ըստ ինքեան ունենալիք ճշդութիւ-  
նը : Ինչպէս տեսնուեցաւ վերը՝ ամեն պատ-  
կեր նմանութիւն կարտագրէ , ինչպէս  
նաեւ ամեն բաղդատութիւն . բայց բաղ-  
դատութիւնները՝ յարաբերութիւնները

կ'ընդլայնեն , մինչդեռ պատկերը միայն զայն կը ցուցնէ . ուստի պէտք է որ պատկերը բաղդատութեան չափ ճիշդ ըլլայ . երբեմն եթէ վերաբերութիւնը հեռաւոր կամ քիչ ծանօթ ըլլայ՝ ճշդութիւնն ալ չի բաւեր : Յոյները Ալկիոն բանաստեղծը -- Ինչպէս կը կոչէին , նշանակել ուղելով թէ՛ ինքն էր որ առիւծները ի մարտ կը դըրդուէր . եթէ մենք ալ մի և նոյն իմաստով ըսենք Ինչպէս թէ՛ թէ՛ սակայն առիւծին նոյն դաղափարը չ'զարթուցաներ : Այսպէս այն պատկերը որ իր բովանդակած փաղափարին ճշդիւ չ'համապատասխաներ՝ փոխանակ զայն զգալի ընելու կ'աղաւաղէ :

15. - Պատկերի ճշդութենէն և յստակութենէն վերջ կուգայ անոր աշխուժութիւնը : Արդ դրագէտին նպատակն ըլլալով երեւակայութեանց վրայ տիրել զանոնք հրապուրելով հետեւաբար երեւակայութեան վրայ ամենէն աւելի ներդործող ձեւերը պէտք է նախապատիւ սեպուին :

16. - Այն իմաստ համեմատաբար կ'օժանդակէ պատկերներու կազմութեան : Այսպէս կ'ըսեն ,

Գաղափարաց Գոյն , խղճի յոյն , ոգւոյ Իշ-  
 րութիւնն , բնութեան Կոչոյրութիւնն , Եւայլն :

17. - Ամեն զգայարանքներէն հոտու-  
 տելիքը նրբագոյն և զգայարանաց վրայ  
 աւելի ազդեցութիւն ընողն ըլլալով անոր  
 վերաբերեալ հաճելի կամ անհաճոյ ա-  
 ռարկայները ազդու պատկերներ յառաջ  
 կը բերեն : Ինչպէս :

Ղեռնածեւ մեռեալներու դիակներ , որոնք  
 գերեզմանի միտքարութենէ զրկուած են , զորս  
 բնութիւնը կ'ստիպէ իրենց վրէժը առնելու  
 անձամբ , իրենց փտեալ մարմիններէն կեն-  
 դանեաց դէմ սլատերազմ գրգռող հոգիէ իջ-  
 րէն հովերուն :

18. - Պատկերին ճշգրտութիւնը միայն  
 բաւական չէ . այլ նաեւ պէտք է բնածին  
 ըլլայ , այսինքն առանց աշխատութեան և  
 ինքնին ներկայանայ հեղինակին մտաց ,  
 Բնութեան բերքերը , պատահարները , ե-  
 րեւոյթները կլիմայներուն համեմատ կը  
 փոխուին , հետեւաբար հեղինակը պէտք  
 է որ իր գրուածին մէջ ամեն տեղին յար-  
 մար պատկերներ գործածէ , եթէ կուզէ  
 որ բնական ըլլայ . այսպէս Գաւիթ՝ բարձ-  
 րութեան և հպարտութեան օրինակ կը





Բնական ճիշտութիւնը պատկերները եթէ չափազանցօրէն և առանց հմտութեան դարձածութիւն փոխանակ առարկային գոյն տալու և զայն զդալի ընելու՝ առաւել կը ձանդորայնեն ընթերցողը և ունկնդիրը և դրուումածին արժէքը կը կորսնցնեն :

ՁԱ. - Գաղափար մը զարգարելու գործը միայն բաւական չէ՝ այլ պէտք է որ զարգարուելու գործին ալ ըլլայ : Աննշան իմաստ մը, ծաղրական խորհուրդ մը եթէ փայլուն և ճոխ պատկերով մը հագուեցընենք՝ ծաղրական կ'ըլլայ . այս անոր կը նմանի՝ երբ ստորին և հասարակ գէմք մը ծաղիկներով և աղամանդներով զարգարուած տեսնենք : Ուստի նորէն մեր նախկին սկզբան դառնալով կ'ըսենք՝ գործը չ'ըլլա : Եթէ գաղափարը աչքի զարնելու արժանի չէ՝ անօգուտ է զայն նկարել :

Հետեւաբար եթէ նկատենք՝ որ գաղափարը զարգարելու չէ՝ եթէ արժանի չ'ըլլայ՝ այն ատեն պատկերներու շնորհով թենէն կ'զգուշանանք և ըստ տեղոյն կը դորձածենք զանոնք . այս է ահուատիկ Ռասինի և Լաֆոնթէնի ոճոյն գեղեցկու-

Թեան սլաճաւք . հարուստ է՝ և ոչ եր-  
բէք բեռնաւորուած :

22. - Կան այնպէս գաղափարներ , ս-  
րանք բարձրանալ կուղեն , այլք՝ ընտանե-  
կան եղանակի վերածելու պէտք ունին :  
Այս մեծ արհեստը կանոն չունի և խոր-  
հրդածութեան տակ չ'իյնար . այլ հեղի-  
նակին խառնուածէն , հմտութենէն , և  
ճաշակէն կախումն ունի :

## ԳՂՈՒԻՅ Բ.

### ՅՕԴՈՒԱՆԻ Ա .

#### 1. - ՅԱՂԱԳՍ ՈՃՈՅ ԸՆԳՀԱՆՐԱՊԵՍ

1. - Ոճ կ'ըստի մեր գաղափարները և  
զգացումները արտայայտելու կերպին :

Ընտիր ոճ ունենալուն կարեւորութիւնը  
ցուցնելու համար՝ հոս կը դնենք մէկ քա-  
նի հռչակաւոր գրադիտաց կարծիքը :

Գրեթէ միշտ ոչ այնչափ գաղափարները՝  
որչափ անոնց արտայայտելու ձևեր տպուորու-  
թիւն կ'ընեն մեր վրայ . վասն զի սակն մարդ

աւելի կամ նուազ աստիճանով ունի այն գա-  
ղափարը՝ որ մարդկային մտքին տակ կրնայ իյ-  
նալ . միայն ո՞ն է որ տարրերութիւն կը դնէ  
այս կամ այն մարդուն գաղափարաց լուու-  
թեանը և յստութեանը մէջ : Ո՞՞ք կ'ազնուացը-  
նէ խիստ հասարակ դաղափարները , կը զօրացը-  
նէ անզօրները , կը բարձրացնէ սխալ ու ստու-  
րիչները . առանց ո՞՞չ անհնարին է որ դրուած  
մը լու ըլլայ :

Բ-բ-բ-բ քրեւ , միանգամայն ք-բ-բ-բ Խ-բ-բ-բ ,  
ք-բ-բ-բ շք-բ և ք-բ-բ-բ -բ-բ-բ-բ-բ-բ է . ասիկա մի-  
անգամայն միտք և ճշտակ ունենալ է . իմա-  
ցական կարողութեանց վարժութիւնը և ամ-  
բողջութիւնը կը ներկայացնէ . միայն ազէ կ'  
դրուածները յապագայս սխալ մեան : Քաղում  
հմտութիւնք , հազուադիւս իրողութիւնք ,  
նորանոր գիւտեր շէն կրնար դրուածի մ'ան-  
մահութեանը երաշխաւորել՝ եթէ բացատրու-  
թեան ձեւը ստորին է . քանզի գեղեցիկ գա-  
ղափարները՝ կրնան յափշտակուիլ աւելի ճար-  
տար ձեւքերէ և 'ի դօրժ դրուիլ . միայն ո՞՞ին  
յատկութիւնն է որ ուրիշ մարդ չի կրնար իւ-  
րացուցանել , վասն զի ո՞՞ք նոյն ինքն մարդն է :

(ՊԻՆՅՅՈՆ)

Չ. - Ո՞՞ք նոյն Խ-բ-բ-բ է . վասն զի ա-  
նիկա մարդուն զգացմանց և գաղափարաց  
սխալներն է : Ուստի ամեն մարդ ինչպէ՞ս

զատ զատ բնաւորութիւն և զգացման տա-  
տիճան ունի, անանկ ալ տարրեր ոճ ու-  
նի: Ոճին տեսակը շատ է, բայց գլխաւոր-  
աբար երկուքի կը բաժնեն. ընդհանուր և  
յատկան:

3. - Ոճը երկու յատկութիւններ ունի՝  
հարմար և յատկան:

4. - Հարմար յատկանները անսնք են՝ որ  
ոճին հիմն և գոյութիւնն են և հետեւա-  
բար չեն փոխուիր:

5. - Յատկան կամ հարմար յատկանները  
անսնք են՝ որ նիւթոյն համեմատ կը փո-  
փոխին:

### ՅՕԴՈՒԱՄ Բ.

#### 2. - ՀԱՍԱՐԱԿ ԵՎ ՅԱՏԿՈՒԹԻՒՆԷ ՈՃՈՅ

1. - Ոճին հասարակ յատկութիւններն  
գլխաւորաբար ութ են. գոյութիւն, յատ-  
կանութիւն, հարմարութիւն, բնական, գոյ-  
ութեան, գոյութեան և ներքին-ութեան:

2. - Պարզութիւնն է՝ զորով և իրարմէն-  
բացատրութիւններ գործածելը. ուստի  
ամեն բանէ առաջ պէտք է որ դրագէտ  
մը իր մայրենի կամ գործածած լեզուին

Հմուտ ըլլայ • բառերուն նշանակութիւնը  
ըստ քմաց վտխելու չէ • ինչպէս • չքուիր •

Եւ հանգեան ընդ վարսաղեղ ծառովն որ  
չուք մեծ ի պարտիզի անդ գործէր •

Քանզի շտապ բառը հեղինակէ և գեղեցիկ  
միանգամայն կը նշանակէ : Սակայն պար-  
զութիւնն ալ իր շտապովն ունի զոր մենք  
հարցնուիմք և կ'անուանենք • ուստի պար-  
զութեան հետեւինք ըսելով գրուածը չը-  
նենք անոր և գեղեցիկ ընելու չէ • անմահ  
սրբազան ճարտարախօս մ'ըսած է • հեղինակ  
ըստ իր շտապովն • ըստգտանելի  
չէ հոս հեղինակ բառը գեղեցիկ հետ գոր-  
ծածուերուն համար՝ քանզի մեծ գեղեցի-  
կութեան մը քով սղտակ տգեղութիւն մը  
չտեսնուիր • ասկէ զատ մեծ հանճարները  
կ'ընեն խիստ կապերէն ազատ են , վասն  
զի անսահման է իրենց ստեղծումը և տա-  
ղանդին թռիչք :

Յ. - Յարցնուիմք ո՞՞ր հիմնական յատ-  
կութիւնն է : Մարդ կը խօսի իր միտքը ու-  
րիշին հասկըցունելու համար , ինչպէս  
կրնայ հասկըցունել և թէ յստակութեամբ  
չբացատրէ զայն :

Կ. - Իմաստը յարցնուիմք համար պէտք

է առաջ լաւ մը խորհել գրելիք նիւթին վրայ և ապա գրել : Պէտք է որ սճը լուսոյ պէս յստակ ներկայացնէ իմաստը . առանց յստակութեան ամենէն ընտիր դարգերն անդամ անողում են :

5. - Մէջը կը ծագի գրելիք նիւթին վրայ հասուն խորհրդածութիւն չընելէն : Այսպէս կ'սկսի հեղինակը ոչ իր բացատրութեան և ոչ իր իմաստին տէր ըլլալ, որով ունկնդրին կամ ընթերցողին բան մը չհասկըցուներ :

6. - Բառերուն ճիշտ գործածութիւնը շատ հարկաւոր է յստակութեան համար : Ընդհանրապէս հոգի թառերը սխալ կը գործածուին :

7. - Հոգի ըսելով պէտք չէ իմանանք երկու բառեր՝ որոնք ամենայն ճշդութեամբ մի և նոյն իմաստն ունին . քանզի իրօք համանիշ չկայ լեզուի մը մէջ, եթէ իրօք համանիշ ըլլար՝ մէկ լեզու մէջ երկու լեզու կըլար :

8. - Համանիշ ըսելով պիտի հասկընանք այնպիսի յոյսեր, բառեր, որոնք ոչ ոք չի բառի մը այլ և այլ յարարերութիւնները՝ նուրբ իմաստները կը բացատրեն :

Օրինակ . ծն , ցն , Բն . այս երեք բառերը քերթելու քերթումն ընդհանրապես կը նշանակեն . քերթելու քերթումն , ահա արմատական խմաստը . բայց ըստ մեզ՝ ծն կ'ըսուի ան՝ որ դարձել չուզեր , Բն կ'ըսուի ան՝ որ շարժել անգամ չուզեր , ցն կ'ըսուի ան՝ որ քերթելու է :

9. - Այսպէս՝ որ լեզուն շատ համանիշունի , այն լեզուն աւելի հարուստ կ'ըսուի : Ոտանաւորի մէջ աւելի տեղի կունենայ մթութիւնը , քանզի հեղինակը վանկերուն և յանգերուն միտ դնելով անհոգ կ'ըլլայ լեզուին :

10. - Ճշգրտութիւնն է այնչափ ուշագիր ըլլալ իր նիւթին՝ որ անկէ դուրս բնաբան չխօսուի : Ճշգրտութիւնը ամեն տեսակ դրուածքի մէջ մի և նոյն չէ . օրինակի համար , փիլիսոփային , պատմադրին և բանաստեղծին ճշգրտութեանց պարտաւորութիւնները նոյն չափովը չեն , սակայն ամենուն ալ սկզբունքը մէկ է , այսինքն՝ արդիւն է արդիւն յիշել : Ճշգրտութիւնը երբէք չհակառակիր ոճոյն վայելչութեանը և ճոխութեանը :

11. - Ճշգրտութեան հակառակն է արդիւն



Եւստիւսիւս : Շատախօսութենէ խորչելու համար անպիտան հանգամանքներու վրայ շատ դեգերելու չէ, բաց ի ասկէ՝ մի և նոյն խօսքը շատ անգամ կրկնելու չէ :

12. - Բնական է իր իմաստները և ըզգացումները այնպէս արտայայտել՝ որ բռնադրօսիկ կամ ճոռոմական չըլլայ, այլ ինքնազարդ և գիւրիմաց :

13. - Անկարելի է որ գրուածք մը օգտակար և հաճոյական ըլլայ առանց բնականի . աւելի պէտք է իբրեւ հարգելի քան թէ իբրեւ հիշատակ :

14. - Բնականին հակառակն է որոշակի, որով հեղինակ մը կը ջանայ շատ երկար կերպով մտածել, կամ ընդհանրապէս ասացումներ գործածել : Ասիկա ճամարտակի գործ է . ով որ գտնալու շատ ջանք կը ցուցնէ՝ ըսել է որ չունի . ընտիր իմաստները ինքնիրեն սրտէն և մտքէն կը բղխին : ուստի ջանալու է զգացումները արթուն պահել և միտքը մշակել . ահաւասիկ որոշակի : Երբ մէկը այս չունի, պարագայ տեղը կը ջանայ գիւտ ընելու . աւելի աղէկ է միջակ բայց կանոնաւոր բան մը գրել՝ քան թէ բարձրանալու ջանալ և

բողոքովին յատակը իջնել : — Գրագէտ մը  
տիկնոջ մը նամակ գրելով այսպէս կ'ըսէ .

Կարծեմ թէ դուք Նեղոսի ակունքը գի-  
տէք , և այն ակունքը ուրիշ ձեր խնայանքը  
կ'տանէք՝ աւելի ծածուկ և անծանօթ են :

15. — Աշխարհի մէջ ստորին ձեւեր չը-  
գործածելը , հարգել , սիրել խնայող մը  
բարձրացնել՝ ընտիր բացատրութեամբ և  
հրատարակել ձեւերով : Ինչպէս այս խօսքը

Վիշաք յաւիտեան չի մնար :

Լափօնթէն այսպէս կը բացատրէ .

Տխրութիւնը կը թռչի ժամանակին թեւո-  
ցը վրայ :

16. — Ազնիւ բացատրութեանց մէջ միա  
գնելու է ժամանակին , սովորութեան ,  
բարուց համեմատ ասացուածներ գործա-  
ծելու . կան այնպիսի ասացուածներ որ  
մէկ ժամանակի մը մէջ ազնիւ փափուկ  
փեմ՝ են , բայց ուրիշի մը մէջ ծաղրական  
և ստորին :

17. Պէտք է գրուածի մէջ ըզ-  
գացմանց և խնայող համեմատ ասաց-  
ուածները փոխել . այսինքն՝ Գրք , Գրք-  
ի , Գրքի , կամ Գրք գրել . երկար միա-

կերպու թիւնը կը ձանձրացընէ և գրուածին  
յարգը կը կորսնցնէ :

18. - Պատշաճութիւնն է  
նախ՝ մէկ նիւթին համեմատ իմաստ գոր-  
ծածել , այսինքն ուր պարզութիւն , և  
ուր փափկութիւն պէտք է . երկ-  
րորդ՝ նիւթին համեմատ զգացում՝ յուզել .  
երրորդ՝ իւրաքանչիւր իմաստին և զգաց-  
ման սեփական բացատրութիւնները գոր-  
ծածել . չորրորդ՝ ամեն անձի բերանը իր  
փիճակին համեմատ լեզու դնել : Ծառայ  
մը և ազատ մը , երեւելի մը և աննշան մը՝  
միւսոյն կերպով չեն կրնար խօսիլ :

19. - Ներդաշնակու-  
թիւնը բուն երկու տեսակ է՝ բաց և շ-  
տապ : Բառից ներդաշնակութիւն է՝ վան-  
կերը , բառերը կամ ամբողջ պարբերու-  
թիւնները այնպէս բացատրել՝ որ իրարու  
վրայ թաւալելով ախորժալուր ըլլան :

20. - Ներդաշնակութիւնը իմաստից հա-  
մար այն է՝ ինչ որ է երաժշտութիւնը բառից .  
այսինքն՝ ինչպէս որ երաժշտութիւնը կը կեն-  
դանացընէ մինչեւ անգամ ստորին գրուած-  
ները , նոյնպէս ալ ներդաշնակութիւնը բա-  
ռերուն նոր նշանակութիւն մը կուտայ և  
զանոնք կը փափկացընէ , ինչպէս ,

## ԱՐՏԱՍՈՒՔ ԿՈՒՍԻՆ

Լա՛ց , ո՛ կուսիկ , զի արտասուք  
կուսին ի բիբ են մարգըրիտ .

Լա՛ց , ո՛ կուսիկ , զի տրամասուդ  
Զքնաղ եւս են աշկունք վըճիտ :

Ըզխտիկամէջք սիրեմ ծաղիկ  
Որ ի դաշտին կայ սլատկառուկ ,  
Ըզնա գիշերոյ սլճնէ ցօղիկ  
Արասոր ըզգլուխն առնէ կախուկ :

Սիրեմ ըզողս ես լուսարփի  
Որ ի նամէտ ծոցոյ ամսոյն  
Ի ծով ծաւալ փայլ ըզփայլի  
Ոսկի հերաց ցոլան հանգոյն :

Զանմա՛ն փախուկ սիրեմ հրեշտակ  
Որ ըզգիմօքն ածեալ թեւեր  
Մատունք ի քնար տխրահընչակ  
Լայ զմարդկան շ' երկրի դաւեր :

Լա՛ց , ո՛ կուսիկ , և գըթութիւն  
Ոչ սրբէ զայն շիթս անուշիկ ,  
Այլ կայ յակճիռ և զհայլուն ,  
Այնքա՛ն , թէ լաս ես գեղեցիկ :

Լա՛ց , ո՛ կուսիկ , մինչեւ յերկնից  
Իջցէ դաւար երջանկութիւն  
Եւ գգուեսցէ զայտերդ ամբիծ  
Եւ զգլխիկդ այն գրգասուն ,

Թուխ աշերոյդ տացէ համբոյր  
 Չարութսր անտի սրբել խազառ  
 Եւ իրր իրոց անուշարոյր

Հալեալ ցնդին չիթք լուսավառ :

Մ. ՊԵՏԻԿՈՍԵՆԵԱՆ

ՅՕԴՈՒԱՆԻ Գ.

Ծ. - ՄԱՍՆԱԻՈՐ ՅԱՏԿՈՒԹԻՒՆԻ ՌՃՈՅ

1. - Ոճին մասնաւոր յատկութիւնները  
 անոնք են, որ նիւթին համեմատ կը փոխ-  
 ուին : Նիւթերը երեք մեծ կարգերու կը  
 բաժնուին. Դ-ԴԷ, Բ-ԲԵ-ԴԴ, և Է-ԷԴ : Այս  
 տարբերութեանց նայելով գլխաւորապէս  
 երեք տեսակ ոճ կայ. Դ-ԴԷ, Բ-ԲԵ-ԴԴ, և  
 Է-ԷԴ :

2. - Մակայն պէտք չէ իմանալ որ վը-  
 սեմ՝ ոճը իր մէջը չ'բովանդակեր պարզին  
 կամ բարեխառնին յատկութիւնները. նոյն-  
 պէս պարզ և բարեխառնը բոլորովին զուրկ  
 են վսեմին բարձրութենէն. ընդհակառա-  
 կըն շատ անգամ ճարտար արհեստով մը  
 իրարու հետ կը խառնուին :

1. - ՊԱՐՁ ՌՃ

1. - Պ-ԴԷ ոճն այն է՝ որ մասնաւորա-

սկէս տեղի ունի նկարագրութեանց, սլա-  
մութեանց, նամակներու, միտով բանիւ  
բոլոր այն գրուածոց մէջ՝ որոնք ք-ընդ կամ  
--ճի՛ն ձեւերու սկէտք չունին: Պարզ ո-  
ճին ընդհանուր յատկութիւններն են՝ ք-  
ն-ի-նն և քի-ըն-ի-ն-ը:

Օրինակ .

Մեծ է սէրն Աստուծոյ քան զամենայն մե-  
ծութիւն երկրաւոր, և այնպէս աներկիւզս առ-  
նէ զմարդիկ իբրեւ զանմարմին զօրս հրեշ-  
տակաց, որովչս անգատին ի սկզբանէ է տե-  
սանել զբազումս բազում անգամ ի բազում  
տեղիս . մարդիկ որ սիրովն Աստուծոյ իբրեւ  
զինու վառեալք էին՝ ոչ ինչ խնայեցին զան-  
գիտելով իբրեւ զանարի, զսլով վատասիրտք՝  
կամ ի մահ անձանց՝ կամ ի յափշտակութիւն ըն-  
չից՝ կամ ի խողխողումս սիրելեաց, և ըսնել ի  
հայրենի երկրէն և անկանել ի ստրկութիւն  
յօտարութեան . առ ոչինչ համարեցին զայս  
ամենայն անցս չարչարանաց, այլ միայն միա-  
բան կալ ընդ Աստուծոյ:

(ՅՂԻԵԷ)

2. - Պարզ ոճին մասնաւոր յատկու-  
թիւններն են գ-ըն-ի-նն, քի-ըն-ի-նն,  
հ-ըն-ի-նն և քն-ըն-ի-նն:

3. - Պ-ըն է՝ առանց արուեստի և զար-

դուց գրել . այս ձեւը ինչպէս ըսինք՝ խորին մտածութիւններ ալ կրնայ պարունակել . ինչպէս ,

Երանի ում սատճառաց էից գիտաց գուլ խելամուտ ,

Եւ դամենայն արհաւիրս և դանողոք ճակատադիր ,

Եւ դանյագ տարտարոսի շռինդ և շուկն առ ոտն եհար :

(ՎԻՐՊՈՒ ՄՇԱԿԱՅԱՆՔ)

Կ. - Գլխիսցոյնն է լաւ խորհել գրելիք նիւթին վրայ , և անոր կապակցութիւններն ու անցումները այնպէս կանոնաւոր յօրինել , որ ընթերցողը կամ ունկընդիրը առանց երկար խորհրդածելու կարենայ գրուածին իմաստը ըմբռնել :

Ծ. - Համառօտութիւնն (concision) է՝ քիչ բառով շատ իմաստ յայտնել . ինչպէս ,

Արչափ սանդուխտ տեսայ՝ այնչափ առաւել սիրեցի հայրենիքս :

Ծ. - Յո՛ւստո՛սն այն է , յորում հեղինակը պարզ գրել ուղելով՝ կը թօթափէ բնական զարդերն անգամ և գրուածը տաղտկալի կ'ընէ : Ասիկա հոգեւորական և հոգեւորական միւս ծայրն է :

7. - Բնօրին գորգը-նիւնն (naïveté) է առանց  
խորհրդածութեան և ջանից ինքնին եկած  
իմաստը .

Օր մը Հէնրի չորրորդ հարցուց իր նաւա-  
վարին թէ՛ « ինչո՞ւ մազերդ ճերմակ են իսկ մօ-  
րուքդ սև ։ » Միամիտ նաւավարը պատաս-  
խանեց , « տէր արքայ՛ , ասոր պատճառը խիստ  
բնական է . - վասն զի մօրուքս մազերէս քը-  
սան տարու պղտիկ է ։ »

## 2. - ԲԱՐԵԹԱՌՆ ՈՃ

1. - Բարեբեռն - ճշ այն է՛ որ պարզին և  
վսեմին միջին տեղը կը բռնէ . ասիկա ա-  
մեն տեսակ զարդ կրնայ ունենալ՝ պարզ  
ոճին ընթացքէն շատ չխտորելով :

Բարեխառն ոճին մասնաւոր յատկու-  
թիւններն են . վայելչ-նիւն , ճիւղ-նիւն , շուր-  
բ-նիւն , և քիւր-նիւն :

2. - վայելչ-նիւնն է կսկիկ և զարդա-  
րուն լեզուով ընտիր և գեղեցիկ իմաստ-  
ներ բացատրել , այնպէս որ -նիւն , -դիւն և  
-դիւն միանդամայն հաճելի ըլլայ : Մայր-Ա-  
րաքսի երգը սքանչելի օրինակ մ'է ա-  
սոր :



## ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ

Մայր արաքսի ամերով  
Քայլամորար գընում եմ,  
Հին հին դարուց յիշատակք  
Ալեաց մէջը պարում եմ:

Բայց նորս միշտ յեղեղուկ  
Պզտոր ջրով եղերքին՝  
Դարիւ դարիւ խփելով  
Փախչում էին լալագին:

Արա՛քս, ինչո՞ւ ձկանց հետ,  
Խաղ շեռ բռնում մանկական.  
Դու դեռ ծովը չը հասած՝  
Սդաւոր ես ինձ նման:

Ինչո՞ւ արցունք ցայտում են  
Դու սէգ հպարտ աչերից.  
Ի՞նչու արագ փախչում ես  
Այդ հարազատ ամերից:

Մի՛ պզտորեւ յատակդ,  
Հանդարտ հոսէ՛ խայտալով.  
Մանկութիւնը քու կարճ է,  
Շուտ կը հասնիս դէպ ՚ի ծով:

Վարդի թփեր թո՞ղ բըսնին,  
Քու հիւրընկալ ամի մտտ.  
Սոխակները նոցա մէջ,  
Երգեն մինչեւ առաւօտ:

Մշտադալար ուռիներ ,  
 Սառ ծոցի մէջ քու ջրին .  
 Ճկուն սատրն ու տերեւ ,  
 Թո՛ղ թաց անեն տասյ օրին :

Ափերիդ մօտ երդելու ,  
 Հովիւք թող դան համարձակ .  
 Քառն ու ուլը քու վճիտ ,  
 Զուրը մտնեն միշտ արձակ :

Մէջքը ուռցուց Արաքսը ,  
 Փրփուեր հանեց իւր տակից .  
 Ամպի նման գոռալով ,  
 Լսպէս խօսեց յատակից :

« Խիզա՛խ , անմի՛տ պատանի ,  
 Նիրհըս ինչո՞ւ դարեւոր .  
 Վրդովում ես , նորոգում  
 Իմ ցաւերը բիւրաւոր :

Սիրելիի մահից յետ ,  
 Ե՛րբ ես տեսել , որ այրին  
 Ոտից ց՛ղլուխ սճնուի  
 Իւր զարդերով թանկագին :

Որի՞ համար զարդարուիմ ,  
 Որի՞ աչքը հրապուրեմ .  
 Շատերն՝ ինձ են ատելի ,  
 Շատերին՝ ես օտար եմ :

Իմ ազգակիր դիժ Քուռը ,  
 Թէ՛ և այրի ինձ նբման .  
 Ըտարկօրէն տանում է ,  
 Քայլժակդիչի կուռ շլթան :

Բայց նա ինձ չէ օրինակ ,  
 Ես Հայ հայիս կը ճանչնամ ,  
 Օտար փեսայ շուղելով ,  
 Ես միշտ այրի կը մընամ :

Կար ժամանակ , որ ես էլ ,  
 Շքեղազարդ հարսի պէս .  
 Հազար ու բիւր պարանքով ,  
 Փախչում էի ափերէս :

Յատակս պարզ ու վճիտ ,  
 Կոհակներս ոլորուն .  
 Լուսարերը մինչեւ ցայգ ,  
 Զրիս միջին էր լողում :

Ի՞նչս մնաց այն օրից ,  
 Ո՞ր ջրամօտ դեղերս .  
 Ո՞րը իմ չէն քաղաքից ,  
 Ո՞ր բերկրալի տեղերս :

Տուրքը ջրի ամեն օր ,  
 Իր սուրբ ծոցէն Արարատ .  
 Մայրախընամ ինձ սնունդ ,  
 Պարզեւում է լիառատ :

Բայց ես այն սուրբ ջրերով ,  
 Սուրբ Ակօրի ազրիւրին  
 Պիտի ցօղե՞մ արատօրայքն ,  
 Իմ ատելի օտարին :

Կամ կենսատու իմ ջրով  
 Ափերիս մօտ կըկզած -  
 Իր աղօթքը կատարէ ,  
 Քուրդ կամ Պարսիկը հօտած :

Մինչ իմ որդիք ( ո՞վ դիտէ ) ,  
 Ծարաւ , նօթի , անտէրունչ .  
 Օտար աշխարհ յածու՞մ են ,  
 Թոյլ ոտքերով կիսաշունչ . . . :

Հեռո՛ւ հեռո՛ւ քչեցին  
 Բնիկ ազգը իմ Հայկեան .  
 Դոցա տեղը ինձ տուին  
 Անդուի՛ խուժան Պարսկական :

Դոցա՞ համար զարդարեմ  
 Իմ հիւրընկալ ամերը .  
 Եւ կամ դոցա՞ հրատուրեմ ,  
 Ճսպոտ , սլլած աչերը :

Քանի՛ որ իմ զաւակունք ,  
 Էսպէս կու մընան պանդուխտ՝  
 Զիս միշտ սգւօր կը տեսնէք ,  
 Այս է անխաբ իմ սուրբ ուխտ . . . :

Եւ շխօսեց Արաքսը ,  
 Յորձանք տուեց ահագին .  
 Օղակ օղակ օձի պէս  
 Առաջ սողաց մօլեղին :

Յ. - Տ՛ի--նի՛ն է զարդարուն , իմաստա-  
 լից և ներդաշնակ բառեր գործածել ա-  
 ռանց շատարանութեան և սնտոի բառա-  
 զարդութեան :

Մարդարէից՝ մասնաւորապէս Եւայեայ  
 գրուածը շատ օրինակներ կընծայէ ասոր .  
 Օրինակ .

Ահաւասիկ տէր զօրութեանց նստեալ ի վե-  
 րայ թեթեւ ամպոց , եկեսցէ յեզիպտոս և շար-  
 ժեացին ձեռագործք եզիպտացւոցն յերեսաց  
 նորա , և սիրտք նոցա լքցին ի նոսա : Եւ խը-  
 ռովեսցին ողիք եզիպտացւոց յանձինս իւր-  
 եանց , և զխորհուրդ նոցա ցրեցից : Եւ յիմա-  
 րեսցին իշխանքն Տայանու՝ իմաստունք խոր-  
 հորդականք թագաւորին . և յիմարեսցին խոր-  
 հուրդք նոցա . զիա՞րդ ասիցէք ցարբայն՝ թէ  
 որդիք իմաստնոց եմք մեք : Արդ ո՞ւր են ի-  
 մաստունք քո . պատմեացեն քեզ և ասասցեն .  
 զի՞նչ խորհուրդ խորհեցաւ տէր զօրութեանց  
 ի վերայ Եզիպտոսի :

Կ. - Նե՛ի--նի՛ն . նուրբ կ'ըսուին այնպի-

սի խօսքեր՝ որոնց մէջ խօսքին իմաստը մասամբ իւրիք կը քողարկուի , այնպէս որ դիրին ըլլայ զայն մակարեբել : Մէկը հարցուց խորհրդականի մը թէ՛ ի՞նչ քննէր ոչ ոք իր հարցին վերջ : — Չէր յիշուի , պատասխանեց միւսը , այսինքն՝ չորս ժամ պարապ անցուցինք :

— Դիւղացի մ՝ իր բոլոր ինչքը տուած էր իր չորս տղոց . չորսն ալ ամուսնացուցեր էր՝ և տարւոյն ամեն մէկ եղանակին՝ մէկուն քովը ժամանակ կ'անցունէր : Մէկը կը հարցունէ իրեն թէ՛ ի՞նչ էր , ոչինչ չէր խոստում : — Այ՛ն ի՞նչ էր ի՛նչ ի՛նչն ի՛նչն ըլլալը , կը պատասխանէ բարի ծերունին : Հօր մը բերանը ասկէ աւելի փափուկ , նուրբ և զգայուն խօսք չը կրնար դրուիլ կըսէ Մարմենիթէլ :

Ծ. — Փայտիկութիւն կ'ըսուի այն տեսակ նուրբ ասացուածը՝ որ մաքէն աւելի սրտին հետ կը խօսի : Լամարթիսի տաղերը գեղեցիկ օրինակներ կ'ընծայեն :

Իքոյդ , ով Լօրանս ,

ճակատ թոյլ ինձ տուր ,

Չանտարբերութեանս

Չգաստ տալ համբոյր :

Թէ՛ յամեն յայն լուրջ  
 Մի՛ շառագնիք մի՛  
 Կասկիւմք և յանուրջ  
 Ար՛ ՚ի մէնջ փախչի :

Շրթունքս իմ յուզեն  
 Իքո՞ դեղձան հերս  
 Զուրբ ծաղկեղէն  
 Ըղխնկկալն յաղերս .

Խոստացեալ քոյին ,  
 Զեոք , կազմ է Սեղան ,  
 Ե՛կ , քեզ զիմ վերջին  
 Գաղանիս մերկանամ :

Քո փրթթին այտք դեռ ,  
 Կըրկին զտխդ ունիմ ,  
 Այլ քո գիրդ պատկեր  
 Դաւարէ զսիրտ իմ .

Դու յաշտցս ի լոյս ,  
 Ասացի ես ցամ ,  
 « Զնա դիտեմ յետկոյս ,  
 Ա՛նց , ես կամ մընամ » :

Գըգուանաց այն բանք  
 Զոր հեզէիր դու ,  
 Խանդակաթն անուանք  
 Զոր ես քեզզ ետու ,

Վիշտ՝ յանջատ գու մեր  
 Եւ խինդ ի դարձին ,  
 Անմեղութիւն էր ,  
 Բայց և սէր ինքնին :

Բաստ զոր ցանէ մարդ՝  
 Բողբոջ , ո՛ր չըտայ .  
 Յայլմէ սիրիս առդ ,  
 Յիւրն ի ծոց ընթաց :

Չսուրբ ցօղս ո գքոյին  
 Ճակատ տոչորեն ,  
 Ո՛վ զարդ արամային ,  
 Մատունք խր արբցեն :

Իշող աշնային  
 Վաղվաղ ի ծաղկել ,  
 Պրսակէ նըշին  
 Գլուխ ի մեռանել .

Տենչդ իմ , միօրեայ  
 Գարունն ինձ եղեր ,  
 Սիրտ իմ հոյզն է նայ ,  
 Եւ ծաղիկ՝ իմ սէր :

Գ-ը-ն-ի-թ-ը-ն-ն-ի-ն  
 ԻՈՐԸՆ ԵՊՐՍԿՈՑՈՍ

Յ. - ՎՍԵՄ ՈՃ

1. - Վ-ի-մ-ճ-ն այն է՝ որ երեւակայու-  
 թեան բողբոջ աշխոյժը և ճոխութիւնը կը





բառով ազդու իմաստ տալ, ինչպէս Միլ-  
տայնի հետեւեալ ոտանաւորը .

Լաւ 'ի դժոխս է տիրել՝ քան թէ յերկինս լի-  
նել գերի .

Եւ Հովերոսի հետեւեալ նախնեաց  
թարգմանութիւնը .

Եւ կապուտային յօնօքն ակնարկեաց զբուռն-  
եանն ,

Եւ աստուածային գլխոյն վարօքն շարժեցան ,

Եւ մեծապէս շարժեալ տատանեցաւ Ալիմպոս :

Հակառակ բազդատութեամբ ալ խօս-  
քը շատ ազդու կ'ըլլայ . ինչպէս ,

Ամեն բան կը փոխուի . միայն Աստուած է  
անփոփոխ : Դարուց հոսանքը , որ մարդկային  
ազգը կը յափշտակէ կը տանի , տնօր աչաց առ-  
ջեւ կը հոսի :

Կը տեսնէ նա ցասմամբ՝ որ այս սրընթաց  
յորձանքէն յափշտակուած տկար մահկանացուք  
անցած ատեննին զայն կը թշնամանեն՝ այս մէկ  
վայրկեանը իրենց երջանկութիւն սեպելով , և  
անկէ ելած ատեն՝ կ'իյնան անոր բարկու-  
թեան և վրէժխնդրութեան ձեռացը ներքեւ :

(ՄԱՍԻՅՅՈՒՆ)

-- Զգուշանալու է սակայն ասոր շախա-

զանցէն . չըսուիր՝ մահարեր Գ-շ-ն է կ'հ-հ-ն  
 է , կ'հ-ն-ն՝ իր տիրոջը արեան մէջ թաթաւե-  
 լուն համար : Գ-շ-ն է կ'հ-հ-ն չըլլար :

Կ. - Ո-ժ-գ-ն-ու-թ-ի-ւ-ն-ն է  
 քաջայանդուգն , հրացայտ և խիստ բուռն  
 արտայայտութիւն ասացուածոց՝ որ կը  
 յափշտակէ , կը զարմացընէ , միով բանիւ՝  
 կը տիրէ մարդու զգացմանց և մտաց վրայ :

Ինչպէս :

Զի՞ դու , զի՞ ընդ քեզ . զի՞ ելէք դուք այ-  
 ժըմ ամենեքեան ի տանիս նանրութեան : Լցաւ  
 քաղաքդ գուժկանօք , քաղաքդ պերճացեալ .  
 վիրաւորք քո՝ ոչ վիրաւորք սուսերի , և ոչ դի-  
 ակունք քո՝ դիակունք սպտերազմողաց : Ահա-  
 ւասիկ Տէր զօրութեանց հանցէ և սատակեսցէ  
 զքեզ՝ ա՛յր դու , և հանցէ զսպամուճան քո և  
 զսպակոյ փառաց քոց , և ընկեսցէ զքեզ յեր-  
 կիրն մեծ և յանչափ , և անդ մեռանիցիս . և  
 արասցէ զկուռսն քո զգեղեցիկս յանարդու-  
 թիւն , և զտուն իշխանութեան քո ի կոխումն :

ԵՍԱՅԻ

Այս ահաւոր և ուժգին վսեմը դրուա-  
 տելու համար խօսք չը բաւեր . Ա-Գ-ժ-ն-ն  
 Գ-ժ-ն-ն-ն , շ-հ-ն-ն-ն՝ մարդկային հանճարը  
 ասկէ աւելի խօսքով չը կրնար բացատրել :

Ուրիշ օրինակ .

Կերիցէ նորինն ինչպէս զգեղեցկութիւն նորա :

Ահաւոր դժնդակ վախճան մը՝ ինչպէս նորինն կոչելը՝ միայն սուրբ գրոց մէջ երեւցած լեզու մ'է, և կը զարմանանք թէ ինչպէս քերթողը կրցեր է մըտածել : Այսպիսի վսեմի մը հասնելու համար հարկաւոր ճամբան անձանօթ է մեզի :

Հ. ՅԱՐ. 2.

Ուրիշ օրինակ .

Մերկ են դժօխք առաջի նորա և չիք զգեստ թագստեան . եթէ արգելցէ զճուրս՝ ցամաքեցուցանէ զերկիր, և եթէ թոյլ տայցէ՝ կորոյս զնա կործանեալ :

Կարծես թէ կը տեսնենք որ Ովկիանու անբաւ տարածութիւնը, ռէքեք և ինչ որ շնորհ թառերովը մեր աչաց առջեւը կը ցամաքի և կը լեցուի : Յիշ, Երեւոյ գրքերը անթիւ այսպիսի ահաւոր վսեմներ ունին, որոնց քով թէ հին և թէ նոր քերթողահարց գրուածները ազօտ նմանութիւն մը կ'երեւին կարծես թէ :

Օրինակ մը .

Ահաւորք և բոմբիւնք գիշերականք, հաս-

եալ ահ ի վերայ մարդկան : Գողումն և սոսկումն սլատահեցին ինձ , և մեծապէս զոսկերս իմ շարժեցին . և եկն հոգի ի վերայ երեսաց իմոց . քսամեքցին հերք իմ և մարմինք . կանգնեցայ և ոչ գիտացի , տեսի և ոչ էին կերպարանք առաջի աչաց իմոց , բայց միայն շոք և շոքիւն լսէի :

Ա. - Եւրեմիայի կերպարանք՝ շոք և շոքիւնը խիստ ահաւոր են :

Հ. ԴԱՐ .

5. - Պերճարիւնն է ճոխութիւն՝ մեծութեան հետ խառնուած , ինչպէս .

Խոնքիւնը շոքիւն և էջ , և մէք ի ներքոյ սոխից նորա : Եւ ի քերովբէս , թռեալ սլացաւ նա ի թեւս հողոց :

Երկնքը խոնքիւնը և էջ , ինչ բացատրութիւն Աստուծոյ մեծութեան :

6. - Բռն լեւի է վերջին աստիճան զեւրեմիայի , հրդեհիւն , բռն շոք , որ կը յափըշտակէ , կը զարմացնէ , կ'ապշեցնէ միտքը և երեւակայութիւնը : Վե՛հ շոք և բռն լեւի՛ն իրարմէ տարբեր են :

7. - Վե՛հ շոք գրուածի մը բոլոր ընթացքը բարձր , վայելուչ , հրապուրիչ յօրինելն է . իսկ բռն լեւի՛ն մինչեւ անգամ պարզ խօսքի մը մէջ կրնայ գտնուիլ :

Օրինակք .

Եւ ասաց Աստուած , եշեցի լոյս և եշե- լոյս :

Աստուած եշեցի բառով հրաման կ'ընէ , և լոյսը իբրեւ ծառայ մը կը հնազանդի և գուրս կը ցոլայ :

Տ. - Երկու տեսակ վսեմ կայ , հոգեմանց և հոգեմանց :

Մատամ տը Սելվինեէ խօսելով թիւրէնի մահուանը վրայ՝ այսպէս կ'ըսէ .

Ես այնպէս կը հաւատամ՝ որ անիկա զարնող թնդանօթը անհոգեմանց լեցումն էր :

Անհոգեմանց լեցումն ընդունօթ , վսեմ խօսք՝ որով կ'նոյժ մը հանճարը մարդկային մտաց և հանճարին նոր պատիւ մը կ'ընծայէ :

— Երբունի Որատիօսին լուր կը բերեն՝ սր՝ երեք որդիքը կուրատեանց դէմ պատերազմելով երկուքը մեռան և մէկն ալ փախաւ : Հայրը կ'ըսկօի նշովել իր որդին . պատգամաբերը կ'ըսէ թէ՛ ի՞նչ կ'ընայ ընել տի հոգին երեւի տէ՛մ : Որատիօսը կը պատասխանէ . Բող տեմեր : Այս բառը մարդկային հանճարին ամենէն վսեմ ստեղծուածն է , կ'ըսէ վօլթէր :

# ԳԼՈՒԽ Գ.

ՁԵԻԱՒՈՐ ՈՃ



ՅՕԴՈՒԱՄ Ա.

1. - ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

1. - Խօսքը բացատրելու այլ և այլ կերպերուն՝ Կ- կ'ըսուի :

2. - Երկու տեսակ ձեւ կայ . Կ-+ ք-ից , Կ-+ ի-ից : Ամենքնիս ալ առանց գիտնալու Կ-եւ կը գործածենք , մինչեւ յետին ռամիկն անգամ . ասիկա լեզուին մէկ յատկութիւնն է : Երբ տգէտի մը համար ըսեմ՝ ոչ ուրիշ շոգ քիւնիւն է՝ այս Կ- մը կըլլայ :

3. - Երեւելի հեղինակ մը կ'ըսէ . «Գրեթէ ամեն օր շուկայները կամ ընտանեկան խօսակցութեանց մէջ այնչափ նորանոր ձեւեր կը հնարուին՝ որչափ չեն հնարուիր երեւելի գիտնական հաստատութեանց և ակադէմիաներու մէջ » :



1. - Բառից գլխաւոր ձեւերն են . - ւ-  
 ւ-դ-ր-ւ-թ-ի-ւ-ն . զ-ի-լ-ւ-ճ . յ-ի-ն-ն-լ-ւ-ճ . ն-մ-ն-յ-յ-ն-  
 ւ-ի-ւ-ն . ճ-ի-բ-ի-ր-ւ-ի-ւ-ն . ճ-ի-տ-ւ-ի-ւ-ն . ո-յ-ւ-բ-  
 ն-ւ-ի-ւ-ն . ճ-ի-ն-ն-ն-ւ-ի-ւ-ն :

2. - Ա-ւ-ւ-ւ-դ-ր-ւ-թ-ի-ւ-ն է բառ մը կրկնել՝  
 խօսքին աղդուութիւն կամ վայելչութիւն  
 տալու համար .

Նմ, էճ և Ես մարդ մահկանացու :

ԽՄԱՍՍ .

3. - Ձեւ-ւ-ճ է խօսքին մէկ մասը լռել-  
 եայն իմացընել, ինչպէս .

Բարիութիւն ամենաճօրն զիջաւ , զի 'ի մէնջ  
 հաշտութեան սկստարագն :

Այսինքն՝ հարցա- :

4. - Յ-ի-ն-ն-լ-ւ-ճ է բառ մը այլ և այլ  
 հոլովով, կամ բայ մը այլ և այլ ժամա-  
 նակներով և եղանակներով կրկնել, ինչպէս .

Այլ իմաստունք լոյն և լոն միշտ կենդանի  
 քանիւքն իւրեանց :

5. - Ն-մ-ն-յ-յ-ն-ւ-ի-ւ-ն է իրարու նման բա-  
 ւեր կամ յանգեր դնել, ինչպէս .





Կարգէ մուրթիւն՝

Այսինքն՝ մուրթիւնը կ'ընէ և ոչ թէ ինքը կ'արգէ է : Գործը փոխանակ պատճառի :

Զիտ՝ որդ այրիացաւ Սէն , սուգ զգեցաւ Երեւելի .

Այսինքն՝ արդէ՛ Սիօնի , բնակչի Երուսաղէմի : Պարունակողը փոխանակ պարունակելոյն :

Այսպէս կ'ըսուի նաեւ . արդ՝ արդ , այսինքն՝ արդ : Այս արդը ոչէ՛ քիչ ոչէ՛ , այսինքն՝ ինչո՛ւն է :

Տ. - Այլ-բնակչիւն է՝ շատ մը փոխաբերութիւններ իրարու հիւսուած . այսպէս է Սաղմոսի գեղեցիկ այլաբանութիւնը .

Այդի յեգիպտոսէ փոխեցեր , հաներ զհեթանոսս և զնոսս տնկեցեր և առաջնորդեցեր նմա : Հաստատեցեր զարմատս նորա և Էլից զերկիր . ծածկեաց զլերինս հովանի նորա , և բարունակ նորա զմայրս Աստուծոյ : Չգեաց զորթ իւր մինչեւ ի ծով , մինչեւ ի գետս ևն շառաւիղք նորա : Ընդէ՛ր քակեցեր զցանկ նորա , կթեն զնա անցաւորք ճանապարհի : Ասլահանեաց զնա խոզ անտառի , և երէվայրի արածեցաւ ի նմա : Աստուած զօրութեանց ,



առէն առնուած ըլլան, և բաղդատութիւն կամ նմանութիւն չունենան իրարու հետ, ինչպէս .

Արօրը գաշտին կնիւնը կը հանէ :

Գաշտի կնիւնը չ'ըսուիր :

Գ. Կան անանկ ձեւեր որ ճարտասանութեան յարմար են, կան անանկներ ալ որ բանաստեղծութեան աւելի կը յարմարին. ուստի ամեն տեսակ գրուածքի իրեն վայելուչ ձեւը գործածելու է: Այսպէս՝ ճարտասանը պէտք չէ որ ըսէ .

Իր Գ-Լ-Ը-Յ-Զ Բ-Գ-Դ-Ե թառամեցաւ .

Փոխանակ ըսելու Գ-Լ-Ը-Յ-Զ Բ-Գ-Դ-Ե . սակայն բանաստեղծը կրնայ ըսել :

Գ. - Երբեմն պէտք է փոխաբերութիւնները ուղղել, չափաւորել կամ Լ-Ը-Զ Բ-Գ-Դ-Ե և ուրիշ ասոնց նման բացատրութեամբք :

Ե. - Պէտք չէ անանկ փոխաբերութիւն մը ընել որ նմանութիւն կամ կապակցութիւն չունի փոխաբերելոյն հետ. ինչպէս, չ'ըսուիր .

Այս ճարտասանը հեղեղ մ'է որ կը Բ-Գ-Դ-Ե :

Այլ պիտի ըսուի՝ Գ-Լ-Ը-Զ կը Բ-Գ-Դ-Ե և Գ-Լ-Ը-Զ կը Բ-Գ-Դ-Ե :

2. Օտար լեզուաց ձեւերը որոնք չեն վայլեր բնիկ լեզուին՝ դորժածելու չէ, օրինակի համար. Գաղղիացիք կ'ըսեն իւր-իւրեքը կամ իւր-իւրեքը մարդու մը համար թէ՛ ուրիշ, կը ցուցնէ (մոնթրէ լէ տան) . բայց մենք կ'ըսենք՝ սկսեր է իւր-իւրեքը, վերջապէս որ և իյէ ձեւ պէտք է որ գաղափարաց կապակցութեանը օգնէ, կամ դոնէ զայն չը խանդարէ :

— Ինչո՞ւ համար երբեմն իւր-իւրեքը տեղ կրնանք ըսել իւր-իւրեք իւր-իւր և երբեմն չենք կրնար : Օրինակի համար, կրնանք ըսել Գաղղիոյ և Իտալիոյ իւր-իւր իւր-իւրեք շատ անգամ կը խոնարհին իրենց հպատակացը հետ տեսութիւն ընելու անձամբ . և չենք կրնար ըսել՝ Գաղղիոյ և Իտալիոյ իւր-իւր իւր-իւրեք այս միջոցին իրարու հետ թշնամացած են : Վասն զի առջի օրինակին մէջ իւր-իւր բառը միայն իւր-իւրեք կը նշանակէր . իսկ երկրորդին մէջ անոնց իւր-իւր-իւր ալ պիտի նշանակէ . ուստի եթէ իւր-իւր ըսենք՝ իւր-իւր-իւր բուն իրն հետ խառնուած կ'ըլլայ՝ և խօսքին աղղուութիւն չը տար :

11. Փ-ի-բերել-ը բառ մը իր նախկին նշանակութիւնը կը կորսնցընէ և նոր նշանակութիւն մը կը ստանայ . ուստի ուշադրութիւն ընելու է որ նշանակութիւնը էրն վերաբերեալ խօսքերուն յարմարի : Յիրաւի ինչ հարկ կայ ըսել Բ-ի-ն-ը գլուխները իրարու հետ թշնամացած են , քանի որ Բ-ի-ն-ը հոս Բ-ի-ն-ը բառին տեղը չը կրնար բանիլ , քանի որ փոխաբերութիւն ընելու հարկ չը կայ :

Նոյնպէս հեղինակի մը համար կրնամք ըսել . Ասիկա երեւելի էլ-ի-ն-ը , կամ է-րե-ն-ը Գ-ի-ն-ը է . բայց շեմք կրնար ըսել . Այս երե-ն-ը էլ-ի-ն-ը , կամ թէ այս երե-ն-ը է-րե-ն-ը է-ն-ը շատ արկածներ ունի : Ասոր պատճառը աս է որ՝ էլ-ի-ն-ը , Գ-ի-ն-ը , հեղինակին կենաց հետ յարաբերութիւն չունին , այլ անոր հեղինակութեանցը հետ :

12. - փոխաբերութիւնները շատ կ'օգնեն համառօտ և ազգու ընելու խօսքը , ինչպէս . շոտ-ի-ն-ը ի-ն-ը Գ-ի-ն-ը Գ-ի-ն-ը էր Գ-ի-ն-ը և է-ն-ը Գ-ի-ն-ը Գ-ի-ն-ը : Առանց ձեւոյ երկար ճառ մը հաղիւ թէ այս իմաստը կրնայ տալ :

Չեւերու գործածութեան մէջ ուշադրու-



Յիւն կամ յիշատակսն , հիւսիսն , շրջ-  
քանսն :

16. - Հոգիս՝ ձեռ մ'է որ ճարտարա-  
խօսը կ'ընէ չէ թէ պատասխան ընդունե-  
լու՝ այլ ունկնդիրներն արթնցնելու և իր  
խօսքին աղդուութիւն տալու համար ,  
ինչպէս .

Ո՞վ ըսաւ արեւուն՝ ե՛լ և իշխէ՛ տուրնջեան ,  
կամ լուսնին՝ ցուացի՛ր և իշխան եղի՛ր գիշերոյ :  
Ո՞վ գոյացուց այնչափ անթիւ աստղերը որոնք  
կը դարդարեն հաստատութիւնը , և այնչափ  
արեգակունքը՝ որոնց իւրաքանչիւրն աշխարհ  
մը կը լուսաւորէ :

Ո՞վ է այն ամենակարող ճարտարապետը որ  
այս հրաշքները ի հանդէս բերաւ , ուր մարդ-  
կային բանին հսկարտութիւնը շացած կը կոր-  
սուի և կ'անհետանայ : Ո՞վ , բաց ի տիեզերաց  
ամենիշխան Արարչէն կրնար ընել ասոնք : Աս-  
րեւի՞ է որ ասոնք ինքնագոյ կամ դիպաց ար-  
գասիք ըլլան . և ամբարիշտն պիտի յուսահա-  
տի՞ այնչափ՝ որ էին և գոյին պաշտօնը չէին  
տայ , այն էակին՝ որ ստեղծեր և գոյացուցեր  
է ամեն բան :

ՄԱՌԹՅՈՒ

Զի՞նչ ծանր հրաման առաք առնել , զսա՞րս  
հատանել անցանել , թէ ընդ օդս թռչել , թէ  
ընդ բնութիւն համատարած ծովուն ցամաքա-



Թեւս սլանալ . և ոչ երբէք . այլ այնպէս գիւտ  
 ըին է առաքինութիւն , մինչեւ այնպիսի դոր-  
 ծոց մի՛ ինչ կարօտանալ , այլ միայն ողւոյն և  
 զթոյ : Զո՞ր դործի ունէին Առաքեալքն՝ որ  
 զայնպիսի ուղղութիւնս արարին . ո՞չ միաձորձք  
 և բօկք շրջէին , և ամենեցուն յաղթեցին :  
 Զինչ դժուարին ի հրամանաց իցէ . մի՛ , ասէ ,  
 առներ զոր թշնամի . մի՛ ատեար զոր . մի՛ չար  
 գումեքէ խօսիր : Նոցին հակառակք են դժուար  
 ըինք , և ոչ սորա :

ՈՍԿԵՐԵԱՆ

5. - Տ-ր-ւ-ի-ւ-ւ-ւ-ւ-ւ-ն է՝ ճարտար կեղ-  
 ծիք մը՝ որով ճարտասանը իր խօսքը աւե-  
 ի աղղու կը դործէ , ինչպէս .

Հիացեալ զարմանամ մտօք և ոչ գիտեմ  
 ուստի՞ սլարտ և սլատշած իցէ առնել սկիզբն  
 ճառիս :

ԼԱՄԲ.

6. - Բ-ո-ւ-ո-ւ-ւ-ւ-ւ-ն է բացակայ և մին-  
 չեւ անգամ անղգայ , անշունչ իրաց խօսք  
 ուղղել , ինչպէս .

Յորդանան լուեալ՝ փախստական դառնայր ,  
 վտակ առ վտակ սլատգամաւոր լինէր . գետ մի՛  
 զարհուրիր , քո արարիչն եմ ես , եկեալ մը-  
 կըրտիմ և լուանամ զմեզս :

7. - Ա-ւ-ւ-ւ-ւ-ւ-ն է՝ աղաչանաց և աղեր-  
 սանաց ձեւով խօսուածքը , ինչպէս .

Աղաչեմ զամենեւեան և զոտս եղբարցդ սրբոց արտասուօք սիրոյն համբուրեմ, ներեցէք խնոյ անզգամութեանս, և ընկալարուք զիս իբրեւ գործակից և ծառայակից:

ԼԱՄԲ.

Տ. - Անէշն է ուրիշին կամ իրեն չարիք մաղթել՝ սրտին ցաւէն, ինչպէս.

Կորիցէ օրն յորում ես ծնայ, և գիշերն յորում ասացին թէ ահա արու: Խաւարեացի գիշերն այն. և մի՛ խնդրեսցէ զնա տէր ՚ի վերուստ: Մի՛ եկեսցէ ՚ի վերայ նորա լոյս. ընկալցի զնա խաւար և ստուերք մահու. եկեսցէ ի վերայ նորա մէգ: Անիծեալ լիցի օրն այն և գիշերն, և տարցի զնա խաւար. մի՛ եղիցի յաւուրս տարւոյ. և մի՛ թուեսցի յաւուրս ամսոց: Այլ գիշերն այն եղիցի ի ցաւս, և մի՛ եկեսցէ ի վերայ նորա ուրախութիւն և մի՛ ցընծութիւն: Խաւարեացին աստեղք գիշերոյն այնորիկ. սպասեսցէ և ի լոյս մի՛ տեսցէ, և մի՛ տեսցէ զարուսեակն ծագեալ:

ՅՈՐԻ.

Գ. - Բոցոգնան է ցաւոց, տըրտմութեան կամ ուրախութեան չյայտարար ձայն:

Ո՞վ համբոյր, նենգութեան նշան և առիթ մահու:

ՇԱՐԱ.

Ո՞վ, կարի է առասպելս և առասպելաց առասպել :

ԻՈՐԵՆԱՅԻ

Ո՞վ գիշեր շարագուշակ . ո՞վ սոսկալի գիշեր, երբ կայծակի արագութեամբ ամեն կողմ յանկարծ որոտաց այս ձայնը . Թ-՜-հին կը Վ-հին, Բ-՜-հին Վ-հին :

ՊՕՄԻԷ

10. - Դի-հին-հին է այն ձեւը՝ որով հեղինակը կը խօսի բացակայ՝ մեռեալ ու երեւակայեալ իրաց հետ . ինչպէս .

Այսպէս ասէ Տէր Տէր ցՏիւրոս . . . ամենայն իշխանք ազգաց ծովուդ յողուց հանցեն ի վերայ քո և ասասցեն . զիա՞րդ կորեար քակտեցար ի մէջ ծովու քաղաքդ հոյակապ, որ եղեր զօրացեալ ի մէջ ծովու դու և բնակիչք քո, որ զարհուրեցուցանէիր զամենայն բնակիչս քո : - Ի ձայնէ բարբառոյ քո նաւավարք քո երկիւղիւ զարհուրեսցին . . : Աո՞ծ դառնութեան առցեն որդիք նոցա ի վերայ քո, ողբս առցեն և ողբասցեն : Ո՞վ էր իբրեւ զՏիւրոս՝ որ լռեաց զաղարեաց ի մէջ ծովու :

ԵՋԵՆԷԼ

11. - Եր-հին-հին է բառերու հակառակ իմաստ տալ, ինչպէս .

Ո՞վ մեծի զօրութեանդ, 'ի ծայրն հասեր իմաստից, վրկեցեր զողի քո զայդ ասելով :

փոխանակ ըսելու՝ ԿԻԿՊ, ԻՆՆԻԿՆԻ, ԿԵՆԻ  
 12. - ԱՆՆՆՆԻ է ճարտար դարձուած  
 մը՝ որով հեղինակը նիւթ է նիւթ կ'անցնի .

Եւ արդ վասն զի ծանուցաւ փոքր ի շատէ  
 որքան միանգամ յաստուածագողեստիցն տուաւ  
 յաղագս երկնայնոցն կարգաւորութեան , բեր  
 այսուհետեւ զընտանեգոյնն մեր դիցութ առա-  
 ջի առ ի քննութիւն :

ԵՆՈՐԸ.

13. - ՔԻՆՆՆՆԻԿՆԻ է այն ձեւը ո-  
 րով հեղինակը կը քօղարկէ իր յանդիմա-  
 նութիւնը , ինչպէս .

Յայդմ ոչ գովեմ զձեզ :

Այսինքն ընթացի ԿԻՆՆԻ ԿԻՆՆԻ :

Գ. ԱՌԱՔԵԱԼՆ

14. - ՉԻՆՆՆՆԻԿՆԻ է խօսքին զօրու-  
 թիւնը խիստ աւելցնել կամ նուազել :

Բազում անգամ է տեսանել զգազանս վայ-  
 րենիս , զարջ , զինձ , զգայլ , զառիւծ հան-  
 դարտացեալս դարմանելով և մարդասէրս , իսկ  
 զբարկասիրտն և ոչ երբէք : Բազում անգամ և  
 զծով տեսանեմք հանդարտեալ յալեաց և ցա-  
 ծուցեալ ի վայրենութենէ . իսկ զբարկացողն  
 և ոչ բնաւ : Հանասլաղ 'ի գազանութեան կայ ,

միշտ ի վայրենութեան յար ի տմարդութեան ,  
համակ յալեկոծութեան :

ՍԱՐԳԻՍ ՇՆՈՐՀ.

15. - Հ-ւ-ր-ի-ն-ը ձեւ մ'է որով  
հեղինակը իբ ունկնդիրներուն և նոյն իսկ  
հակառակորդներուն խորհուրդ կը հար-  
ցունէ , ինչպէս .

Արդ աղէ ասա , ո՞ր է արժանահաւատալի ,  
բանքն եթէ արդիւնքն . ո՞չ ապաքէն արդիւն-  
քըն . զի բանքն չվճարեն ինչ ի հաւատոց սակս ,  
բանիւ զՔրիստոսին կրել զանուն , և դործով  
զսատանային , զի և լի է այնպիսին անհաւա-  
տութեամբ :

ՍԱՐԳԻՍ ՇՆՈՐՀ.

16. - Շ-ւ-ր-ի-ն է հակառակորդին բան  
մը շնորհել՝ մինչդեռ անիկա իրաւունք չու-  
նի՝ և ասկէ իրեն աւելին պատաւոր փաստ  
հանել , ինչպէս .

Իսկ արդ ասիցես . ոստքն փչրեցան , զի ես  
պատուաստեցայց : Բարւոք է . անհաւատու-  
թեամբն փչրեցան , և դու հաւատովք հաստա-  
տեցար . մի՛ հպարտանար , այլ երկիր՝ , զի ե-  
թէ Աստուած ի բուն ոստն ոչ խնայեաց , գու-  
ցէ երբէք և ի քեզ ոչ խնայեսցէ :

Գ. ԱՌԱՏԱՅԷԼ

17. - Կ-ն-ի-ն այն ձեւն է՝

որով հեղինակը ուրիշին առաջարկութիւնները մէջ կը բերէ և զանոնք կը հերքէ . ինչպէս Ոսկեբերանը կը յանդիմանէ անողորմները :

Այլ բազում անգամ ետու , ասէ . և նա չուտիցէ՞ հանասլազ . և զորդիսն քո , յորժամ յաճախ խնդրեսցեն՝ միթէ՞ ՚ի բա՞ց մերժեսցես . ո՞ անհնարին անամօթութիւն : Չգիտիցե՞ս ո՞ր հարկք որովայնին են , որ զամենայն ինչ վասն նորին հնարիցես : Այլ ի շատխօսութիւնս հատանիս . այսր անուան՝ այսչափ դահեկանք ի վարձու կան և այսր անուան՝ եւս աւելի , եւայլն :

18. - Ա--ը--դ--ն է հարցումները ընել և ինքնին պատասխանել :

Իսկ արդ չա՞ր արժան էր ասել թագաւորին , քա՛ւ , ես ոչ ասեմ , այլ խրատ ի գործ արկեալ զայլս ուսուցանեմ :

ԵՂԵՆԷ

19. - Կ--ն է խօսքը կախ ձգել՝ ունկնդիրները արթնցընելու համար :

Կամիմ և նոր ինչ ասել , այլ մի՛ ինչ կարի զարմանայցէք կամ խռովիցիք : Եւ զի՛նչ իցէ . Պատարագն նոյն է , եթէ չափ և գոյզն զք մա-

տուցանիցէ , և եթէ Պօղոս և Պետրոս գլխու-  
վին՝ սակայն նոյն է :

ՈՍԿԵՐ .

20. - Լուսնն է՝ խօսքը լռել՝ կեղ-  
ծելով որ ըսել շուղեր՝ թէպէտեւ իրօք կը-  
սէ , ինչպէս :

Որ մեղանշէ , օրինազանց է . իսկ որ զօրէնս  
լուծանէ՝ զի՞նչ անուն է նորա . ես պատկա-  
ռիմ ասել , մանաւանդ թէ երկնչիմ , զի մի ա-  
ղեկէզ բժշկութեամբս , վասն ի խոր հարմանս  
զգեղ բանիս՝ երեւեցայց թշնամի :

ԼԱՄՐ .

21. - Ուշն է այն ձեւն է որով  
հեղինակը իր առաջի ըսածը կ'ուղղէ աւե-  
լի պատշաճ կերպով , ինչպէս :

Այս է քո սրանծալի աստուածաբանութիւ-  
նըդ , մանաւանդ թէ յիմարութեանդ ցոյցք .  
զնիւթս զայս յաւերժակից ասել արարչական  
զօրութեանն :

ԼԱՄՐ .

22. - Արթնն է , երթալով  
խօսքին զօրութիւնը աւելցնել կամ պակ-  
սեցնել . ինչպէս :

Հռոմայեցի մը շղթայի զարնելը յանցանք  
է , զայն խարազանով ծեծելը ոճիր , մեռցնելը  
հայրասպանութիւն : Ուրեմն ի՞նչ անուն կրնանք  
տալ զայն խաչողին :

23. - Յիշատիւնս կամ ակնարկութիւնն է բառից բաղդատութեամբ կամ համեմատութեամբ իմաստ մը յառաջ բերել ինչպէս ,

Քէպէտ դափնիներով սրահուած՝ սակայն վախցիր կայծակէն :

Աս խօսքը կ'ակնարկէ նախապաշարում մը , որով հիները կը կարծէին թէ դափնին շանթ կ'արգիլէ :

24. - Հիշատիւնն է՝ հակառակ իմաստներ դնելով խօսքը ազդու դործել : —

Որ ինքն իւր չար է , այլում բարի ոչ կարէ լինել . և որ ինքն ընդ խաւար գնայ , այլում ոչ առաջնորդէ ճշմարտութեան լուսով : Որպէս զի չիք յանիրաւութենէ արդարութիւն , այսպէս ի ստութենէ ճշմարտութիւն :

ԵՂԻՇԷ

Հակադրութիւնը յաճախ դործածուած և վայելուչ ձեւ մ'է , և սակայն եթէ միայն բառերու վրայ կայանայ՝ դրուածը տղայական կ'ընէ :

25. - Շիշուսն է մէկ բառով ըսելիքը շատ բառերով բացատրել , ինչպէս Պօսիւէ իր մէկ դամբանականին մէջ փոխանակ ըսելու Աստուծո՛ւ կ'ըսէ .



Այն որ կը նստի ի քրոյրէս, ուրկէ կը ծագին ամեն թագաւորութիւններ, գահոյք և իշխանութիւնք, որում միայն կը վայելէ փառք մեծութիւն, նա ինքն է որ իրեն փառք կը համարի թագաւորաց օրէնք դնել՝ և ուզած ատեն անոնց սոսկալի և մեծ դասեր տալ:

Ուրիշ մը .

Որ ամեհի կոհակաց կատաղութեան դնէ սանձ՝

Եւ զգարանս չարին նա խորտակէ, իմս Ապնէր՝  
ԲԱՍԻՆ

26. - Գէորգի՛ . - Երեւելի գրագէտ մը կըսէ . Ասոր՝ բառին իմաստը շատ կերպ շրջաբանութեամբ կրնանք յայտնել, այսինքն այնչափ՝ որչափ որ Ասոր՝ բառը ստորոգելի ունի . այլ պէտք է ընտրութիւն ընել այս ստորոգելաց մէջ:

Երբ վերի շրջաբանութիւնները փոխենք՝ և ըսենք,

Այն որ ծովուն ալեաց կատաղութեանը սանձ կը դնէ, նա ինչո՞րոց օրէնք կ'ուսուցնէ .

Այն որ կը նստի ի քրոյրէս՝ ուրկէ կը ծագին ամեն իշխանութիւնք, նա է որ շո՞րոց Գրգորէն ի ինչո՞րէն:

Այս շրջաբանութիւնները ուզէր և ինչ իսկ կ'ըլլան: Քանզի շրջաբանութիւնը իրին

համապատասխանած չէ, չըջարանութեանց  
 դաղափարները ուղղակի յարաբերութիւն  
 չունին ներգործած առարկային հետ,  
 ուստի՝

27. - Պէտք է ուշադրութիւն ընել ոչ  
 թէ փայլուն և իմաստալից չըջարանու-  
 թիւններ ընելու, այլ առաւել դրութեան  
 նիւթին և ստորոգելիներուն պատշաճու-  
 թեանը: Օրինակի համար. բանաստեղ-  
 ծութեան և արձակի մէջ, ճարտասանու-  
 թեան, դիւցազնական և քնարական կամ  
 եղերական բանաստեղծութեանց մէջ՝ մի  
 և նոյն չըջարանութիւնները տեղի չունին:

28. - Այս ձեւը ամենէն գեղեցիկ և  
 հրապուրիչ ձեւն է՝ եթէ միտ դրուի յիշ-  
 եալ կանոններուն, Վերջապէս որ և իցէ  
 ձեւ պէտք է գործածել *դճոյն-ճեղք - ճեղք-  
 եռանդով* և բնական գոյնով նկարագրե-  
 լու՝ և ոչ թէ անյարմար զարդերով ասա-  
 ցուածին իմաստը քօղարկել և ընթերցո-  
 ղէն մարգարէական հոգի պահանջել, օրի-  
 նակ:

Հայր մը իր վաղամեռիկ դստեր հա-  
 մար պէտք է ըսէ .

Իմ դուստրս պիտի ողբար իմ մահն, և ես  
անոր մահը կ'ողբամ:

Եթէ բանաստեղծութիւն ընելու մտօք  
ըսենք. ի՞նչ արդէն ընելու է՞ ի՞նչ  
է՞ ի՞նչ է՞ ի՞նչ է՞. բոլորովին տկար  
ձեւ մը կըլլայ:



## ԳԼՈՒԽ Դ.



### ՅՕԴՈՒԱԾ Ա.

1. - Թէ ԻՆՉՊԵՍ ՊԵՏԲ Է ԻՆՔՁԻՆՔ  
ԳՐՈՒԹԵԱՆ ԱՐՈՒԵՍՏԻՆ ՊԱՏՐԱՍՏԵԼ

1. - Ոճոյ վրայ խօսածներնէս չեմք ու-  
լեր հետեւցնել թէ՛ անոնք միայն բաւա-  
կան են գրագէտ ընելու զմարդս. չեմք  
ուղեր կարծեցնել թէ՛ վսեմ, բարեխառն  
ըլլալու համար՝ մէկը պէտք է այս կամ  
այն ձեւերը գործածէ. վասն զի գրագէ-  
տը իր խորհածին պէս կը գրէ: Եթէ իր  
խորհրդածութիւնը բարձր է՝ իր լեզուն  
ալ նոյնը կ'ըլլայ բնականապէս. եթէ իր  
միտքը նուազ բարձր գաղափարներով է  
չըջացատեալ՝ կամ՝ եթէ նիւթը բարեխառն

ու պարզ գաղափարներ կ'ընդունի՝ լեզուն  
ինքնին բարեխառն ու պարզ ձեւերու կը  
գիմէ :

Աստի կը հետեւցնենք որ՝ գրագէտը  
պէտք է գաղափարը ունենայ և իր գա-  
ղափարներուն տեսակին համեմատ գործա-  
ծէ ոճը :

Սակայն ոճոյ վրայ մեր ըրած գիտողու-  
թիւններուն և տուած կանոններուն օգու-  
տը անժխտելի է . - սյսինքն պատանեկաց  
և երիտասարդաց ճաշակը մաքրել յստա-  
կել և զանոնք գրելու արուեստին պատ-  
րաստել :

2. - Չորս գլխաւոր միջոց կայ գրու-  
թեան արուեստին պատրաստուելու հա-  
մար . 1<sup>o</sup>. Ընթերցումն շարժող . 2<sup>o</sup>.  
Հիմնական կամ նմանութիւն (imitation) . 3<sup>o</sup>.  
Թարգմանութիւն . 4<sup>o</sup>. Շարժողութիւն կամ գր-  
ութիւն (composition) :

2. - ՅԱՂԱԳՍ ԸՆԹԵՐՑՄԱՆ ՄԱՏԵՆԱԳՐԱՅ

1. - Ընտիր հեղինակաց ընթերցումն  
միակ միջոց է տաղանդին սերմերը բեղմ-  
նաւորելու : Դասատուները կրնան ոճոյ կա-

նոնները տալ՝ բայց գործնականը՝ հեղինակաց մէջ փնտռելու է :

2. - Երբեմն ճաշակը կը հեռանայ հանճարէն . օրինակները կրնան զայն նորէն ուղղորդ շաւղին դարձնել : Շատ անգամ՝ ընտիր օրինակները մրցում և նախանձ կը զարթուցանեն ՚ի մեզ . և եթէ չկարենանք կարգացած օրինակնիս գերազանցել՝ գէթ մենէ ստորին չեմք մնար՝ այլ կը բարձրանանք :

3. - Հռովմէական դպրութեան պարձանքներ վիրգիլ և Կիկերոն՝ Հոմերէն և Թեմոսթենէն առին իրենց անմահութեան դրոշմը : Գաղղիացւոց դպրութեան նախահարք՝ Գոռնէյլ, Ռասին, Մոլիէր, Պօսիւէ եւ այլն՝ յունաց ողբերգու, ճարտասան, կատակերգակ բանաստեղծներուն հետ մըրցելով՝ շատ անգամ զանոնք գերազանցեցին :

Եթէ մեծ հեղինակներու համար այսպէս՝ աւելի պէտք է որ երիտասարդները եռանդեամբ պարապին ընթերցման . այս է ուղիղ ճաշակի, ճշմարիտ փառաց հասնելու միջոցը :

4. - Պէտք չէ անխտիր կարգալ ամեն

հեղինակները : Երեւելի հեղինակները սակաւաթիւ են . պէտք է ղանոնք յաճախ և մտադրութեամբ կարդալ : Երկու հաւասար հանճար ունեցող մարդոցմէ՝ այն յառաջ կ'երթայ և կը յաջողի՝ որ աւելի կարգացած է ընտիր մատենագիրք և քիչ կարգացած կամ բնաւ չէ կարգացած ստորին գրուածներ :

Յ. - Հեղինակները ընտրելէն յետոյ կը մնայ ղանոնք ընթեռնուլ և օգուտ բաղել : Պէտք է քիչ կարդալ և մտադրութեամբ . արագ ընթերցումն ոչինչ կ'օգնէ : Պէտք է իւրաքանչիւր կտորները կրկին և կրկին աչքէ անցնել , ղանոնք իրարու հետ բաղդատել , անոնց իմաստին մէջ թափանցել՝ այնպէս որ գոց ըլլան :

Այս միայն բաւական չէ , այլ պէտք է՝ գործին յատակագիծը , գրուածին եղանակը , ամբողջութիւնը՝ ի միտ առնուլ . ըմբռնել անոր կապակցութիւնները , իմաստներու շարքը , զգացմանց յաջորդութիւնը , բնականը , ճշմարտութիւնը , եւ այլն : Ահա այսպէս խելամուտ կ'ըլլանք արուեստին գաղտնեաց , որոնք շատ անգամ կանոնի ենթակայ չեն :

Վերջապէս՝ ըստ կուինտիլիանոսի, պէտք է հեղինակութիւններն այնպէս կարգալի իրր թէ նորէն կ'ուզենք շարադրել զանոնք : Մանաւանդ ճարտասանական գրբուածները աւելի կը պահանջեն այս խնամքը՝ քանզի ճարտարախօսը շատ անգամ կը ջանայ իր զարգերը և ձեւերը ծածկել ունկնդրէն կամ ընթերցողէն :

6. - Ընտիր հեղինակները միայն իրենց գրուածոց մէջ պէտք չէ կարգալի այլ նաեւ իրենց վրայ եղած քննադատութեանց մէջ : Ուստի կը յորդորենք զուսանողս որ լաւ կարգան Սէնթ-Պէօլի, Լահարիի, և ասոնց նման քննաբանից գործերը : Սէէւ Կէլ--ի Գ-Նօրը գերազանց ուսուցիչ մ'է այս մասին : Այսպէս կը ծաղկի կը զարգանայ գատումը և հանճարը, և տղայական յափշտակութեանց կը յաջորդեն ճշմարիտ աւիւն ու զգացմունք :

### ՅՕԴՈՒԱԾ Բ.

#### 5. - ՅԱՂԱԳՍ ԵՄԱԿՈՒԹԵԱՆ

1. - Ինչպէս որ ծառը դարմանի և խնամոց կարօտ է՝ պտղաբեր և երկար ասպ-

րելու համար՝ այսպէս ալ հանձարը օգնութեան կը կարօտի . այս օգնութիւնը նմանութեանց մէջ կրնայ գտնել : Նմանիլը՝ ստրկօրէն ընդօրինակել չէ , այլ՝ հեղինակին բացատրութեան ձեւը , իմաստը և վսեմութիւնը ուսանիլ և անոր համեմատ իր միտքը ուղղել է :

2. - Նմանիլը՝ բառերու փոփոխութեամբ մէկ կտոր մը ուրիշ նիւթի վրայ կարկատելը չէ , այլ գրուած մը նոր գեղեցկութեամբ արտայայտելն է : Կան այնպիսի զարդեր՝ որ անպատշաճ գործածութեամբ մոռացութեան մէջ ընկեր են իրենց գործքերուն հետ . ճարտար նմանողը կրնայ զանոնք կենդանացնել և վսեմացնել :

Փիլիսոփայի մը , պատմագրի մը և ճարտարախօսի մ'արձակ լեզուովը գրածը գեղեցիկ ոտանաւորներով բացատրելը՝ ճարտար նմանութեան գործ է :

Ամեն ազգ գրեթէ նմանութեամբ զարգացուցած է իր գպրութիւնը :

Սուրբ գրոց հետեւեալ հատուածին նրմաներ է քէնելոն իր մէկ ճառին մէջ և ստորին մնացած չէ .



«Ո՛վ են սոքա որ իրրեւ զամսս թռուցեալ են, և իրրեւ զաղաւնիս ձագախառն երամով զան առ իս»:

Ահա ֆէնեւորնի գրածը .

«Ո՛վ են սոքա՝ որ իրրեւ զամսս թռուցեալ են . հողմո՛ւնք, բարձէք զնոսա՝ ՚ի թեւս ձեր»:

3. - Ենթադրենք թէ այս կամ այն հեղինակը նմանութեան նիւթ պիտի առնեա . անոնց գեղեցկութիւնները իւրացնել և արտադրելու համար, պէտք է երեւակայութիւնդ բորբոքես նոյն ջերմութեամբ՝ սիրտդ վառես նոյն զգացմամբ՝ առանց ինքզինքդ բռնադրօսելու և ճնշելու :

Լաֆօնթէն նախնեաց նմանութեան վրայ խօսելով այսպէս կ'ըսէ .

Թէ զիմաստս նոցին ՚ի տաղս իմ կարիցեմ,  
Փոխարկել դիւրարեկ, բանագրօս շինեւ .  
Կամիմ յայն՝ ոչ քարչիմ, թէ իցեն այնք վսեմ,  
Բաւ թէ ինձ մերս նախնեաց հասանէր նմանել :

4. - Կը տեսնուի որ Լաֆօնթէն ստորկարար չէր նմանէր . վասն զի ստրուկ նմանութիւնը ընտիր բնագիրներու յոռի ընդօրինակող կը հասցնէ՝ և ոչ երեւելի հեղինակ . ցաւալի ճշմարտութիւն մ'է այս որ

Մեր պատանեկաց վրայ յաճախ կը նկատուի  
 Լաֆոնթէն կ'ըսէ՝ «յո՛ւրիշ հեղինակ-  
 ները կ'որհնէին ինչ որ հեղինակ : Այսպիսի նմա-  
 նութիւնը կսպաննէ հանճարը :

Յ. - Նմանութիւնն ալ իր վտանգներն  
 ունի . ամենէն ճարտար նմանողը կրնայ իր  
 հանճարը վտանգել եթէ զգուշութեամբ  
 չվարուի : Քանզի ընտրելագոյն հեղինակ-  
 ներն իսկ իրենց պակասութիւններն ունին :  
 Ըստ Որատիոսի՝ Հոմերն իսկ երբեմն կը  
 նիրհէ . Կիկերոն կը յայտնէ թէ երբեմն  
 չսիրեր զԹեմոսթեն :

Շատ անգամ փոքրիկ պակասութիւն  
 մը շատ վտանգաւոր կ'ընէ հեղինակի մը  
 լաւութիւններն ալ . քանզի սուտը երբեմն  
 առաւել աչքի կը զարնէ՝ քան թէ ճշմարի-  
 տը : Ասկէ զատ գեղեցկութիւնները նիւ-  
 թին համեմատ կը փոփոխին :

Ուստի նմանութիւնը պէտք է սահման  
 ունենայ : Եթէ չափազանց դործածուի՝  
 սովորութիւն կը դառնայ և այսպէս մէ-  
 կը չկրնար բան մը ստեղծել առանց ա-  
 ռաջնորդի : Ամենէն աւելի վտանգաւորը  
 որեւիցէ հեղինակի մը վրայ նախապաշար-  
 վիլը յափշտակուիլն է , այնպէս որ իրեն

պակասութիւնները աչքի չզարնեն : Այսպիսի նմանութիւնը աղետարեր է երիտասարդութեան : Կուինտիլիանոս կը դանդատէր որ իր ժամանակին երիտասարդութիւնը կը կորսուէր՝ Սենեկայի հետեւելով . մենք ալ նոյնը կըսենք մեր երիտասարդութեան համար՝ Վիքթոր Հիւկոյի նըկատմամբ : Ամեն երիտասարդ կը ջանայ անոր նմանել՝ ամեն հանգամանօք՝ չգիտնալով որ գրական աշխարհը շատ դառն քննադատութիւններ ունի անոր դէմ՝ իւր շափաղանցութեանց, երկարաբանութեանց, ձեւերու անընտրութեանց մասին :

Ուստի կ'առաջարկեմք մեր ուսանողաց որ առանց արհամարհելու յիշեալ մեծ գըրագէտը՝ զգուշութեամբ հետեւին անոր , քանզի նա այսպիսի ձեւեր ալ ունի որ իրմէ զատ ոչ ոք կրնայ գործածել :

6. - նմանութեան ուրիշ կերպ մ'ալ կայ՝ զոր կ'առաջարկէ Կիկերոն . այն է գըրուած մը կարդալ ու շաղրութեամբ , յետոյ նոյն նիւթը ինքնին գրել , ապա բնագըրին հետ բաղդատել . այս վարժութիւնը շատ օգտակար է՝ ոճը և դատողութիւնը կըթելու համար :

## 4. - ՅԱՂԱԳՍ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ

1. - Տեսակ մը նմանութիւն կայ՝ զոր ստորին մտքերը կարհամարհեն՝ իբրեւ անարժան նշանաւոր հանճարներու՝ այն է Բարգամանիւնը։ սակայն կը խաբուին։ Երեւելի հեղինակները գեղեցիկ կտորներ թարգմանած են իրենց ճաշակը կրթելու համար. վասն զի ասով բնագրին ձեւերը դարձուածները և բացատրութիւնները, աւելի մտադրութեամբ իրեն կը սեփականէ թարգմանիչը։

2. - Կիկերոն՝ թիմոսթենի ճառերը կը թարգմանէր՝ մինչդեռ ինքը արդէն նշանաւոր հանդիսացած էր Հռոմէական բեմերուն վրայ. Վիրգիլը՝ Հոմերոսի թարգմանութիւնն ընել կը սիրէր. Պուալոյ Ռաաիոսի թարգմանութեամբ իր հանճարը կը ճոխացնէր. Ռասին՝ Ղերբեպիդէս, ՂՏակիտոս Գաղղիերէնի կը վերածէր. և այսպէս շատ երեւելի հեղինակներ։

3. Թարգմանութեանց օգուտը հասկընալու համար՝ բաւական է դիտել որ հեղինակը միայն կը ջանայ իր ստեղծումը ազնուացնել. իսկ թարգմանիչը կը պարտի

ուրիշին իմաստը ըմբռնել և անոր յարմար  
բացատրութիւններ ստեղծել :

Լաւ թարգմանիչ մը հեղինակէն նուազ  
արժէք չունի : Մեր անմահ հայր Արսենը  
միթէ պարտական չէ՞ թարգմանութեանց  
իր Հ՝Կ Դ՝Ե-Յ՝Զ՝Է գեղեցիկ մասերը :

Թարգմանութեան մէջ ուշադրութիւն  
ընելու է լաւ ըմբռնել իմաստները , անոր  
խորը թափանցել . այնուհետեւ լեզուն ինք-  
նին կուգայ բացատրութեանց համեմատ  
զանոնք թեքելու և արտայայտելու :

Այս բոլոր հանգամանքները իմիասին  
չեն պահանջուիր պատանի ուսանողներէն .  
սակայն դիւրին է մակարբերել թէ ինչ ան-  
հուն օգուտներ կը ծագին այս վարժու-  
թենէն՝ եթէ զգուշութեամբ ըլլայ այն :  
Ընտիր հեղինակները թարգմանելը՝ անոնց-  
մէ ճաշակի դաս առնել է :

Այս մասին յաջողելու համար՝ Եւրո-  
պական ծաղկեալ լեզու մը հիմնական կեր-  
պով ուսանելու է . անհիմն լեզուադիտու-  
թիւնը՝ յիշեալ օգուտները չկրնար ընծա-  
յել , այլ առաւել կօղնէ իմաստակութեան :

Կ. - Արդ ինչպէս պէտք է թարգմա-  
նել . եթէ մարդ շատ հեռանայ բնագրէն՝

ոչ թէ թարգմանութիւն՝ այլ նմանութիւն ըրած կ'ըլլայ . եթէ ծառայաբար ընդօրինակէ՝ բառերը փոխադրած կ'ըլլայ միայն : Ուրեմն ճիշդ միջին կէտ մը կայ , և զայն պահելու համար՝ հետեւեալ կանոնաց ուշադրութիւն ընելու է :

1<sup>o</sup> Իւր-ոչ բն-կոն իւր-էն դպչելու չէ . այսինքն բնական ասացուածները փոփոխելու չէ , վասն զի անոնք ամեն ազգաց համար հասարակ են :

2<sup>o</sup> Նոյնպէս՝ դադափարաց կամ գոնէ պարբերութեանց կարգը պահելու է :

3<sup>o</sup> Պարբերութիւնները որչափ ալ երկայն ըլլան զանոնք կտրելու չէ . վասնզի խօսքին զօրութիւնը կ'ընկնի . սակայն այն պարբերութիւնները՝ որոնց անդամները շատ սերտ կապակցութիւն չունին կրնան կտրուիլ :

4<sup>o</sup> Պէտք չէ փոխել շաղկապներուն ոչ իմաստը և տեղը : Միայն ան ատեն պէտք է վերցնել զանոնք՝ երբ իմաստը կը ներէ գիւրաւ անցնիլ մէկ խօսքէ ի միւս :

5<sup>o</sup> Մակբայները պէտք է այնպէս դասաւորին որ բային իմաստը գիւրաւ զգալի ընեն :

6<sup>o</sup> Զուգաշափ խօսքերը պէտք է իրենց չափովը բացատրել :

7<sup>o</sup> Փայլուն իմաստներն՝ իրենց փայլը պահելու համար կը պարտին բառերու մէջ նոյն ընդարձակութիւնն ունենալ :

8<sup>o</sup> Իմաստից ձեւերը պէտք է սլահել . իսկ բառից ձեւերը իրենց համապատասխան ասացուածներով փոխել : Իսկ եթէ բառից ձեւերը չկարենան թարգմանուիլ իրենց համապատասխաններովը՝ պէտք է իմաստը բնականի վերածել, ուրիշ յարմար դաղափարի մը վրայ փոխադրել զայն՝ որպէս զի թարգմանեալ խօսքը իր ճոխութիւնը չկորսնցնէ :

9<sup>o</sup> Առաձները՝ եթէ նոյնութեամբ չը թարգմանուին՝ ուրիշ նման առաձներու փոխել :

10<sup>o</sup> Պէտք չէ հեղինակին բնագիրը ընդլայնել՝ վասն զի այն ատեն թարգմանութիւն եղած չըլլար՝ այլ մեկնութիւն :

11<sup>o</sup> Երբեմն կրնայ փոխուիլ տկար բառ մը զօրաւոր բառի մը հետ . սակայն թարգմանչին ազատութիւնը ասկէ աւելի չէ :

12<sup>o</sup> Վերջապէս՝ երբեմն պէտք կըլլայ բնագրին կերպը թողուլ՝ երբ ասիկա կա-

րեւոր է յստակութեան և վայելչութեան համար :

Ասոնք թարգմանութեան տեսական կանոններն էին : Գործնականները խիստ շատ են՝ որոնցմէ մէկ քանին կը նշանակեմք :

5. - Իմաստին շատ կարեւոր չեղող շաղկապները կրնան վերցուիլ :

6. - Տրամաբանական թարգմանութեանց մէջ՝ շարադասութիւնը կրնայ քիչ մ'ազատութեամբ յեղաշրջիլ . այսինքն պատճառը՝ գործէն՝ բային գործողութիւնը՝ բայէն՝ եւայլն առաջ դրուիլ :

7. - Տէր Բարսեղիւնն է լռեցի :

8. - Փոխաբերութեանց թարգմանութեանը մէջ աւելի զգուշութիւն ընելու է . եթէ փոխաբերութիւնը չկարենայ ճիշդ թարգմանուիլ պէտք է անոր համազօրը փնտռել :

9. - Թէպէտեւ մարդկութեան ու քերականական սրբազան կանոն մ'է՝ հեղինակին ասացուածոց վրայ բան մը չաւելցնել՝ սակայն մէկ կամ երկու բառեր՝ երբեմն իսկ վերադիր մը, մակբայ մը կարեւոր են՝ իմաստը լուսաւորելու, ամբողջացնելու կամ անոր ներդաշնակութիւն տալու համար :



# ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

## ԳԼՈՒԽ Ա.

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ  
(composition)

## ՅՕԴՈՒԱԾ Ա.

1. - ՅԱՂԱԳՍ ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ

1. - Շ-ը-դը-ն է շատ մը գաղափարներ 'ի մի հաւաքել, զանոնք կարգի դնել և իրենց պատշաճ սճովը ցուցնել:

Սովորաբար՝ համբաւկաց նիւթեր տալու և մինչեւ անգամ անոր յատակագիծը գրելու է, որպէս զի զանոնք ընդլայնեն. բայց այս ընդլայնումը օրինաւորապէս ընելու համար պէտք է՝ 1<sup>0</sup> նիւթին խորը թափանցել և անոր վրայ հասուն խորհրդածութիւն ընել. 2<sup>0</sup> Յետոյ մտաց բորբոք տալ. 3<sup>0</sup> Այս առաջին փորձը ինքնին ուղղել. 4<sup>0</sup> վերջապէս գրուածը ուսուցչի մը սրբագրել տալ:

2. - նիւթին վրայ որչափ աւելի խոր-



4. - Այս նախնական վաստակը թէ-  
պէտ երբեմն կը յաջողի՝ սակայն լի է թե-  
րութեամբ . այսչափով միայն գոհ ըլլալը  
թեթեւամտութիւն , յանդդնութիւն և  
անհոգութիւն է : Երկուսարդաց համար  
չատ վտանգաւոր է՝ իրենց սխալմունքներ-  
ուն և պակասութեանց վրայ կամաւ աչք  
դոցելը : Այս ներողամտութեամբ իրենց  
պակասութիւնը օր օրի կը յաւելու և վեր-  
ջապէս անդարմանելի կ'ըլլայ : Շատերը կը  
պարծին թէ՛ մէկ քանի վայրկենի մէջ էջեր  
կը լեցնեն . բայց ի՞նչ կ'ենէ աստի - ոչ ինչ ,  
այլ միայն յոռի գրագէտներ զորս կը ծաղ-  
րէ Պուալոյ :

Ստուսիգեր երջանիկ՝ ոյր գրիչն արգաւանդ ,  
Մէն մ'ամիս ծնանի հատորիկ մ'անաշխատ ,  
Քու գրուածըդ՝ թէպէտ զուրկ յուժոյ թալ-  
կացած ,

Ողջամիտ խորհրդոյ հակառակ յօրինուած՝  
ի՞նչ կուզեն՝ թող ըսեն՝ կը գտնէ անիկայ ,  
Դրածախս՝ որ ծախէ , և յիմար որ կարդայ :

Ուստի պէտք է գրուածները աչքէ  
անցնել , զանոնք քննել , սրբագրել , վե-  
րըստին կարդալ , վերստին սրբագրել՝ մին-  
չեւ որ միտքը գոհ ըլլայ և նիւթը իր վա-

յերուչ սահմանին մէջ մտնէ : Սակայն կըր-  
նայ առարկուիլ թէ՛ որչա՛ երկու շահան-  
դէրէ՛ կըլլայ որ կերպով բն ին ինքն-  
փոյթ չէ, վասն զի ասիկա է գրուածի մը  
յարգ և կեանք ունենալու միջոցը : Մէկը  
կը պարծենար Պինգարու թէ՛ շո՛ւ Եր-  
մէջ չորս հարիւր տող ոտանաւոր գրած  
եմ. - Ի՞նչ Եր-մէջ ու Նոյնչա՛ զի՛րէ՛, պա-  
տասխանեց Պինգար :

«Մի՛ պարծենար, կ'ըսէ Պուալոյ, թէ  
ես արագ և շատ կը գրեմ. ասիկա դատման  
պակասութիւն կը նշանակէ : Աւելի կը սի-  
րեմ առուակ մը որ ծաղկեալ մարգերուն  
վրայ կը ճեմէ հեղասահ՝ քան թէ հեղեղ  
մը որ փոթորկալից և աւազախառն կը հոսի  
տղմոտ գեանի մը վրայ : Գրածդ շարու-  
նակ յղիէ. շատ կը ճատէ՛ և քիչ աւելցուր» :

5. - Վերջապէս իր գրածը ինքնին սըր-  
բագրելէն վերջը ուսուցչի ներկայացնելու  
է, Լաւ ուսուցչիք պատանեկաց համար ի՞նչ  
որո՞ւ բայց ուրչա՛ բարեկամ պէտք է ըլլայ :

6. - Շարագրութեան տեսակները շատ  
են, բայց մենք հոս երեք գլխաւոր տե-  
սակաց վրայ պիտի խօսինք՝ որ են՝ Նկարագրա-  
բն, Մանրագրաբն (narration) և Նման :

# ԳԼՈՒԽ Բ.

## ՅԱՂԱԳՍ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ

### ՅՕԴՈՒԱԾ Ա.

Պերճ և ճոխ եղիր նկարագրութեանցդ մէջ. հոն պէտք է որ վայելչութիւնը փայլի և ստորին հանդամանք մը չերեւի :

ՊՈՒԱՆՑ

## 1. ՅԱՂԱԳՍ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ

1. - Նկարագրութեան է առարկայից կենդանի նկարը և պատկերացումը : Պէտք գոյները այնչափ կենդանի ըլլան և այնչափ ճշգրիտ՝ որ ընթերցողը կամ լսողը կարծէ թէ ակն յանդիման կը տեսնէ առարկայները : Այս պարագային մէջ նշանաւոր հեղինակը ստորինէն կը տարբերի . վասն զի ստորինը միայն կը զրուցէ , իսկ նշանաւոր հեղինակը աչաց կը ցուցնէ . ինչպէս է Ժան-Ժազ-Ռուսոյի արեւու նկարագիրը :

Ար տեսնես որ հեռուէն կ'իմացնէ իր գա-  
 լուստը՝ բոցոյ ճաճանչներ առջեւէն սփռելով .  
 երթալով հրդեհը կ'աւելնայ, կարծես թէ բո-  
 լոր արեւելք բոցի մէջ է : Այս պայծառու-  
 թիւնը տեսնելէ ետքը՝ երկար ատեն ակըն-  
 դէտ կ'սպասես աստղին երեւելուն . ամեն  
 վայրկեան կարծես թէ պիտի երեւի . վերջապէս  
 յանկարծ կ'երեւի . հրացեալ գունդ մը դուրս  
 կը նետուի և անմիջապէս կը լեցընէ բոլոր տա-  
 րածութիւնը . խաւարին քօղը կը պատուի և  
 կ'ընկնի . մարդը վերստին կը տեսնէ իւր բը-  
 նակարանը գեղեցկացած . կանանչեղէնները  
 և մարգագետինը նոր դորութիւն մը զգեցած  
 են գիշերուան մէջ . նորածին լոյսը՝ լուսաւորե-  
 լով՝ արեւուն առաջին ճառագայթները ոսկիի  
 գոյն տալով անոնց, զիրենք ծածկող ցօղին  
 մէջ անդրադարձել կուտան լոյսը և գոյները :  
 Երգեցիկ թռչունները պար կազմեն և կ'ող-  
 ջունեն միարերան զՀայրն կենաց . այս վայր-  
 կենին մէկը չը լւեր : Իրենց դայլայլիկը տա-  
 կաւին տկար ըլլալով՝ աւելի ծանր և անոյշ  
 է քան թէ բոլոր օրուան մէջ . քանզի անուշակ  
 զարթուցման մը թմրութիւնն ունի : Բոլոր այս  
 առարկաներուն մրցումը մարդուս զգայարանաց  
 այնպիսի զուարթ տոյաւորութիւն մը կ'ընէ՝ որ  
 մինչեւ հողին կ'անցնի : Այս ատեն կէս ժա-  
 մու չափ զմայլում մը կայ՝ օրուն ոչ ոք կրնայ

դիմանալ : Այսչափ մեծ , գեղեցիկ , հեշտալի տեսարանի մը վրայ ոչ ոք կրնայ սլաղ արիւնով նայլլ :

2. - Առարկան նկարագրել զիտնալը բաւական չէ այլ պէտք է ընտրել՝ 1<sup>o</sup> նրկարագրելիք առարկայն . 2<sup>o</sup> Անոր աչքի զարնելու կէտը . 3<sup>o</sup> Նպաստաւոր ժամանակը՝ եթէ առարկայն փոփոխելի է . 4<sup>o</sup> Տարածութիւնը և տեղը . 5<sup>o</sup> Հանգամանքները . 6<sup>o</sup> Չայն զգալի ընող հակադրութիւնները :

3. - Առարկային ընտրութիւնը հեղինակին գիտաւորութենէն կախումն ունի . կրնայ զայն տխուր կամ զուարթ ընել :

4. - Հեղինակը պէտք է որ աչքի զարնելու կէտերը աւելի զգալի ընէ . ինչպէս երբ Պօսիւէ ուզէ քաջահմուտ սլատերազմող մը նկարագրել՝ միայն անոր գեղեցիկ յատկութիւնները կը տեսնէ .

Ո՛ր ժամուն և ո՛ր կողմէն դան թշնամիները՝ անոնք միշտ զինք զգոյշ կը գտնեն , սլատրաստ՝ իրենց վրայ յարձակելու , յաղթութիւն տանելու : ինչպէս արծիւ մը թէ՛ ընդօդս սլանայ՝ թէ՛ ժայռի մը կատարը հանդչի՝ միշտ իր խորաթափանց նայուածքը ամեն կողմ կը յածէ և

այնպէս ապահով կ'ընկնի իր որսոյն վրայ՝ որ անկարելի է անոր իր ճիրաններէն ազատիլ՝ ինչպէս չէր ազատած իւր աչքէն : Որչափ թափանցող էին իւր նայուածքը այնչափ յախուռն և անդիմադրելի էր իւր յարձակումը , այնչափ ծանր և անվրէպ էին Գոնտէ իշխանին ձեռք :

Պօսիւ է կը մոռնայ թէ իւր դիւցազունը մարդ էր և իւր խողխողածներն ալ մարդ էին : Բայց հոս ճարտարախօսը ուրիշ պարտ ունի կատարելու և այս մարդասիրական զգացումը կը պարտի տեղի տալ վայրիկ մը :

Յ. - Եթէ առարկայն փոփոխելի է՝ պէտք է նպաստաւոր ժամանակն ընտրել : Այսպէս Հերմիոն որ զՊիւռոս՝

Քաջամարտիկ դիւցազուն մը , անվեհեր և յաւէտ յազթութեան առաջնորդ , սիրուն հաւատարիմ կ'ընդունէր՝

(ԱՆՏՐ. ԱՐԱՐ. Դ. ՏԵՍ 3)

Պահ մը ետքը անողոք մարդասպան միայն կը նկատէ ինա :

Հեկտորի ծերունի հայրը կը լքանի , իւր ընտանիքը կը լքանին . իսկ դու ձեռքդ անոր սիրտը մխելով՝ կը փնտռես արեան մնացորդ մը զոր տարիքը ցամփեցուցած էր . Տրոյիա արեան գետերու մէջ կը լողայ , Պողիքսենա քու ձեռքը կը



յօշոտի՝ քեզի դէմ զայրացեալ բոլոր Յունաց  
աշքին առջեւ . ինչ կրնան խնայել այս վե՛-  
հարուածներուդ :

(ԱՐՄ. Գ. ՏԵՍ 5)

6. - Նկարագրութիւնը իր տեղին նա-  
յելով աւելի կամ նուազ տարածութիւն ,  
ընդարձակութիւն պէտք է ունենայ : Այս-  
պէս պատմագրին նկարագրութիւնը հա-  
մառօտ է , ճարտասանին աւելի ընդար-  
ձակ , իսկ բանաստեղծին առաւել եւս ըն-  
դարձակ . քանզի ասիկա երեւակայութեան  
հետ կը խօսի :

7. - Նկարագրութիւնը կազմող հան-  
գամանքները ընտրելու է . և շատ մանր  
մունր պարագայներու վրայ դեգերելու  
չէ : Նկարագրելը բոլոր պարագայները ի-  
րարու վրայ դիզել չէ՝ այլ կարեւորը և  
զգային ընտրել :

8. - Հակագրութիւնը նկարագրու-  
թեան ամենէն վայելուչ զարդն է : Վօլթեր  
իր Հինրիատին մէջ՝ իւր որդին լափելու  
պատրաստ մայր մ<sup>ա</sup> այսպէս կը նկարագրէ :

Կատաղութեամբ կը սլանայ՝ դանակը ձեռքը  
բռնած դէպի այն անմեղ որդին որ Բ-ը-ն-է-ը-  
ն-ը կը ի-ր-ի-ր-է-ր :



բարձր կազմախներով՝ որոնց հպարտ գլուխը  
յամպս կը ծրարէր :

12. - Մ-ն-ն-ն-ն է մասնաւոր եղելու-  
թեան մ'արտայայտութիւնը, ինչպէս է  
պատերազմի մը, մըրկի մը եւ այլն :

Եղիշէի վարդանաց պատերազմի նը-  
կարագրութիւնը խիստ գեղեցիկ օրինակ  
մ'է մասնանկարի :

13. - Չէ-չէ-չէ-չէ՝ մարդու մը կամ  
կենդանիի մը արտաքին տեսքը, կերպը,  
դերքը, դէմքը կը նկարագրէ :

Տեսայ այն Աղէքսանդր որ ապա երկիրը  
զարմացմամբ և սգով լեցուց : Դէմքին գծերը կա-  
նոնաւոր են, գոյնը՝ կարմիր, արծառնզն՝ քիթով-  
աչքերը՝ խոշոր, հրալից, մազերը՝ խարտեաչ և  
գանգուր, գլուխը՝ բարձր՝ քիչ մը ձախ ուսին  
վրայ ծած, հասակը միջակ, բարակ և ուղ-  
ղորդ, մարմինը շարունակ վարժութեամբ բա-  
րեձեւ և կորովի, Արսեն թէ մտադիր իւր  
զարդուց հոգ կը տանի :

ՊԱՐԹԻՆԵՐԻ

Պիւ ֆֆոն այսպէս կը նկարագրէ ձին :

Մարդուն ըրած ամենէն ազնիւ յաղթու-  
թիւնը այս դռագ և կրակոտ կենդանիին վրայ  
տարածն է, որ իրեն հետ կը մասնակցի պա-

տերազմին վաստակոց և փառացը . իւր տիրոջը սէս արիասքանչ՝ զայն կը սիրէ , կը փնտռէ զայն և նոյն եռանդեամբ կը վառի : Բայց որչափ քաջասիրտ՝ այնչափ ալ հըռ ըլլալովն՝ գիտէ իր եռանդը սանձել . ոչ միայն իր առաջնորդին ձեռացը տակ կը նուաճի՝ այլ կարծես թէ անոր կամացը խորհուրդ կը հարցնէ , և միշտ անկէ ընդունած հրամաններուն անսալով կը նետուի , մեղմանայ՝ կը կանգնի և միայն անոր կամբը գոհ ընելու համար կը շարժի :

14. - Բ-բ-բ ն-բ-բ-բ-բ-բ է՝ անձի մը բարեմասնութիւնները և թերութիւնները նկարագրել : Ասիկա աւելի պատմութեան , դործի մը , դիպուածի մը , երեւոյթի մը , կրքի մը , եւ այլն նկարագրութեան մէջ տեղի կունենայ :

Ֆենելոն Պրոտեսիլասի բռնուիլը այսպէս կը նկարագրէ :

Այս միջոցին Հեգեսիպոս ներս կը մտնէ , կը բռնէ Պրոտեսիլասի սրէն և թագաւորին կողմէն կիմացնէ որ զինքը Սամոս պիտի տանի : Այս խօսքերուն վրայ՝ այն պալատականին բոլոր ամբարտաւանութիւնը կընկնի՝ իրբեւ ժայռ մը՝ որ կը փրթի սեպացեալ լերան մը ծայրէն . և ահա կ'ընկնի Հեգեսիպոսի ոտքը , կուլայ , կը պաղատի , կը թոթովէ , կը դողայ :

կը գրկէ ծնկուրները այն մարդուն՝ զոր երբեմն արժանի չէր սեպեր իւր մէկ նայուածքովը պատուելու :



## ԳԼՈՒԽ Գ.



### ՅՕԴՈՒԱԾ Ա.

1-- ՅԱՂԱԳՍ ՄԱՆՐԱՊԱՏՄՈՒԹԵԱՆ (narration).

Քու մանրասպատմութեանցը  
մէջ աշխոյժ և արագ եղիր :

ՊՈՒԱԼՈՅ

1. - Մանրասպատմութեանցը գրելու տաղանդը ամենուն տրուած չէ . ասիկա ամենէն հաճելին է . ամեն ոք կը կարծէ այս յատկութիւնը ունենալ՝ սակայն խիստ քիչ մարդիկ իրօք ունին զայն : Բաւական չէ որ գրուած մը կարդացուելու արժանի ըլլայ՝ այլ միանգամայն հաճելի , կրթիչ և սրտաշարժ պէտք է ըլլայ :

2. - Մանրասպատմութեանցը կը կայանայ իրական կամ մտացածին եղելութիւն մը իր սկիզբէն մինչեւ վերջ նկարագրելու մէջ :

3. - Ինչպէս ամեն գրութեանց՝ նոյնպէս մանրապատմութեան առաջին պայմանն է միութիւնը՝ առանց որոյ գլխաւոր իրողութիւնը կը կորսուի :

Օր մը Սիմոնիդէս ուզեց ըմբիշ մը գրուատել, սակայն տեսնելով որ նիւթը ցամաք է, իւր դիւցազն, ծնողքը և ազգականք աննշան մարդիկ են՝ քանի մը խօսք միայն խօսեցաւ, և անցաւ պատմել կաստոր և Պողիքսի քաջութիւնք իրենց ամեն պարագայներովը : Ըմբիշը խոստացած էր տաղանդ մը ստակ տալ բանաստեղծին . բայց երբ անոր գրուածը կարդաց, խոստացածին մէկ երրորդը միայն տուաւ՝ ըսելով .

Նրկու մասն ալ յիշեալ կաստոր և Պողիքսատուածներէն դնա առ, վասն զի ինձի համար գրածներուդ մեծ մասը անոնք գրուած են :

4. - Իրողութեան ծագումը յիշել պէտք է . բայց ոչ թէ Ռասինի կատակերդութեան փաստաբանին պէս՝ որ պարզ իրողութիւն մը յայտնել ուզելով՝ աշխարհի ստեղծմանէն, տէրութեանց հիմնարկութենէն կ'սկսի . դատաւորն ալ մրափելով և արթննալով կը գոչէ . դու՞ն է՞ որդի՞ն անցնիք զնոցէն :

5. - Եթէ հարկ ըլլայ նախընթաց պարագայները յիշել՝ պէտք է համառօտ անցնիլ:

6. - Մանրապատմութիւնը երեք գլխաւոր պարագայ ունի՝ որք են հարկը, հարկուհիւնքը և երկուսնորս շահը:

7. - Մանրապատմութիւնը պէտք է սաչորս էական յատկութիւնները ունենայ՝ այսինքն՝ հարկը, շահը, գործը և յանկարծիք (intérêt):

## ՅՈՒՆԻԱԾ Բ.

### 2. - ՍՏԵՂԾՈՒՄՆ

1. - Եթէ նիւթը գիցարանութենէ, պատմութենէ կամ աւանդութենէ քաղուած է՝ հեղինակը պարտի արդէն ընդունուած գաղափարները յարգել և հասարակաց գիտցածին չհակառակիլ:

Այսպէս Աքիլլեայ խեռ և ցասկոտ բռնաւորութիւնը՝ Ենէասի ծանր և գթոտ բռնաւորութեան հետ պէտք չէ շփոթել:

Վօլթէր իւր Հենրիատին մէջ՝ սյո կանոնին դէմ մեղանշած է. վասն զի Հենրի

Դ. ին յԱնգղիա ճանապարհորդել կուտայ , մինչդեռ պատմութիւնը և աւանդութիւնը կը հաստատեն անոր բնաւ յԱնգղիա չերթալը :

2. Սակայն երեւակայութիւնը առանց եղելութեան էութիւնը և հիմը խախտելու կրնայ երբեմն իւր քաղած նիւթերուն աւելի ախորժ , գեղեցիկ դարձուածներ կամ գոյներ տալ :

3. - Կան այնպէս նիւթեր՝ որոնց թէ ձեւը թէ հիմը ստեղծուելու պէտք ունին , Հեղինակին կ'իյնայ գտնել եղելութիւնները , յաւելուածոյ պարագայները , անձինք և անուանք իսկ :

Սակայն պէտք է որ իր ընտրութիւնը յոռի չըլլայ : Շատ դժուարին է արգասաւոր , ճշմարտանման և սրտաշարժ նիւթ մ'երեւակայելը : Ստոյգ է որ երեւակայութեան՝ աղբիւրը անսպառ է . բայց երեւակայութիւնը առանց բանավարութեան կը մոլորի , կը դիմէ ծաղրելիին ու այլանդակութեան :

4. - Նիւթին ընտրութեան կամ ստեղծման մէջ պէտք է ուշադրութիւն ընել եղելութեան տեղի ունեցած ժամանակին , սո-



վորութեանց , բարուց և այլ կարեւոր հանգամանաց :

Պուալոյ այսպէս կը խրատէ :

Քննէ դարուց և գաւառաց սովորութիւնները . զի կլիմայները շատ անգամ բարուց մէջ տարբերութիւն կը գնեն : Զգուշացիր նախկին խտալիոյ գաղղիական բնաւորութիւն տալէ :

Շատ անգամ անձնասէր հեղինակը իւր գիւցազանց իր բնութիւնը կուտայ . կասգոն հեղինակ մը իւր բոլոր նիւթերը կասգոնի վրայ կը ձեւակերպէ :

Նոյնպէս՝ քու դերասաններուդ ըստ գիտաց խօսել մի տար . պէտք չէ որ երիտասարդ մը ծերունոյ և ծերունի մը երիտասարդի լեզու գործածէ : Ժամանակը ամեն բանի հետ՝ մեր բնաւորութիւններն ալ կը փոխէ . ամեն դար իւր հաճոյքը , միտքը և բարքն ունի :

Այս իմաստուն խրատին վրայ բացատրութիւն տալ աւելորդ կը համարիմ : Խօսք մը միայն կը յաւելունք , այսինքն՝ պէտք է որ գրագէտը մարդկային սրտին , մտաց , աշխարհի իրաց և սովորութեանց խորը թափանցել ջանայ՝ որպէս զի իւր գըրուածները ազգու , օգտակար և իւր անմահութեանը երաշխաւոր ըլլան :

ՅՕԴՈՒԱԾ Գ.

5. - ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

1. - Նիւթը գտնելէն ետքը կը մնայ զայն հրասլուրիչ կերպով ներկայացնել, ասիկա ---ը-րհ-նէ-ն գործն է :

2. - Ա---ը-րհ-նէ-ն է՝ գրելիք նիւթին զանազան մասերը կարգի դնել : Ստեղծման մէջ մտքի և երեւակայութեան արգասաւորութիւն պէտք է . իսկ առաջարկութեան մէջ դատում և խոհեմութիւն : Շատ անգամ ըստ ինքեան աննշան իրողութիւնմը՝ առաջարկութեան ճարտարութեամբը կարեւորութիւն կ'ստանայ :

3. - Առաջարկութիւնը երեք մաս ունի, որք են . ---ը-րհ-նէ-ն կամ ն-ի-ք-ն, հ-ն-դ-ը և եւր :

ՅՕԴՈՒԱԾ Դ.

4. - ՆԱԽԱԲԱՆ ԿԱՄ ԱՌԱՋԱԴՐՈՒԹԻՒՆ

1. - Ա---ը-րհ-նէ-ն է մտքերը պատրաստել հետագայ եղելութեանց . ուստի պէտք է որ հոս որոշուին՝ տեսարանին ընդ, գլխ-...-ը-նէ-ն, և գ-ր-ն-ն ընդ-բերել-ը հ-եր-ը :

2. - Առաջագորութիւնը պէտք է ընդհանրապէս՝ յարմար և դուրս ըլլայ, իսկ քիչ անդամ գործունէի կամ ինքնուրույն:

3. - Առաջագորութիւնը յստակ կըլլայ՝ եթէ ուղղակի իր նիւթէն բղխի՝ ինչպէս ծաղիկ մ' իր բունէն: Անօգուտ հանգամանքներ, չնչին դարձուածներ միշտ կը մթայնեն նիւթը:

4. - Առաջագորութիւնը պէտք է պարզ ըլլայ և քիչ խստանալով շատ արտադրէ, ապա թէ ոչ՝ առասպելեալ լերան կը նըմանի՝ որ բարձր երկունքէ վերջ լինի միայն ինչ:

5. - Երբեմն առաջագորութիւնը կրնայ գործունէ կամ ինքնուրույն ըլլալ. ասիկա այն ատեն կը պատահի՝ երբ հեղինակը յանկարծ կը փոխադրէ իւր ունկնդիրները նիւթին միջավայրը՝ իրր թէ անիկա առաջուց ծանօթ ըլլար իրենց: Ասոր կ'ըսուի գործունէ կամ ինքնուրույն ինքնուրույն: Սակայն պէտք է այս կերպով շարժեալ հետաքրքրութիւնը գոհ ընել գիտնալ՝ ապա թէ ոչ հեղինակը ծաղրելի կ'ըլլայ:

Ասկէ զատ մեծ ճարտարութիւն պէտք է նորէն անզգալի կերպով ետ դառնալ և

խակզբան գլխամամբ գուրս ճգուած պարագայները յիշել :

Մ. Գ. Տըլավինյը ուղելով Ժանտարքի մահը պատմել՝ այսպէս կսկսի :

Որո՞ւ պահուած են այս մահաշուէնչ հանգերձանք . որո՞ւ համար կը շարժին այս քահանայը , նուիրական արոյրը կը գողացնէ մահահարուէր ամբօխը , ո՞ւր կը գլմենն այս պատերազմիկները դունդազունդ և գահալէժ , իրենց գլմաց վրայ ուրախութիւն կը փայլի . անշուշտ պատիւը զիրենք կը բորբոքէ : Աերթան իրենց թանձրախուռն ռազմերը կազմելու յարձակման մը համար :

Ո՛չ , այս պատերազմիկները անգղիացիք են՝ որ կերթան կնօջ մը մահը տեսնելու . ո՛հ , քանի՛ ազնիւ են իրենց ցասմանը մէջ . ի՞նչ գեղեցիկ է կաշկանդեալ բազուկ մը նախատելը . այս կինը անպաշտպան տեսնելով կը գոչեն քաջերը՝ Ք-ը Բ-նի՛ Ն- Բ-նի՛ Գ-նի՛ Ե-նի՛ Զ-նի՛ Է-նի՛ Ը-նի՛ Թ-նի՛ և այլն :

Ուշագրութիւնը ՚ի սկզբան կը զարթնու այս եռանդուն նկարագրութենէն . սակայն հեղինակը զայն անմիջապէս յագեցընելէ զգուշացած է . վայրիկ մը սպասել կուտայ . սպա սքանչելի հարկադրութեամբ կը զարմայնէ և կը յափշտակէ

մտքերը : Պաշտօնս ինչ և որի պիտի ընդհանր  
տեսնելու ինչպիսիք , -հարգանք՝ ինչ ազդու  
հակադրութիւն :

6. - Այս տեսակ սկսուածը ծանր և  
խիստ նիւթերու միայն կը յարմարի : Եթէ  
նիւթը մեծ կարեւորութիւն չունի՝ հեղի-  
նակը իւր ՚ի ձայն թմրկաց ըրած յառաջա-  
բանովը ծաղրելի կ'ըլլայ : Պէտք է վերջը  
սկիզբին արժանաւոր ըլլայ :

## ՅՕԴՈՒԱՅ Ե .

### 5. - ՀԱՆԳՈՅՑ

1. - Հանգոյց է՝ գրուածին զանազան մա-  
սերը կամ անոր մէջ գեր ունեցող անձինք  
իրարու հետ կասկեկել : Մանրասպաս-  
մութեան գլխաւոր յանկուցումը՝ այս մա-  
սին վրայ կը կայանայ : Պէտք է հանգոյցին  
ընթացքը արգելող սլարագայները դուրս  
թօթափել և կարելի եղածին չափ ելքը  
(dénouement) քողարկել , ծածկել . վասն զի  
եթէ ելքը իսկզբան իմացուի՝ ամենայն  
հաճոյք և ուշադրութիւն կ'անհետանան :

Տես , ինչ ճարտար կերպով Մատամտը

Սէնովինյէ կը պատմէ Թիւրէնի մահը . նախ  
 նիւթին հանգոյցները կը յօրինէ . զօրա-  
 վարին մահուան տեղին , իրեն հետ ընթ-  
 րող անձանց՝ և իրեն արտասանած խօս-  
 քերը մէջ բերելով . այսպէս ուշադրու-  
 թիւնը կ'սկսի արթննալ , սիրտը կը յուզ-  
 ուի և անհամբեր կսպասէ ելքին . և երբ  
 վայրկեանը կուգայ սոսկալի կերպով կը  
 լուծէ հանգոյցը :

Ստուգիւ , դուստր իմ , նորէն քեզի հետ պի-  
 տի խօսիմ Թիւրէնի վրայ : Տիկին տ'Էլպէօֆ՝  
 որ քանի մ'օրուան համար կարդինալ տը Պույ-  
 յօնի քով է՝ երէկ աղաչեց զիս իրենց հետ ճա-  
 շելու՝ որպէս զի կարենանք իրենց վշտացը վը-  
 րայ խօսակցիլ : Տիկին Տը Նաֆէյէթ հոն էր .  
 ինչ որ առաջագրած էինք՝ ըրինք . աչքերնիս  
 բնաւ չցամփեցան : Տիկին տ'Էլպէօֆ Թիւրէնի  
 մէկ ճշգրիտ կենդանագիրը ունէր իր քովը .  
 գիւցաղնին հետեւորդները եկած էին ժամը  
 տասնըմէկին : Այս խեղճ մարդիկ սոցոյ զգեստ  
 հագած՝ անդադար կողքային և կը կոծէին :  
 Այս պատկերը տեսած ատեննին երեք աղնուա-  
 կանք մահուան դուռը հասան , սրտակէզ ա-  
 զաղակներ կը բառնային , չէին կրնար բառ  
 մ'արտասանել . իր սենեկասպանները , հետեւ-  
 ւորդները , մանկլաւիկները , փողարները՝ ա-

մենքն յարտասուս շարժեալ էին և յարտասուս  
կը շարժէին զտեսողս : Երբ անոնցմէ մէկը խօ-  
սելու վիճակի մէջ գտաւ ինքզինք՝ մեր տխուր  
հարցմանց սլատասխանեց : Իր մահը սլատմել  
տու ինք :

— Շարաթ օրը ժամը երկուքին ձի նստաւ կե-  
րակուր ուտելէ վերջ . և որովհետեւ շատ մարդ-  
կար հետը՝ բոլորն ալ երեսուն քայլ հեռու թո-  
ղուց այն բարձրաւանդակէն՝ ուր կ'ուզէր եր-  
թալ, և մանուկ տ'իշլպէ օֆին ըսաւ . Քեռորդի՛ն ,  
հա՛ն ինչի՛ք : շարժեալ շարժեալ ինչ քեռանս՝ շի՛ն ինչ  
հանցեալ : Պ . տ'Ամիլթոն՝ որ անոր երթալիք  
տեղին մօտ կը գտնուէր՝ ըսաւ . Պարն , սիլե  
եկոր , քոյն ինչի՛ք հրաշի՛ն ինչ քեռորդի՛ն : —  
Իրաւանս՝ հանս , քորն , քորնի՛նի՛ն , քորն եր-  
թեալ ինչի՛ք հանս հանսի՛նի՛ն , շար ինչի՛ք ե ինչ  
քոյն : Հազիւ ձին դարձուց՝ և ահա տեսաւ Սէնթ  
Իլէրը՝ գլխարկը ձեռքը՝ որ իրեն ըսաւ . Պարն  
հանսի՛ն ինչի՛ք հանս հանսի՛նի՛ն քորնի՛նի՛ն  
քոյն : Պ . տը թիւրէն դարձաւ և նոյնհետայն  
դեռ ինքը կանգ շառած՝ բազուկը և մարմինը  
ջախջախուեցան այն թնդանօթի հարուածէն՝  
որ Սէնթ Իլէրի գլխարկը բռնող բազուկը և  
ձեռքն ալ յափշտակեց տարաւ : Այս ազնուա-  
կանը անոր ընկնիլը շտեսաւ . ձին զինք տա-  
րաւ հոն՝ ուր թողած էր մանուկն տ'իշլպէօֆը .  
երեսը թամբին վրայ խոնարհած էր : Այս տե-

զը ձին կը կանգնի , դիւցազնը կ'ընկնի իւր մարդոց բազկացը վրայ . երկու անգամ մեծաբաց կը բանայ աչերը և բերանը՝ և կը հանգչի յաւիտեան . խորհէ՛ որ մեռած էր և սրտին մէկ մասը կորսուած էր . . .

Յ. - Հանգոյցէն առաւել կը տեսնուի մանրապատում գրողին ճարտարութիւնը : Լաֆոնթէնի բոլոր առակները մասնաւորապէս այս տեսակին համար էլ-ի է-ըն-նեք են :

## ՅՕԴՈՒԱԾ 2.

Յ. - ԵԼՔ ԿԱՄ ԼՈՒԾՈՒՄ

1. - Եւ կամ լը-ճ-ձ այն կէտն է՝ ուր գործողութեան հանգոյցը կը լուծուի :

2. - Ելքին ճարտարութիւնն է՝ առանց իմացնելու զայն կանխաւ պատրաստել : Պատրաստութիւնը նախընթաց խօսքերուն բնութենէն կախում ունի . այսինքն պէտք է որ խօսքերը ինքնին և բնական ընթացքով առաջնորդեն ելքին : Ասիկա ամեն տեսակ նիւթերուն էական կանոնն է :

Շաթօպրիանի Մ-ըն-նեք անուն գրքին



մէջ այս տեսակ գեղեցիկ օրինակներ կը գտնուին :

Եւտոր կը շարշարուի հաւատոյ համար , կը պատրաստուի մեռնելու՝ երբ դատաւորին մէկ նամակն իրեն կիմացնէ որ՝ իր կիներ ամօթալի կենաց դատապարտուած է՝ և զայն աղատելու համար՝ հարկ է որ Եւտոր կռոյ զոհ մատուցանէ . ինչ ընէ թշուառ այրը :

Եւտորը կը մարի , ամէն կողմէն օգնութեան կը դիմեն . զինուորները զայն կը շրջապատեն , նամակը կ'առնեն , ժողովուրդը կը սաշանջէ զայն . սրիբուն մը զայն բարձրաձայն կ'ընթեռնու . եպիսկոպոսները անշունչ կը կենան , ամբօխը կը խռովի : Եւտորը աչքն ի լոյս կը բանայ . զինուորներն իրեն խոնարհած կ'ըսէին . շնորհ , շնորհ , տէր Կրօնէի բեռնէն լիւր ըլլան՝ ե՞րբ տէրն ինչ . այս ըսելով իրեն դաշխուրան մը կը բերեն լի գինւով՝ որպէսզի քաւութիւն մատուցանէ : Սոսկալի փորձութիւն մը Եւտորի սրտին կը տիրէ : Սէ՛-Ն-տէն -Տ-Ն-Ս-Տ-Տ-Տ . Սէ՛-Ն-տէն Նիէր-Ի-Ս-Տ-Տ-Տ-Տ-Տ-Տ-Տ-Տ . Սարտիրոսին կուրծքը կը բորբոքի , իր վիրաց կապերը կը քակէ և արիւնը գունդագունդ կը հոսի : Թողովուրդն իսկ՝ խանդաղատած ի ծունր կ'իջնէ և կը գոչէ զինուորաց հետ , շնորհ , շնորհ :

Այն ատեն Եւտոր նուազեալ ձայնիւ . ո՞ր էն  
 -բժ-է-բբ-ընէրը : Զինուորները կը շաշեն իրենց  
 վահաններն ի նշան յաղթութեան , և կը գի-  
 մեն իրենց դրօշները բերելու . Եւտոր՝ ոտքի  
 կ'ելնէ , հարիւրապետներն իրեն կ'օգնեն՝ կը  
 յառաջանայ արծուէ դրօշներուն մօտ , ամբո-  
 խին վրայ լուսթիւն կը տիրէ . Եւտոր կ'առնէ  
 դաշխուրանը : Եպիսկոպոսները գլուխնին կը  
 գոցեն իրենց պատմուճաններովը , խոստովա-  
 նողք ճիշ մը կարձակեն , դաշխուրանը կ'ընկ-  
 նի Եւտորին ձեռքէն . Եւտոր կը կործանէ դը-  
 րօշները , և մարտիրոսներուն դառնալով կ'ըսէ .  
 Բժ-բբ-ընէ-բբ :

Ինչպէս որ կը տեսնուի , Եւտորի միտ-  
 զը ոչ ոք գիտէ՝ մինչեւ այն վայրկեանը  
 երբ՝ Բժ-բբ-ընէ-բբ , կը գօշէ՝ քաղինը կոր-  
 ծանելով : Մինչեւ ցայն վայր ընթերցո-  
 շը կամ ունկնդիրը սիրտ ի թունդ կ'ըս-  
 պասէ . -բբ-բբ-ընէ-բբ Ե-բբ-բբ , -բբ-բբ-  
 բբ-բբ-ընէ-բբ ինչն է-բբ-բբ-բբ : Բայց Բժ-  
 բբ-ընէ-բբ խօսքը ամեն տարակոյս , ամեն  
 յուզմունք կը ցրուէ , և մեր աչքերէն գը-  
 թութեան արտասուք կը հոսեցնէ :

Յ. - Երկրորդ՝ պէտք է որ ելքը պա-  
 տասխանէ հեղինակին խոստմանց , այսինքն  
 առաջադրութեանը : Սակայն ծաղրաշարժ

գրուածներու մէջ այս կանոնը չպահուիր , այլ սկիզբը կամ առաջագրութիւնը որչափ ծանր և զգոնական ըլլայ՝ եւքն ալ այնչափ զուարթ և ծաղրաշարժ կըլլայ : Այսպէս է Քաղղիանոս կայսեր հետեւեալ պատմութիւնը :

Վաճառական մը կայսրուհւոյն սուտ գողարներ ծախած էր ճշմարտի տեղ . իշխանուհին զայրացած՝ ուզեց որ օրինակ ըլլալու համար պատժուի խարերան : Քաղղիանոս հաւանեցաւ , և հրամայեց որ վաճառականը կրկէսը տանին դաղանաց կեր ըլլալու : Քոհարաւաճառը սահմուկած կը դողայ , հանգիսատեսները լռիկ , մնջիկ կսպասեն . ամեն վայրկեան կը կարծեն թէ դուրս պիտի յարձակի վանդակէն առիւծ մը , վաղր մը՝ կամ արջ մը . բայց ինչ եղաւ ամենուն զարմանքը երբ տեսան . . .  
 «Ի՞նչ է . ամեն մարդ սկսաւ խնդալ : Ինչ է ի՞նչը , ըսաւ Քաղղիանոս , և դէպք է որ ի՞նչ . . .»

Կ. - Երրորդ՝ պէտք է ժամանակին վերջացնել գիտնալ : Երբ լուծումը յայանուի , նկարագրութիւնը կաւարտի , և ընթերցողը ամեն բան հասկնալով՝ ալ չուզեր աւելին մտիկ ընել :

Լաֆոնթէն իւր հոգեւորականական առակին

Մէջ այս կանոնին դէմ մեղանշած է . առակին իմաստն է՝ մեր խորհրդոց ունայնութիւնը ցուցնել : կինը սնտոի բաներ մտածելով և իր ցնորքներուն մէջ ընկղմելով կը ցատկէ և կաթին ամանը ինկնելով կը թափի :

Բարբէթ՝ յափշտակուած կը ցատկուտէ , կաթը կընկնի . երթաք բա՛րով հորթ , կով , խոզ , հաւեր :

Այսինքն կինը իր դրամագլուխը կորսընցնելով իր ցնորքներն ալ կորուսած կըլլայ : Այս խօսքէն ետքը ալ հարկ չկայ աւելցնելու .

Այս հարստութիւնը երեւակայող կինը խեղճ նայուածքով կը դիտէ իր թափած հարըստութիւնը , կերթայ ինքզինք արդարացնելու իւր ամուսնոյն քով , ծեծ ուտելը աչքը առած : Այս դիպուածին վրայ շատ մարդ խնդաց և անունը դրին՝ Կ-Բ-Է Դ-Գ-Դ-Է :

### ՅՕԴՈՒԱԾ Է.

7. - Թէ Ի՛նչՊէՍ ՊէՏԹ է ՁԱՐԴԱՐԵԼ ԻՐԵՐԸ

1. - Երեք գլխաւոր բան կայ իրերը զարդարելու համար . 1) (որուն վրայ խօ-

սած ենք), Գլխի Գեղ (episode) և Իրերի  
Նշաններ :

2. - Միջին Գեղ կ'ըսուին այն գործե-  
րը, պատահարները՝ որոնք մանրապատ-  
մութեան մէջ մուտ կը գանեն և գլխա-  
ւոր իրողութեան հետ կը կապուին՝ սա-  
կայն եթէ վերցնենք՝ գլխավոր նիւթը չը-  
խանդարուիր :

3. - Ուտի՛ միջին գէտքերը այն ատեն  
պէտք է գրուին՝ երբ ոճին ազդուութիւն  
և ոյժ կրնան տալ և նիւթին հետ ուղղա-  
կի վերաբերութիւն ունին : Այսպէս են՝  
Ռօքրուայի մարտին նկարագրութեան մէջ՝  
պատերազմին անխուսափելի ըլլալը, Կամ  
տը Ֆօնթէնի ոգւոյ մեծութիւնը, Պէքի  
անօգուտ աճապարանքը, Սպանիոյ հե-  
տեւակաց յուսահատ և կատաղի ջանքերը  
եւայլն :

Որոշեալ ժամուն հարկ եղաւ խորին քնն  
արթնցնել այս երկրորդ Աղէքսանդր. կը տես-  
նէք թէ ինչպէս կը սլանայ ի յաղթութիւն կամ  
ի մահ : Երբ ռազմէ ի ռազմ արծարծեց իւր  
եռանդը՝ նոյն ժամուն գրեթէ խորտակեց թը-  
նամուտն աջ թեւը՝ մերը պաշտպանեց, կիսով  
պարտեալ գաղղիացիք կասեցոյց, յաղթական

Սպանիացիին ի փախուստ դարձուց, ամեն կողմ արհաւիրք սփռեց, և իր փայլահնացայտ աչօք զարմացուց զանոնք՝ որ իր հարուածներէն խուսափեր էին: Սպանիոյ բանակին ահարկու հետեւակը մնացեր էր, որուն ստուար գունդերը իրարու յարած՝ աշտարակներուն նման բայց այնպէս աշտարակներու՝ որ իրենց խրամները կրնային նորոգել, անդրդուելի կեցած էին փախստական բանակին մէջ՝ և ամեն կողմէ հուր կը շնչէին: Քայց հուսկ ուրեմն սէտք է տեղի տալ. ի զուր անտառներուն մէջ Պեք զօրապետը իւր նոր հեծելազօրոք յառաջ կը խաղայ մեր վաստակեալ զօրաց վրայ խնելու, իշխանը իմացաւ. խորտակեալ գունդերը կազմուիլ կը սկսանջեն, սակայն յաղթութիւնը առաւել սոսկալի պիտի ըլլայ Անկիէնի կոմսին քան թէ պատերազմը: Մինչդեռ լի վստահութեամբ յառաջ կը խաղայ այս քաջարանց որսը ընդունելու՝ ասոնք միշտ զգոյշ կեցած նոր և յանկարծակի յարձակումէ մը կը սոսկան, իրենց հրաձգութիւնք կը կատգեցնեն մեր զօրքերը, ուրիշ բան չտեսնուիր՝ այլ կոտորած: արիւնը կը գինովցնէ զօրքը, բայց մեծ իշխանը որ չուզեց այս առիւծներուն իրբեւ երկչոտ ոչխար մորթուիլը, յուզեալ քաջութիւնը հանդարտեցուց և յաղթելու հաճոյքին վրայ աւելցուց ներելու հաճոյքը: Ի՛նչ եղաւ այս փորձեալ գուն-

դերուն և իրենց քաջ զօրասլետներուն զարմանքը՝ երբ տեսան՝ որ իրենց համար ուրիշ տեղ փրկութիւն չկար՝ այլ միայն յաղթողին բազկացը մէջ : Ինչ աչօք նկատեցին պատանի իշխանը՝ որու վեհութիւնը կրկնապատկուեր էր յաղթութեամբը՝ և որուն նոր շնորհներ կը յաւելուր գթութիւնը : Որչափ կը փափագէր կոմս Երանի կեանքը ազատել . բայց անիկա ընկած էր այն հազարաւոր մեռելոց հետ՝ որոնց կորուստը ցարդ կզգայ Սպանիա , և այլն :

ՊՈՍԻԷ

(Գ-Բ-Ն-Է-Ն ԲՆՆ Գ-Ն-ԷԷ)

Պ. Շաթօպրիան այս կանոնին դէմ մեղանչեր է Ծրանկաց և Հռովմայեցւոց մէջ եղած մեծ պատերազմին նկարագրութեան մէջ :

Ծրանկները մեր տիգովք խոցեալ՝ կը կատողին այս անվրէժ և անփառունակ վիրաց համար : Կոյր կատաղութենէ մղեալ՝ սլաքը կը կոտրեն իրենց վիրաց մէջ , յերկիր կը թաւալին և ցաւին հետ կը մաքառին :

Հռովմական այրուծին կը շարժի այս բարբարոսները խորտակելու : Կղողիոն փութով անոր ընդ առաջ կ'ելնէ : Վարսազեղ արքայն կը մտրակէր ամուլ զամբիկ մը՝ կէսը սպիտակ և կէսը սեւա , որ եղջերուներու և այծեամետե-

բու հօտից հետ սնած էր՝ Գարամոնտի երամակներուն մէջ : Բարբարոսները այնպէս կը հաւատային՝ որ այս ձին Ռէնֆոքսի սերնդէն էր, այսինքն Գիշերոյ սառուցեալ բաշերով ձիուն՝ և Շինֆաքսի՝ այսինքն՝ Տուրնջան լուսափայլ բաշերով ձիուն : Երբ ձմերուան մէջ իր տէրը կը կրէր կեղեւէ կառքով մը, որ առանցք և անիւ չունէր, երբէք իր ոտքերը չէին մխուեր եղեամբին մէջ, և հողմէն մղուած ցարասի տերեւէն աւելի թեթեւ ըլլալով՝ հազիւ թէ նոր նստած ձիւնին գլուխը կը քերէր : Ատաղի սլատերազմ մ'սկսաւ երկու բանակաց թեւերուն կողմէն՝ եւայլն :

Ինչպէս կը տեսնուի կղոդիոնի ձիուն ազգաբանութիւնը սլատմութեան ընթացքը արդիլած է և անոր հետ բնաւ վերաբերութիւն չունենալով նիւթը տեսութենէ կորուսած է :

Կ. - Սակայն այս յուր խտտորմանց հետ պէտք չէ շփոթել այն խորհրդածութիւնները զորս գրադէտը իր սլատմութեան մէջ կը խառնէ շատ անգամ : Երբ այս խորհրդածութիւնները բնական ըլլան՝ սլափնքն նիւթին հետ սերտիւ կապակցին՝ փոխանակ անոր ընթացքը կասեցնելու



առաւել կը փութացնեն և զայն ազդու կը գործեն :

Այսպէս է հետեւեալ կտորը՝ ուր Մասիյոն կը պատմէ Լուի չորեքտասաներորդին դատումը իր իւր գործոցը վրայ . պարզ իրողութիւն մը գեղեցիկ խորհրդածութիւններով կը խառնէ և զայն աւելի ազդու կընէ :

Անդրդուելի առաքինութեան մը ամենէն ապահով փորձը ձախորդութիւնն է : Եւ ինչ հարուածք, աստուած իմ, չպատրաստեցիր իւր հաստատամտութեանը : Այն մեծ արքայն որուն ետեւէն գացեր էր յաղթութիւնը օրօրօցէն սկսեալ, և որ իր իշխանութեան աւուրցչափ յաջողութիւններունեցած էր, այն արքայն՝ որուն միակ ձեռնարկութիւնները յաջողութիւն կ'աւետէին, և որ մինչեւ ցայն վայր արգելք մը չգտնելով՝ իւր բաղձանացը վրայ միայն կասկածելու տեղի ունէր . այն արքայն՝ որուն յաղթանակները անմահացած էին այնչափ գովեստիւք և յաղթական կամարներով՝ և որ ուրիշ բանէ չէր վախնար՝ այլ միայն գովեստից և փառաց ծոցէն իսկ ելած խոչընդոտներէն, այն արքայն՝ որ այնչափ երկար ատեն տէր եղաւ գիպուածոց՝ կը տեսնէ որ անոնք յեղակարծ փոփոխութեամբ ամենքը առ հասարակ իրեն

դէմ կը դառնան : Թշնամիները մեր տեղը կը  
բռնեն . հազիւ թէ կերելին՝ և ահա յաղթու-  
թիւնը իրենց կը վաղէ . իրենց յաջողութիւն-  
ներն իսկ զիրենք կը զարմացնեն . կարծես թէ  
մեր գօրաց քաջութիւնը անոնց փոխադրուած է ,  
մեր բանակաց անթիւ բազմութիւնը մեր  
սպարտութեանը առաւել կը նսպաստէ . տե-  
ղերուն տարբերութիւնը ուրիշ ազդեցութիւն  
չըներ՝ բաց ի մեր թշուառութիւնները տարբեր  
ընելէ . մեր յաղթութեանց այնչափ հռչակաւոր  
բանակետղերը ապշած են՝ մեր սպարտութեանց  
հանդիսարան ըլլալուն վրայ . ժողովուրդը կո-  
րագլուխ է , մայրաքաղաքը՝ վրանգի մէջ , թըշ-  
ուառութիւնը և մահը կարծես մեր թշնամեաց  
հետ դաշնակցած են , ամեն աղէտք մեր վրայ  
կոնտակեալ կը թուին , և աստուած՝ որ անոնց  
դեղը սպարաստած էր՝ տակաւին մեզի չէր  
ցուցներ զայն . Տընէն և Ղանտըսի դեռ ծած-  
կուած էին յաւիտենական խորհրդոց մէջ : Մեր  
դատը արդար էր՝ սակայն միշտ նոյնպէս եղած  
էր : Եւ ո՞վ գիտէ թէ մեր վերջին սպարտութիւն-  
ները չէին քաւեր մեր նախկին յաղթութեանց  
կասկածելի ուղղութիւնը կամ ստոյգ գոռո-  
ղութիւնը : Ղուին ճանչեց զայս , ինքն ըսաւ .  
« երբեմն թեթեւամտութեամբ ձեռնարկեցի ի  
սպատերազմ , և Աստուած կարծես ինձի յաջո-  
ղեց , հիմա կը սպատերազմիմ իմ թոռանս Սպա-

նկայ թագուն վրայ ունեցած իրաւունքը սլաշտ-  
 սքանելու համար , և աստուած զիս կը մերժէ ,  
 նա՛ պատրաստեց ինձ այս արժանահաս պատի-  
 ժը : : Լուի խոնարհեցաւ այն ձեռաց տակ որ  
 իր վրայ կը ծանրանար . իր հաւատքը ամոքեց  
 նաեւ այն դառնութիւնը որ երկարատեւ յաջո-  
 զութիւնը կուտայ միշտ . իր մեծ հողին երբէք  
 չվրդովեցաւ , և արքունեաց տրտմութեանն ու  
 ցաւոց մէջ՝ իր օգոստափառ ճակտին զուար-  
 թութիւնը միայն կը սրտասլնդէր ահարեկ ժո-  
 Ղովաւրգը :

ՅՕԴՈՒԱՆ Ը.

Ց. - ՄԱՆՐԱՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. - Մանրապատմութեան յատկութիւն-  
 ները՝ ինչպէս տեսած ենք՝ համառօտու-  
 թիւնը , յատկութիւնը , պարզութիւնը ,  
 և յանկուցումն են : Արդէն ոճին մէջ խօ-  
 սած ենք միւս երեք մասերուն վրայ , հի-  
 մա երկու խօսք միայն համառօտութեան  
 համար պիտի զորցենք :

2. - Համառօտութեան մանրապատմու-  
 թեան համար այն է՝ ինչ որ է ամփոփու-  
 թիւնը (precision) ոճի համար : Այսինքն  
 համառօտութիւնը՝ ոչ թէ իրօք համառօտ

գրել կընշանակէ՝ այլ իրերը շատ հեռուանց  
 շառնել, անօգուտ պարագայներու վրայ  
 չգեղերիլ և լուծման կամ ելքին յարմար  
 ժամանակը կանգ առնել: Ուստի եթէ ըն-  
 դարձակութիւնը յանկուցիչ պարագայնե-  
 րէ յառաջ գայ, գրուածին համառօտու-  
 թեանը գէ՛մ չմեղանչեր. վասն զի այն ալ  
 իր նիւթին պահանջած համառօտութիւնը  
 ունի: Պուսլօ և Լաֆոնթէն՝ երկուքն ալ  
 հօն և փայտահար առակը գրեր են. Լաֆոն-  
 թէնին թէպէտ աւելի ընդարձակ՝ սակայն  
 աւելի կարճ կերեւայ քան թէ միւսինը,  
 վասն զի սրտաշարժ պարագայներով լի է:  
 Ահա Պուսլոյինը.

Չուտաական որ փայտահար անցեալ զա-  
 ւուրք և զամօք,

Սա ընդ բեռամբ ուժգին ընկճեալ մարմին  
 համակ քրտնահոս.

Քայլեր յուշիկ և շնչասպառ ի հեծութեանց  
 և ցաւոց,

Յագեալ ապա ի նեղութեանց արկ ի գետին  
 դրեռն իւր.

Եւ փոխանակ անդրէն դնել զանձն ընդ նո-  
 վիմբ շարաթոպ,

Լաւ համարեաց կոշեւ զմահ կոշեւ ի նուագ  
 բիւրաւոր.

Հուկ ասլա եկն և եհաս Մահ . - դու զի՞նչ  
 խնդրես գոչեաց նա ,  
 — Ո՞ , ե՞ս , ասաց նա անդանօր՝ յոյժ փու-  
 թաջան յապաշաւ .

Տուր յուս խօս դրեանս :

Այժմ՝ մտիկ ընենք Լաֆոնթէնին ,  
 Չուառական ոք փայտահար , համակ ծած-  
 կեալ ի յոստոց ,  
 Ընդ ծանրութեամբ որսէս բեռին նոյնպէս  
 ամաց կորակոր .  
 Հեծէր ուժգին և յառաջէր ի քայլ դան-  
 դաղ ծանրափոխ ,  
 Եւ գուն դործէր հասանելոյ ի ծախտեալն  
 իւր ի հիւղ .  
 Հուսկ ասլա ոչ եւս կարացեալ տանել վտաց  
 և ցաւոց ,  
 Եդ ի գետին գրեռն յուսոյն և խորհեցաւ  
 յաղէտս իւր .  
 Յորմէ հետէ կայ յաշխարհի քանի եղեն իւր  
 հաճոյք ,  
 Գտա՞ւ թշուառ ոք քան զինքն ընդ մեքենայս  
 բոլորակ .  
 Յաճախ չիք հաց ի տան իւրում և ոչ հան-  
 գիտ բընաւին ,  
 Կին իւր որդիք , զօրք , հարկահանք , սար-  
 տապահանջք և վաստակ .

Հանդէպ նորա անդրադարձին զստոյգ  
պատկեր շուտին .

Կոչէ զՄահ : Նա փութայ գալ , խնդրէ թէ  
զի՞նչ պարտ առնել .

Ասէ . խնդրեմ՛ զի օգնեսցես բառնալ անդ-  
րէն զքեռն իմ յուս :

Գիտեմ չիք քեզ դանդաղել :

Ինչպէս կը տեսնուի այս նկարագրու-  
թիւնը խիստ կը գերազանցէ Պուալոյինը :

### ՅՕԴՈՒԱԾ Թ.

#### Գ. - ՄԱՆՐԱՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

1. - Չորս գլխաւոր տեսակ մանրա-  
պատմութիւն կայ . Դարձիւն , Դարձիւն  
կամ Բնորոշիչիւն , Զարգացիչ , Զարգացիչ  
(որուն վրայ ճարտասանութեան մասին  
մէջ կը խօսինք) :

2. - Պարձիւն Գործարարիւնն է՝ դի-  
պլոմաձի մը ճշգրիտ և հաւատարիմ ար-  
տայայտութիւնը :

3. - Այս տեսակ մանրապատմութեան  
առաջին նպատակն է ճշմարտութիւնը :

4. - Սակայն պատմագիրը կրնայ իր նիւ-

Թին համեմատ՝ լեզուն եռանդուն, մեղմ, ախորժ և կծու ընել: Այս կիրքերը զորս իրերը իրենց հետ կը բերեն՝ արգիլուած չեն հեղինակին:

5. - Բանասերչեփան յանդամոտութիւնն է՝ ենթադրեալ բայց հաւանական իրաց նկարագրութիւնը:

6. - Ասոր առաջին հանդամանքն է ճշմարտանման ըլլալը:

7. - Ծաղրաշարժ կամ զուարթ մանրապատմութեան նսրստակն է կրթել և զուարճացնել:



## ԳԼՈՒԽ Գ.

ՅԱՂԱԳՍ ՆԱՄՍԿԱԳՐՈՒԹԵԱՆ



ՅՕԴՈՒԱԾ Ա.

1. - ՅԱՂԱԳՍ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ  
ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ

1. - Նամակագրութիւնը՝ ծանր գրութեան և պարզապէս հաճոյից համար շարագրուած գործոց միջին տեղը կը բռնէ:

Այս գրուածը ամեն տեսակ նիւթի վրայ  
կրնայ դառնալ: Ուստի երբ նամակագ-  
րութիւնը ընտանեկան և պարզ ընթացքէն  
խոտորի՝ մասնաւոր կանոն մը չունի՝ իսկ  
երբ յիշեալ շրջանին մէջ ամփոփուի՝ այ-  
սինքն պարզապէս չ-է՛լ ըլլայ՝ իրեն վե-  
րաբերեալ մէկ քանի կանոններն ունի:

### ՅՕԴՈՒԱՅ Բ.

#### 2. - ՅԱՂԱԳՍ ՆԱՄԱԿԻ ԵՒ ՆԱՄԱ. ԿԱԳՐՈՒԹԵԱՆ ՈՃՈՅ

1. - Նամակը բացակայ անձանց մէջ  
խօսակցութիւն մ'է:

2. - Արդ խօսակցութիւնը պէտք է որ  
ըլլայ՝ պարզ, բնական, դիւրին, ընտանի-  
սակայն վայելուչ՝ բարեկամաց մէջ, կիրթ  
ստորիններու և օտարականաց, յարգական՝  
աւագաց հետ:

7. - Նամակը պէտք է անզարդ ըլլայ  
այլ ոչ անխնամ: Մէկը որչափ սերտ բա-  
րեկամի գրէ՝ պարտի ուշադիր ըլլալ նիւ-  
թին և ոճին:

4. - Իրաւ է որ նամակը խօսակցութեան  
օճով գրուելու է, սակայն լաւ խօսակցու-



Թեան : Բայի ասկէ խօսակցութիւնը որ-  
չափ կիրթ և բարուք ըլլայ՝ նամակին մէջ  
աւելի մաքրելու է զայն՝ ուրիշին մեր վը-  
րայ յուի կարծիք չտալու համար :

5. - Բայց կիրթ ըլլալու ջանքով արուես-  
տակութեան պէտք չէ դիմել . հերիք է որ  
լեզուն յստակ , ուղիղ և մաքուր ըլլայ՝  
ասկէ աւելի պէտք չէ զարդ վնասել :

6. - Նամակները իմաստալից ընելու  
համար նոր բաղդատութիւններ և նուրբ  
ակնարկութիւններ բաւական են :

Օրինակ .

Ահա-բար-բի-ն . - Տիկին տը Սէվինյէ իւր  
ծերութեանը վրայ խօսելով կ'ըսէ .

Ի զուր ոտքս գետինը կը զարնեմ , ուրիշ  
բան դուրս չեններ այլ միայն տկար և միակերպ  
կեանք մը :

Ասով կ'արկնարկէ Պոմպէսի այն խօս-  
քը թէ լէգէոններ հանելու համար բա-  
ւական է ինձ ոտքս գետինը զարնել :

7. - Ամենէն վսեմ՝ ճարտասանութիւնն  
ալ կրնայ մուտ գտնել նամակաց մէջ :

8. - Հոս հարկ չեմք համարիր պատաս-  
խաններուն վրայ խօսել՝ որոնք նամակաց  
նման ըլլալու են , ոչ ալ այն կարգ մը սովո-

բութեանց և ձեւոց վրայ՝ զորս գործածութեամբ կուսանի մարդս : Դարձեալ ուշինչ է, շնորհագրի, ցանկացան, նոր գործոյ, անգիմանան ևւայլն տեսակ նամակաց ուրոյն ուրոյն կանոն տալ՝ քանզի գէսլքէն կախում ունին ասոնք և գէսլքն ալ պատեհ առթիւ գրողը միայն կրնայ կատարեալ զգալ. այս մասին արուած բոլոր կանոններն անկատար և թերի են :

### ՅՕԴՈՒԱԾ Դ.

#### 3. - ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԵՂԻՆԱԿԲ

Յաւայի է ըսել որ մեր ազգին մէջ գրադիտութեան այս ճիւղը շատ ետ մընացած է :

Միայն Չմիւռնոյ Հոգիւն նմանին գրադիտութեան այս նոր ճիւղին ասպարէզ բացաւ սակայն մեր երիտասարդաց մէջ իրեն արժանաւոր հետեւող չունեցաւ :

Գաղղիացւոց մէջ անուանի նամակագիրներ կան՝ որոնց գլխաւորներն են վոլթէր և Մատամ ալ Սէվինյէ, շատ տեղ

Մատամ տը Սէվինյէ գերազանցեր է զՎօլթթէր :

Քանի մ'օրինակներ :

Մատամ տը Սէվինյէ կուզէ իմացնել որ շատ անգամ խօսք մը միայն բաւական կըլլայ՝ երբ տասարդի մը յոռի գաստիարակութիւնը ակններէն ցուցնելու :

« Նախագահ մ'եկաւ զիս տեսնելու հետն ալ իւր կնոջմէն քսան տարեկան որդի մը՝ որ ինձի խիստ սիրուն և բոլոր տեսածներէս վայելչագէժ երեւեցաւ . հազիւ թէ բերանս բացի և ըսի՝ որ զինքը հինգ վեց տարեկան հասակէն տեսած եմ , և կը զարմանայի թէ այս շափքիչ ժամանակի մէջ ո՞րչափ կը մեծնայ մարդ՝ և ահա ահռելի ձայն մը կեւնէ այս գեղեցիկ գէմքէն և ծաղրելի կերպով մը ճակտիս կը փակցնէ աս խօսքը : — Չ-ր է-ր-ը շ-ր-ը է՝-նէ : Ասոր վրայ ես ըմցայ . իր վրայ եղջիւրներ տեսայ՝ և եթէ բրի հարուած մը տար գլխուս՝ այնչափ պիտի շվտանայի : Ալ երգում ըրի գէմքերու շվտահէլ :

Ինչ գեղեցիկ խրատ՝ ծաղրաշարժ ո՞ճով մը :

Մատամ տը Սէվինյէի նամակները շատ անգամ նուրբ խորհրդածութիւններ և ակններէն ճշմարտութիւններ կը պարունան :

կեն՝ հետաքրքրական և ծաղրաշարժ ոճով :  
 Ծերուկնի կնոջ մը վրայ խօսելով կըսէ :  
 Երբ անցեալ տարի մեռնելու մօտ էր՝ ևս  
 իրեն տխուր ապագինութիւնը և ծերութիւնը  
 տեսնելով՝ կ'ըսէի . տէր Աստուած , ասիկա եր-  
 կու անգամ պիտի մեռնի իրարու ետեւ : Ճշ-  
 մարիտ չէ՞ր խօսքս : Օր մը Քատրիս ծանր հի-  
 ւանդութենէ մը ազատելով ութսուն տարե-  
 կան ժամանակ՝ երբ իր բարեկամները ուրա-  
 խացած իրեն հետ՝ զինք կ'ստիպէին որ ոտք  
 ելնէ . Ա-՜ղ . ըսաւ անոնց , նորէն հոգե-  
 ի՜րէ՛ն :

Ուրիշ տեղ մը .

Երկարատեւ հիւանդութիւնները ցաւը կը  
 մաշեցնեն , և երկար յոյսերը ուրախութիւնը  
 կը մաշեցնեն :

Ստուերը երկար ժամանակ մարմին չկար-  
 ծուիր . պէտք է որ ըլլայ՝ եթէ երեւել կուզէ :  
 Աշխարհը երկար ատեն անիրաւութիւն չկըր-  
 նար ընել :

Այս յօդուածը կը վերջացնենք՝ Տիկին  
 տը Սէվինյէյի մէկ երկու սքանչելի նա-  
 մակներով :

Տը Սէվինյէյի Բօշէ վարած կեանքը .

Այնչափ կանոնաւոր կեանք մը կը վարենք

որ՝ հիւանդանալն անկարելի է : Ժամը ութին կ'ընենք . շատ անգամ՝ ժամը իննին՝ մինչեւ որ պատարագի զանգակը հնչէ՝ կերթամ անտառաց մէջ զովանալու . պատարագէն վերջ կը հագուինք՝ իրարու բարի լոյս կ'ըսենք . կը գառնանք նարնջի ծաղիկ քաղելու , կը ճաշենք , կը կարդանք կամ կ'աշխատինք մինչեւ ժամը հինգը :

Տղուս երթալն ի վեր՝ ընթերցումն ես կընեմ՝ անոր կնոջ փոքրիկ կուրծքին խնայելուս համար : Ժամը հնգին լրմէ կը մեկնիմ , կերթամ այն սիրուն ծառուղիները հետս սպասաւոր մ'առած . քովս գրքեր ունիմ . տեղէ տեղ կը փոխուիմ և գրօսանքներս կը փոփոխեմ . կըրօնական գիրք մը՝ և պատմական գիրք մը , մէկէն ի միւս կանցնիմ . ասի ինձ գրօսանք կը յաւելու . վայրկեան մը խորհել աստուծոյ , նախախնամութեանը վրայ . իւր հոգւոյն տէրն ըլլալ , ապագային վրայ խորհել . վերջապէս ժամը դէպի ութը՝ զանգակի մը ձայնը կը լսեմ . ընթերիլն է . երբեմն քիչ մը հեռի կը գտնուիմ . կը գտնեմ զՄարքիզուհին իւր գեղեցիկ բուրաստանին մէջ , կ'ընկերանանք , արշալոյսին կը ճաշենք : Այս կեանքը հազար անգամ աւելի կը սիրեմ քան թէ Բաննի կեանքը . այս միայնութիւնը յարմար չէ՞ այնպիսի անձի մը որ կը պարտի խորհել իւր վրայ՝ և քրիստոնեայ


է՛ կամ կուղէ՛ ըլլալ : Աւերջապէս իմ անուշիկս՝ միայն զքեզ նախամեծար կը համարիմ այս ար-  
խուր և անդորր խաղաղութենէն :

Այս նկարագրութիւնը ամենայն մա-  
սամբ կատարեալ և գեղեցիկ է : Փիլիսո-  
փայական ծանր խորհրդածութիւն հրա-  
պուրիչ և ճշգրիտ նկարագրութեան հետ  
հաւասարապէս կը փայլի հոս :

Ահա գաղղիոյ ստորին Բրիտանիա դա-  
ւառին բնակչաց նկարագիրն՝ որ վերինէն  
նուազ գեղեցիկ չէ :

Պ. տը Շօլնը շինուորական բարեկարգու-  
թեանց գրադած է . արտաքոյ կարգի բան է  
գլխարկ գնել այն մարդոց գլուխը՝ որ մինչև  
ցարդ կասույտ գգակ կը գործածէին : Չեն կրնար  
ոչ իրենց արգիլուածը հասկնալ և ոչ իրենց հրա-  
մայուածը : Երբ հրացան ուսերնուն վրայ եղած  
ատեն Պ. տը Շօլնին անցնելը տեսնեն և ուզեն  
բարեւել՝ զէնքը մէկ կողմ՝ և գլխարկը միւս  
կողմը կ'իյնան . իրենց ըսուեցաւ որ բարեւել  
սէտք չէ այն միջոցին . և վայրկեան մը ետքը  
երբ՝ զէնք շունեցած ատեննին կը տեսնեն Պ. տը  
Շօլնի անցնելը՝ գլխարկնին երկու ձեռքով գը-  
լուխնուն վրայ կը մխեն և կզգուշանան բարե-  
ւելէ : Իրենց ըսին որ՝ կարգի մէջ գտնուած ժա-

մանակնին ոչ յաջ և ոչ ի ձախ պէտք է խոտորին.  
 ասոր վրայ անցեալ օր քիչ մնաց որ Տիկին տը  
 Շօլնի կառքին տակը կը մնային՝ շուզելով քայլ  
 մ'անդին երթալ՝ որչափ ալ ստիպեցին : Աեր-  
 ջապէս մեր ստորին Բրիտանիացիք զարմանա-  
 լի են , շեմ գիտեր ինչպէս ըրած է Պէրթրան  
 որ կրցեր է ժամանակաւ զանոնք Եւրոպայի  
 ամենէն քաջակիրթ զինուորներն դարձնել :



# ՄԱՍՆ ՉՈՐՐՈՐԴ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻԻՆ

ԳԼՈՒԽ Ա.

ՅԱՂԱԳՍ ՏԱՂԱԶԱՓՈՒԹԵԱՆ

ՅՕԴՈՒԱՅ Ա.

1. - ՏԱՂ ԿԱՄ ՈՏԱՆԱԻՈՐ

1. - Տաղաւորութիւնը կուսուցանէ իմաստ մը ոտանաւորով բացատրել :

2. - Ոտանաւորը կը կոչուի՝ իրարու համեմատեալ և չափեալ բառերու հաւասարածոյ մը :

Արձակ գրուածը միայն ոճի կանոններուն հպատակելով՝ անկէ զատ ուրիշ չափ և զգուշութիւն չպահանջեր . սակայն ոտանաւորին համար նոյնը չենք կրնար իմանալ : Ասիկա իրեն մասնաւոր ընթացք մ'ունի :

3. - Հայերէն շէր ոտանաւորը վեց գըլխաւոր հանգամանք ունի՝ որք են . շէր :



Վերջինս, հանգիստ, Բոլորստեղծ և Գիրք : Այսպէս կը խրատէ Պուալոյ :

Տաղից մէջ գիտեցէք զչափն և զեղչում, ըզհանգիստ, ըզյանգս ըզգիրս և ներում :

## ՅՕԴՈՒԱԾ Բ.

### Չ. - ՉԱՓ

1. - Ոտանաւորին շէն է իրեն բովանդակած վանկերուն և անդամոց իրարու հետ ունեցած համեմատութիւնը :

2. - Հայկական նոր բանաստեղծութիւնը մինչեւ տասնըհինգ վանկով ոտանաւոր արտադրած է :

3. - Այս չափերուն մէջ՝ մէկ երկու կամ երեք վանկովները պէտք է յաճախ չգործածել, վասն զի անոնք նազարագիլաւ կը յարմարին. իսկ իբրեւ գլխաւոր տող գրուած ատեն՝ գործը տղայական կ'ընեն յաճախ :

4. - Հնգավանկ կամ հնգոտնեան գրուածները՝ երգերու, զուարթ և դբօսեցուցիչ գրուածոց լաւ կը յարմարին, ինչպէս :

1 2 3 4 5  
Մըզ բիդ մե նա կիկ

1 2 3 4 5  
երկ բա ծին ձայ նիկ ,

1 2 3 4 5  
Աստ ինձ զու գա կիր .

1 2 3 4 5  
Օն ա զէ զար թիր ,

1 2 3 4 5  
Ըզ բոց վառ եմ արդ .

1 2 3 4 5  
Ան նեւ զքեզ զու արթ ,

1 2 3 4 5  
Այլ երդ ին ո գի .

Հո գի սլա կա սի :

Վեցոտնեան տաղերն անոյչ և վափուկ ընթացք մ'ունին՝ բայց աւելի միջակ կամ բարեխառն նիւթերու կը յարմարին՝ ինչպէս ,

ՏԱՊԱՆԱԳԻՐ

Դու՝ սրտիս հատորիկ ,

Եւ աչացս իմ լուսիկ՝

Զի՞ այդպէս շուտ թուար ,

Մօրդ թողեր սուգ անբառ .

Ինձ դարուն հեշտալի ,

Զէ՛ , կամ վարդ՝ պարտիղի .

Երբ երգէ սոխակիկ ,

Կարծեմ ձայնդ է՝ Օննիկ :

Եօթնեան տաղերը աշխոյժ և կրակոտ բացատրութեանց կը յարմարին՝ ինչպէս .

Ազատութիւն գոչեցի ,  
 Թող որոտայ իմ գլխին .  
 Փայլակ , կայծակ , հուր երկաթ ,  
 Թող դաւ գընէ թշնամին .  
 Ե՞մ մինչ ի մահ կախաղան ,  
 Մինչ և անարգ մահու սիւն .  
 Պիտի գոռամ պիտի կրկնեմ  
 Անդադար՝ ազատութիւն :

ՆԱԻՐԱՆԴԵԱՆ

Ութոտնեան տաղերը աւելի կը յարմարին փափուկ , մեղամաղձոտ , պերճ և սրբտաշարժ նիւթերու՝ ինչպէս .

Ո՛հ , ի՛նչ անուշ և ի՛նչպէ՛ս զով ,  
 Առաւօտուց փրչես հովիկ .  
 Մաղկանց վըրայ գուրգուրալով ,  
 Եւ մաղերուն կուսին փափկիկ .  
 Բայց չես հովիկն իմ հայրենեաց ,  
 Գնա՛ , անցի՛ր սրտէս ի բաց :

ՊԵՆԿՅԱՆԻԱՆ

Իսկ տասը , տասնը մէկ , տասներկու , տասներեք , տասնըհինգոտեան տաղերը աւելի յարմար են վսեմ , բարձր և դիւցազնական նիւթերու : Մէկ երկու օրինակներ կը բաւեն :

Վ Ի Ր Գ Ի Լ Ի Պ Ա Ռ Ն Ա Ս Ե Ա Յ

ԱՌ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆ ՄԵՄ

Որ Աւոնեան փողոյս ընդ նուրբ երկրագործին նուագող զարդիւնս ,  
Հայկական ոլորեալ երգս ըզկէս փառաց իմ կապտեցեր .  
Անմահականն ի Պառնաս սիւգ անուշիկ հընչեաց երգոցդ ,  
Յաւէրժ մայրեացն աստուածանուէր մրմնջեցին վարսք ի գեղգեղ .  
Անդ ի բաղմոցս փափկութեանց ի դարեւանդն ուր անմահից ,  
Հոյլ շուշանաց ի գեղաթոյր թերթից լ'երփնից սարարին աչք :  
Ուր կաստալն արծաթի սաղսլաջափայլ ճեմի ալօք ,  
կանդնեացուք կըճեայ տաճար Քեզ ի ծաղկանց պճնեալ բոլոր .  
Մատունք քնքուչ Մուսայից բուրեան ըզխուենջսրն կասկեցեն .  
Շուրջ ըզնովաւ ի սարանցիկս երածըչտացըն հանդէս ,  
Ի գովեստ հնչեցեն քեզ նուագաւոր դաշնակութիւնս ,  
Ապալոն , Պինդարոս , Տրուլ , կաստուլ նախանձընդդէմ :

Ես ի կայտիւնս պարառաջ , պըսակ ի գլուխ  
 իմ դափնեփունջ ,  
 Համասպրամըն ծաղկունս ծաւալեցից շուր-  
 ջանակի .  
 Եւ բարձրադէտ ի ճակատուն քանդակեցից ի  
 տառ ոսկի .  
 Գահ Արսենի ի Պինդոս ընծայեցաւ ի վիր-  
 գիլէ :

ՊԵՆԻՍՅԱՆԻԱ

Ուրիշ օրինակ մը .

Օրն էր տարաժամ , մարդիկ դադարած ,  
 Փողը հնչեցին , մարտին կատարած .  
 Մութը տարածուեց , աստեղք ցոլացին ,  
 Երկնից ցողն իջաւ արնալից դետնին .  
 Մթնասէր թռչունք ձայներով խըւպոտ ,  
 Գուշակում էին մարդկանց սուգ և բոթ ,  
 Յետ դարձան Պարսիկք իրանց բանակը .  
 Նորից նոր սըրեւ սուրն ու դանակը ,  
 Ար այդուց կանուխ , լոյսը շի ծագած .  
 Վըրայ յարձակուին Հայոց՝ կատաղած :  
 Բայց այլ տեսարան էր Հայոց միջին ,  
 Վըրդոված , տխուր էր նոցա հողին .  
 Ոչինչ չէր լսվում , թէ ոչ սուգ և լաց ,  
 Մեծ կորուստ արին , կորուստն էր անդարձ ,  
 Վարդան շի դարձաւ դէպ իր քաջերուն .  
 Ո՛վ դիտէ՝ ո՛ւր էր նա այն իրիկուն ,  
 Գերի՞ է տարեւ նորա թշնամին .

Թէ մա՞հ է ստացել նա դաշտի միջին ,  
 Ոչ ոք չը գիտէ , տըխուր ու տրտում .  
 Ամէն տեղ նորան են Հայք պըտրտում ,  
 Հոգւոց հանելով , վա՛յ գլխու տալով .  
 Աչքերից աղի արտասունք թափելով ,  
 Աւարայրը դաշտը տակն ու վրայ արին .  
 Պինդ պինդ ձայն տուին « Ո՞ւր ես , ո՞ւր  
 վարդան , ,  
 Արձագանքն կրկնեց , վարդան ու վարդան ,  
 ՔԱՄԱՐ ՔԱԹԻՊԱ

ՅՕԴՈՒԱԾ Գ.

Ծ. - ՋԵՂՁՈՒՄՆ

Վ. - Ոտանաւորի մէջ շատ անգամ նախ-  
 գիրներուն մէկ մասը և շողկապին է գիրը  
 կը շեղչուին , շափուց ճշտութիւնը պահե-  
 լու համար . ինչպէս .

Ձի որ գան եզրօրդ ,  
 Աչաց վըտակք յորդ .  
 Լընուն քո բըբիկ ,  
 Ի՛արտասո՛ւես Աննիկ :

ԻՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՑՈՍ

Չերդ նորաբողբոջ ,  
 վարդ վառ ի բորբօք .

Ո զգլուխն ի գողգոջ ,  
 Մածկէ 'նք տերևօք :

ՆՅՅՆ

2. - Սակայն զգուշանալու է որ այս տեսակ խոտորմունքներ շատ չզատահին . բանաստեղծութիւնք որչափ ալ ազատութիւն ունենայ՝ Բն-կ-ն լիշտ աւելի սիրուն և ճշմարիտ է : Շատ անգամ պատանիները՝ յանգը նոյնը բերելու համար ուզած գրերնին անյարմար տեղ կը կրճատեն և այսպէս լեզուն խոտորմանց քառս մը կը դարձնեն :

ՅՕԳՈՒԱՄ Դ .

4-- ՀԱՆԳԻՍՍ

1. - Հ-ն-դ-ը՝ հայերէն ոտանաւորներուն մէջ անգամներուն չափէն կախումն ունի :

2. - Հայերէն ոտանաւորները՝ մէկէն սկսեալ մինչ չորս անգամ կրնան ունենալ : Հետեւաբար տողերը՝ մէկ , երկու երեք կամ չորս հանգիստ ունին :

Օրինակք :

Ո՛հ, տեսանե՞ս

Ձի միտք և սիրտք - կասկեալ ընդ քեզ,

Ձիք ինձ հաճոյ

Բայց որ ինչ քաղցր - աչացդ է քոյ .

Եւ դժբժկամակ

Այն որ քըմացդ - է ընդդիմակ :

ԻՌՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Զարիւլեայ - Պելեւսածնին - Աստուածունի՛դ - ըզ-  
բէն երգեալ,

Ըզկորուսիչ - Արքայեցւոց - և բիւր ցաւոց - ա-  
զիտարեր :

ՀՈՄԵՐ. ԻԼԻԱԿՆ

ԹԱՐԳՄ. Հ. ԱՐՅԵՆԻ

Ո՛վ լուսապայծառ - վեհ գերարփօք - տիեզերաց ,  
Դուք - որ երկին - սահուն զըլորտս - վարէք  
տարւոյն ,

Դեմեարէ - կենդանատու - սպանդարամետ - ու-  
րախարար :

ՎԻՐԳԻՒՄ ՄՇԱԿԱԿԱՆՅԹ

Առաւօտն - յելից մարդէ - վարդակարմիր - ճե-  
մօքն եկեալ ,

Յանէր - մարգարիտ - արեւեկեան - յերեսս  
երկրի

Զարթեալ Ադամ - ի քընոյ - սովորութիւն -  
այս էր նորա :

ՄԻԼՏՈՆ ԳՐԻԻՊ ԻՆԴՆԵՆԷ

ԹՐԻԺ. Հ. ԱՐԵՆԷՅԷ



Յ. - Հանդիստը պէտք է՝ սուր և փա-  
փուկ բառերու վրայ թաւալի՝ որպէս զի  
արտասանութիւնը արագ և անուշ ըլլայ :

Այս կանոնը լաւ պահուած է հետեւ-  
եալ տողերուն մէջ :

Դու փափկաթեւ մանկիկ զեփիւռ ,

Աղբերց վրայէն լուսակարկաշ .

Անուշ հոտով ծաղկանց ըսփիւռ ,

Ինչպէս թռչիս ինձ ընդ առաջ :

ՊԵՏԻՎՅԱՆ

Նուաղեալ կենացս իբրեւ յոյս ,

Մութ և տըխուր ես ո՛ր կոյս .

Ե՛լ, ել, լուսին , ո՛հ և դուն ,

Սիրտ մ՛ ունիս ըզգայուն :

Ս. ԼԻՐԻՄԵԱՆ

Կ. - Պէտք է դիտել որ տողերը յաճախ  
թերի մնալով միւս տողերուն շ'անցնին՝ ինչ-  
պէս .

Եւ խընդամուլ էր աղջիկն համայն խընձիղ և  
կայտիռ

Թուէր մանուկ . հիացումն էր մեր ժամուց  
տխրազրօս :

Ծ. - Սակայն ինչի արդէ ներելի է ընտա-  
նեկան կամ ծաղրաշարժ ոտանաւորաց մէջ :

ՅՕԴՈՒԱՆ Ե .

5. - ՅԱՆԳ

1. - ՅՆՅԸ հայերէն լեզուին մէջ նորամուտ է , մեր ընտիր հեղինակները մեծավերջ կամ անյանդ չափը գործածելու են իրենց բանաստեղծութեանց համար :

2. - Մեր լեզուին այս սպառուական գանձը մուսայութեան մէջ ընկած էր մինչեւ որ Հայր Արսէնը՝ հայոց բանաստեղծութեան և լեզուին երկրորդ հայրը՝ ի լոյս բերաւ զայն իւր Վիրգիլեայ մշակականաց թարգմանութեամբը :

3. - Նոյնայանդ ոտանաւորը ստուգիւ վայելուչ կըլլայ՝ եթէ ճարտար գրչի սատահի՝ սակայն դժբաղդտբար երիտասարդները շատ անգամ յանդ վնասելով իրենց իմաստը կը կորսնցնեն , և ի՛նչ , ո՛չ վերջաւորութեամբ իմաստը փափկացնել կը կարծեն :

4. - Այս անսպառնելիութիւնը օտար է գիւցազնական կամ մեծավերջ չափին : Հոն բանաստեղծին հանճարը կաշկանդեալ չէ :

ինչ վեհութիւն և շնորհ, որպիսի ճշգրտութիւն վիրգիլեայ մշակականաց, Հոմերի Իլիականին և Միլտոնի դրախտ կորուսեալին մէջ, կարծես թէ անոնք հայերէն կը խօսին. եթէ Հայր Արսէն նոյնահանգ չափը գործածէր՝ չէի կարծեր որ նոյն յաջողութիւնը ունենար յիշեալ ամսահական քերթուածոց թարգմանութեանը մէջ:

Տ. - Մեր խօսքերէն թող չկարծուի որ կուղենք անպիտան համարել նոյնայանգ ստանաւորը՝ քաւ լիցի, այլ ինչպէս կ'ըսէ Հայր Արսէն, ծաղիկ մ'աւելի թող գանուի մեր գրագիտութեան ասպարիզին մէջ, սակայն խորհուրդ կուտանք պատանեկաց որ կարելի եղածին չափ իրենց մտաց ազատութիւնը պահել ջանան:

---

## ՅՕԴՈՒԱԾ Զ.

### Ե. - ԹՈՅԼՏՈՒՈՒԹԻՒՆ

1. - Բանաստեղծական թոյլտուութիւնըն է. 1<sup>o</sup>. Այնպէս ասացուածներ գործածել՝ որոնք ներելի չեն արձակ գրուածոց

համար . 2<sup>0</sup>. Նախդիրները յետագաս բա-  
ռին վրայ դնել . 3<sup>0</sup>. Յեղաշրջել խօսքը :

Այսպէս՝ բանաստեղծը կրնայ ըսել .

Ծռնի հոգոյս . (ՊԵՆԿՍԱՇԷԼԵԱՆ) .

Բայց արձակ գրողը ոչ երբէք :

կամ թէ .

Ձիւն է նշուելուսնային՝ որ ձէձոյն յերեւոյս զորոյ :  
(ՊԵՆԿՍԱՇԷԼԵԱՆ)

Փոխանակ ըսելու՝ է Ձիւն նշուել :

Գիտելիք . երբ վանկը կարճ գայ՝ ու-  
տանաւորին չափը չխանդարելու համար՝  
սովորութիւն է զօրութեամբ գտնուած-ը-  
դիրը յայտնի դնել շ նախդրին առջեւ՝  
կամ բառերուն մէջ տեղը : Ինչպէս :

Կ-բէ- ձ-է-ն էր-նի իր-ոյ :

(ՊԵՆԿՍԱՇԷԼԵԱՆ)

Տ-բէ+ ընէ-ն Բըն-ն է վեր :

## ՅՕԴՈՒԱԾ Է.

### 7. - ԴԻՐՔ

1. Դիրք ըսելով պէտք է հասկընանք  
ուտանաւորին վանկերուն դասաւորութիւնը :

2. - վանկերը պէտք է այնպէս դասա-  
ւորին՝ որ երկար մասը միշտ յետագայ  
վանկին վրայ թաւալի և քաղցրալուր ընէ

ուտանաւորը . դարձեալ պէտք է վերջին բա-  
 ուր կամ վանկը հնչուն թողուլ : Ինչպէս .

Ի՛ւ զուա՛րթ առնիցին բոյսք արմըտեաց  
 ով Մեկենաս :

Հի՛մ արփի՛ վարեւ զերկի՛ր , զայգիս զու-  
 գե՛ւ ընդ նըշգարի՛ս :

Յ. - Կարելի եղածին չափ ուշադրու-  
 թիւն ընելու է որ բաղաձայններն իրարու  
 չբաղխեն , այլ բառը ---ւ և ՚-՚-՚-՚ գրով  
 միւսին վրայ թաւալի :

Նախընթաց ոտանաւորներուն մէջ տես  
 ինչ գեղեցիկ կերպով պահուած է այս օ-  
 ղէնքը :

Ի՛նչ որ յանգերու համար ըսինք նոյնը  
 հոս ալ կը կրկնեմք , այսինքն պէտք չէ  
 ինքզինք ասոր գերի ընել :

Կ. - Նոյնայանգ ոտանաւորաց մէջ զգու-  
 շանալու է որ երկուքէն աւելի յանգ ի-  
 րարու չնմանին անընդմիջաբար :

Մեր վերջին դարուց հեղինակաց ոտա-  
 նաւորներն՝ գրեթէ ամբողջապէս ասոր  
 հակառակ են , և դուցէ այս յոռութիւնը  
 պարսիկներէն մտած է մեր մէջ : Օրինակ մը .

Ով կամաւ զանկապելն ,

կապեալ զձեռս արձակողն .

Ի յապարանսն տանէն ,  
 Կայիափայ և Աննայն :

Ծ. - Յանդերը չորս կերպով իրարու կը  
 յարմարին : 1<sup>o</sup>. Յ-Ն-Դ-Բ-Բ. 2<sup>o</sup>. Մէ Ը-Դ Բ-Ն.  
 3<sup>o</sup>. - և Դ տողերը մէկ յանդով , իսկ Բ և Գ  
 տողերը ուրիշ յանդով . 4<sup>o</sup>. Խառն :

Ա. ին օրինակ .

Նընջեա մանուկս աչօք զըճիտ ,  
 Նընջեա՛ անուշ յօրորոցիդ .  
 Այդ հրաշագեղ գոհար բըրունք ,  
 Որ յարթնութեանդ միշտ երերունք .  
 Ո՛հ , զի՞ խաղաղ և անշարժիկ ,  
 Փակեալ ի նինջ ես աւասիկ :

Բ. ին օրինակ .

Մի լայք հայր իմ ու մայրիկ ,  
 Կոյս մի լար . թէ երթամ .  
 Ըօտար երկիր պանդխտիկ ,  
 Այլ շուտով ետ դառնամ :

ՊԼԵՆՊԱՆԵԱՆ

Գ. օրինակ .

Ո՛հ զի ցաւոց իմ դառնութիւն ,  
 Ակնարկելով զըթասէր .  
 Եւ զնա յաստիս ետուր ինձ տէր ,  
 Երկնապարդ եւ քաղցրութիւն :  
 Ո՛հ զի մութն որ զինեւ խիստ ,

Խաղաղասիրու իւր նըշյւք .  
 Իբր ի գիշեր աստեղաց բոյլք ,  
 Չըգեն յերկին զակն և միտ . եւն :

(ԻՌՐԷՆ ԵԳԻՍՏՈՅՈՍ)

Դ. օրինակ .

Վայ քեզ Խոսրով , դու սուգ յամայր ,  
 Ըզգիւցազամբք արկեր Հայոց .  
 Առ քո շիրիմ եղերամայր ,  
 Սեաւ տխրութեանցն ողիքն ի կոծ .  
 Գոյժ անողորմ տացեն Մասեաց ,  
 Մահաչըչուկ ըսպառնալեաց :

(ԳԼԵՒԿՔԱՇԼԵԱՆ)

Գ Լ Ո Ւ Խ Բ .

ՅԱՂԱԳՍ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ  
 ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ

ՅՕԴՈՒԱԾ Ա .

1. - ՅԱՂԱԳՍ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ . ՆԸ-  
 ԿԱՐԱԳՐԱՅ (caracteres) ՁԵՒՈՅ ԵՒ  
 ՍԵՌԻՅ ՆՈՐԱ

1. - Բանագրութիւնը բառը ինչպէս իր  
 անունէն կիմացուի՝ դիւտ , ստեղծում կը  
 նշանակէ : Ուստի այս բառը մտաց ար-  
 տադրած ամեն արհեստներուն կը պատ-

չաճի : Այսպէս ճարտասանութիւնը , փի-  
լիսոփայութիւնը և պատմութիւնը իրենց  
բանաստեղծութիւնն ունին . նոյնպէս նը-  
կարչութիւնը , արձանագործութիւնը , ճար-  
տարասլետութիւնը անբաժան են բանաս-  
տեղծութենէ :

Զ. - Բանաստեղծութիւնը ներշնչում  
մ'է , որ մտաց , զգացմանց և լռութեանն  
իսկ արգասաւորութիւն կուտայ :

Գ. - Բանաստեղծական հանճարն է՝ սը-  
րաթռիչ երեւակայութեամբ բարձրանալ  
յանհունութիւն , իջնել յանդունդ ի քա-  
ոս , զննել իրերը , և բնական ու եռանդուն  
գոյներով մեր աչաց ներկայացնել այն բա-  
ները զորս կարող է մարդկային միտքն ըմ-  
բրռնել : Սակայն ամեն մարդու տրուած  
չէ արտադրել : Ուստի բանաստեղծին ա-  
ռաջին պէտքն է երեւոյնը :

Սակայն երեւակայութիւնը միայն բա-  
ւական չէ բանաստեղծին . եթէ հեղինակը  
ասոր սահմանին մէջ պարփակուի ստորին  
մարդ մը կըլլայ :

Ճշմարիտ բանաստեղծը երկնային աւիւ-  
նով մը (flamme diavine) կը բորբոքի , այն  
կը նուաճէ մարդու սիրար , հոգին կը



բարձրացնէ զայն մինչեւ անհունութիւնը , մարդս անով կը լեցուի առանց անոր ինչ ըլլալը գիտնալու . այս աւիւնին , այս երկնային հրոյն կ'ըսուի Ներշնչ :

Երեւակայութիւն և ներշնչում՝ ահա ասոնք են բանաստեղծական հանճարոյն էական հանգամանքները . մին մարդկային է և ամեն մարդոց հասարակ . իսկ միւսն երկնային է և բանաստեղծներուն միայն վիճակած : Մին կզմայլեցնէ առանց զարմացնելու , իսկ միւսը կը յափշտակէ զմիտս քաղցր ու զմայլելի պատկառանք մը կազդէ ի մեզ : Սակայն այս երկնային կարողութիւնը չկրնար ընթանալ առանց բանավարութեան (raison) լուսոյն : Ոչ , բանաստեղծութիւն չեն այն այլանդակ յանդգնութիւնները այն մտաց զառանցանքները որք ուղիղ ճաշակին այսինքն ճշմարիտ դատման կը հակառակին . ճշմարիտ բանաստեղծութիւնը բնութեան թարգմանն է :

3. - Գիրք մը կայ , անմահ և երկնային գործ մը՝ որ մարդկային մտաց ամեն արդիւնքներէն վեր կը թուի . Աստուածաշունչն է այն : Ինչ վեհութիւն ինչ հան-

ճար ինչ արութախչ երեւակայութիւն : Աշխարհք և տիեզերաց ստեղծումը երգել , քասօսին կերպարան՝ աղջամուղջ անդընդոց լոյս տալ . այսպիսի նիւթի մը բարձրացողը կը տարակուսինք ըսելու թէ մարդկային մտք մ'է :

Կ. - Հոմերոս թէպէտ զուրկ այս երկնային ներշնչումէն , թէպէտ իւր գիւցադունք մահկանացու և Տրոլայ պարասպաքը տակ ընդքարչ տասն տարիի չափ , Հոմերոս կրցած է իւր Իլիականին մէջ այնպէս ճշգրիտ , բնական , վսեմ պատկերներ գրել որոնք կարող են Աստուածաշունչ սուրբ գրոց ներշնչութեան հետ մրցել շատ տեղ , Իւ ինչ է ասոր պատճառը . քանզի ուղիղ բարոյականը առաջնորդ էր Հոմերի երկնասլաց մտքին :

Ծ. - Բանաստեղծութիւնը նիւթին ըստեղծումն , երեւակայութեան հուրն է : Ուստի անիկա լեզուի այս կամ այն ձեւին կապուած չէ . անիկա որեւորից որեւոր լեզուին է :

Ծ. - Սակայն երբեմն իւր սլացման և ներշնչութեան աւելի յարմար կուգայ ուտանաւոր լեզուն՝ անոր բառերուն թա-

ւալմանը հետ կարծես թէ միտքն ալ կը սիրէ խոյանալ, իջնել, սուղիլ, հանգչիլ, Օրինակ մը :

Ինչպէս և սիրտ իմ փշրեցաւ և դու քընար բեկցիս ջախջախ :

Շատ իսկ ի յողբս ու ի թախիժ վաստակեցաք ի միասին :

Հանդոյն կողերց ուռինեաց թեչքդ արտասուաց լըցան ցօղով :

Ջեղերերդ ցաւոց միայն դտեալ քեզ յարմարադէտ :

Ողբոմ մահուան իմ սիրելեաց գնացեր յաճախ յուղարկաւոր :

ՊԵՏԻՍՔԱՆԵՆ

Անտարակոյս արձակ գրուածը պիտի չկարենար արտագրել այս մեղամաղձօտ անուշութիւնը և գեղեցկութիւնը :

7. - Ոտանաւոր լեզուն գիւրաւ կը պատկերացնէ հողւոյն յուղմունք գթութիւնը եւայլն : Ալեաց բաղխմանց, զինուց շառաչման, հողմոց սուլելուն պատերազմողաց օանատրոփ ընթացքին ճշգրիտ նմանող է . բացի ասկէ՝ տաղաչափութիւնը արձակէն աւելի յարմար է կրթելու և դուարճացնելու :

8. - Բանաստեղծութեան գլխաւոր սե-

ուերն են , 1<sup>o</sup>. Մեծ բանաստեղծութիւնք ,  
ինչպէս են Գր-ի-նը , Գր-ի-նը , Գր-ի-նը  
և Գր-ի-նը . 2<sup>o</sup>. Երկրորդա-  
կան բանաստեղծութիւնք , ինչպէս են  
Եր-ի-նը , Եր-ի-նը , Եր-ի-նը , Եր-ի-նը ,  
Եր-ի-նը :

### ՅՕԴՈՒԱՄ Բ.

#### 2. - ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ

1. - Երկու տեսակ բանաստեղծական  
գեղեցկութիւն կայ . նիւթի և բացատ-  
րութեան :

2. - Բացատրութեան գեղեցկութիւն-  
ները կը կայանան եռանդուն շնորհալից  
փափուկ , բնական ձեւոց և պատկերաց  
մէջ (ասոնց վրայ ոճին մէջ արդէն խօսած  
եմք) :

3. - Բայց բանաստեղծութեան գլխա-  
ւոր և էական գեղեցկութիւնը նիւթին  
ստեղծման մէջ կը կայանայ : Բանաստեղ-  
ծական նիւթոց յղացման մէջ պէտք է մի-  
ութիւն ըլլայ . առանց Գր-ի-նը չկայ բա-  
նաստեղծական գեղեցկութիւն :

## ԳԼՈՒԽ Գ.

ՔՆԱՐԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

### ՅՕԴՈՒԱԾ Ա.

1. - ՅԱՂԱԳՍ ՔՆԱՐԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒ.  
ԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ

1. - Քնարական բանաստեղծութիւնը ցաւոց, արտմութեան, խնդութեան և ըզմայլման՝ վերջապէս կրից բարբառն է :

2. - Այս տեսակ բանաստեղծութիւնը քնարին ընկերն է : Նախնիք իրենց յաղթանակները, դից փառքը, մեծութիւնը երգելու համար խօսք և քնար միանդամայն կը դործածէին : Ասկէ մնացած է իւր քնարական անունը : Ասիկա տաղանդին և հանճարոյն սլացման ամենէն աւելի օժանդակող տեսակն է :

3. - Բնութեան տեսարանները, առուակին մրմունջը, որբին հառաչանքը, սոխակին երգը, առաքինութեան սլատկերը, գիտութեան մեծութիւնը. ասոնք

են քնարական բանաստեղծութեան նիւթը :

4. - Այս նիւթերը երբ կոչուած ոտանաւորներուն մէջ կը պարունակին :

## ՅՕԴՈՒԱԾ Բ.

### 2. - ԵՐԳ

1. - Ամեն աղբ իրեն յատուկ երգոյ ձեւն ունի : Բանաստեղծին կիյնայ ընտրել իւր երգին տուներուն քանի տողէ բաղկանալը : Սակայն առաջին տունը աւարտելուն պէս այնուհետեւ հեղինակը կը պարտաւորի զայն հետագայ տուներուն կանոն ընտրել և անոր վրայ ձեւել միւսները :

2. - Երգին ընթացքը կամ եղանակը (տոն) նիւթին և հեղինակին ներշնչման յարմար պէտք է ըլլայ . եթէ ինքը գերբնական պատճառէ մղուած է , իւր ոճը պէտք է յանդուգն , խրոխտ , վրոսեմ ըլլայ . իսկ եթէ զգացման և երեւակայութեան հաճոյքները գոհ ընելու համար միայն կը գրէ՝ իւր ոճը պէտք է



երաժշտութեան յարմարելու համար գըր-  
ուած է :

## ԳԼՈՒԽ Դ.

ԴԻԻՅԱԶՆԵՐԳՈՒԹԻԻՆ

### ՅՕԴՈՒԱԾ Ա.

1. - ԴԻԻՅԱԶՆԵՐԳՈՒԹԵԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՄԱՍԸ

1. - Դիւցազներգութիւնն է մեծ դիւ-  
ուածի մը նկարագիրը : Տէրութեան ան-  
կումը , մեծութիւնը , քաջերու գործերը ,  
պատմական հազուագիւտ իրողութիւննե-  
րը դիւցազներգութեան նիւթերն են :

2. - Սակայն ամեն մեծ դէպք չկըր-  
նար դիւցազներգութեան նիւթ ըլլալ .  
պէտք է ընտրել անոնք միայն՝ որ ազնիւ  
և վսեմ զգացումներ , հետեւելու արժանի  
օրինակներ կրնձայեն . միով բանիւ անոնք՝  
որ բարոյական դաս կրնան ըլլալ :

3. - Դիւցազներգակ ըլլալու համար  
հանճարը միայն բաւական չէ , նիւթին  
ընտրութիւնը հերիք չէ , այլ պէտք է  
հարմար լըրայ հաւատք ունենալ :



4. - Այսպէս վաղթէրը դիւցաղներգակ ըլլալու համար մեծ հանճար ունէր . սակայն իւր Հենրիատին մէջ շատ ստորին մնացած է երեւելի դիւցաղներգակ քերթողներէ , վասն զի հրեշտակներու կարեւորութիւն չտալով բաւական սեպեր է իւր մեծ հանճարին և երեւակայութեան գեղեցկութիւնները տեղալ իր Հենրիատին մէջ . իսկ Շաղապրիան իւր Մարտիրոսին , Միլտոն՝ իւր Դեյուիլին մէջ շատ գերազանցեր են զվաղթէր ձեւոյ և ստեղծմանց մասին :

5. - Հրեշտակներու ըսելով պէտք է իմանալ Աստուծոյ կամ անձնաւորեալ վերացական էակաց միջամտութիւնը : Ասիկա զարմանքը գրաւելու շատ յարմար է . Սա մեծ արգասաւորութիւն կուտայ հանճարոյն և նիւթին :

6. - Արտաքին կամ հեթանոսական (profane) նիւթերու մէջ քրիստոնէական յայտնութիւններն ալ կրնան մուտ գտնել և զանոնք զարգարել : Այսպէս Ֆենելոն թեւեմաքին մէջ խիստ գեղեցիկ կերպով գործածեր է քրիստոնէական դաղափարները՝ զանոնք հրապուրիչ ձեւերու փոխա-

կերպելով այնպիսի ձևերու՝ որոնք գի-  
ցարանութեան բղխածներէն գերազանց  
են :

7. - Քրիստոնէական հրշակոյթն գործա-  
ծելու մէջ շատ զգուշութիւն պէտք է :  
Հրեշտակաց և երկնային մարմնոց  
մարդկային կերպով և ուրիշ տալը յոռի ճաշակի  
գործ է :

Դարձեալ այլանդակութիւն է մէկ կը-  
րօնքին գերբնական էակները միւս կրօն-  
քին էակաց հետ խառնելը . Աստուածա-  
ծին և Աստղիկ , Յիսուս և Պապոս իրարու  
պատահեցնելը : Այսպէս ըրած է Գամեէն  
քերթողը : Միլտոնի մէջ ալ կերբերոս ,  
Տանտալէս , Մենտոս (գիցարանական ան-  
ձինք) մուտ գտած են :

8. - Փիլիսոփայական հրշակոյթն է վերացեալ  
կամ բարոյական էակներ գործածել . ինչ-  
պէս են . Հիբիա , Ալեքս , Խալիլ-Գիբրան ,  
Միլտոնի եւ այլն : Սակայն ասոնք սրտա-  
շարժ ըլլալու համար՝ պարտին որեւիցէ հա-  
ւատալիք մ'ունենալ իրրեւ իրենց հիմք :

9. - Հրաշալեաց գործածութեանը մէջ  
պէտք է լաւ ուշագրութիւն ընել ճշ-  
մարտանման երեւցնելու ցնորքը (fiction) :



2. - Գիւցաղներգական գործողութիւնը պէտք է ըլլայ՝ Գ, նախ՝ վասն զի միութիւնը ուշադրութիւնն մէկ կէտիմը վրայ կը կեդրոնացնէ և աւելի շահաւէտ կըլլայ. և երկրորդ որ՝ երկու տարբեր գործողութիւններ սիրտը երկուքի կը բաժնեն՝ զգացումը կը տկարացնեն և գրուածին յարգը կը կորսնցնեն: Ուստի պէտք է որ բանաստեղծը մէկ գործողութիւն մը, մէկ նայատակ մ'իրեն գրութեանը նիւթ առնէ միեւնոյն գիւցաղներգութեանը մէջ՝ Այսպէս.

Հոմերի Իլիականին նիւթն է Աքիլլիայ ռիսութիւնը. Ոդիսականինը՝ Ոդիսեայ դարձնի հայրենիս. Էնէականինը՝ Ենէասայ յիտալիա բնակութիւն հաստատելը. Միլտոֆլինը՝ մեր նախածնողաց արտաքսումն ի դրախտէն՝ և այլն:

3. - Միութիւնը Գ-Կ-Դ-Ն-Ն-Ն ըսել չէ. բաւական է որ նոյն նիւթին մէջ գրտնուած այլեւայլ վտանգները պատմութիւններն և տրկածները՝ վերջապէս ամեն բան միեւնոյն հետեւութիւնն անուանեն:

4. - Գործոյն միութեան չհակառակիր նկարագրութիւնը կամ միջանկեալ պատմութիւն մը՝ զոր եթէ վերցնենք՝ ամե-

նեւին փոփոխութիւն մը տեղի չունենար նիւթին վրայ :

5. - Միջանկեալ պատմութիւնները կը պարտին բնական, բաղմադոյն (varié) և հաճոյական ըլլալ :

1<sup>o</sup>. Պէտք է բն-կ-ն ըլլան՝ որպէս զի օտարախորթ չըլլան : Պէտք չէ որ ընթերցողին ուշադրութիւնը խաբուի այնպիսի սլաքադայի մը վրայ որ՝ վերաբերութիւն չունի նիւթոյն հետ :

2<sup>o</sup>. Պէտք է բ-ւ-ւ-ւ-ւ ըլլան՝ որպէս զի նորանոր գեղեցկութեամբ զմայլեցնեն և յափշտակեն :

3<sup>o</sup>. Վերջապէս՝ որովհետեւ միջանկեալ պատմութիւնը իբրեւ զարդ կը գործածուի՝ պէտք է որ այս զարդը լ-ւ-ւ-ւ-ւ և հ-հ-հ-հ ըլլայ, ահաւասիկ այս մասին մէջ յայտնի կ'ըլլայ քերթողին ճարտարութիւնը և տաղանդը :

6. - Ա-բ-ւ-ւ-ւ-ւ ըսելով պէտք է հասկնալ գործողութեան ճիշտ բն-ւ-ւ-ւ-ւ-ւ-ւ և լ-ւ-ւ-ւ-ւ :

7. - Գործողութիւնը պէտք է մէջ ըլլայ՝ այսինքն դիւցազներգութեան տիտղոսին արժանաւոր :

Տ. - Գործողութիւնը պէտք է յանդիման  
ըլլայ՝ որպէս զի հողին և երեւակայու-  
թիւնը գրաւէ : Նիւթին ընտրութիւնը՝  
չայն գրելուն ճարտարութիւնը և երեւա-  
կայութիւնը պէտք է իրարու հետ մրցին :

### ՅՕԴՈՒԱԾ Գ.

5. - ԴԻԻՅԱԶՆԵՐԳՈՒԹԵԱՆ ԴԵՐԱՍԱՆՔ  
ԿԱՄ ԱՆՁԻՆՔ

1. - Դիւցազներգութեան անձինք ու-  
րոշեալ են՝ այսինքն այնքան՝ որքան որ  
պէտք է նպատակին հասնելու համար :  
Աւելորդ և աննպատակ անձինք գործողու-  
թիւնը կը տկարացնեն :

2. - Դիւցազներգութեան բանաստեղ-  
ծական նկարագիրները (caractère) երկու-  
քի կը բաժնուին՝ ընդհանուր և մասնուր :

Առաջինները այս բառերով կորոշուին՝  
հասարակ, -բի, -աստիճան եւ այլն . իսկ երկ-  
րորդները անոնք են՝ որ առաքինութեան,  
քաջութեան և իմաստութեան արհեստներ  
կը նկարագրեն : Հանճարին բոլոր ուժը  
այս գործերուն վրայ կը կայանայ :

3. - Բանաստեղծական նկարագիրը կամ բարձր պարտին ըլլալ՝ Գեղեցիկ, Բարձր, Գեղեցիկ, Գեղեցիկ և Բարձր-Գեղեցիկ կամ Գեղեցիկ և Գեղեցիկ :

4. - Տեղեցիկ Բարձր ըսելով պէտք է հասկընալ այն դարուց և աշխարհաց բարձրը՝ որոնցմէ Գեղեցիկ-Գեղեցիկ-Գեղեցիկ անընդունաժ է : Եթէ տարբեր ըլլայ այս՝ ողջամիտ դատողութեանը դէմ է :

Լաւ քննեցէք աշխարհաց, դարուց բարձր և Գեղեցիկները, շատ անգամ տարբեր խառնուած յառաջ կը բերեն : Չանացէք մէկ ազգի մը, ժամանակի մը, անձի մը բարձր ուրիշի չ'ընծայելու :

ՊՈՒՍՏՈՅ

5. - Բարձր կամ Գեղեցիկ Բարձր ըսելով պէտք է հասկընալ անսխալ և անարատ բարձր : Եթէ գիւցազուն մը կամ անձ մը գերմարդկային գոյներով նկարագրուի անհաճոյ և անխմատ կըլլայ :

Մեծ սրտերու երբեմն տկարութիւններ ընծայեցէք : Աբիլլէս հաճոյ չէր ըլլար՝ եթէ իր խրոխտ և զայրացիտ բնաւորութիւնը մեղմացնէր : Կը սիրեմ փոքրիկ նախատինքի մը համար անոր արտասունքը տեսնել : Այս փոքրիկ պակասութեանց նկարագրութենէն միտքը լաւ կը ճանչէ բնաւորութիւնը :

ՊՈՒՍՏՈՅ

Պէտք է որ գրուածին գիւցաղնը մարդ ըլլայ և ոչ թէ գերբնական էակ :

6. - Պատշաճ քրտ ըսելով պէտք է հասկընալ անոնք՝ որոնք իւրաքանչիւր վիճակի, անձի և սեռի կը յարմարին :

Ճամանակը՝ որ ամեն բան կը փոխէ՝ մեր բընաւորութիւններն ալ կը յեղաշջէ : Քու գիւցազուններդ ըստ գիւցաց մի խօսեցներ՝ ծերունի մ'իրբ երիտասարդ և երիտասարդ մ'իրբ և ծերունի :

ԳՈՒԱԼՈՅ

7. - Նշան քրտ ըսելով պէտք է հասկընալ անոնք՝ որ պատմութեան, գիցարանութեան կամ աւանդութեան յարմար են :

Պէտք է Ազամեմունն ըլլայ սէգ, գոռոզ, և հոգածու, Ենէաս՝ իւր գից խորին մեծարանք ցուցնէ. ամենուն իրենց յատուկ նկարագիրը պահէ :

ԳՈՒԱԼՈՅ

Միայն մտացածին անձանց կրնայ բանաստեղծը իր ուղած յատկութիւնը տալ :

8. - Հատուկ քրտ ըսելով պէտք է հասկընալ այն՝ որով բանաստեղծը կը պարտաւորի ինքիրեն միշտ հարցնել թէ՛ այս կամ այն կրօնքին և նկարագրութեանը մէջ իր գիւցաղնին ճիշդ պատկերը կայ թէ ոչ :



9. - Բարոյ գեղեցիկն այն է՝ որով  
բանաստեղծը մէկ անձի մը զանազան յատ-  
կութիւնները կը նկարագրէ՝ առանց գըլ-  
խաւոր յատկութիւնը կորսնցնելու : Այս-  
պէս Աքիլլէս բարկասիրտ է , Հեկտոր՝ ա-  
ւելի մարդասէր . բայց երկուքին գլխաւոր  
յատկութիւնը քաջութիւնն է :

10. Դիւցազներգակ քերթողք ընդհա-  
նուր սովորութիւն ըրած են մէկ անձ մ'ընտ-  
րել իրենց գործոցը մէջ և զանի միւսներէն  
վեր դասել . ասիկա ուրիշ շատ առաւելու-  
թիւններուն հետ՝ նիւթոյ միութեան նը-  
սպաստելու օգուտն ալ ունի :

Կուզե՞ս միշտ հաճելի ըլլալ և երբէք զիս  
չձանձրացնել՝ դիւցազուն մ'ընտրէ որ զիս յան-  
կուցանէ .

ԳՈՒԱԼՈՅ

11. - Փայլուն և պերճ նկարագրու-  
թիւնները չեն բաւեր դիւցազանց բնա-  
ւորութիւնը ճանչցնելու՝ պէտք է զանոնք  
իրենց սեփական կրիւք երեւցնել՝ չար  
կամ բարի :

## ՅՕԴՈՒԱՄ Դ.

## 4. - ԴԻԻՅԱԶՆԵՐԳՈՒԹԵԱՆ ՁԵԻԸ

1. - Բանաստեղծը իր պատմութեանը չսկսած՝ կանխաւ պարտի իմացնել նշանակէ . ասոր կըսուի յարմար . Ինչպէս ,

Ձառաջին մարդոյն զյանցանս և զարդեւեալ ծառոյն սըտուղ ,

Ոյր թունարեր ճաշակացն ջամբ և մոյծ յաշխարհ ըզմահ .

Եւ զամենայն աղէտս մեր արկեալ ըզմեղ յԱդին դրախտէն ,

Մինչեւ մարդ ոք գերաբուն կանգնեալ ըզմեղ անդրէն դարձոյց

Ինոյն դահ էրանաւէտ՝ երգեա , Մուսայդ երկնային :

2. - Պուալոյ այսպէս կը խրատէ .

Սկզբնաւորութիւնը պարզ և անսրահոյճ սկտք է ըլլայ :

3. - Բարեհալիւն ձեւ մ'է՛ զոր բանաստեղծը իր գործոյն սկիզբը կը գործածէ երկնային ոգի մ'իրենն օգնութեան կանչելով : Այսպէս վօլթէր ճշմարտութիւնը կը կոչէ ի թիկունս , Հոմեր՝ Մուսայն եւայլն :

ՅՕԴՈՒԱՆ Ե .

Ե . - ԴԻՒՅԱԶՆԵՐԳՈՒԹԵԱՆ ՈՃԸ

1 . - Դիւցազներգութեան նպատակը մեծութիւն և վսեմութիւնն է : Ուստի պէտք է իր մէջ դանուած մտածութիւնները ազնիւ , զգացումները՝ վեհ , պատկերները՝ եռանդուն և կենդանի , բացարութիւնը՝ ճշիւ , ձեւը՝ յանդուգն , գոյները՝ փայլուն ըլլան , բայց իւրաքանչիւր առարկին յարմար :


2 . - Դիւցազներգական նկարագրութիւնք ուրիշ նիւթերէ աւելի պէտք ունին բազմադոյն , եռանդուն և պերճ նկարագրութեան :

Կարգացէք Հոմերի իլիականին մէջ Դիւցազներգութեան , վերգիլեայ Էնէականին մէջ՝ Հեքատի Բուրիսիան . մարդկային հանճարը ասոնցմէ աւելին չէ կարող ընել :

3 . - Դիւցազներգութիւնը պատմական ակնարկներ ալ կրնայ ընդունել՝ բաւական է որ անոնք ստուգութեամբ յօրինուած ըլլան :



դուժեան եղանակէն : Այս քերթուածը  
 վաւիուկ , զուարթ , հաճելի բացատրու-  
 թիւններ կը պահանջէ :



## ԳԼՈՒԽ Ե .

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՄԱՍՆ



ՅՕԴՈՒԱԾ Ա .

1 . ՅԱՂԱԳՍ ԹԱՏԵՐԳՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ

1 . - Թատերգուժեան և մասնաւորա-  
 պէս ողբերգուժեան ծագումը խիստ ան-  
 նըշան է : Խումբ մը մարդիկ այգեկուժքի  
 ժամանակ այգիներ և դաշտերը պտըտե-  
 լով ի պատիւ Բագոսի երգեր կը նուագէ-  
 ին և կը պարէին : Ասոնց ետեւէն կընթա-  
 նային այգեկուժք և բաղմուժիւն արանց  
 և կանանց :

Այս դինւով զուարթացած պարը ժա-  
 մանակ մը վերջ մրցանակ մ'որոշեց ճար-  
 տար երգողաց . այս մրցանակը նոխազ  
 մ'էր : Թեսպիս այս տեսակ զբօսանաց  
 հնարագիւտը կը կարծուի :

Մական իր գիւտը խիստ պարզ, անզարդ էր : Այնուհետեւ Եսքիղէս անձինք մտցուց իր խմբակին (քէօռ) մէջ՝ անոնց գէմքը ծածկեց և իրենց մասնաւոր կօշիկներ հագցուց : Այս է ահաւասիկ թատերգութեան ծագումը :

2. - Պարը կամ խմբակը որ հնոց ողբերգութեանց մէջ գլխաւոր տեղ բռնած էր՝ արդի գրուածոց մէջ գրեթէ բոլորովին վերցած է :

3. - Պարուց նպատակն էր հանդիսականները հանգչեցնել՝ տեսարանին ընդմիջման ժամանակ, կամ երաժշտութեան ձայնակցելով դրօսնեցնել, շարժել և հրահանգել ունկնդիրները :

4. - Խմբակին շարունակ թատերարեմին վրայ կենալէն ծագում առաւ ժամանակի և տեղոյ միութիւնը : Քանի որ պարը կերպով մը կը շարունակէր իր երգը՝ այսինքն թատերգութեան մէկ մասը՝ հետեւաբար տեղը և ժամանակը փոխելն անկարելի կ'ըլլար :

5. - Թատերգութեան (drame) գործողութեան մը ներկայացումն է : Դիւցաղներգութեան մէջ բանաստեղծը կը նկարագրէ

և կը պատմէ . իսկ թատերախաղին մէջ բանաստեղծը կը ծածկուի , անձինք կուգան իրենց դերը կատարելու և իրենց բնութիւնն ու նկարագիրը մեզի ցուցնելու :

6. - Երկու տեսակ թատերական գործողութիւն կայ՝ մին պերճ , դիւցազնական , զգօն . միւսը՝ հասարակ և զուարթ : Աստի երկու տեսակ թատերախաղ կը հետեւի *պիւր-պիւր* և *կիւր-կիւր-պիւր* :

7. - Սակայն ողբերգութեան և կատակերգութեան նպատակը մի է՝ թէպէտ և իրենց ձեւը տարբեր . երկուքին նպատակն է կրթել . մին մարդուն վշտաց և ցաւոց տեսարանովը , իսկ միւսը՝ անոր մոլութեանց և ազեւից պատկերովը :

8. - Թատերգութեան երկու տեսակին լանոնները գլխաւորաբար չորս ձեւի վերայ կը կայանան՝ որք են՝ 1<sup>0</sup> Գործողութեան *պիւր-պիւր* , 2<sup>0</sup> Գործողութեան *լի-լի* , 3<sup>0</sup> *Ան-Ան* , 4<sup>0</sup> իրենց բանեցուցած *նշ* :

## ՅՕԴՈՒԱՆ Բ.

2. - ԹԱՏԵՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ  
ՅԱՏԿՈՒԹԻՒՆԷ

1. - Թատերական գործողութիւնը պարտի ըլլալ՝ ճշմարիտ կամ ճշմարտանման, մեղով և մի:

2. - Ամեն ճշմարիտը կամ ճշմարտանմանը յարմար չէ թատերաբեմի: Հանդիսականաց աչքին պէտք չէ ներկայացնել վայրագութիւնք, կատաղութիւնք, զբռնելի պատկերներ: Այսպէս յաճախ ոճրագործութիւնք, հայրասպանութիւնք անախորժ են տեսարանի վրայ: Պուալոյ այսպէս կը խրատէ:

Ինչ որ պէտք չէ ակներեւ ցուցնել՝ նկարագրութեամբ անցնելու է, իրաւ է որ աչաց տեսութիւնը աւելի ազդու կը ներգործէ՝ սակայն՝ այնպէս առարկայներ կան՝ որ արհեստը պարտի ականջաց ընծայել և աչաց խնայել:

3. - Երբ գործողութիւն մը կարելի չէ տեսարանի վրայ ներկայացնել իւր իրական պատկերովը՝ պէտք է հեղինակը պատմական խոտորում ընէ՝ այլեւայլ պարագայները կը ճատելով և կամ տեսարանի



զատչած ընելու համար այլեւայլ ժամանակի անցքերն իրարու կցորդէ :

4. - Թատերական գործողութեան ամբողջութիւնը կը կայանայ անոր վայելուչ ընդլայնում տալու մէջ . այսինքն պէտք է որ այն՝ -իւր, Բը և Վը մ'ունենայ :

5. - Թատերական գործոյն միութիւնն է եղելութեան , տեղւոյ և ժամանակի միութիւն :

Մի-ի Դը Բը , Բը Բը , Բը-ի Բը-Բը-Բը-Բը Բը  
Թատերարեմին վրայ սլարտի ներկայանալ :

ԳՈՒՂՈՂ

6. - Գործողութիւնը Բ կըլլայ՝ 1<sup>0</sup> երբ զայն բաղկացնող բոլոր մասերը ինոյն կէտ յանգին :

Այսպէս փերենիկէ ողբերգութեան նիւթը միակ է՝ այսինքն փերենիկեայ Տիտոսէն հրաժարելը , Գոթողիա ողբերգութեան նիւթն է՝ ամբարիշտ թագուհւոյն պատուհասը կամ անմեղութեան յաղթանակը . Ատրումաքին՝ մարդկայից կրից բընումութիւնը՝ նախանձութեան աղէտալի արգասիքը :

2<sup>0</sup>. Երբ գլխաւոր անձը սկիզբէն մինչեւ վերջ նոյն վտանգին մէջ կը գտնուի .

վանն զի եթէ վտանգը անցնի՝ գործողու-  
թիւնը կը վերջանայ՝ իսկ եթէ ուրիշ վը-  
տանգ մը գայ՝ ուրիշ գործողութիւն մը  
կսկսի :

3<sup>0</sup>. Երբ գլխաւոր անձը հանդիսակա-  
նին բոլոր ուշք կը գրաւէ . ինչպէս Յովաս  
Գոթողիա՝ ողբերգութեան մէջ : Այս ըսել  
չէ՝ որ հանդիսականը ուշադրութիւն չընէ  
միւս անձանց՝ այլ թէ՛ կը պարտաւորի  
երկրորդական անձանց ուշադրադիր ըլ-  
լալ գլխաւորներուն նկատմամբ և ամեն  
մասնաւոր պարագայները անոր հետ կապ-  
ուած ըմբռնել :

7. - Եղելութեան միութիւնը չհակա-  
ռակիր յարակից պատմութեանց՝ բաւական  
է որ անոնք գլխաւոր գործին հետ ող-  
ղակի վերաբերութիւն ունենան և օգնեն  
հանդոյցին լուծմանը :

8. - Թատերական գործողութիւնը մի  
ըլլալով՝ պարտի հէ՛ Գէ՛ հէ՛ կատարուիլ .  
կամ ճիշդն ըսելով թատերախաղուն սկիզ-  
բը ուր տեղը սկսած է՝ նոյն տեղը պէտք է  
վերջանայ այն : Այս խիստ կանոնին մէջ  
պարփակուիլը լաւ է . սակայն եթէ ասով  
յատակազծին կամ գիրքին գեղեցկու-

Թիւնները զոհուին՝ բանադատութիւնը կը ներէ տեսարանը մէկ սրահէն, մէկ պալատէն, կամ նոյն քաղաքին մէկ թաղէն ի միւս թաղը փոխադրել :

Այս կանոնիս դէմ մեղանշած է Պէշիկ-Թաչեանը իւր Արշակ ողբերգութեանը մէջ . վասն զի Արշակ՝ Հայաստանէն անյուշ բերգը փոխադրուած կը ցուցնէ :

9. - Որովհետեւ թատերական գործողութիւնը եղելութեամբ և տեղով մի է՝ հարկաւ կը պարտի թէ՛ որոշ թէ՛ տեղի ունենալ :

Յիրաւի խելքի դէմ է տեսնել որ տեսարանները երկու կամ երեք ժամու մէջ հինգ, տասն օրուան գործողութիւն մը ներկայացնեն : Խիստ կանոնը կը պահանջէ որ գործողութեան տեւողութիւնը ներկայացման տեւողութեանը չափովն ըլլայ : Բայց որովհետեւ գեղեցիկ նիւթերուն մեծ մասը չեն կրնար այս միջոցին մէջ պարփակուիլ՝ ուստի ներքի է մէկ ամբողջ օրուան վերածել ժամանակի միութիւնը :

10. - Ահազ Եր թէ, ահաւասիկ այս է բանաւարութեան և կիրթ ճաշակին գրծած սահմանը . ասկէ աւելին՝ առաւել

զեղծմանց ասպարէզ կը բանայ . վասն զի այնուհետեւ մէկ արարուածին մէջ Ասիա երեւցող անձը միւս արարուածին յԱմերիկա պիտի փոխադրուի՝ և այսպիսով ակորժը , վայելուչն և սրտաշարժը պիտի անհետանան անբնական երեւոյթներով և կեղծեօք :

Պուալոյ կը ծաղրէ այս կանոնիս դէմ մեղանշողները :

Մէկ օրուան մէջ տարիներ կամփոփեն՝ և առաջին արարուածին մանուկը վերջինին մէջ մօրուսաւոր այր կը դառնայ :

## ՅՕԴՈՒԱՄ Գ.

Յ. - ԹԱՏԵՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ  
ԿԱՄ ԸՆԹԱՅՔԸ

1. - Թատերախաղ մը քանի մը մասերէ կը բաղկանայ՝ որոնք կըսուին *ա-ր-տ-ը* կամ *հ-ն-դ-է* : Արարուածները իրարմէ *ա-լ-ը-դ-է-ր-ը* կը բաժնուին :

2. - Դերասանաց հեռանալու միջոցին *ա-լ-ը-դ-է-ր* կ'ըսուի . այս այն միջոցն է՝ երբ դերասանը խաղուն մէկ պարագայէն ստիպ-

եալ կը պարտաւորի հեռանալ տեսարանէն

3. - Իւրաքանչիւր արարուածը այլեւայլ մասերէ կը բաղկանայ՝ որոնք կը կոչուին *դիմեր* : Ամեն տեսարան պէտք է գլխաւոր գործողութեանը պէս *մէք*, *դէ* և *վերջ* ունենայ :

4. - Տեսարաններուն թիւը որոշ չէ, իսկ արարուածներունը սովորաբար *հինգ* է՝ ոչ աւելի և ոչ պակաս, ըստ Որատիոսի : Սակայն նոր ազգաց մէջ երեք արարուածով խաղեր կը գտնուին : Ասիկա այն ատեն ներելի է՝ երբ խաղին պայմանները լաւ պահուին :

5. - Առաջին արարուածը պարտի իր մէջ բովանդակել *նիւթի* *դորտ* *դիմեր* և *մէք* : Յառաջաբանն ընելը սովորաբար գլխաւոր անձերէն միոյն կը վայելէ : Հոն գերասանը ընդհանուր ակնարկ մը կը ձգէ իրաց վրայ :

6. - Առաջին արարուածին մէջ բոլոր անձինք պարտին երեւիլ իրենց նկարագրովը և բնութեամբը, կամ եթէ չերեւին հարկ է որ անուղղակի որոշուին՝ գործին հետ իրենց վերաբերութիւնն ունենալիք մասամբը :

Այսպէս Պաշտօնի ողբերգութեանը մէջ Սեւերիանոս որ Չրտ արարուածին կերելի՛ 1<sup>2</sup> արարուածովը կորոշուի :

7. - Թատերական դործի մը բոլոր արժանիքը հնգոյ կամ հնգտ (intrigue) ըսուածին վրայ կը կայանայ : Ասիկա ուրիշ բան չէ՛ այլ միայն զանազան պատահարներ՝ որոնք դործոյն կատարմանը խոչընդոտներ կը յարուցանեն :

Հնգոյցը յոսոյ կոչոյ արդարեւնէ՛ ինչտերէ Ինչտերէն կը դարձանէ ինչ եղբայրն Որտարտեւը շնտէն՝ ուսոյ ճնտէն , կո՛ արդարեւնէ՛ ինչտերէ Թմնոյն կոչէ ինչ շտարտերտէն մոյն արտէն և ինչտերտէն Թմն և քնտէն շտարտէն արտէն Գտնտէն :

8. - Պէտք է որ հանդոյցը առաջին արարուածէն սկսի և բնական բերմամբ բղխի յառաջարանէն : Որչափ խաղը յառաջ երթայ՝ այնչափ պէտք է սեղմուի այն՝ այսինքն արդեւքները խուռն յաճախեն ջանքերուն հետ և հանդիսատեսը ուժգին մտատանջութեան մէջ ձգեն գլխաւոր անձանց բաղդին վրայ : Վերջապէս՝ վերջի արարուածին , և եթէ կարելի է

վերջի տեսարանին հանդոյցը կը խզի՝ և ահա լուծում (dénouement) :

Տագնապը տեսարանէ ի տեսարան շարունակ թող յաճախէ մինչեւ իր վերջի աստիճանը հասնելով ինքնին լուծուի . չկայ բան մը որ այնչափ ազդու դարձէ մտաց՝ ինչպէս հնարքով հիւսուած նիւթ մը , որ իր սլարունակած ճշմարտութիւնը յանկարծ յերեւան կ'ածէ և իրաց կերպարանքը կը փոխէ :

ԳՈՒԱՆՈՅ

Գ. - Լուծումն երկու կերպով կ'ըլլայ . երբ ճշմարտութիւնը կամ յանդուրձանքէրէր քիչ-քիչ քիչ-քիչ կ'ազատէ : Տեղ մը ի վիճակինիա իր Որեւտ եղբայրը կը ճանչէ և զայն կ'ազատէ . ուրիշ տեղ մը Յովիդայէ անակնկալ կերպով կը յաջողի ամեն բան կերպարանավորս ընել զՅովաս թագաւորեցնելով :

Լուծումը՝ յիշուի՛նք կը կոչուի՝ երբ ելքը բարեյաջող՝ իսկ չի՛նք՝ եթէ դժբաղդ ըլլայ :

ՅՕԴՈՒԱՅ Դ.

4. - ԹԱՏԵՐԱԿԱՆ ԱՆՁԻՆՔ

Ա. - Թատերգութեան անջնշտ հանդիսականաց ուշադրութեան առաջին առար-

կայն են : Ուստի հարկ է որ իրենց պատշաճ կերպովը ներկայացուին : Այս անձանց մէջէն մին գործոյն կամ ձեռնարկութեան հեղինակն է՝ որուն վրայ գլխաւոր մասը կը դառնայ . ուստի հարկ է որ ասիկա միւսներէն աւելի եռանդուն և կենդանի գոյներով նկարագրուի :

2. - Խօսակցութիւն կըսուի երկու կամ աւելի անձանց իրարու հետ տեսակցելը : Իսկ Ռեպետիւցիոն (monologue) մէկ դերասանի մը առանձին խօսելը :

## ՅՈՒՍԻՍԱՄ Ե.

5. - Թէ ՔԱՆԻ՞ ԲԱԺԱՆՈՒՄ ՈՒՆԻ  
ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ

Ողբերգութիւնը կը բովանդակէ . 1<sup>o</sup>. Բան ղբերգութիւնը , 2<sup>o</sup>. Ժողովրդային ղբերգութիւն կամ Բարեբեռնը , 3<sup>o</sup>. Բարեբեռն ղբերգութիւն կամ Երեւն :

ԲՈՒՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

1. - Բան ղբերգութիւնը գիւցազնական և գժբաղղ գործի մը ներկայացումն



է : Ողբերգութեան վեպ կը կոչուի գրուածին նիւթը և անոր տրամադրութիւնը : Վէպ կամ առասպելը (fable) երկու տեսակ է . կեղծ կամ պատմական :

2. - Ողբերգութեան գործողութիւնը իր սկզբամբը , առարկայովը և իւր դերասանաց վիճակովն ու բնութեամբը պարտի դիւցազնական ըլլալ :

3. - Ողբերգութիւնը՝ տխրութիւն, թշուառութիւն կը նշանակէ : Սակայն ասով պէտք չէ որ արիւնալից ըլլայ . ըստ Բասինի սաստիկ յուզուած կը քեր , վեհութեամբ լի տրտմութիւն մը՝ ասոնք բաւ են ողբերգութեան ամբողջ հաճոյիցը :

4. - Ողբերգութեան բարոյական նըպատակն է մեր զգայունութիւնը կատարելագործել , ուսուցանել մեզ թշուառութեան արտասուք՝ անկեալին գութ տալ , վեհ և ազնիւ զգացմանց զմայլիլ և մոլութեան զզուանք ու սոսկումն ազդել ի մեզ :

5. - Ողբերգութիւնն իր նպատակին հասնելու համար՝ պէտք է ---կշնէ և 'ի գոթ շրթէ . ահա ասոնք են թատերական երկու մեծ կը քերը :

«Քու խօսքերուդ մէջ թող կիրքը յուզուե-  
լով երթայ փնտռէ սիրտը , զայն ջեռուցանէ և  
չարժէ : Եթէ գեղեցիկ յուզման մը հաճոյական  
կատաղութիւնը յաճախ զմեզ շլեցնէ՝ քաղցր  
---նէմէ՝ էլ կամ մեր հոգւոյն մէջ սիրուն գթու-  
թիւն մը չ'ազդէ՝ 'ի զուր ճարտար տեսարան  
մը ներկայացուցած կ'ըլլաս :

ՊՈՒԱՆՈՅ

Ե. - Բանաստեղծը ---նէմէ կը զար-  
թուցանէ՝ երբ գլխաւոր անձ մը սլատուոյ  
կամ կենսոյ մասին վտանգաւոր կացու-  
թեան մը մէջ դնէ , և գլխաւոր կը յու-  
զէ՝ երբ նոյն անձին ազէտը և վտանգը աշ-  
խոյժ ու կենդանի գոյնով նկարագրէ :

Հիպոպոդիդէս իր խորթ մօրմէն յանի-  
րաւի կ'ամբաստանուի իր թեսէոս հօրը  
քով . գիւրահաւան թեսէոս՝ այսպէս կը  
գոչէ բարկութեամբ :

«Փասիւր , մատնիչ , մի՛ գար աստ իմ ասե-  
լութիւնս արհամարհելու և դժուարաւ զսպած  
կատաղութիւնս գրգռելու . ինձի համար բուա-  
կան է քեզ նման մեղապարտ զաւակ մը յաշ-  
խարհ բերած ըլլալուս մշտնջեան նախատինքը .  
չեմ ուզեր որ իմ յիշողութեանս մէջ ամօթալի  
մահդ փառաւոր գործոցս յիշատակը նսեմացնէ :  
Փասիւր , և եթէ չես ուզեր որ անակնկալ սլատու-

Հաս մը գ քեզ այս ձեռքովս պատժուած ստահակ-  
ներուն կարգը դասէ, զգուշացի՛ր որ զմեզ լուսա-  
ւորող աստղը չտեսնէ քու յանդուգն քայլերդ  
այս վայրաց մէջ, Փախի՛ր կ'ըսեմ, և անդարձ  
հեռանալով՝ քու ահուկի տեսքէդ մարբէ իմ  
պետութիւնս: Եւ դու, ո՛վ Պիտիդոն, և դուն,  
եթէ երբէք իմ արութիւնս քու եղերքներդ  
մարբեց վատ մարդասպաններէ, յիշէ՛ որ՝ 'ի  
վարձ իմ բարեյաջող վաստակոցս՝ խոստացար  
իմ առաջին մաղթանքս ընդունիլ: Սոսկալի  
բանտի մը խոշտանգանաց մէջ քու գթութիւնդ  
հայցեցի: Քու նախախնամութեանդ օգնու-  
թեանը ծարաւի ըլլալով՝ իմ մաղթանքս աւելի  
մեծ կարօտութեան սլահեցին զքեզ: Ա՛յսօր  
գ քեզ կը սպառախիմ: Ա՛ռ չարաբաստիկ հօր մը  
վրէժը, այս մատնիչը քու ամբաւ բարկու-  
թեանդ կը յանձնեմ. իր արեանը մէջ խղզէ իւր  
ամօթալից տարիանքը. ա՛յսօլէս թեսէոս քու  
վրէժխնդրութեանդ բարիքը սլիտի ճանաչէ:

Հոս արհաւիրք մեզ կը սլաշարէ՝ Հիպ-  
պոդիդի վտանգաւոր կացութեանը վրայ.  
մեր սարսափը կը յաւելու երբ թեսէոս՝  
սլատանի իշխանին ինքզինք արդարացնելը  
արհամարհելով կայծակի սլէս կ'որոտայ:

Վերջին անգամ կ'ըսեմ. կորի՛ր տեսութե-  
նէս, ե՛լ, մատնիչ: Մի՛ սպասեր որ կատաղի

Հայր մը նախատանօք զքեզ դուրս քաշկըստել տայ այս տեղերէն :

Աւելի կը սոսկանք՝ երբ հետեւեալ առանձնախօսութիւնը լսենք ,

«Չուառակա՛ն , դու անխուսափելի կորուստեանդ կը դիմես . Պիտիդոն՝ դից իսկ ահարկու Ստիւգեան գետին վրայ երգուաւ ինձ և սկիտի կատարէ զայն . վրէժխնդիր աստուած մը ետեւէդ կուգայ , շեռ կարող անկէ խուսափիլ :

Բասին զմեզ 'ի դութ կը շարժէ մանուկ Յովասի բաղդին վրայ՝ անոր անցուցած վտանգին եռանդուն նկարագրութեամբը : Արքայական ընտանիքին մէջ Յովաս միայն կ'ազատի Գոթոգիլայի գաղանութենէն .

Յովաս՝ իբրեւ մեռեալ ձգուած՝ յանկարծ իմ աչացս պատահեցաւ , տակաւին կը յիշեմ իւր ցնորեալ ստնաուն որ 'ի դուր դահիճներուն ոտքն ընկած զայն իր կրծիցը վրայ թալկացած բռնած էր : Առի զայն արիւննաթաթաւ , և իր դէմքը արտասուօք ցողելով զայն յուշի բերի . և չգիտեմ՝ սարսափէ՞ն թէ 'ի գորովոյ մղուած իր անմեղ բաղուկները զիս սեղմեցին : Մեծդ աստուած , իցի՛ւ թէ իմ սէրս իրեն աղետաքեր չըլլար : Ասի հաւատարիմ Գաւթի անդին

մնացորդն է : Քու տանդ մէջ քու սիրովդ սըն-  
եալ՝ բաց ի քէն տակաւին ուրիշ հայր չգիտեր :  
Եթէ մարդախոշոշ թագուհի մը պատժելու  
վայրկենիս՝ վտանգին տեսիլը հաւատքս դը-  
ղըրդէ : Եթէ այսօր իմ անոր համար թափած  
արտասուքս մարմնոյ և արեան համար են ա-  
ւելի : պահէ՛ , տէ՛ր : քու սուրբ խոստմանցդ  
ժառանգորդը և զիս միայն պատժէ տկարու-  
թեանս համար :

Պիւռոս կուզէ բռնադատել զԱնտրա-  
մաք իրեն հարսնանալու : Սակայն Անտ-  
րոմաք ի յիշատակ իւր ամուսնոյն քաջին  
Հէկտորի՝ ուխտած է այրի մնալ : Պիւռոս  
կ'սպառնայ որ եթէ իրեն հաւանութիւն  
չտայ՝ անոր որդին Աստիանաքս կը յանձնէ  
յունաց՝ որ զայն մեռցընելով՝ Տրովագայ  
վերջին ժառանգը ջնջեն :

Օն ուրեմն, յանձնենք Յունաց՝ Հէկտորի որդին :

Անտրոմաք՝ -ռ-ր -ռ-է-ր-ը էն-լ-լ :

Ա՛հ , կեցի՛ք , տէր իմ , ի՞նչ ընել կուզէք ,  
թէ կուտայք զորդին , մայրն ալ յանձնեցէք .  
Քու երդումդ երբեմն ինձի խոստացաւ ,  
Զմտերմութիւն երդմամբ անզրաւ .  
Ո՛վ դիք , զգութդ իսկ չե՞մ կարող շարժել ,  
Եւ անյոյս ներման՝ կամի՞ս զիս պատժել :

Պառոս իր որոշմանը վրայ կը պնդէ :  
Անտրումաք կը ջանայ զայն ողորբել հետեւե-  
լեալ սրտաշարժ խօսքերովը :

Տէր իմ, տես ի՞նչ վիճակի կը դատապար-  
տէք զիս : Տեսայ հօրս մահը և մեր սարսպաց  
կործանումը՝ տեսայ մեր համայն ընտանեաց  
յարեւէ անկանիլը . ամուսինս՝ արիւնաթաթաւ  
քաշկուտուիլ փոշոյ մէջ, և իր որդւոյն հաղիւ  
ինձի հետ սուսերէ ազատիլը : Բայց որդի մը  
ի՞նչ չէ կարող ընել . ես կը շնչեմ տակաւին՝ և  
կը ծառայեմ : Աւելին ըրի . երբեմն ինքզինքս  
կը մխիթարեմ որ բաղդը ինձի գլխաց զիս հոս  
աքսորելով և ոչ ուրիշ տեղ . թէ՛ այնչափ ար-  
քայլց որդին իր թշուառութեանը մէջ երջա-  
նիկ է՝ որ իր անխուսափելի դերութիւնը քու  
օրինացդ ներքեւ կանցնէ : Ար կարծէի որ իր  
բանտը ադաստան պիտի դառնայ իրեն : Ար-  
բեմն յաղթեալ Պրիամը յարդուեցաւ Աքիլլէ-  
սէն, իր որդիէն աւելի մարդասիրութիւն կ'ըս-  
պասէի ես : Ներէ՛, սիրեցեալդ Հիկտոր, իմ  
դիւրահաւանութեանս : Չէի կարծեր որ քու  
թշնամիդ ոճրագործ ըլլայ . իրեն չուզելովն  
իսկ՝ ես զինքը մեծանձն կարծեցի : Ա՛հ, երա-  
նի թէ՛ բաւական մեծանձն ըլլար քու ոսկրու-  
եացդ կանգնած շիրմիս զմեզ թողելով՝ և իր  
ատելութիւնը ու մեր աղէտը հոն սպառելով՝  
այ սչափ սիրուն մնացորդներն իրարմէ չբաժնէր :

Չկայ անդգայ սիրտ մը՝ որ այս մայրե-  
նի գորովէն ազդեալ խօսքերով յարտա-  
սուս չարժի :

7. - Ողբերգութեան պատկերները, ի-  
րեն ներկայացուցած անկեալ իշխանները,  
կործանեալ պետութիւնք՝ կատաղի և  
գաղանային ոճրագործութիւնք սոսկումն  
կամ գթութիւն ազդելով ի մեզ՝ մեր սիր-  
տը ի բարին, ի լաւն հակամէտ կընեն. ի-  
րաւ է որ ասի նոյն ինքն բարի ըլլալը չէ,  
և սակայն սկզբնաւորութիւն մ'է : Արտա-  
սուքը առաքինութեան նախընթացն է :

Այս արդիւնքը յառաջ բերելու հա-  
մար, պէտք է, որ ողբերգութիւնը արհես-  
տից սկզբան հաւատարիմ մնայ՝ այսինքն  
առաքինութիւնը սիրոյ և մեծարանաց  
առարկայ մը յուցնէ : այս սկզբունքը կը  
տեսնուի բոլոր գլուխ - գործոցներու մէջ,  
Երեւելի հեղինակները չեն ջանար իրենց  
տեսարանի վրայ ներկայացուցած անձինքը  
ոճրագործութեամբ և մեղօք հրասպարիչ  
ընելու :

Ոճրագործներ կը գտնուին՝ իրաւ է,  
սակայն պէտք է այնպէս ներկայացնել՝ որ  
իրը թէ անձանօթ զօրութենէ մը կը բըռ-

Նադատուն իրենց առաքինութեանը հակառակ, և այս ընդդիմութիւնն իսկ սըրտաշարժ ու գորովալից է :

Ուրեմն ամեն տեսակ ոճրագործներ անխտիր պէտք չէ ներկայացնել տեսարանի վրայ : Եթէ Տիրեր և Ներոն բեմը ելնեն՝ աւելի գարշումն և նողկանք կը պատճառեն քան թէ եղբրական զգացմունք : Այս տեսակ անձինք տեսարանի վրայ ներկայացուած ատեն՝ տակաւին շատ համբաւեալ ըլլալու չեն ոճրագործութեան մէջ :

Արդի գրագէտներուն շատերը չեն ուզեր հետեւել Քասինի և Քունէյի անմահ սկզբանցը, այլ կը ջանան եղեռնագործութիւններն իրենց կատարեալ մերկութեամբը ի հանդէս բերել՝ որով գարշութիւնը և արհաւիրքը գթութեան տեղ կը դնեն յաճախ :

Տ. - Ողբերգական լեզուն ոտանաւոր կրնայ ըլլալ. սակայն անձանց բերան այն ատեն դիմառնական և բանաստեղծական աւիւնով խօսք գնելու է՝ երբ զգացումը քնական բերմամբ զայն արտագրէ :

Եթէ ասոր հակառակն ըլլայ՝ գրուածը արուեստակեալ և ծաղրելի կը դառնայ :







և ով պիտի կռուիս եզրօրը հետ . և վերջապէս  
այս անօգուտ խօսակցութեանց վերջ տալու հա-  
մար՝ կըսեմ . Ալպ զքեզ որոշեր է , ա՛լ զքեզ չեմ  
ճանչեր ։ :

ԿՈՒՐԱՏ

« Ես զքեզ կը ճանչեմ , և ա՛յս է որ զիս կմեռ-  
ցընէ ։ »

Վօլթէռ կըսէ որ ասկէ աւելի վսեմ  
խօսք չըլլար ։

Քօռնէյլ սքանչելի օրինակներ շատ ու-  
նի՝ խօսակցութեան մասին . օրինակ մը Պո-  
զիկտէս ողբերգութենէն ։

ՆԷԱՐՔ

Ո՛ւր կուզես երթալ ։

ՊՈՂԻԿՏԷՍ

Ի տաճարն ուր զիս կը կոչեն ։

ՆԷԱՐՔ

Ամբարիշտ ամբոխի մը մաղթանացը ձայն  
նակցի՛լ . կը մոռնա՞ս որ քրիստոնեայ ես ։

ՊՈՂԻԿՏԷՍ

Դու՛ որ զիս քրիստոնեայ ըրիր՝ լաւ կը յի-  
շե՞ս զայն ։

ՆԷԱՐՔ

Ես կը գարչիմ ՚ի սուտ աստուծոց ։

ՊՈՂԻԿՏԵՍ

Ես ալ կարհամարհեմ զանոնք :

ՆԷԱՐՔ

Իրենց պաշտօնն պիղծ կը համարիմ :

ՊՈՂԻԿՏԵՍ

Եւ ես չարաշուք կը սեպեմ :

ՆԷԱՐՔ

Փախիր ուրեմն իրենց բազիններէն :

ՊՈՂԻԿՏԵՍ

Կուզեմ զանոնք կործանել՝ և մեռնիլ իրենց տաճարին մէջ՝ կամ զանոնք՝ ՚ի փոշի դարձընել :

Օ՛ն երթանք, սիրելիդ իմ Նէարք, երթանք, աշխարհին ՚ի տես դիմագրաւել կռոց և ցուցընել թէ ո՞վ եմք մեք : Զայս կսպասէ ՚ի մէնջ Երկինք՝ պէտք է ՚ի գլուխ հանել, խոտացայ և պիտի կատարեմ : Այն Աստուած զոր ինծի ճանչցուցիր՝ օրհնեալ ըլլայ՝ որ այս առիթը ինծի ցուցնելով կը պատրաստուի իմ հաւատօ փորձել և իւր անհուն բարութեամբը զիս սըսակել :

ՆԷԱՐՔ

Եռանդդ չափազանց է, քիչ մը մեղմացո՛ւր :

ՊՈՂԻԿՏԵՍ

Տակաւին շատ քիչ է այն Աստուծոյ համար զոր կը պաշտեմ :

ՆԷԱՐՔ

Մահ կը գտնես :

ՊՈՂԻԿՏԷՍ

Ես զայն կը փնտռեմ :

ՆԷԱՐՔ

Եւ եթէ սիրտդ վարանի :

ՊՈՂԻԿՏԷՍ

Ան իմ նեցուկս կըլլայ :

ՆԷԱՐՔ

Նա չհրամայեր գահավէժ դիմել 'ի մահ :

ՊՈՂԻԿՏԷՍ

Որչափ կամաւոր ըլլայ՝ այնչափ աղնիւ կըլլայ :

ՆԷԱՐՔ

Փոխանակ զայն փնտռելու՝ բաւական է ըս-  
պասել և վշտակրիլ :

ՊՈՂԻԿՏԷՍ

Ով որ ինքզինքը չզոհեր՝ ահամայ կը վշտակրի :

ՆԷԱՐՔ

Բայց վերջապէս՝ այն տաճարին մէջ մահը  
անխուսափելի է :

ՊՈՂԻԿՏԷՍ

Բայց յերկինս սպակը արդէն սպտրաստ է :

ՆԷԱՐՔ

Սուրբ կեանքով սէտք է անոր արժանի ըլլալ

ՊՈՂԻԿՏԷՍ

Եթէ ասորիմ՝ մեղքերս կրնան զայն ինչ  
յափշտակել, ինչո՞ւ անստուգութեան ենթար-  
կեմ զայն՝ զոր մահը կապահովցնէ. երբ մահը  
յերկինս մեղի կը բանայ՝ խի՞ստ է. ես քրիս-  
տոնեայ եմ, Նէարք, և բոլորով սրտիւ եմ. իմ  
ընդունած օրէնքս իր արդիւնքը կսպասէ. ով  
որ կը զանգիտէ՝ վատութեամբ կը հաւատայ և  
մեռեալ է անոր հաւատքը:

ՆԷԱՐՔ

Խնայէ՛ կենացդ, Աստուած ալ անոր սէտք  
ունի, ասորէ քրիստոնեաները այս տեղը պաշտ-  
պանելու համար:

ՊՈՂԻԿՏԷՍ

Իմ մահուանս օրինակը զանոնք առաւել կը  
սրտապնդէ:

ՆԷԱՐՔ

Ուրեմն կուզես մեռի՞լ:

ՊՈՂԻԿՏԷՍ

Եւ դու աւելի կը սիրես ասորի՞լ:

ՅՕԴՈՒԱԾ Զ.

6. - ԹԱՏԵՐԱԽԱՂ, ԵՒ ԳՈՒՍԱՆԵՐԳՈՒԹԻՒՆ -  
(opéra)

1. - Թորե-ի-ը տեսակ մը ժողովրդ-  
դական ողբերգութիւն է՝ արձակ կամ  
ոտանաւոր լեզուաւ : Հոս մարդկային հա-  
սարակ կենաց վշտերը և աղէտները առ  
հասարակ կրնան նկարագրուիլ :

2. - Նոր-ի-ը կամ գո-ն-ը  
ի-ը երգելու համար շինուած ողբեր-  
գութիւն մ' է : Ասոր մէջ գործողութիւ-  
նը դիւցազնական և աղետալից է, եր-  
բե՞ ի-նչ հը-ը : Այս վերջին յատկութեամբ  
է որ բուն ողբերգութենէն կը տարբերի :  
Ասոր հրաշային կը կայանայ գերմարդկա-  
յին էակի մը թատերական անձանց հետ  
խառնուելուն մէջ : Հոն դերասանաց կար-  
գին մէջ կը տեսնուին դի-ք, կատաղի-ք դը-  
ժոխոց, ստուեր-ք, դեւեր և երեւակայու-  
թեան հնարել կրցած բոլոր էակները :

3. - Գուսաներգութիւնը՝ երբ հրաշա-  
լին գործածէ՝ երեւոյթի-նց կանոններուն  
ենթակայ չըլլար :

## ՅՕԴՈՒԱՄ Է՛.

## 7. - ՅԱՂԱԳՍ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԵԱՆ

Կատակերգական սեռը կը բովանդակէ՝  
 1<sup>o</sup> Բռն իտ-իերէ--իւն . 2<sup>o</sup> Ֆրո-- կամ Ժ--  
 շտիտ-իւն իտ-իերէ--իւն . 3<sup>o</sup> Անկոտոտ Կե--  
 րն . 4<sup>o</sup> Խեղիտ-իւն (parodie). 5<sup>o</sup> Ն--  
 քոտ իտ-իերէ--իւն :

## ԲՈՒՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

1. - Բուն կատակերգութեան նպատակըն է՝ հասարակ կենաց ծաղրելի հանգամանքները ՚ի հանդէս բերել և անոնց վրայ ժողովրդեան ծիծաղը, արհամարհանքը շարժելով մոլութիւնները բառնալու ջանալ :

2. - Կատակերգութիւնը մարդկութեան խիստ տխուր և ծանր մոլութիւնները պէտք չէ իրեն նիւթ առնու : Անոնք ողբերգութեան բաժինն են . ինքը պէտք է գոհ ըլլայ անոնց ծաղրելի մասն առնելով :

3. - Կատակերգութիւնը այն ատեն իւր նպատակին կը հասնի՝ երբ յարգէ բարոյականը և ակնածի առաքինութենէն : Եթէ կատակերգութիւնը այս սահմանէն անցնի փնտաակար և արհամարհելի կըլլայ :



ՅՕԴՈՒԱՄ Ը.

Տ. - ՅԱՐՍ ԿԱՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿԱՏԱԿԵՐ-  
ԳՈՒԹԻՒՆ. ԱՆԿՑՈՐԴ ՏԵՍԱՐԱՆՔ. ԽԵՂԿԱ-  
ՏԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՆՈՒԱԳԱՒՈՐ ԿԱՏԱԿԵՐ-  
ԳՈՒԹԻՒՆ

1. - Պարս կամ ժողովրդիս իրարմէն իրարմէն համառօտ խաղ մ'է բիրտ նկարագրութեամբ և ծաղրելի հանդամանքներով ու մոլութեամբ լի :

2. - Պարսը կատակերգութենէ մը կամ ողբերգութենէ մ'ետքը կը ներկայանայ տեսարանին վրայ՝ որպէս զի անոնց ազգած տխրութիւնը ամոքելով հանդիսականները զուարթացնէ :

3. - Անոր կըսուին այն խաղերը որոնց տեսարանները իրարու հետ կապակցութիւն չունին : Բանաստեղծը ասոր մէջ շատ անձինք կը ներկայացնէ՝ որոնք իրենց մասնաւոր շահն ունին : Տեսարանին վրայ երեւցող անձինք նախ պար մը կը կազմեն՝ իրարու ետեւէ կամ խմբովին գալով : Այս խաղը ոչ հնարք (էնթրիկ) և ոչ հանգոյց ունի. այլ հոս մարդու մը կամ գերբնական էակի մը հետ տե-

սակցութիւն մը տեղի ունենալէն ետքը խաղը կաւարտի :

Կ. - Խեղհոյ-հոյ-նն է՝ ծանր և զգօն գործի մը ծաղրաշարժ նմանութիւն մ'ընել :

Ծ. - Նոսոսոսոս հոսկերի-նն է՝ երաժշտութեան ընկերացած կատակերգութիւն մը՝ որուն նպատակն է հանդիսականները զուարճացնել :



## ԳԼՈՒԽ Զ.

ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ԽՐԱՏԱԿԱՆ ՄԱՍՆ



ՅՕԴՈՒԱԾ Ա.

1.- ՅԱՂԱԳՍ ԽՐԱՏԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆ  
ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ

1. - Խրատական կամ փիլիսոփայական կը կոչուին այն բանաստեղծութիւնք՝ որոնք մասնաւորապէս բանավարութեամբ կը խօսին . իրենց առարկայներն են՝ գիտութիւնք, արհեստք, բարոյականութիւնը, կրօնքը :

2. - Խրատական քերթողին նպատակն է հրեւել բանաստեղծական հրասպուրիչ երանգօք իր խրատները զարդարելով : Այսպէս խրատական քերթութիւնը կը բովանդակէ՝ 1<sup>o</sup> Բան իբրոսիւն բանաստեղծութիւն, 2<sup>o</sup> Նստիւն բանաստեղծութիւն (épitre). 3<sup>o</sup> Երգիչ-բանաստեղծութիւն (satire). 4<sup>o</sup> Խրոսիւն անոցել (apologue) :

ՅՕԴՈՒԱԾ Բ.

2. ԲՈՒՆ ԽՐԱՏԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

1. - Բան իբրոսիւն բանաստեղծութիւնը կանոնաւոր դրուած մ'է՝ վիլիսովայական և օգտակար նիւթի մը վրայ :

Այսպէս են վիլիսովայ Մշիւնիւն՝ Որատեայ Արտիւն Իբրոսիւնը և այլն :

2. - Խրատական բանաստեղծութիւնը՝ ոտանաւոր լեզուաւ՝ իր ուսուցանելիք արհեստին կանոնները և սկզբունքները կաւանդէ : Բանաստեղծութեան հրասպուրիչ երանգները և տաղաչափութեան արհեստը հոն պէտք է հաւասարապէս փայլին՝ Իբրոսիւն Իբրոսիւն հետ միացնելու համար :

Այս մասին վիլիսովայ Մշիւնիւն ան-

Համեմատ է ։ Տես ինչ սքանչելի լեզուով  
 և եղանակաւ կաւանդէ մշակութեան ժա-  
 մանակը ։ մշակելի արտին յատկութիւնը  
 եւայլն ։

Նոր գարուն մինչ զալեւոր լերանց հալէ զսպազ-  
 եալ ծորանս՝  
 Եւ փխրեալ զհողակոշտըն լուծանեն օդք քաղց-  
 րասիք ։  
 Ըսկսցի հեծել ինձ անդ ընդ խորամուխ արօ-  
 րով ցուլ՝  
 Եւ շփեալ խոփ ընդ ակօս լուսանըչոյլ շող ար-  
 ձակել ։  
 Այլ ըզկամս մըշակին ազահութեան հերկ այն  
 Եցէ՝  
 Որ կրկին համբեր տօթոյ և կրկնակի սառնա-  
 մանեաց ։  
 Որսցիցն իւր շեղջ ամբաւ երգիծուցին զտե-  
 մարանս ։

---

ՅՕԴՈՒԱՄ Ե.

1. - ԽՐԱՏԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼ ԿԱՄ ԱՌԱԿ

1. - Առիւն փոքրիկ գրուած մ'է որուն  
 մէջ բանաստեղծին նպատակն է գեղեցիկ

և խորհրդաւոր օրինակներով կրթել և հրահանգել զմեզ :

2. - Առակին ոճը պէտք է պարզ, ընտանեկան, սահուն, անոյշ և միամիտ (naïf) ըլլայ :

Լաֆոնթէնի և Գրիլովի առակները այս տեսակ գրուածոց կատարեալ տիպար են :

3. - Ամեն առակ պէտք է բարոյական խրատիմը վրայ հիմնուի : Այս բարոյականը պէտք չէ որ բռնազբօսիկ և նխթին օտար ըլլայ :

4. - Առակին ոճը իր պարզ, բնական ըլլալովն հանդերձ շատ անդամ բանաստեղծական ազնիւ պերճ և վեամ է : Օրինակ մը Լաֆոնթէնէն :

ԿԱՂՆԻՆ ՆԻ ԵՂԵԳԻՆ

Օրին մէկ կաղնին ըսաւ Եղեգին ,  
Շատ տեղի ունիս բնութեան ամբաստան .  
Փոքրիկ թռչունն է քեզ բեռ անհնարին ,  
Թեթեւ սօսաւ իւնք որ դիպուածով գան  
Ձրին դէմք կնճռել՝ ըզքեզ կստիպեն  
Գլուխդ կորացնել :

Մինչդեռ իմ ճակատ՝ հանդոյն կովկասու ,  
Ոչ միայն կըլլայ խափան արեւու՝  
Այլ փոթորկաց դէմ իսկ կը խիզախէ .

Ամեն քեզ մրրիկ՝ իսկ ինձ է զեփիւռ .  
 Այն անբեւոց տակ գոնէ ծնէիր ,  
 Արով չբջակայս ծածկիմ համասփիւռ .  
 Դու չէիր ըլլար այդչափ վշտակիր ,  
 Քեզ կը պահէի ես մրրիկներէ .

Բայց դու յաճախ կընտրես ծընիլ ,  
 Հողմոց պետութեան ափանցքով խոնաւ .  
 Բընութիւն քեզի դէմ յոյժ է անիրաւ :  
 Քու կարեկցութիւնդ՝ պատասխանեց թուփ .

Կուգայ լաւ սրտէ ,

Այդ հոգն ինձ ձըգէ .

Հովերըն քան ինձ՝ քեզ են ահարկու ,  
 Գլուխս կը ծռեմ բայց ես չեմ կտորիք .

Իրաւ է դու մինչեւ ցարդ ,

Անոնց սոսկալի հարուածներուն դէմ .  
 Հաստատուն կեցար մէջք չծըռեցիր ,

Բայց ըսպասենք վախճանին .

Հագիւ ըրաւ այս խօսքերը ,

Հորիզոնին ծայրէն փրթաւ

Կատաղութեամբ վազեց եկաւ ,

Հիւսիսի էն ահեղ զաւակը՝

Արոյ նըման մայրն չէր ծընած .

Մառը չսեպեց , եղէգ ծռեցաւ .

Իր հարուածներն հովը կրկնեց ,

Այնչափ ըրաւ՝ մինչեւ խըլկեց

Ձայն որուն գըլուխ երկնից էր դրացի՝  
 Ոտքերն դժոխոց սահմանին դըրպած :

Այս օրինակին մէջ պարզութիւնը , ճո-  
խութիւն , վսեմութիւն հաւասարապէս կը  
վայլին . և յիրաւի՝

Այն որուն գըլուխ երկնից էր դրացի ,  
Ոտքերն դժոխոց սահմանին դպած՝

Տողերը Հոմերի երեւակայութեան արժա-  
նաւոր են :

ԳԼՈՒԽ Է .

ՀՈՎՈՒԵՐԳՈՒԹԻՒՆ

ՅՕԳՈՒԱԾ Ա .

1. - ՅԱՂԱԳՍ ՀՈՎՈՒԵՐԳՈՒԹԵԱՆ  
ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ

1. - Հ-է-ե-ր-ի-ն-ը դաշտային կենաց  
նկարագիրն է : Իր նիւթն են՝ սրինգ ,  
գառնուկները , վճիտ աղբիւրը , անտա-  
ռաց հովանին :

2. - Երբ մարդիկ բնութեան գրկէն հե-  
ռանալով ընկան քաղաքական կենաց  
յուզմունքներուն մէջ , երբ դաշտին ան-  
մեղ վայելքներուն յաջորդեցին քաղաքաց

մտահոգութիւնք և վշտալից պէտքերը ,  
 երբ ոսկի դարը անցաւ և իրեն փոխանակեց  
 ապականութեան և վատթարութեան դա-  
 րը՝ յայնժամ մարդոց սրտէն հառաչանք մը  
 թռաւ իրենց նախնեաց կեանքին վրայ՝  
 այն հառաչանքն Հ-Վ-Ի-Ր-Գ-Ո-Ւ-Ն-Ե-Ր : Հնոց  
 հռչակաւոր Հովուերգուներն են՝ Թէոկրիտ  
 և Վիրգիլ :

ՅՕԴՈՒԱՄ Բ.

2. - ՀՈՎՈՒԱԿԱՆ ՄՐՄՈՒՆՁՔ

1. - Հովուական կեանքը երեք վիճակաւ  
 կրնայ նկատուիլ՝ կամ՝ ինչպէս որ էին եր-  
 բեմն ոսկի դարուն մէջ , կամ՝ ինչպէս որ  
 են այժմ՝ տառասպազին աշխատութեանց  
 մատնուած և կամ ինչպէս որ չեն եղած  
 բնաւ՝ բայց կը փափաքին ըլլալ , այսինքն  
 իրենց անմեղութիւնն պահելով կրթուիլ  
 և իրենց դաղափարներն բազմապատկել :

2. - Հովուերգութեան իմաստները , ըզ-  
 գացումները , լեզուն , ամեն բան պարզ  
 և բնական պարտի ըլլալ :





# ԳԼՈՒԽ Ը.

ԵՂԵՐԵՐԳՈՒԹԻՒՆ (élegie)



## ՅՕԴՈՒԱԾ Ա.

ՅԱՂԱԳՍ ԵՂԵՐԵՐԳՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ

1. - Եւբրեբի-բի-ն ցաւոց հառաչանքէն  
ծնաւ, բայց յետոյ ուրախութեան և գորո-  
վական զգացմանց ալ ընկերացաւ :

2. - Սաղմոսին եղբրերգութիւնները շատ  
սքանչելի են և այս տեսակ գրուածոց  
տիպար :

Ահաւասիկ գեղեցիկ օրինակ մը հայ  
բանաստեղծէ մը :

## ՕՏԱՐՈՒՀԻ ԵՒ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴ

Օտարուհին ինձ ասաց . հէ՞ր ես լալիս , ար-  
ցունքը  
Հեղեղի պէս ի՞նչու են ոռոգում քու աչ-  
կունքը .  
Քու տրտմութեան ճար ունիմ , կը փարա-  
տեմ քու տարտը ,  
Թըշիս վըրայ չե՞ս տեսնում փայլած շուշան  
ու վարդը :

Զուր մի ջանար , սիրական , իմ դարդը չես  
 փարատել ,  
 Հողիս հոգսից , ցաւերից չես փրկել , չես  
 աղատել .  
 Թող իմ աչքից հեղեղայ արտասունքի աղբիւրը  
 Արտասուքն է լըւանում սըրտի խոր խոր  
 ցաւերը :  
 Օտարուհին ինձ ասաց . Տես հասիլ է գա-  
 րունքը ,  
 Դաշտերի մէջ բացուիլ են հազարերանգ  
 ծաղկունքը .  
 Իջնենք դաշտը օդ քաշենք , ծաղկունք քաղէ  
 փունջ կապէ ,  
 Հայրենիքիդ կարօտն առ , որ թախիժ քեզ  
 չի տանջէ :  
 Հայրենիքիս կարօտը ձեր դաշտերից չեմ  
 առնիլ ,  
 Սառ հիւսիսում՝ երկինքը հայաստանի չեմ  
 տեսնել .  
 Ուր բիւր պատիկ ցոլուն են արեգակի շո-  
 դերը ,  
 Կենսատու է անձրեւը , մեղրածին են ձորերը :  
 Օտարուհին ինձ ասաց . Մոռացիր քու հայ-  
 րենիք ,  
 Քո հայրենին այն տեղ է ուր սիրում են քեզ  
 մարդիկ .  
 Տես արեւին , նա պայծառ չէ՞ շողջողում  
 հիւսիսում :

Հայաստանը կորել է, խեղ, դու ցընորք ես  
 ուզում ։  
 Սուտ են, սուտ քո զըրոյցքը, Հայաստանը չէ  
 կորած ։  
 Նա այն տեղ է՝ ուր Եփրատ ու Տիգրիսն են  
 գրկուած ։  
 Ուր երասխը մըրմունջով յուզած ջուրն է գը-  
 լորում ։  
 Ուր Մասիսի գագաթն ամպերից ցած է նա-  
 յում ։



## ԳԼՈՒԽ Թ.

ԹՈՒՌՅԻԿ ԲԱՆԱՍՏԵՂՆՈՒԹԻՒՆԷՔ

(poésies fugitives)

### ՅՕԴՈՒԱՄ Ա.

1. — Թռուցիկ բանաստեղծութիւնք կը  
 կոչուին այն փոքրիկ գրուածներ՝ որոնց  
 նպատակն է վայրիկ մը հաճելի ըլլալ՝ ա-  
 ւանց մեծ տպաւորութիւն թողելու ։ Ա-  
 սոնք աւելի գրագիտական խաղեր կամ  
 զբօսանքներ են ։ Սակայն ասոնց մէջ աչ  
 մասնաւոր տաղանդ պէտք է ։

2. - Թռուցիկ բանաստեղծութիւնք կը պարունակեն հանելուկ, սրբանշնորհ, հորհանելուկ, և իր-խճան-կանք :

1. - ՀԱՆՆԵԼՈՒԿ :

1. - Հանելուկն է առարկայները նկարագրել կամ սահմանել այնպիսի ասացուածներով որ զատ զատ նկատուած ատեն՝ մթին ու անորոշ ըլլան, բայց երբ մէկտեղ հաւաքուին՝ իրենց առարկային ամբողջութիւնը դիւրաւ մակարերել տան մտքին :

2. - Հանելուկը՝ ճարտասանական սահմանին պէս՝ պէտք է որ այնչափ որոշ յատկութիւն ունենայ՝ որ ուրիշ առարկայի մը չպատշաճի :

3. - Հանելուկը պէտք չէ որ շատ յըստակ ըլլայ՝ քանզի միտքը հաճոյք մը չըդդար այս տեսակ հանելուկ լուծելէ : Այսպէս է հետեւեալը .

Զկամ՝ և կամ .

Քաղտնի տեղեր կը բնակիմ ,

Խմաստունն զիս կը ճանչէ :

Իսկ յիմարն յինէն փախչի ,

Զիս մէկը չտեսներ և ոչ կը լսէ :

Անողորմ օրէնք բաղդին .

Որ զիս գըրաւ յայսմ աշխարհի ,

Հրամայէ ինձ մեռնիլ,  
 Երբ մէկն իմ վրաս սկսի խօսիլ,  
 Հոս շատ դիւրաւ կ'իմացուի  
 Որ լուծիւնն է այս :

Կ. - Աւելորդ կը համարիմք հ-ը--նէկ-ն,  
 Ի-ն-ն-ն-ն-ն բանաստեղծութեանց և -ը-ն-  
 ն-ը-ն վրայ մասնաւորապէս խօսիլը,  
 վասն զի ասոնք պարագայներէ կախում  
 ունին՝ քան թէ մասնաւոր կանոններէ :

Միայն բաւ կը համարիմք ըսել որ բա-  
 նաստեղծը կը պարտաւորի յամենայնի բը-  
 նութեան հետեւիլ, և չափազանցութենէ  
 խորշիլ :



# ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՐՈՐԴ

ՀՈՒՆՏՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՃԱՐՏԱՐԻՕՍՈՒԹԻՒՆ



## ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

1. - ՅԱՂԱԳՍ ՃԱՐՏԱՐԻՕՍՈՒԹԵԱՆ  
ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ

1. - Ճարտասանութիւնն է՝ ըստ հռե-  
տորից՝ ուրիշ հարկեր : Այս սահմանը բա-  
ւական ընդարձակ չէ՝ եթէ փաստաբանու-  
թեան և բեմախօսութեան շրջանակէն  
դուրս ելնենք :

Յիրաւի , եթէ ճարտասանութիւնը հա-  
մոզելու արհեստ մ'է , ողբերգութիւնք և  
երգերերգութիւնք ինչ են . ինչպէս ինչ  
նկարագրի . բայց երբ մենք արդէն տեղեկու-  
թիւն ունինք իփիգինեայ տխուր բաղդին ,  
Անտրոմաքայ սրտակէզ հառաչանացը և  
ապերջանկութեանը , Գոնտէի քաջութեանը  
և Զայիրի ողորմկացութեանը , ալ ինչ հարկ  
մեզ Ռասինի , վոլթէրի և Պօսիւէի հան-  
ճարը , վասն զի իրենց նկարագրած գիւ-  
ցազանց և տիկնանց վիճակին վրայ մենք  
լաւ համոզում և տեղեկութիւն ունինք :

Այս համառօտ բացատրութենէս յայտնի կիմացուի որ այս տեսակ ճարտասանութիւնը ոչ այնչափ համողման՝ որչափ ներշնչման և գորովանաց պէտք ունի :

2. - Ճարտասանութիւնը կը տիրէ այն ամեն գրուածոց մէջ՝ որ մեր միտքը , հոգին և սիրտը կը յափշտակեն , զմեզ կըսքանչացնեն , միով բանիւ զմեզ վսեմին և գեղեցկին սահմաններուն կը փոխադրեն :

3. - Ճարտասանութիւնը խօսքէն անմեկին չէ : Արտասօւքը , աղաչաւոր գէմքը , գլխալիր ակնարկ մը , լռութիւնն իսկ անոր աղբիւրներն են : Այսպէս կ'ըսուի լըց , բրտաց , շրտաց ճարտասանութիւն : Բայց որովհետեւ խօսքն է ճարտասանութեան առաջին գործիքը՝ հետեւաբար անոր սահմանը խօսքին ազդեցութեանը վրայ կը հիմնուի :

4. - Ուրեմն՝ ճարտասանութիւնը իտիպիցս յոյս , յարիւն և յարիւն ինչ որ ինչ կ'ընէ : Մտաց վրայ՝ նա կըթելու տաղանդն է , սրտի վրայ՝ շարժելու և գորովելու , իսկ կամաց վրայ՝ յափշտակելու տաղանդն է : Այս երեք տաղանդէն կը

ծագի կատարելու պէս համոզելու արհեստը և տաղանդը :

Յ. - Ճարտասանութիւնը երկու ընդհանուր տեսակաց կը բաժնուի . ինչ կամ բերանայի և գրաստ գործունէն :

Խօսուած ճարտասանութեան մէջ կը բովանդակին՝ 1. որեւի՞ն կամ Կարգաւորութիւն , 2. շինարարութիւն , 3. գործարարութիւն , 4. սրբաշուն ճարտասանութիւն :

Գրաւոր ճարտասանութիւնը կը բովանդակէ . 1. գիշտութիւն կամ Բարոյութիւն ճարտասանութիւն , 2. գործութիւն , 3. Բանասերութիւն , 4. Երկարութիւն ճարտասանութիւն :

## ՅՕԴՈՒԱԾ Ա .

### 2. - ՅԱՂԱԳՍ ՀՌԵՏՈՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ

1. - Հռետորութիւնը ճարտար խօսելու կամ գրելու արհեստին վրայ կանոններ պարունակող հաւաքածոյ գրուած մ'է :

2. - Հռետորութեան նպատակն է բանիւ կամ գրաւոր ճարտարխօսութիւնը զարգացնել , անոր առաջնորդել և զայն կանոնաւորել :



3. - Հռետորութիւնը ճարտասանութենէն կը տարբերի՝ ինչպէս տեսականը գործնականէն : Ճարտարխօսութիւնը բնածին տաղանդ մը կամ պարզեւ մ'է . իսկ հռետորութիւնը՝ ուսման և հետազօտութեան արգասիք . մին մեթօտ կը գծէ , միւսը անոր կը հետեւի , մին ազդիւրը կը ցուցնէ՝ միւսը անոր կը գիմէ , մին հնարքներ կը ցուցնէ՝ միւսը զանոնք ի գործ կը դնէ :

4. - Այսպէս ալ ճարտարախօս մարդը վայելչախօս մարդէն կը տարբերի . սահուն , յստակ , վայելուչ ոճ ունեցողը վայելչախօս է , եռանդուն՝ համոզիչ և յափշտակիչ ոճ ունեցողը ճարտասան է :

5. - Թէպէտ ճարտասանութիւնը բնատուր ձիրք մ'է , սակայն կանոնաց կը կարօտի , վասն զի տաղանդը որչափ մեծ ըլլայ՝ դարձեալ սխալմանց ենթակայ է . կանոնը իրեն կառաջնորդէ և չթողուր որ ճաշակի և դատման դէմ գործէ :



## ՀՌԵՏՈՐՈՒԹԻՒՆ

## ՅՕԴՈՒԱԾ Գ.

## ԲԱԺԱՆՈՒՄՆ ՀՌԵՏՈՐՈՒԹԵԱՆ

Որչափ պաշտօն որ ունի ճարտարա-  
խօսը՝ հռետորութիւնն ալ այնչափ մա-  
տերու կը բաժնուի: Արդ ճարտարախօսը  
նախ պարտական է դտնել ըսելիք իրերը,  
ասոր կ'ըսուի գիւտ չիւտ, երկրորդ  
զաննք դասաւորելու կարգը՝ ասոր ալ  
գիւտ-գիւտ-նիւն կ'ըսուի, երրորդ՝  
զաննք ըսելու կերպը այս է լայն-  
լայն-լայն-լայն-լայն, վեր-  
ջապէս զաննք բացատրելու ատեն  
պէտք եղած յետէ այսինքն է գիւտ-  
լայն-լայն-լայն-լայն:

## ԳԼՈՒԽ Ա.

## ԳԻՒՏ ԿԱՄ ՍՏԵՂԾՈՒՄՆ

## ՅՕԴՈՒԱԾ Ա.

1. - ՅԱՂԱԳՍ ՍՏԵՂԾՄԱՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ
1. - Ստեղծումը համոզման և գորովա-

նաց պէտք եղած միջոցները գտնելու մէջ կը կայանայ :

2. - Երեք միջոց կայ համոզելու . Կե՛նէ և-ճե՛նէ շու՛ւ և շո՛քե՛ն :

3. կրթելու համար ճշմարտութիւնը , հաճելի ըլլալու համար ունկնդրաց վրաստահութիւն և յարգը , իսկ սիրտ շարժելու համար առաջադրեալ նպատակին յարմար զգացումներ ներշնչել պէտք է :

Իսկ դպրոցական կամ՝ դասական լեզուով՝ Կե-ն-է-ն-է-ն-է-ն-է-ն կամ Է-ր-է-ր կը կրթեն , Բ-ր-է հաճելի կըլլան , Կ-ե-ր-է կը շարժեն կամ կը յուզեն :

### 607-ՈՒԱՄ Բ.

2. - ՁԵՌՆԱՐԿՈՒԹԻՒՆՔ ԿԱՄ ՓԱՍՏՔ

1. - Ձե-ն-է-ն-է-ն-է-ն կամ Է-ր-է-ր կըսուին այն պատճառները զորս ճարտարախօսը յառաջ կը բերէ իւր ըսածին ճշմարտութիւնը ապացուցանելու համար :

2. - Փաստերը և զանոնք ընդլայնող իմաստասիրութիւնը ճարտասանական գրբուածին հիմն են :

3. - Հռետորք փաստերը երկու կարգի կը վերածեն՝ ըստ բնութեան և ըստ տեղ-

ւոյ : այսինքն՝ բռն յեռնորդութիւնն և Կրիստոսի  
 յեռնորդութեանց կամ հարստի Կրիստոսի :

Կ. - Բուն ձեռնարկութիւնները այնպիսի  
 սի ձեւեր են՝ որոնցմով ճարտարախօսը  
 զանազան նախադասութիւններ ի մի կը  
 ժողովէ և անոնցմէ հետեւութիւն մը կը  
 հանէ : Երեք գլխաւոր ձեռնարկութիւնք  
 կան՝ հարստութիւնն, շքութեամբ յեռնորդ և  
 երկնայրբանութիւնն :

Ծ. - Հարստութեանը երեք առաջարկ-  
 կութիւններէ բաղկացած նախադասութիւն  
 մ'է՝ որոնց վերջինը առաջի երկուքին հե-  
 տեւութիւնն է :

Օրինակ .

Պետք է յիշել յոյս զի Երկնային կայսր .

Արդ՝ արտօնութիւնն զի Երկնային կայսր .

Ուրեմն պետք է յիշել արտօնութեանը :

Առջի երկու նախադասութիւնները ո-  
 ռոնց մին զնոցն և երկրորդը զնոցն կըս-  
 ուի՝ երկուքը մէկէն առնելով նիւթնորդ  
 կը կաշուին, իսկ վերջինը՝ երկնայնութիւնն կամ  
 հետեւութիւնն :

Զ. - Չքութեամբ յեռնորդ հաւաքաբանու-  
 թիւն մ'է՝ որուն մէկ նախընթացը յայտնի  
 չդրուելով զիւրաւ կը մակաբերուի ինչպէս :

Առ֊գին֊նի֊նը շէշ երջ֊նիի կընէ . ս֊րե՞ծ  
 զեթ է յիբէլ առ֊գին֊նի֊նը :

7. - Իմաստասիրութիւնը գրական գործոց մէջ հաւաքաբանութեան չոր և ցամաք ձեւով պէտք չէ որ ներկայանայ . հարտարախօսը պարտի զայն այնպէս ըսքօղել, գեղեցկացնել՝ որ առանց իր ոյժը կորսնցնելու հաճելի կերպով ներկայանայ :

Այսպէս կըսուի՝

Սիրէ առաքինութիւնը՝ եթէ կուզես երջանիկ ըլլալ .

կամ աւելի աշխուժով :

Կուզես երջանիկ ըլլալ և չես սիրեր առաքինութիւնը :

Չկայ մտածութիւն մը որ հաւաքաբանութեան չվերածուի : Օրինակ մը ըստ գիւպաց :

Որ ամեհի կոհակաց կատաղութեան գընէ սանձ՝

Եւ ըզդարանըս շարին նա խորտակէ՝ իմս Ապնէր .

Յաւէտ նորին սուրբ կամաց պատկառ կացեալ մըտադիւր :

Ինըմանէ երկնչիմ, չիք այլ ուստիք ինչ երկիւղ :

Այս իմաստը իր զարդերէն մերկացնելով՝ կուենենանք՝

Ես իմ բոլոր վստահութիւնս Աստուծոյ վրայ կը դնեմ՝ որ կարող է շարաց դաւաճանութիւնները խորտակել, հետեւաբար անոնցմէ վախճալու տեղի չունիմ։

Այս իմաստը հետեւեալ հաւաքարանութեան կը պատասխանէ՝

Այն որ իր բոլոր վստահութիւնը աստուծոյ վրայ կը դնէ՝ չպարտիր շարերէն վախճալ։

Արդ՝ ես իմ վստահութիւնս աստուծոյ վրայ կը դնեմ՝

Ուրեմն պէտք չէ որ շարերէն վախճամ։

Ուղիղ դատողութիւն և իմաստասիրութիւն ունենալու համար՝ պէտք է այս տեսակ վարժութիւնները յաճախ կրկնել։

Տ. - Երկուստեք ձեր կու հաւաքարանութեանց զուգորդութիւնն է՝ որոնցմէ փախուստ տալն անհնարին է, քանզի երկուքն ալ մի եւ նոյն հետեւութիւնն ունին։ Զօրապետ մը անզգուշութեամբ իր բանակետղը թշնամւոյն ձեռք ձգող պահապանի մը կըսէր։

Կամ տեղը կեցած էիր՝ կամ ոչ,

Եթէ հոն էիր՝ մատնութիւն ըրիր։

Եթէ հոն չէիր՝ պատերազմական հրահան-  
 քի դէմ գործեցիր .  
 Ուրեմն մահապարտ ես :

9. - Չեռնարկութիւնները զիրենք ար-  
 տադրող աղբիւրին նկատմամբ երկուքի կը  
 բաժնուին . ոմանք նոյն իսկ նիւթէն կը  
 բղխին՝ ուստի կը կոչուին ներքին , այլք նիւ-  
 թէն դուրս գանուելով՝ արտին կը կոչուին :

10. - Հարկ տուողները կամ յիշատակարանները որոնց-  
 մէ նիւթի մը վերաբերեալ ձեռնարկու-  
 թիւնները կը քաղուին :

Արդ , որեւիցէ նիւթ մը երկու կերպով  
 կրնանք մեր երեւակայութեան առջեւ  
 պատկերացնել՝ ներքին և արտաքին դիմօք .  
 Ասկէ երկու տեսակ տեղիք յառաջ կուգան՝  
 ներքին հարկ տուողները կամ անոնք որ նիւթէն  
 առնուած են՝ և արտին հարկ տուողները կամ  
 անոնք՝ որ դրսէն կը քաղուին :

11. - Ներքին հասարակ տեղեաց գըլ-  
 խաւորներն են՝ սահման , ընդհանրացում , ընդ-  
 դրոշմները եւ այլն . (որոց վրայ խօսած եմք  
 տրամաբանութեան և ոճի մասանց մէջ) ,  
 և արտաքիններն են՝ օրէնք , երդում , վճար ,  
 եւ այլն :



ՅՕԴՈՒԱՆԻ Գ.

Յ. - ԲԱՐՔ

Հողիդ և բարբդ գործոյդ մէջ սլարկերանալով սկսեք է որ քու վրայդ մի միայն ազնիւ գաղափարներ զարթուցանեն :

ՊՈՒԱԼՈՅ

1. - Ճարտարախօսը սլարտի լուսամիտ և առաքինի ըլլալ . նախնիք ալ այսպէս կը խորհէին ըսելով՝

Ճորտութեան հետեւեալ որոնքն ինչ ճորտութեան հետեւեալ : Այս սահմանը սքանչելի կերպով մեկնուած և ընդլայնուած է ի Ֆենելոնէ . ճորտութեան որոնքն ճորտութեան կըսէ : Եւ երբ ինչ ճորտութեան և ճորտութեան ճորտութեան և ճորտութեան հետեւեալ ճորտութեան կը ճորտութեան :

2. - Ճորտութեան հետեւ կըսուին անոնք որ ինչն ճորտութեան հետեւեալ են . սակայն այս տարբերութիւնը միայն առ երեւոյթ է : Վասն զի երբ ճարտարախօսը իր վրայ չգտնուած առաքինութիւնք նմանութեամբ միայն ցուցնել ուզէ՝ կեղծաւոր և խաբերայ է . ասկէ զատ միշտ ինքզինքը կը յայտնէ վաղ կամ անագան :

Գրուածը սրտի յոռութիւններէն կը թաւ-  
նաւորի կըսէ զՈՒԱՆՈՅ :

Յ. - Ճարտարախօսական բարքն է՝ ջա-  
նալ ունկնդրաց վարկը և համարումը յին-  
քըն գրաւել՝ իւր վրայ լաւ գաղափար  
ազդելով անոնց :

Կ. - Ճառի մը կամ բանախօսութեան  
մը մէջ չորս գլխաւոր բարոյական յատ-  
կութիւնք պէտք են՝ այսինքն - զը-  
թիւն (probité), գոհութիւն, հարգանք  
և ինքնասիրտ :

Յ. - Թէ հին և թէ նոր երեւելի հեղի-  
նակները այս յատկութիւններով անմահա-  
ցած են : Ռասինի Բրիտանիքոս ողբերգու-  
թեանը մէջ՝ Պիւրոս կուզէ համոզել զՆե-  
րոն՝ որ Բրիտանիքոս թունաւորելու խոր-  
հրդէն հրաժարի . այն մէկ քանի տողերը  
իմաստուն քաղաքագիտութեան և առա-  
քինութեան հայելի են : Տեսէք ինչ քաղ-  
ցըր և ամոքախառն խօսքերով Պիւրոս  
կուզէ շարժել Ներոնի սիրտը :

Ահ տէր իմ, միթէ քու առաջին տարինե-  
րուդ բարեյաջող փորձառութիւնը ատելի կընէ  
քեզ անմեղութիւնդ : Գիտե՛ս թէ ի՞նչ հաճոյք-

ներով սլակուած էին անոնք, որպիսի խաղաղութեամբ, ով երկինք, զանոնք անցուցիր դու:

Քանի՞ քաղցր է խորհել և ինքնիրեն ըսել, այս վայրկենիս ամեն տեղ զիս կը սիրեն և կօրհնեն. ժողովուրդը իմ անունէս չահարեկեր, երկինք իմ անունս անոնց արտասուածառն մրմունջներուն մէջէն շքսեր. իրենց թաղծալից ատելութիւնը խոյս չտար ինէ, ամեն կողմէ կը տեսնեմ որ սրտերը իմ ճանապարհացս անցքերուն վրայ կը սլանան:

Ստոյգ է որ այս զգացումները իներքս Պիւրհոսի նկարուած չեն՝ սակայն զանոնք քացատրող հեղինակը՝ անմահն Ռասին կը ցուցնէ որ ի ներքս յինքն տպաւորուած ունի:

6. - Ճարտարախօսին առաքինութիւնը միայն բաւական չէ, այլ պէտք է որ ինքը ունկնդրաց բարուց վրայ լաւ հմտութիւն ունենայ՝ որպէս զի իւր խօսքերն ըստ այնմ յարմարցնէ: Բարք՝ այս նկատմամբ՝ երեք են. 1. դիսպոզիցիոն (disposition), 2. հմտութիւն, և 3. քաղցր:

7. - Յօժարութեանց տարբերութենէն յառաջ կուգան դատելու և զգալու տարբերութիւնները, Ռասսի մտքերը համոզելու համար՝ ճարտարախօսը պարտաւոր է

Ժողովրդեան կամ ունկնդրաց յօժարութիւնները քննել և ըստ այնմ իւր լեզուն գործածել :

Տ. — Դարձեալ ճարտարախօսը պարտական է տարիքները ուշադրութեան առնուլ՝ եթէ կուզէ բնական և ազդու կերպով սրտերը շարժել : Երիտասարդ մը և ծերունի մը միեւնոյն տպաւորութիւնները չեն կրնար ունենալ : Մենտոր՝ ուղեւով Տելեմաքայ միտքը շրջել, որպէս զի թողու հայխպսեայ կզզին՝ նախ կը բացատրէ կրից հնարիմացութիւնը և խաբէութիւնը՝ այսպէս .

Ահա արգասիք կոյր կրից, մարդիկ հանճարով հետամուտ կըլլան դտնելու այն բոլոր պատճառաբանութիւնները՝ որոնք նպաստաւոր են կրից, և աչքերնին կը դարձընեն չտեսնելու համար այն փաստերը՝ որ զանոնք կը դատապարտեն : Արծես թէ ինքզինքնին խաբելու և իրենց խղճի խայթը խեղդելու միայն կը գործածեն իրենց հնարագիտութիւնը : Մոռցա՞ր ինչ որ ըրին դիք գքեզ ի հայրենիս վերադարցնելու համար : Ի՞նչպէս ելար Սիկիլիայէն, Եգիպտոսի մէջ կրած տառապանքներըդ յանկարծ իյաջողութիւն չփոխարկուեցան միթէ : Ո՞ր անծանօթ ձեռքը զքեզ քաչեց հա-

նեց այն վտանգներէն որ գլխոյդ կսպառնային Տիւրու քաղաքին մէջ : Այսչափ սքանչելիքներէն յետոյ կը մտնա՞ս դարձեալ քու նսեհդ , Բայց ի՞նչ կըսեմ . դու անարժան ես անոր : Իսկ ես՝ կը մեկնիմ , և լաւ գիտեմ այս կողմէն ելնելու միջոցը :

Յետոյ իշխանական գէմք առնելով այնպիսի կշտամբանքներ կուղղէ Տելեմաքայ՝ որք բարեկիրթ երիտասարդի մը վըրայ լաւ արդիւնք յառաջ կը բերեն , սակայն չափահաս մարդու մը զայրոյթը կըրնան շարժել . այնուհետեւ կը վերջացնէ իր խրատը Ողեսեսայ օրինակաւը զնա յորդորելով :

Վա՛տ որդի այնչափ իմաստուն և մեծանձն հօր , հոս անպատիւ և անփառունակ կեանք մը վարէ կանանց մէջ . ըրէ , ինչ որ քու հայրդ իրեն անարժան համարեց :

Այս ճառը անփորձ և առաջնորդութեան կարօտ երիտասարդի մը խիստ յարմար է :

Ուրիշ տեղ նոյն Մենտոր ի խաղաղութիւն յորդորելով զՆեստոր , այսպէս կը խօսի .

Ո՛վ Նեստոր , իմաստուն Նեստոր , դու քաջ գիտես թէ պատերազմը ո՞րչափ աղետաբեր է

անոնց իսկ՝ որք զանի արդարութեամբ և գից  
սլաշտպանութեամբ մղել կը կարծեն :

Այս լեզուն միայն կրնար գործածել  
Նեստորի պէս՝ ալեւոր և փորձառու մար-  
դու մը հետ խօսած ժամանակ :

9. - Դարձեալ՝ շար, խստասիրտ, կամ  
առաքինի և բարեղաւ մարդը մի եւ նոյն  
սլատճառաբանութեամբ և լեզուով ի կա-  
րեկցութիւն և ի գութ շենք շարժիր, բնա-  
ւորութեան տարբերութիւնը տարբեր աս-  
տիճանաւ և ուժով փաստեր կը պահանջէ :

10. - Պարզեման կըսուի ամեն խօսքը  
և շարժուած իւր յարմար տեղը ի գործ  
դնելու արհեստին : Ասկէ կը հետեւի որ  
ճարտարանունն որպէս զազափարներ-  
ըր, զգացումները, լեզուն, գործքը, լը-  
ռութիւնն իսկ կատարեալ կերպով յար-  
մարցնել նիւթին, պարագայներուն և ուն-  
կընդրաց :

11. - Ճարտասանական սլատճառու-  
թիւնք կը վերաբերին՝ կամ ունկնդրաց,  
կամ ճարտարախօսին, կամ անոնց՝ որոնց  
վրայ կը խօսուի, և կամ նոյն իսկ նիւթին :

12. - Ճարտարանունն որպէս զազափարներ-  
այն խնամքը՝ զոր ճարտարախօսը ի գործ

գնելու պարտական է իր ունկնդրաց՝ կամ իրեն նիւթ եղող անձանց պատիւը, վարկը շաղարտելու և անոնց անձնական սիրոյն չդպչելու համար: Ճարտարախօսը երբէք իրաւունք չունի ուրիշը անպատուելու. խօսքը ճշմարտութեան համար պէտք է գործածել, սակայն ճշմարտութիւնն ալ այնպիսի ձեւերով յայտնելու է՝ որ ոչ թէ կորսնցնէ զմարդիկ՝ այլ զանոնք շահէ և գրաւէ:

Պուրտալու նշանաւոր ճարտարախօսը այս կանոնը գերազանց կերպով ի գործ դրած է՝ Պալատականաց հետ խօսած ատեն.

Ձեր աստիճանը որչափ կորոչէ, կը զատէ զձեզ հասարակ ժողովրդէն՝ այնչափ առաւել պարտիք անոր մօտենալ. որչափ պարտաւորէք եթէ ներելի է ըսել՝ մարդանալ՝ այնչափ առաւել պարտիք քաղցր, չափաւոր և գթած ըլլալ:

Պուրտալուի ըսածը անուրանալի ճշմարտութիւն մ'էր. սակայն իրենց վառօք և պատուով արբեցեալ արքունականաց կրնար ծանր թուիլ. Բայց կրնային անոնք գանգատել կամ փոքրիկ տրտունջ մը իսկ արտաբերել ճարտարախօսին հե-

տեւեալ ճարտար և ողորջիչ խօսքերը լսելէ ետքը .

Երբ այս բարոյական սկզբանը վրայ կը պնդեմ, երբ բեմին սրբազան ազատութեամբը կընեմ զայս՝ դուք չէք կրնար զիս դատապարտեալ : Ժողովրդին հետ խօսած ատենս՝ իմ պաշտօնս կստիպէ զիս՝ անոնց առ ձեզ ունենալիք պարտուսլատչաճ յարգանքը և հնազանդութիւնը անոնց ուսուցանել, բայց որովհետեւ հոս կը խօսիմ, որովհետեւ աւագանւոյ կը խօսիմ, պարտական եմ իրենց ըսել ինչ պարտք որ իրենք ալ ունին առ ժողովուրդն :

13. - Երբ դառն, զկծեցուցիչ, դժընգակ պատկերներ ներկայանան ճարտարախօսին նիւթոյն մէջ՝ պէտք է անոնց վրայ ճարտար քօղ մը ծածկել և մեղմացնել զանոնք :

Պօսիւէ՝ Անգղիոյ թագուհւոյն վրայ խօսած դամբանականին մէջ՝ չուզեր բացարձակ կերպով ըսել որ Շարլը Ա. գլխատութեամբ մեռաւ . իր բարեկրթութիւնը չը ներեր իրեն՝ վիրաւորել յիշեալ արքային զաւակներուն սիրտը՝ որոնք ներկայ էին, բայց տեսէք ինչ դարձուածով, ո՛րպիսի ճարտարութեամբ դարձեալ կիմացնէ իր միտքը :



Ո՞վ կրնար բացատրել իւր իրաւացի վիշտե-  
րը (Անգղիոյ թագուհւոյն), ո՞վ կրնար սկստմել  
իր կակիծները, ո՞չ պարոնայք, Երեմիաս ինք-  
նին՝ որ միայն կարող է մեծ աղէտները գուժել  
իր ողբանուագ ձայնովը՝ բաւական պիտի չըլ-  
լար անոր ցաւերը բացատրելու: Անիկա կը գոչէ  
այս մարգարէին հետ. «տես տէր զվիշտս իմ,  
թշնամիք իմ զօրացան՝ և ի կորուստ մասնեցան  
մանկունք իմ. արկ զձեռն իւր սրբապիղծ ամ-  
բարիչան յոր սիրելի էր ինձ քան զկեանս իմ,  
թողէ՛ք ինձ ողբալ դառնապէս և մի յուսալք  
մխիթարել զիս: Սուր շողաց արտաքուստ և  
եհար զիս յոգի »:

Այս մարգարէին խօսքերը յարմար  
կերպով թագուհւոյն բերանը դնել և ա-  
նով մեծ աղէտ մը, Շարլի գլխատու մը  
յիշեցնել այսչափ ճարտարութեամբ, ասի  
ամեն հանճարի գործ չէ:

## ՅՕԴՈՒԱԾ Դ.

### 4. - ԿԻՐՔ

Բոլոր գրուած իգ մէջ յուզեալ կիրքը պէտք  
է երթայ որոնէ սիրտը, զայն գտնէ և ջեռու-  
ցանէ:

1. - Կէրտ կըսուին, ըստ փիլիսոփայից, ոգւոյն այն եռանդուն շարժումները՝ որ զմեզ առարկայի մը վրայ կը հրապուրեն կամ զմեզ անկէ կը խորշեցնեն :

2. - Կըքերը ճարտարախօսութեան յաղթանակին առաջին միջոցներն են : Ով որ պատեհ առթիւ զանոնք գրգռել գիտէ՝ նա կը տիրէ մտաց վրայ, նա է բուն և մեծ ճարտարախօսը :

3. - Ամեն կըքերը երկու աղբիւրներէ կը բղխին՝ որք են . - երբ և - քեզ-նիւն : Ասոնք իրենց առարկային նկատմամբ տարբեր անուն կառնուն և կըսուին՝ գր-ը, գր-ձար-ն, եր-ի-ք-ի-ք-նիւն, շ-ր-ո-ւ-մ, եւ այլն . կամ՝ հ-ի-կ-նիւն, բ-ր-ի-նիւն, վրէժնիւն-ը, -նիւն, -նիւն, երկիւն եւ այլն :

4. - Սէրը կը գրգռի առարկայն հաճելի և օգտակար նկարագրելով . իսկ ատելութիւնը՝ զայն յոռի, փնասակար և աղետարներ ցուցնելով : Սակայն ասիկա միայն բաւական չէ . կիրք շարժելու գլխաւոր կանոնը և գաղտնիքն է՝ ինքնին զգածուիլ այն կրիւք զորս կուզենք ուրիշին վրայ յուզել :

Վշտաց մէջ պէտք է ընկճեալ դէմք ցուցնես -  
 եթէ կուզես զիս լացնել՝ նախ դու լաց :

ՊՈՒԱԼՈՅ

Ծ. - Կրից զանազան շարժումները լա-  
 հասկընալու համար՝ պէտք է մարդկային  
 սրտին վրայ աղէկ գիտութիւն ունենալ :  
 Այս գիտութեան հետ պէտք է ճարտա-  
 րախօսք սա երեք հանգամանքներն ալ ու-  
 նենայ՝ որ անհրաժեշտ են . երե--կոյ--նի--ն ,  
 չէ--յ--ան--նի--ն , և ը--դ--դ--նի--ն (discernement) :

Ե. - Երե--կոյ--նի--ն հոգւոյն այն կա-  
 թողութիւնն է՝ որ առարկայները իրենց  
 կարեւոր պարագաներովը կը պատկերացնէ  
 մտաց . առանց երեւակայութեան գեղե-  
 ցիկ ստեղծում և նկարագրութիւն ընելն  
 անհնարին է :

Պատանին Տելեմաք խիստ աշխոյժ երե-  
 ւակայութեամբ կը նկարագրէ Պոքորիսի  
 ահռելի գլուխը .

Բոլոր կենացս մէջ պիտի յիշեմ այն գլուխը  
 որ արեան մէջ կը լողար , այն մարած և գոց-  
 ուած աչքերը , այն գեղնած և այլանդակ դէմ-  
 քը , այն կիսաբաց բերանը՝ որ կարծես սկըս-  
 ուած խօսքերը տակաւին կուզէր լինցնել , այն  
 սէգ և կրակոտ կերպարանքը՝ զոր մահն իսկ

չէր կրցած եղծել, բոլոր կենացս մէջ ասիկա  
աչացս առջեւ սլտի նկարուի :

7. - Զ Գրքի Վերջին Հոգւոյն այն կարո-  
ղութիւնն է՝ որ դիւրաւ կ'ընդունի ուրա-  
խութեան, տրտմութեան, գթութեան  
եւ այլն տպաւորութիւնները :

Ով որ զգայուն չէ՝ ճարտարախօս կամ  
գրագէտ չկրնար ըլլալ : Ստոյգ է՝ որ հա-  
մոզելն աւելի տրամաբանութեան ուժոյն  
կը կարօտի . սակայն առանց զգայնու-  
թեան խորհրդածութիւնը՝ կը համոզէ ա-  
ռանց կրից վրայ ամբողջապէս տիրելու .  
միով բանիւ սիրտը ճարտարախօսութեան  
ազբիւրն է : Նեստոր կողբայ իր որդին ոչ  
Ատրաստէն սպաննուած է :

Վա՛յ ինձ՝ որ հայր եղայ և այսչափ երկաբ  
տալեցայ . աւա՛ղ, անդու թ՛ ճակատագիրք .  
ինչո՞ւ իմ կեանքս չկարճեցիր՝ կամ Գալիտոն  
վարագը որսացած ատենս, կամ Տրոյիոյ նախ-  
կին տաշարմանը մէջ . փառօք և առանց դառ-  
նութեան կը մեռնէի յայնժամ : Այժմ՝ ցաւօք  
ընկճեալ, արհամարհ, նկուն ծերութիւն մը կան-  
ցունեմ, միայն վշտաց համար կասլիմ, միայն  
տխրութեան համար կզգամ : Ո՛վ որդեակ, սի-  
րեցեալ Պիսիստրատ, երբ Անտիլք եղբայրդ  
կորուսի՝ գրեզ ունէի ինձ մխիթար . դու ոչ ևւս

ես՝ չիք ինձ մխիթարութիւն, ինձ համար ամենայն ինչ լինցաւ : Յոյսը՝ մարդկային վշտաց միակ ամօքարարն այլ ինձ համար չէ : Անտեւ լո՛ք, Պիսիստրատ, սիրուն որդեակք, կարծես թէ այսօր զձեզ երկուքդ կորուսի : միոյն մահը նորէն կը բանայ այն կարեւէր խոցը զոր միւսը բացած էր սրտիս վրայ . ալ զձեզ չսլիտի տեսնեմ . ո՞վ պիտի գոցէ իմ աչքերս . ո՞վ պիտի ժողովէ իմ աճիւններս : Սիրելիդ իմ Պիսիստրատ, դու մեռար քու եղբորդ պէս իբրեւ քաջ մարդ . միայն ես չեմ կրնար մեռնիլ :

Հայրական զգացում, որդիական ոէր ունեցող մարդ մը չկրնար առանց արտասուքի կարդալ այս տողերը :

Տ. կրից գործածութեան մէջ՝ Լուսինն է քաջ ճանչել ժամանակը, տեղը, անձինք և ըստ այնմ իւր լեզուն գործածել :

Երբ նիւթը սրտաշարժ ձեւեր պահանջէ՝ ճարտարախօսը կը պարտաւորի աստիճանաբար և տակաւ առ տակաւ գիմել յայն :

Ռասիների թատրերգութիւնք՝ այս մասին անհամեմատ օրինակներ կ'ընծայեն :

Գ. Մուշեղի Կէն վրայ (pathétique)

չատ դեգերելու չէ . արտասուքը շուտով  
կը ցամաքի , կիրքը , յուզմունքը շուտով կիջ-  
նեն . նլիտեմիատրէ կը ջանայ ողորքել Ագա-  
մեմնոնի սիրտը՝ որ իր դուստրը չզոհէ .

«Այս է հայրութիւն . ա՛հ , խելքս կը ցնո-  
րի այսպէս անգութ դաւաճանութեան մը վը-  
րայ , կալզաս՝ անողորմ ամբոխով չըջապատած՝  
իր մեղապարտ ձեռքը իմ աղջկանս վրայ դնէ՛ ,  
սլառուտէ՛ անոր կուրծքը և անկարեկից աչօք  
անոր ջերմաջերմ սրտին վրայ դից կամբը գու-  
շակէ՛ : Եւ ես որ զինքը յաղթանակաւ և ամե-  
նէն պաշտուած հոս բերի , ես՝ միայնիկ , ան-  
յոյս դառնամ . դառնամ և տեսնե՛մ այն խըն-  
կաւէտ ճամբայները որ գոցուած են անոր ոտի-  
ցը ներքեւ սխուած ծաղիկներովը : Ո՛չ , ես  
զայն ի սպանդ չբերի՝ որպէս զի դու զայն յու-  
նաց կրից դո՛հ մատուցանես : Ոչ երկիւղ , ոչ  
ակնածութիւն պիտի կրնայ զիս անկէ բաժնել .  
պէտք է իմ արիւնաթաթաւ բազուկներէս խը-  
լել զայն . անազորո՛յն ամուսին , անողորմ հայր ,  
եկո՛ւր , եթէ կը համարձակիս , զայն իր մօրմէն  
կորզելու : »

Այս սրտաշարժ կտորէն ետքը զգացումը  
իր թափը պիտի կորսնցնէր՝ եթէ այլ եւս  
չարունակէր . սակայն բանաստեղծը սլա-  
տեհ ժամուն կանգ առնել գիտցած է :

10. Մեր-շրջե՛ թէպէտ երկարելու  
 չէ՛ սակայն ժամանակէն առաջ ալ պէտք  
 չէ ընդ-միջել: Մտիկ ընենք Պօսիւէ՛ որ  
 հետեւեալ սքանչելի կտորին մէջ ինչպէս  
 աստիճանաբար և յարմար պահուեն վերջ  
 կուտայ իր յուզման:

«Տւրեմն ի՛նձ կը մնար տակաւին այս տխուր  
 սպասը մատուցանել մեծագոր և բարձրագահ  
 իշխանուհւոյ մ՛ալ: Ինքը՛ որ այնչափ ուշադիր  
 էր՝ երբ նոյն սպասը կը մատուցանէի իր թա-  
 գուհի մօր, ա՛յսչափ վաղ նիւթ պիտի ըլլար  
 նմանօրինակ ճառի մը, և իմ տխուր ձայնս  
 այս ցաւագին սլաշտաման պահուած էր. ո՛վ  
 ունայնութեանս, ո՛վ սնոտիացս, ո՛վ իրենց  
 ճակատադրին անգէտ մահացուացս: Տասն ա-  
 միս յառաջ կրնա՞ր մտքէս անցնիլ՝ և դուք, պա-  
 րոնայք, կրնայի՞ք կարծել, երբ նա այնչափ  
 արտասուք կը հեղոյր այս չտեղը՝ թէ ինքն այս-  
 չափ վաղ զմեզ պիտի համախմբէր հոս իր վը-  
 րայ լալու: Ա՛վ իշխանուհի, արժանի առար-  
 կայ երկու մեծ տէրութեանց զարմացման, հե-  
 րիք չէ՞ր միթէ Անդղիոյ քու բացակայու-  
 թեանդ վրայ ողբալը, և քու մահդ ալ պէտք էր  
 ողբար. և Քաղղիա՛ որ զքեզ այնչափ ուրա-  
 խութեամբ հիւրընկալեց նոր փառօք սճնեալ  
 ուրիշ յաղթանակ և շուք չէ՞ր կրնար ընծայել

քեզ ի դարձի այն հռչակաւոր ճամբորդութենէդ՝ ուր այնչափ փառք և գեղեցիկ յոյսեր տարիր . ունայնութիւն ունայնութեանց :

11. Պուալոյ ըսած է .

«Ամեն կիրք տարբեր լեզուաւ կը խօսի», Սակայն կրից ընդհանուր լեզուն սլարզ, սահուն, բնական պէտք է ըլլայ . որոտագոչ ձայներ անօգուտ են : Կիրքը իր լեզուն կը ճանչէ, անիկա իր առարկային վրայ կեդրոնանալ կուզէ, անով միայն ըզգածուիլ . լեզուն անոր գործողութեան հաւատարիմ նմանողը և թարգմանը պարտի ըլլալ : Ո՛վ որ մեծ խնամօք իր լեզուն զարգարել կուզէ կիրք բացատրելու համար՝ աւելի ինքզինքը քան թէ իր առարկայն կը խորհի, հետեւաբար տպաւորութիւն չկրնար ընել :

Չափազանց ճոխ ոճը ճշմարիտ զգացումը կը խանգարէ . ստուգիւ՝ կը զարմացնէ, կը հիացնէ, սակայն ասով վիշտը կը մարի :

Վշտաց լեզուն պարզ է՝ մինչեւ անգամ ողբերգութեանց մէջ : Ո՛րչափ պարզ են այս խօսքերը որով թէսէոս կրվախնայ թէ չըլլայ որ իւր անէծքը վաղ հասած ըլլայ տղուն :



Դո՞ւ ես , թե՛րամին , ի՞նչ ըրիր տղաս , իր  
մատաղ հասակէն քեզ յանձնեցի զինքը . բայց  
ուստի՞ են այդ արտասուքդ . ի՞նչ կընէ տղաս ,  
թե՛րամին կը սպատասխանէ :

Ո՛վ անաղան և աւելորդ խնամք , անօ՛գուտ  
գորով , Հիսպուղիդ ոչ եւս է :

Այս լեզուն՝ ինչպէս կը տեսնուի , զար-  
գարուն չէ . սակայն կիրքը իր արժանա-  
ւոր բացատրութիւնը գտած է :



## ԳԼՈՒԽ Բ.

ՅԱՂԱԳՍ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԵԱՆ (disposition)



### ՅՕԴՈՒԱԾ Ա.

Ի. ՅԱՂԱԳՍ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԵՍ

1. - Տրամադրութիւնն է ստեղծման ցուցու-  
ցած միջոցները սպառչած և յարմարաւոր  
կարգի վրայ առնել և ի գործ դնել :

2. - Տրամադրութեան առարկայները  
երկու են՝ 1<sup>0</sup>. ճառին մասն և անոնց կար-  
գը . 2<sup>0</sup>. ճառին յատակագիծը :

3. - Բանավարութիւնը և դատումը

ինքնին մեզ կը յուցնեն ճառին ընթացքը, նախ՝ ճարտարախօսը կը պարտաւորի յինքըն գրաւել ունկնդրաց ուշք և յօժարութիւնը. այս նախնական գործին կըսուի յո-  
 ճոյնը. երկրորդ՝ իր նիւթը մեկին և յստակ կերպով իմացնել՝ այս է ու-  
 ճոյնը կամ հանդուգանքը (narrotins). երրորդ հակառակորդին փաստերը ցրել և իր կարծիքը հաստատել՝ աստի կը ծագին երկու բաներ՝ այսինքն ուշք և յո-  
 ճոյնը. վերջապէս իր ունկնդիրները ըստ ամենայնի գոհ ընել՝ փաստերը և իր կար-  
 ծիքները պատշաճաբար ամփոփելով՝ ասոր ալ կ'ըսուի վերջըն, Հետեւաբար ճառ մը վեց գլխաւոր մասն կը պարունակէ՝ յո-  
 ճոյնը, ուճոյնը, հանդուգանքը, ուշքը, յո-  
 ճոյնը, և երբեք կամ յոճոյնը, և վերջընը:

4. - Այս բոլոր մասերը հարկ չէ որ ամեն ճառի մէջ գտնուին՝ այլ որչափ որ նիւթը և հանգամանքները պահանջեն:

ՅՕԴՈՒԱՄ Բ.

2. - ՅԱՌԱՋԱԲԱՆ

1. - Յոճոյնը ճառին սկզբնաւորու-

Թիւնն է՝ որով ճարտարախօսը կը պատ-  
րաստէ ունկնդրաց միտքը և յօժարութիւ-  
նը իւր բանախօսութիւնը մտիկ ընելու :

2. - Ունկնդրաց միտքը և յօժարու-  
թիւնը պատրաստելու համար՝ պէտք է որ  
ճարտարախօսը նիւթին ընտրութեանը հետ  
միացնէ նաև անժխտելի տաղանդ մը և  
հասարակաց վստահութիւնը գրաւող ակ-  
նածելի վարք մը : Եթէ այս պայմանները  
չունենայ, ճարտարախօսը առաւել անտար-  
բերութիւն քան թէ հետաքրքրութիւն  
կ'ազդէ ունկնդրաց :

3. - Յառաջաբանը ճառին իմաստէն  
պէտք է որ առնուի, ապա թէ ոչ կարկը-  
տան կ'ըլլայ (hors-d'œuvre) :

4. - Չորս գլխաւոր տեսակ յառաջա-  
բան կայ . 1-րդ, 2-րդ, 3-րդ և 4-րդ :

5. - Պ-րդ յառաջաբանն այն է՝ յորում  
ճարտարախօսը արհեստ և ձեւ չգործա-  
ծեր՝ այլ պարզապէս իր նիւթը կ'իմացնէ :  
Աօիկա այն ատեն տեղի կունենայ, երբ  
ճարտասանը դժուարին պարագայ մը չու-  
նի իր գիմացը : Այսպէս են քարոզները և  
քաղաքական ճառերը :

6. - Ա-րդ յառաջաբանն այն է՝ ո-

րով ճարտարախօսը իւր նիւթին՝ զկծեցուցիչ և խրտուցիչ մասերը կը քողարկէ և աստիճանաբար կը պատրաստէ ունկնդրաց միտքը իւր առաջադրեալ նպատակին :

Ահա՛ ՚ի պաշտպանութիւնն Լ-ի՝ վեշտասաներորդի՝ տը Սէզի խօսած ճառին յառաջաբանը :

Երեսօրօխանք ժողովրդեան , ուրեմն Հասաւայն վայրկեանը ուր Լուի՝ Յրանսայի ժողովրդէն ամբաստանեալ՝ պիտի կարենայ իւր ձայնը լսելի ընել նոյն ժողովրդեան մէջ : Հասաւայն վայրկեանը , ուր մարդկութեան և օրինաց ներշնչած խորհուրդներով պիտի կարենայ ազգին առջեւ արտասանել այն պաշտպանութիւնը , զոր իւր սիրտը կը խոստովանի և անոր բացատրել այն բարի նպատակները , որ իւր սիրտը կը վառէին յաւէտ : Արդէն իմ շուրջս պատած հանդարտութիւնը կ'իմացնէ ինձ որ արդարութեան օրը յաջորդած է բարիութեան և կանխակալ դատման օրերուն . թէ՛ այս հանդիսաւոր դատումը ունայն ձեւ մը չէ . թէ՛ ազատութեան ժամանակը անկողմնասիրութեան և օրինաց ժամանակն ալ է . և թէ՛ որ և իցէ մարդ մը՝ որ ամբաստանեալի նկուն վիճակին մեջ կը գտնուի , ասպահով է միշտ նոյն իսկ իւր հալածչած ուշադրութիւնը և յօժա-

բութիւնը իր վրայ գրաւելու : Արև իցէ մարդ  
ըսի . վասն զի Ղուի ալ այսուհետեւ սոսկ մարդ  
մ'է : Աւ չունի առանձնաշնորհութիւն , ալ  
բանի մը կարող չէ . չկրնար երկիւղ ազդել  
և ոչ իսկ յոյս ընծայել : Ուրեմն այժմ ճիշդ  
ժամանակն է՝ ոչ միայն արդար ըլլալու առ այն  
այլ նաեւ բարեւէր :

Կուզէի որ այս վայրկեանիս ամբողջ Ֆրանսա  
իմ ձայնս լէր . կուզէի որ այս սրահը յան-  
կարծ անբաւ ընդարձակութիւն առնէր և  
Գֆրանսա իւր մէջը պարփակէր : Քիտեմ որ  
ազգին երեսփոխանաց խօսած ատենս նոյն իսկ  
ազգին խօսած կըլլամ . սակայն ներելի է ան-  
չուշտ Ղուիի ցաւիլ որ քաղաքացւոց անթիւ  
բազմութիւնը իւր վրայ եղած գրպարտու-  
թիւններէն ցաւագին տպաւորութիւններ ըն-  
դունեց , և այլ :

Գ. - Պէշ՝ յառաջարանը այն պարագայ-  
ներու մէջ տեղի կունենայ , երբ ունկնդիր-  
ները մեծ նիւթ մը մտիկ ընելու յուսով  
համախմբած են : Այս յառաջարանը սո-  
վորաբար կը յարմարի ակադեմական ճա-  
ռերու , ականաւոր արանց դամբանա-  
կաններու և ներբողներու : Ուստի՝ ճար-  
տարախօսը հոս արհեստին բոլոր ճո-  
խութիւնները և վայելչութիւնները կըր-

նայ հեղուլ, սակայն դիտելու է որ ար-  
ուեստակութեան մէջ չիյնայ : Անգղիոյ իշ-  
խանուհւոյն վրայ Պօսիւէի արտասանած ճա-  
ռին յառաջաբանը անստղիւտ օրինակ մ'է :

Ար թագաւորէն յերկինս՝ հանուրց թագա-  
ւորութեանց տէր, որում միայնոյ են փառք՝  
մեծութիւն և իշխանութիւն, նա ինքն է միայն  
փառաւորեալ՝ ի դնել օրէնս թագաւորաց, և  
տալ նոցա՝ յորժամ հաճեսցի՝ խրատս մեծամեծս  
և ահագինս : Թէպէտ բարձր առնիցէ զգահս,  
թէպէտ նկուն. թէ հաղորդս զօրութեան իւ-  
րում արասցէ զիշխանս, և թէ առ ինքն զայն  
ամբողջեալ՝ զհիփութիւն և եթ նոցին թողցէ՝ ի  
նոսա, զպարտս նոցուն ուսուցանէ նոցա բարձ-  
րադոյն օրինակաւ ըստ իւրում արժանին : Քան-  
զի յընձեռել նոցա զզօրութիւն իւր, հրաման  
տայ՝ ի պէտս բարեաց աշխարհի վարել զայն՝  
իրբեւ զինքն. և յամբողջին, յայտ առնէ նո-  
ցա, թէ ամենայն մեծութիւն նոցին՝ փոխ առ-  
եալ է, և զի՝ թէ և յաթոռ ամբարձեալք՝ ոչ  
ինչ ընդհատ ընդ ձեռամբ իւրով են և ընդ գե-  
րակայ իշխանութեամբն : Այսպէս խրատէ նա  
զթագաւորս՝ ոչ բանիւք և եթ և սլատգամօք,  
այլ՝ և արդեամբ և օրինակօք : Արք, Բարձրագոյն,  
չոյ՝ ի հոգ առէ, ի բարեցորոս ահեղեղուն ոյ՝ որո-  
տէ՝ զհիմն :

Քրիստոնէայք , զորս յիշատակ մեծի դշխո-  
 յիս , դատեր՝ տիկնոջ և մօր թագաւորաց հզօ-  
 րաց , և երկց թագաւորութեանց բամբռանս ,  
 ժողովէ 'ի կողմանց կողմանց յայս պաշտօն սը-  
 գաւոր , ճառս այս ցուցցէ ձեզ մի յահաւոր օ-  
 րինակաց անտի՝ որ յանդիման առնեն յաչս աշ-  
 խարհի զունայնութիւն իւր բովանդակ : Ի մի  
 ևեթ տեսանիցէք համօրէն զծայրս իրաց մարդ-  
 կայնոց . երջանկութիւն անսահման , նոյն և  
 ասառասպանք . երկար և խաղաղ վայելք միոյ  
 յերեւելի թագաց տիեզերաց . ամենայն փառք  
 զարմի և մեծութեան հաւաքեալ 'ի մի զլուս :  
 որ մատնի ասլա յամենայն թշնամանս բախտին .  
 իրաւունք արդարութեան՝ յաջողութիւն զըտ-  
 եալ նախ , և ասլա յետս ընդդէմ յանկարծ պա-  
 տահարք , անլուր փոփոխմունք . ասպտամբու-  
 թիւն յերկար սանձահարեալ , հուսկ ասլա ընդ-  
 վըզեալ տիրացեալ 'ի սպառ . ստամբակութիւն  
 ապերասան ամենեւին , օրէնք բարձեալ , թա-  
 գի'ն մեծվայելչութիւն առ ռոն հարեալ՝ ցայն-  
 ժամ անձանօթ ոճրադործութեամբք , յախըշ-  
 տակութիւն և բռնակալութիւն ընդ անուամբ  
 ազատութեան . դշխոյ մի փախստեայ՝ ոչ ու-  
 բեք ինչ գտեալ ասլաստան յերեսին թագաւո-  
 րութիւնս , և աշխարհ իսկ իւր հայրենի՝ տեղի  
 աքսորանաց միայն լեալ նմա այնուհետեւ . ինն  
 ճանապարհք բամբռան ընդ ծով մրրկածուի .





յօժարութիւնը գրգռել և անոնց կրքերը փոխանակ հանդարտեցնելու առաւել արծարծել :

Այս տեսակ յառաջարանը աւելի եղերական բանաստեղծութեանց մէջ տեղի կունենայ՝ ուր կրքերը բուռն և ուժգին են :

### ՅՕԴՈՒԱՄ Գ.

#### 5. - ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

1. - Առաջինը նիւթին յստակ, մեկին և ճիշդ արտայայտութիւնն է. ինչպէս .

Մեծամեծաց և իշխանաց օրինակները այս անխորհելի երկասյրարանութեանս վրայ կը դառնան՝ այսինքն թէ՛ անոնք չեն կրնար ինքնին ոչ կորսուիլ, ոչ ազատիլ : Ահա ճառիս նիւթը այս գլխաւոր ճամբարութիւնն պիտի ըլլայ :

(ՄԱՍԹՅՈՒՆ)

2. - Երկու տեսակ առաջարկութիւն կայ՝ ԴՐՐԷ և ԲՆԴՐԷԷԷԷ : Պարզ կ'ըսուին այն առաջարկութիւնները՝ որոնք մէկ առարկայ մը միայն կ'ապացուցանեն : Բազադրբեալ կ'ըսուին այն առաջարկութիւնները, որոնց մէջ շատ առարկայներ կան ապացուցանելու կարօտ . ինչպէս՝

Հեշտութիւնը սկսած է իշխանաց սիրտը վատթարացնել, շողորրութիւնը զիրենք կը քաջալերէ մոլորութեանց մէջ, ճշմարտութեան բոլոր ելքը կը գոցէ անոնց դիմաց • փառասիրութիւնը՝ ի կատար կը հասցնէ, կուրութիւնը և անդունդը անսնց օտից ներքեւ կը փորէ :

(ՄԱՍԻՑՈՒՆ)

Յ. - Երբ առաջարկութիւնը բաղադրութեալ ըլլայ և կամ պարզ ըլլալով հանդերձ այլ և այլ կերպով ապացուցուելու կարօտ ըլլայ՝ ան ատեն բաժանում տեղի կունենայ :

Ուստի ք-ձ-ն-ն-է է նիւթը շատ մը կէտերու վերածել և զանոնք կարգաւ բացատրել : Այս բաժանումը դիւսաւորաբար երկու կամ երեք կրնայ ըլլալ • բայց որովհետեւ այս մասերն ալ շատ կերպով կրնան ապացուցուիլ՝ հետեւաբար ք-ձ-ն-ն-է ալ կը դառնուին :

Առաջարկութիւնը իր բաժանմանց և ստորաբաժանմանց հետ մեկտեղ հ-ն-ն-է ցատակադիժը կը կազմէ :

ՅՕԴՈՒԱՄ Դ.

4 - ՃԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ՄԱՆՐԱՊԱՏՄՈՒԹԻՒՆ.  
(narration)

Ք. - Ճորտանկան հանրապետության է նվա-  
թը լուսաբանելու և փաստերը հաստատե-  
լու համար յառաջ բերուած յիշատակու-  
թիւն մը : Ասիկա ջատագովութեանց մէջ  
էրդարեւ կըսուի պարզապէս :

Չ. - Պատմագիրը եւ ճարտարախօսը  
տարբեր պարտաւորութիւն ունին ման-  
րապատմութեան մէջ : Պատմագիրը պար-  
տաւոր է՝ ամենայն ինչ ճշմարտութեամբ  
և հաւատարմութեամբ յառաջ բերել. իսկ  
ճարտասանը առանց ճշմարտութեան դէմ  
մեղանշելու՝ պէտք է ջանայ իրեն նպաս-  
տաւոր կէտերն առնելով մանրապատմել  
երբեմն զանոնք ամօքել և կամ լռութեամբ  
անցնիլ անոնց վրայ :

Այսպէս ըրած է Պօսիւէ Գոնտէ իշխա-  
նին դամբանական ճառին մէջ : Գոնտէ մեծ  
զօրավարը իր հայրենեաց դէմ ապստամբե-  
լու և անոր դէմ կռուելու տկարութիւ-  
նը ունեցեր էր : Այսպիսի անձ մը դրո-  
ւատել՝ իւր առաքինութեանց քով այս մէկ

սխալմունքը ներելի ցուցնելով՝ ասիկա շատ դիւրին չէր : Սակայն Պօսիւէ այնպէս ըրած է որ ամբողջապէս առ ոչինչ համարել տուեր է այս սլարագայն : Հոն ճարտարախօսը ցուցըցեր է որ Գոնտէի միտքը հայրենեաց վնասել չէր , անոր մըշտատեւ փափաքն եղած էր հայրենեաց մեծութիւնը և իւր արքային փառքը : Ինքը յիրաւի սխալեր էր : Ճարտարախօսը յառաջ երթալով կը յարէ թէ՛ ինքը , անոր բերնէն քաղած է այս խօսքերը . « Ես անմեղ բանտը մտայ և անտի մեղապարտ ելայ » : Վերջապէս , Պօսիւէ կը յաւելու . « յաւիտենական քօղ մը ծածկենք այս տխուր իրաց վրայ , որոնք այս մեծ դորավարին չքնաղ առաքինութեանց քով իրենց բոլոր կարեւորութիւնը կը կորսընցընեն » :

Յ. - Մանրապատմութիւնը դատաստանական ճառերու մէջ միայն որոշ մաս մը կը կազմէ . ուրիշ բանախօսութեանց մէջ անի ճառին միւս մասերուն հետ խառնուած է :

ՅՕԴՈՒԱՆ Ե՝

Ե. - ԱՊԱՅՈՒՅՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՓԱՍՏ

1. - Արդարացի-բնիկ կամ քրիստոնէս ըսած խօսքերուն ճշմարտութիւնը զօրաւոր ապացոյցներով հաստատել, փաստերը գրկխաւորաբար ջատագովութեան և դամբանականին մէջ տեղի կունենան :

2. - Շնորհաւորի և վշտակցութեան ճառերը փաստերու պէտք չունին :

3. - Եթէ փաստերը տկար ըլլան՝ անհրաժեշտ պէտք է զանոնք իրարու քով յեռու և զանոնք իրարմոյ՛ ուժովցնել :

4. - Մեծ և ազդու փաստերը պէտք է զատ և առանձին դնել, որպէս զի իրենց կարեւորութիւնը և ազդեցութիւնը չկորսնցնեն :

5. - Փաստերը կարելի եղածին չափ ընդլայնելու և անոնց բոլոր ուժը յայտնելու է, սակայն պէտք չէ խուռն և անօգուտ բաներու հեղեղի մէջ զանոնք խեղդել :

Փոքրիկ իմաստ մը՝ իւր-իւր հեղինակի մը, բազմաթիւ բառերով յայտնուած՝ կը նմանի տերեւախիտ ծառոյ մը՝ որուն վրայ մէկ երկու պտուղներ միայն կը դնուին :

6. - Փաստերու բացատրութեանը կր-  
տի հարգանքն ընդլայնման : Աշակերտներ-  
ըն ճարտասանական ընդլայնման վարժեցը-  
նելու համար՝ պէտք է ընտիր ճառ մը ա-  
նոնց կարգալ . յետոյ իրենց հրամայել որ  
միտք պահած գլխաւոր կէտերուն վրայ  
նմանօրինակ ճառ մը գրեն : կամ թէ՛ դա-  
սատուները նիւթ տան քիչ մը բացատրու-  
թեամբ և աշակերտք զայն առաւել ըն-  
դարձակեն : Ասիկա նախնական վարժու-  
թիւններուն ամենէն ապահովն է :

Մասիյ յետո՛ւ՝ գործերն ինչն ըն-  
է՛ք իմաստը կընդլայնէ իր պերճ ոճովն .  
այսպէս .

Իր միտքը յաւէտ շաղախնալ է արեամբ :  
Քուցէ անմիտ սմանք իր յաղթանակներն եր-  
գեն , բայց դաւառները , քաղաքները , գեղօրէք  
ողբան պիտի անոնց վրայ : Իրեն հոյակապ  
անդրիներ պիտի կանգնեն իր աշխարհակալու-  
թիւններն անմահացնելու համար , բայց երբե-  
մըն ծաղկեալ և բարգաւաճ քաղաքաց ծխա-  
շունչ աւերակները՝ բայց իրենց նախկին զեղեց-  
կութենէն մերկացած այնչափ դաշտօրէյց ա-  
մաչութիւնը և աւերը՝ բայց այնչափ պարըս-  
պաց կործանումն և անկումը՝ որոնց ներ-

քեւ անմեղ քաղաքացիներ թաղուած են . բայց այնչափ աղէտները որ իրմէ ետքը կը տեսնեն՝ մահադէմ արձաններ պիտի դառնան՝ որոնք իր ունայնամտութիւնը և յիմարութիւնը պիտի յաւէրծացնեն : Պիտի անցնի նա իբրև հեղեղ մը երկիրն ապականելու՝ և ոչ թէ իբրև ճոխընթաց գետ մը զայն արբուցանելու և արգասաւորելու համար , իր անունը ապագայից պիտի աւանդուի աշխարհակալաց ցանկին մէջ գրուելով , բայց պիտի շարձանագրուի բարեւաւ արքայից շարքին մէջ՝ և իր իշխանութեան սխտմութիւնը՝ մարդկային ազգին՝ անոր պատճառած շարեաց յուշարարը պիտի ըլլայ միայն : Այսպէս , իր հպարտութիւնը , կըսէ հոգին Տեառն , մինչև յամպս պիտի բարձրանայ , իր գլուխը ասաղերուն պիտի դպչի , իր յաջողութիւնք պիտի հաւասարին իւր բաղձանաց , և այս շեղձակոյտ փառքը ի վերջոյ ոչ այլ ինչ պիտի ըլլայ՝ բայց միայն տղմի զանգուած մը՝ որ իր ետեւէն ապականութիւն և դարչութիւն միայն պիտի թողու :

7. - Ընդլայման մէջ աշակերտաց վրայ նշմարուելիք գլխաւոր պակասութիւններն են՝ ամլութիւն , նանրաբանութիւն , երկոտութիւն և շատաբանութիւն :

Ամլութիւնը ցաւալի բան է , սակայն

չատ անգամ անհոգութենէ, գաղափարաց պակասութենէ, յառաջ կուգայ այս՝ բան թէ երեւակայութեան և մտաց տկարութենէ:

Նանրաբանութիւնը աւելի վատթար է. ոյ որ շնչին բաներու վրայ շատ կը դեգերի՝ գրելու տաղանդէ զուրկ է: Երկչտութիւնը չափազանց պարկեշտութեան և խոնարհութեան զգացումէ յառաջ կուգայ: Սակայն այս զգացումը յարգելով հանդերձ պէտք է զայն ուղղել և իր սահմանին բերելու ջանալ: Շատարանութիւնը շատ բան խօսելու կամ գրելու մանկական վավաք մ'է՝ պէտք է այս մասին ալ աշակերտաց եռանդը գոյլել՝ բայց զայն մեղմացնել և իր բնական սահմանին վերածել:

## ՅՕԴՈՒԱՆԾ Զ.

Ե. - ՀԵՐՔՈՒՄՆ՝

1. - Հերքում է հակառակ առարկութիւնները ցրել և անոնց յաղթել:

2. - Հերքման մէջ ճարտասանին առաջին ախոյեանը իմաստակութիւնք են: Իմաստակութիւնները ճանչել խիստ դիւրին



է, Պէտք է զանոնք հաւաքաբանութեան վերածել՝ և տեսնել թէ իւրաքանչիւր նախընթացը միջանկեալ եզրին կամ փոքրագոյնին նշանակութիւնը պահած է, և թէ՛ եզրակացութեան մէջ նախընթացները տարբեր նշանակութեամբ առնուած են՝ թէ իրենց նախկին նշանակութիւնը կը բովանդակեն, (իմաստակութեանց վրայ արդէն խօսած եմք տրամաբանութեան մէջ) :

- 2. Հերքումը գրեթէ ամեն տեսակ ատենախօսութեանց մէջ տեղի ունի, վաստն զի ամեն տեղ նախապաշարմունք, ստութիւն, կիրք, և իմաստակութիւնք կրնան ելնել ճարտասանին դիմացը :

ՅՕԴՈՒԱԾ Է.

7. - ՎԵՐՋԱԲԱՆ

1. - Վերջ-բռն-ի-ն ճառին եզրակացութիւնն է. հոն ճարտարախօսը պարտի ամփոփել իր ըսածները, գործածել իր հանճարին բոլոր ոյժն ունկնդիրները շօշու- , շօշու- , և յ-ի-ն-ի-ն համար :

2. - Նախընթաց փաստերը կարճ ի կարճոյ պէտք է ամփոփել՝ որպէս զի ա-

ճանց զօրութիւնը չընկնի : Մասիյ յեօն այս-  
պէս կը վերջացնէ իր սքանչելի ճառը յ-  
լէ : Ինչպէս որ ինչպէս :

Ներքալք : Հոս խորհրդածութիւններն ա-  
նօգուտ են : Տիրոջ երկիւղածներուն վերջն  
այսպէս է . իրենց մահը իրենց կենաց պէս  
թանկագին է Աստուծոյ առջեւ : Իսկ զԱստ-  
ուած մինչեւ այս վերջին վայրկեանը մոռցող-  
ներուն ցաւալի վախճանը այս է . մեղաւորին  
մահը իրեն կենաց պէս անարդ է առաջի Աս-  
տուծոյ : Եթէ մեղաւոր ասլիք՝ դուք մեղաւո-  
րին անօգուտ ցաւոց և արհաւիրաց մէջ կը մեռ-  
նիք , և ձեր մահը յաւիտենական է . եթէ ար-  
դար ասլիք՝ դուք արդարոց անդորրութեան  
և յուսոյն մէջ կը մեռնիք , և ձեր մահը յանմա-  
հութիւն անդր ճանապարհորդութեան մը պի-  
տի նմանի : :

3. վերջաբանը կրաշարժ և աշխոյժ ը-  
նելու համար ճարտասանը պարտի անոր  
անցումներն և կապակցութիւնները կըր-  
ճատել :

Ահաւաստիկ Գոնտէ իշխանին վրայ Պօ-  
սիւէի խօսած ճառին վերջաբանը , որ աս-  
մեն մասամբ հրաշակերտ մ'է :

Գարծուցէք աշուրնիդ ամեն կողմէն . ահա-  
ւաստիկ ա՛յսչափ կրցան ընել չընդութիւնը և բա-

բեպաշտութիւնը՝ գիւցազնի մը մարմինը պատուելու համար : Տխտղոսներ , վերտառութիւններ , սին նշանակք անոր՝ որ ալ չկայ . պատկերներ՝ որ կարծես թէ կողրան շիրմի մը բուրրութիւնը . վաղանցուկ պատկերք ցաւոց՝ զոր ծամանակը կառնէ կը տանի բոլոր մնացելոց հետ . սիւնք՝ որ կարծես թէ մինչեւ յերկինս կուզեն ամբառնալ մեր ունայնութեան վկայութիւնը : Աերջապէս բան մը չպակսիր այս պատիւներուն մէջ , բայց ՚ի անկէ՝ որուն համար կրնենք դանտք :

Լացէ՛ք ուրեմն մարդկային կենաց այս գոյզն մնացորդաց վրայ . լացէ՛ք այն տխուր անմահութեան վրայ , զոր մենք կը շնորհենք գիւցազանց . բայց յառաջ մատիք մանաւանդ , ո՛վ դուք , որ այնչափ եռանդազին կը գիմէք փառաց աստարէզը , ո՛վ պատերազմիկ և արիստեքանչ ոգիներ , ուրիշ ո՛վ աւելի արժանաւոր եղաւ ձեզի հրամայելու . բայց դարձեալ ուրիշ որո՞ւ հրամանատրութիւնը աւելի պատուաւոր գտաք . ողբացէ՛ք ուրեմն այն մեծ զօրավարը և ըսէ՛ք հեծեծելով . ահաւասիկ այն՝ որ զմեզ կը մղէր ի վտանգս . անոր ձեռաց տակ ծնան այնչափ անուանի զօրավարք , զոր իր օրինակները բարձրացուցին պատերազմական առաջին պատուոյ : Իւր ստուերն անգամ բաւական էր յաղթութիւն կանգնելու . և ահա

իր լուսթեան ատեն իւր անունը զմեզ կը վառէ՝ և կիմացնէ մեզ՝ որ մահուրնէ կտքը մեր աշխատութիւններէն բան մը հետ տանելու և անօգնական յաւիտենական բնակարանը չհասնելու համար՝ երկրաւոր թագաւորին հետ պէտք է երկնաւոր թագաւորին ալ ծառայել . պաշտեցէ՛ք ուրեմն այն անմահ թագաւորը որ աւելի վարձահատոյց կըլլայ ձեզի , երբ իր անուան համար հառաչանք մը , բաժակ մը ջուր տայք , քան թէ երկրիս բոլոր թագաւորները՝ թէ և ձեր բոլոր արիւնը թափէք . և սկսեցէք ձեր օգտակար ծառայութեանց ժամանակը հաշուել այն օրէն՝ երբ ասոր նման բարերար տիրոջ մը հնազանդիլ սկսիք :

Եւ դուք շրջիտի գայք այս տխուր անդրիիս առջեւ , դուք՝ զորս հաճեր է իր բարեկամաց կարգը դասել , ամենեքեան առ հասարակ ինչ տեղ որ բռներ էք իր վստահութեանը մէջ , շրջապատեցէք այս շիրիմը , հեղէք արտասուս խառն ընդ պաղատանս . և այսպիսի մեծ իշխանի մը քով այնչափ դիւրամատոյց բարեկամութիւն և ընտանի կենակցութիւն գտնելնուդ վրայ զարմանալով՝ պահեցէք այս դիւցաղնին յիշատակը , որուն բարեսրտութիւնը քաջութեանը հաւասար էր . իցի՛ւ թէ միշտ ձեզ սիրելի խօսակցութեան մը նիւթ ըլլայ անիկա . իցի՛ւ թէ իւր առաքինու-

թիւններէն օրինակ առնէք . և իւր մահը զոր  
կողմաք՝ ձեզի միանգամայն սփոփանաց սլա-  
ճառ ըլլայ :

Իսկ ինծի համար , եթէ ներելի է , բոլոր  
ուրիշներէն ևտքը գալ իմ վերջին սարտակա-  
նութիւնս մատուցանել այս շիրմին , ո՛վ իշ-  
խան , արժանի՛ առարկայ մեր գովեստից և  
ցաւոց՝ դուն յաւիտեան սխտի ապրիս իմ յի-  
շողութեանս մէջ . քու պատկերդ հոն սխտի  
նկարուի՛ ոչ թէ այն ահարկու գլխոք՝ որ յաղ-  
թութիւն կը խոստանայր , ո՛չ , չեմ ուզեր  
տեսնել ի քեզ , ինչ որ մահը կը ջնջէ : Այս նը-  
կարին մէջ անմահական կերպով սխտի երեւիս .  
քեզ սխտի տեսնեմ հոն ինչպէս որ էիր այս  
վերջին օրը Աստուծոյ ձեռաց տակը , երբ իր  
փառքը սկսաւ երեւիլ քեզ : Հոն սխտի տես-  
նեմ քեզ աւելի յաղթական քան ի Յրիստոսի և  
ի Բորբուա , և սքանչացած այս զեզեցիկ յաղ-  
թութեանը վրայ՝ փառք տալով սխտի ըսեմ  
ամենասիրելի աշակերտին Յովհաննու խօսքերը .  
« Ճշմարիտ յաղթութիւնը , այսինքն՝ այն որ  
բոլոր տիեզերք մեր ոտքին տակը կը գնէ , մեր  
հոգին է » :

Վայելէ՛ , ո՛վ իշխան , այս յաղթութիւնը ,  
վայելէ՛ զայն յաւիտեան , այս զոհիդ անմա-  
հական առաքինութեամբը . ընդունէ՛ վերջին  
նուէր ձայնի մը՝ որ քեզի ծանօթ եղաւ . բո-

լոր այս տեսակ ճառիցս վերջ պիտի տաս . փո-  
խանակ այլոց մահը ողբալու , կուզեմ այսու-  
հետեւ իմս սուրբ ընել սովորիւք ենէ . երանի՛  
թէ այս սպիտակ մազերս ազդարարութիւն ը-  
նեն ինձի այն հաշուոյն վրայ , զոր սրարտիմ  
հատուցանել Բանին կենաց քարոզութեամբ  
սնուցանելիք հօտիս համար , և անոր միայն  
պահեմ մարելու մօտ ձայնի մը և առկայծեալ  
եռանդի մը մնացորդը :

ՊՍՈՒԷ

## ՅՕԴՈՒԱԾ Ը.

### Ց. - ՅԱՏԱԿԱԳԻՄ

1. - Յ-դ-ի-քէ՛՞՞ ճառին զլիսաւոր մա-  
սանց և դաղափարաց կարգադրութիւնն և  
բաժանումն է . յատակագծին մէջ պէտք  
է որոշել զլիսաւոր մասանց թիւը , բնու-  
թիւնը և կարգը :

2. - Լաւ յատակագծին յատկութիւն-  
ներն են՝ ճշգրութիւն , յատկութիւն , պար-  
զութիւն , արգասաւորութիւն , միութիւն  
և համեմատութիւն :

3. - Սակայն այս բոլոր յատկութիւններ  
ը միեւնոյն աստիճանաւ չեն գտնուիր ա-  
մեն տեսակ ճարտասանական գրուածոց  
մէջ , մանաւանդ թէ շատ անգամ փաս-



« Մասն Ա. Սուրբն Լուսողիկոս մեծ սուրբ եղաւ . վասն զի ի ծնէ թագաւոր ըլլալով՝ իր արժանապատուութիւնը իր սրբութեանը գործածեց . և յիրաւի զինքն ըրաւ , Ա. — էլէ ընդհանրէ ինքն — հոգի Ա. — քո — շոյ . Բ. քիւն — ընկերն — էլէ քիւն — Գ. — նուր — ն էր — նն՝ — էլէ ինքն — քիւն — քիւն — քիւն :

Ա. Խոնքն — հոգի Ա. — քո — շոյ . թէ և թագաւոր ծնած , այլ սակայն ինքզինք իրբեւ սոսկ հպատակ մը ծնած կարծեց՝ Աստուծմէ կախումն ունենալու և անոր հնազանդելու համար . և միշտ քիւն — էլէ յատկութիւնը քիւն — էլէ յատկութեանն նախամեծար համարեց : Ասկէց յտաջ եկաւ այն զարմանալի նախանձախընդրութիւնը Աստուծոյ փառաց և անոր պաշտաման , նախանձն հաւատոյ միութեան և ամբողջութեան , նախանձն եկեղեցւոյ վարչութեան , նախանձն բարուց վերանորոգութեան և մարտութեան , նախանձն Աստուծոյ տան՝ որ զինք կը , տոչորէր : Արդ՝ այս նախանձը անոր համար այնչափ յաջողութիւն գտաւ , որովհետեւ արքայական իշխանութեան կրթնած էր :

Բ. Գիւն — ընկերն . ամենուն արդարութիւն ընկելով , անձամբ աղքատաց մերձաւոր դանուելով , արիւնհաչեղ պատերազմի մը մէջ իր սպանեալ զորաց զխալուները վերցնելով տանելով , անթիւ հիւանդանոցներ հիմնելով . արդ



այս բողոքին համար ո՞րչափ իրեն օգնական եղաւ իշխանութիւնն ու արժանապատուութիւնը :

Գ. Անշուտ անհնազանդ . խստակեցութեամբը , որ այն կարգին համար՝ ուր երկինք զինքը դրած էր , շնորհաց հրաշք մը պէտք է համարել . քանզի ի՞նչ մեծ հրաշք՝ քան տեսնել թագաւոր մը քուրճ զգեցած՝ ծումապահութեանց նուիրեալ , խորզի ու մտորոյ վրայ նստած , միշտ պատերազմող իր կրիցը հետ՝ զանոնք զսպելու և փափաքները անհետացնելու . ահա հաս է մեր դատաստարութիւնը . - Սուրբն Առաքովիկոս մինչև անգամ գահին վրայ ինքզինք զոհ ըրաւ . ուրեմն ո՞վ կ'արդեւ զմեզ ինքզինքնիս զոհել իւրաքանչիւր մեր կարգին մէջ :

Մասն Բ. Սուրբն Առաքովիկոս Քիչ Բնութեամբ . վասն զի գիտցաւ իր սրբութեամբը իր արժանապատուութիւնը աւելցնել . մեծ եղաւ պարեմաշէն , ինքնաբնական , յեռաբնական , յանբնական և Բնութեամբնէն ինքնաբնական Քիչ , որոնց հետ ինքնաբնական մէջ . և ահա բողոք ասոնք սրբութիւնն էր ընել տուողը :

Ա. Մեծ՝ պարեմաշէն և ինքնաբնական Քիչ . նա չէր սիրեր խաղաղութիւնը անգործութեան մէջ նստելու համար , և չէր սիրեր պատերազմը իր փառասիրութիւնը յազեցնելու համար . ո՞վ կ'ընէր զայն այնչափ արի և պերճ ՚ի պատերազմունս . Աստուծոյ արդարութեան նախանձն էր :


Բ. Մեծ՝ յ-ի-ր-դ-ը-ն-ի-ն-ն Տեղ. օրինակ ըլլայ իր բանտարկութիւնը, ուր միայն արիութիւնը զինք լաւ պաշտպանեց:

Գ. Մեծ՝ յ-ը-ը-ն-ի-ն-ն Տեղ. Գաղղիա երբէք այնչափ ծաղկեալ և երջանիկ եղած չէր՝ ինչպէս ասոր օրով. քանզի Ս. Ղուդովիկոս իր կըրօնին մասն կը համարէր իր հպատակաց բարօրութեան աշխատիլը:

Դ. Մեծ՝ ր-ի-ր-ը-ն-ի-ն-ն Տեղ. բարեպաշտական նախանձով նա գիտցաւ ժողովուրդն իրեն հնազանդեցնել, և ահարկու ուսիրելի ըլլալ, եւայլն:

Ծ. Մեծ՝ օ-ր-ը-ն-ի-ն-ն Տեղ. Քրիստոնեայ աշխարհին մէջ սա էր պսակեալ դըրխոց իրաւարարն ու հաշտարարը. ամեն կողմէն իրեն կը դիմէին, քանզի գիտէին անոր ողջմտութիւնը և անկաշառ իրաւասիրութիւնը:

Կ. - Յատակագիծը ճառին լուծումն է, ուստի շատ օգտակար կ'ըլլայ եթէ աշակերտք նշանաւոր ատենախօսութիւնները կարգան զանոնք այսպէս վերլուծեն, յետոյ անոնց վրայ ինքնին ուրիշ մը շարագրեն և ապա բնագրին հետ բաղդատեն: Այս կերպը ճարտասանական գաղտնեաց թափանցելու միակ և գլխաւոր միջոցն է:



## ԳԼՈՒԽ Գ.

1. - ԳԵՂԵՑԿԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԿԱՄ ՎԱՅԵԼՁԱԲԱՆՈՒԹԻՒՆ

(élocution)

1. - Գեղեցիկ-ի-տ-ի-ն-ը կամ վայելչաբանութիւնը հռետորութեան այն մասն է որ կրկայանայ իմաստները վայելուչ կերպով բացատրելու մէջ :

2. - Առանց վայելչաբանութեան ճարտասանութիւնը անկենդան դի է :

Նա է որ կը հրապուրէ , կը յափշտակէ մտքերը՝ ճարտասանութեան յաղթական պատկը կուտայ :

3. - Արդ ճարտասանական այս մասին մէջ յաջողելու համար՝ պէտք է նախ լախորհիլ և լաւ զգալ , ապա խորհածին և զգացածին համեմատ դրել , ձեւերու և պատկերներու գործածութեան մէջ շուայլ չ'ըլլալ , և ամեն զարդեր վայելուչ տեղը դնել : Ամեն ձեւ և պատկեր պէտք է որ նիւթէն և պէտքէն բղխին . ճարտարախօսը պարտի արտաքսել ամեն անօգուտ զարդերը և պաճուճանք՝ որ ունկնդրաց շահա-

ւոր չեն : Այս կերպով միայն կրնայ մէկը  
ճարտարախօս և հետեւաբար ժողովրդոց  
մտաց տէրն ըլլալ :

## ԳԼՈՒԽ Դ.

### 1. - ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ :

1. - Գործընթաց (action) գողցես մար-  
մընոյ ճարտարախօսութիւնն է : Հողին և  
մարմինն ընկերաբար կը գործեն ընդհան-  
րապէս . արդ երբ հողին յուզեալ է՝ կամ  
հանդարտ , երբ ընկճեալ է նա կամ խի-  
զախ՝ պէտք է որ մարմինն ալ անկէ ըն-  
դունած տպաւորութիւնները արտադրէ :

2. - Գործընթաց երկու գլխաւոր մասն  
կը պարունակէ՝ հընձ կամ արդընթաց և  
ընթաց :

3. - Հնչման նկատմամբ երկու պարտք  
ունի ճարտարախօսը՝ 1. այնպէս խօսիլ որ  
ունկնդիրները գիւրաւ հասկնան , 2. շը-  
նորհալից , աշխոյժ և մեծանձնաբար խօսիլ :

4. - Գիւրաւ և կատարեալ հասկանալի  
ըլլալու համար շորս պայման կը պահանջուի  
ճարտարախօսէն 1. զօրաւորագոյն՝ վայե-  
լուչ աստիճանաւ գործածել , 2. խօսքը ո-

րոշակի արտայայտել . 3 . պէտք եղած ծանուցութիւն , 4 . լաւ արտասանութիւն ունենալ . հոս արտասանութեան վրայ միայն պիտի խօսինք որ ամենակարեւորն է :

5 . - Բարեոք արտասանութիւնն է բառերուն իրենց սեփական ձայնը և հնչումը տալ : Յաւայի բան է տեսնել որ մեր մէջ բուն հայկական արտասանութիւնը ջընջուած է . ոչ շեշտերու , ոչ գրերու և վանկերու հնչմանց ուշադրութիւն կ'ընեն , և գրեթէ շատերն իս հակամիտ ենք՝ արտասանութիւնն իս խեղաթիւրելու՝ որպէս զի փափուկ և վայելուչ երեւինք : Այս յոռութիւնը բառնալու համար ուշադրութիւն ընելու է լաւ և կիրթ արտասանողաց :

6 . - Սակայն արտասանութիւնը ո՛րչափալ բնական և ճիշդ ըլլայ՝ դարձեալ ազդեցութիւն չ'ըներ՝ եթէ գեղճեղճ (declamation) անոր չընկերանայ :

7 . - Պերճեղճ է արտասանուած խօսքերը զգալի ընելու արուեստը :

8 . - Պերճաբանութիւնը սլարտի ճիշդ և վայելուչ ըլլալ :

9 . - Պերճաբանութիւնը վայելուչ եւ


ճիշտ ըլլալու համար պէտք է՝ 1<sup>o</sup>. հարկ եղած տեղը հանդիստ առնել. 2<sup>o</sup>. հանգիստները ոչ այնչափ ուղղադրական նշանաց՝ որչափ իմաստի, զգացման վրայ հիմնել. 3<sup>o</sup>. ոտանաւոր և արձակ գրուածները միօրինակ չարտասանել :

10. - Ձ-ն էլ էջ ու շաղթութեան արժանի կէտ մ'է : Հրատարակախօսութեան մէջ ձայնի ել և էջը կանոնաւոր և աշխոյժ խօսակցութեան մը մէջ գործածուածին նման ըլլալու է :

11. - Շարժուածն է դիմաց և ձեռաց զանազան ձեւերովը օժանդակել իմաստից բացատրութեան և սրտին զգացմանց : Ամէն յուզմունք իրեն մասնաւոր ձեւը և շարժուածն ունի : Սակայն այս մասին մէջ ալ խորշելու է արուեստակութենէ :



# ՃԱՐՏԱՐԻՑՍՈՒԹԻՒՆ



ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ ԿԱՄ ԲԵՐԱՆԱՅԻ

ՃԱՐՏԱՐԻՑՍՈՒԹԻՒՆ



ԳԼՈՒԽ Ա.

1. - ԱՏԵՆԱԿԱՆ ԿԱՄ ԳԱՂԱՔԱԿԱՆ

ՃԱՐՏԱՐԻՑՍՈՒԹԻՒՆ :

1. - Քաղաքի մեջ աղքատաց  
և տէրութեանց բազմին իշխանն է : Ամեն  
բարիք և ամեն չարիք հաւատարապէս կըր-  
նան ծնել անկէ : Սուր մ'է այս որ բռնաւո-  
րաց գլխուն վրայ կը շողայ յաճախ և սա-  
կայն երբեմն ալ անոնց ձեռքը գործիք ըլ-  
լալով ժողովրդոց արեանց ճապաղեաց  
պատճառ կըլլայ : Երբ նա որոտայ կիկե-  
րոնի , Գիմոսթէնի , Միրապոյի , Թիէրի և  
կամպէթթայի բերնով նախախնամութեան  
բարերար պատգամն է , իսկ երբ խօսի Նա-  
բօլէոններու , Ռուէններու լեզուով՝ ժողո-  
վըրդոց անխնայ արիւն և աւեր սպառնա-  
ցող անընկճելի զօրութիւն մ'է : Եւ այս

երկու պարագայից մէջ ալ քաղաքական ճարտարախօսութիւնը իր դերը հաւասար յաջողութեամբ կը կատարէ, մարդկային բնութիւնը թէ իր մեծութեան և թէ անկման և նուաստութեան իշխանն ըլլալը կարծես ապացուցանելու համար:

2. - Ուստի ճարտարախօսը ոչ միայն պարտի համոզում մ'ունենալ, այլ նաեւ կը պարտի դիտել թէ իր համոզումը ճշմարիտ է թէ սուտ: Յիրաւի սուտ համոզումն ալ կրնայ ճարտարախօս բերնով յաղթանակել, սակայն իր յաղթանակը վայրկենական է, իր վառքը վաղանցիկ է: Չկայ ճշմարիտ ճարտարախօսութիւն բացի անկէ՝ որուն նպատակն է բարին և առաքինին:

3. - Հասարակաց խօսուած ճառերուն ոճը ուժգին և հրալից պէտք է ըլլայ, բայց նկատելու է որ հասարակութեան հաւանութիւնը կամ համոզումը գիտակցութեամբ ըլլայ: Ասոր համար ճարտարախօսը սրտից հետ խօսած ատեն՝ ջանալու է գլխաւորաբար ինքզինքնէն կամ բնութիւնէն ալ տիրել:

4. - Ճարտարախօսը շատ անգամ ժա.



մանակ չունենար պատրաստելու իր ըսելիքները, վասն զի վիճաբանութեանց բունութիւնը շատ անգամ իր պատրաստածները վեր ի վայր կը շրջէ, հետեւաբար յանպատրաստից բեմն ելնելու սովորելը շատ կարեւոր է :

Յ. - Ամենէն կատարեալ քաղաքական ճարտարխօսութեան յատկութիւններն են. հասարակաց բարւոյն սաստիկ նախանձախընդբութիւն, մեծ սիրտ և մարդկային իրաց վրայ խորին հմտութիւն :

Լեզուին դալով, ճարտարախօսը պարտաւոր է կատարեալ հմտութիւն ունենալ իր մայրենի լեզուին վրայ : Անսովոր և խորթ բառ մը կրնայ ունկնդրաց մէջ քրքրիջ մը յարուցանել և ճարտարխօսին բոլոր յարգը ջնջել :

Իսկ գեղեցկասութեանը (eloction) մասին ջանալու չէ ձեւեր և սեթեւեթներ գտնել, վասնզի կեղծիքը համոզումը կը ցրուէ :




## ԳԼՈՒԽ Բ.

### ՋԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՀԱՐՏԱՐԻՑՍՈՒԹԻՒՆ

1. - Ձեր սրբազան հարգելի հայրերս կ'ըսուին այն ճառերը կամ յայտարարութիւնները զորս զօրավարք կը խօսին բանակաց : Այս ճառերուն գլխաւոր յատկութիւնքն են՝ համառօտութիւն և ուժղնութիւն :

2. - Տեսակ մը զինուորական ճարտար-խօսութիւն ալ կայ որ բանաստեղծից գրուածոց մէջ կը գտնուի . ասի հարց-ձն և կէտ կը կոչուի : Հոմերի Իլլիականին մէջ շատ կգտնուին այս տեսակ գեղեցիկ կտորներ : (Ասկէ աւելի հարկ չեմք համարիր խօսել այս նիւթիս վրայ . վասն զի մեր ազգային մանկուոյն համար սահմանեալ ասպարէզ մը չէ ասի) :



## ԳԼՈՒԽ Գ.

### ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ՀԱՐՏԱՐԻՑՍՈՒԹԻՒՆ


1. - Արհնիւն հարգելի հայրերս կըսուին այն ճառերը որք կարտասանուին դատաւորաց առջեւ ընդդէմ կամ ինպատու մեք :

2. - Արդի ատենական ճարտարախօսութիւնը կը բովանդակէ 1. 7-7-7-7-7 (requisitoire) զոր ժողովրդեան իշխան մը կարտասանէ յանուն ժողովրդեան պատիժ խնդրելով ընդդէմ ոճրագործութեանց և եղերանց . 2. 9-7-7-7-7-7-7, զոր փաստաբանը կարտասանէ 'ի նպատակ իւր պաշտպանեալին . 3. 8-7-7-7-7-7-7, զորս փաստաբանը կը բաժնէ դատաւորաց կարեւոր գործոց համար . 4. 10-7-7-7-7-7-7-7, զորս փաստաբանը կը յանձնէ մէկու մը որ իրմէ խորհուրդ հարցուցեր է . 5. համար (rapport) այսինքն այն տեսակ ճառեր որոնցմով դատաւորները կամփոփեն երկու հակառակ կողմանց փաստերը և ատեանին անաչառ վճիռը կը խնդրեն :

3. - փաստաբանը պարտի իրեն նպատակ ունենալ բարոյականութիւնը : Միշտ որբոց այրեաց և զրկելոյն ջատագով պարտի հանդիսանալ :

4. - Երբ փաստաբանը իմանայ թէ իր արդար կարծելով պաշտպանած դատը անիրաւ է՝ պարտի հրաժարել անկէ, և խորհուրդ տալ իր պաշտպանեալին ձեռնթափ ըլլալ իւր դատէն : Այսպէս

վարուող փաստաբանը ընկերութեան մը  
խիստ պիտանի և արդոյ մէկ անձն է :



## Գ. Լ ՈՒՒՍ Դ.

ՍՐԲԱԶԱՆ ՃԱՐՏԱՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ

ՅՕԴՈՒԱԾ Ա.

1. - ՅԱՂԱԳՍ ՍՐԲԱԶԱՆ ՃԱՐՏԱՐԱԽՈՍՈՒԹԵԱՆ  
ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ ԵՒ ՔԱՐՈՋԻ

1. - Սրբազան ճարտարախօսը կրօնից հը-  
րամանաց հաւատարիմ մեկնութիւնն է :  
Ասոր մէջ ճարտարախօսը շատ դժուարու-  
թիւններ ունենալու չէր իր դիմաց . սա-  
կայն մարդկային կիրք և մոլութիւնք շատ  
անգամ մեծամեծ և ահարկու հակառա-  
կորդէ մ'աւելի անոր դէմ կը խիզախեն և  
կ'ստիպեն ճարտարախօսը իր վարդապե-  
տութեանց ուժոյն վրայ աւելցնել նաեւ  
միւս տեսակ ճարտարախօսութեան հու-  
րը , հրապոյրը մարդկային միտքը համո-  
զելու համար :

2. - Քրտազան ճարտարախօսու-  
թեան առաջին քիւնն է յորում կրօնից

պաշտօնեայն բարոյական նիւթոյ մը վրայ  
 ճառելով կը ջանայ իր ունկնդիրները 'ի  
 լաւն դարձնել : Այս տեսակ ճառերուն  
 սճը պարզ, յստակ և սահուն պարտի ըլ-  
 լալ :

3. - Սրբազան ճարտարախօսը պարտա-  
 ւոր է նկատել՝ որ ինքը Աստուծոյ բերնո-  
 վը կը խօսի . իշխանք, և ժողովուրդք  
 խուռն կը դիմեն իր ոտքը ունկն դնելու ի-  
 րեն : Ուստի ճարտարախօսը ջանալու է իր  
 տաղանդովը , արժանեօքը , վարուքը և  
 ծանրաբարոյութեամբն արժանի ըլլալ  
 պատկառանք ազդելու և իր խօսքերը  
 ունկնդրաց սրտին մէջ տպաւորելու :

### ՅՕԴՈՒԱԾ Բ.

#### 2. - ՆԵՐԲՈՂԱԿԱՆՆ

1. - Ներքուին կը սուին այն ճառերը  
 որ կը գրուին կամ կ'արտասանուին 'ի դո-  
 վեստ նշանաւոր անձանց՝ որոնց առաքի-  
 նութիւնները հետեւողութեան արժանի օ-  
 րինակ հանդիսացած են :

2. - Այս տեսակ ճառը ճարտարախօ-  
 սութեան ամեն ձեւերը և հրապոյրները

կը պահանջէ . յատակագիծը և կանոնաւորութիւնն իրեն անժխտելի մէկ հանգամանքը պէտք է սեպուին : (Տես Պուրտուլուի յատակագիծը) :

## ՅՕԴՈՒԱՆԻ Գ.

### Ծ - ԴԱՄԲԱՆԱԿԱՆ

1. - ԴՊԵՆԻՆԵՆ Ի յիշատակ մեռելոց խօսուած ճառ մ'է : Այս տեսակ ճարտասանութիւնը ամեն հին ազգաց մէջ ի գործ դրուած է : Եղիպտացիք, յոյնք և հըռովմայեցիք զայն առաքինութեան և քաջութեան յորդորիչ կը ճանչէին : Մեծն Պերեկղէս ի Սամոս մեռնող զինուորաց վրայ վսեմ ճառ մ'արտասանեց . երբ բեմէն վար կիջնէր մեռելոց մարք, քորք, և կանայք սփոփուած խուռն գիմեցին Պերեկղէսի ոտքը և անոր գլուխը ծաղկամբ պսակեցին : Ահաւասիկ այս ճառին մէկ գեղեցիկ մասը :

Քաղաքացիք, հայրենեաց համար մեռան ահաւասիկ այն քաջերը զորս թաղեցիք . երբ նկատէք մեր հայրենեաց մեծութիւնը յիշեցէք որ զայս անոնց արեան սարտական էք :

իրենց կեանքը պետութեան զոհ տալով՝ ամենէն փառաւոր շիրմին արժանացան . խօսքս այն շիրմին վրայ չէ ուր կը հանդիշին իրենց սակերոտիք , մեծ մարդոց փառքը զիրենք ծածկող մարմարին տակ ամփոփուած չէ . ամբողջ երկիրն է իրենց Մաւսոյիոնը , անոնց անունը ամեն հոգւոյ մէջ կտարի , անդ է ահաւասիկ անոնց յիշատակին մշտնջեան բնակարանը՝ մինչդեռ մարդկային ձեռակերտ շիրմները կը խորտակին , կը փշրին ժամանակին ձեռք : Հետեւեցէք ուրեմն այս քաջ արանց , իրենց պէս դուք եւս հաւատացէք որ երջանակութիւնը ազատութեան , և ազատութիւնը հոգւոյ մեծութեան մէջ է :

Յետոյ հայրերուն ուղղելով խօսքը .

Չեմ ջանար դձեզ մխիթարելու , միթէ ձեր տղաք քաջութեամբ չմեռան , միթէ դուք եւս նախամեծար չէ՞ք հաճարեր պատուաւոր մահ մը անփառունակ և ամօթալի կեանքէ մը :

Յետոյ կը մխիթարէ հայրերը այսպէս .

Ոչ , ձեր տունը թափուր չէ . ձեր մանկունք օչ եւս են , սակայն իրենց փառքը հոն կը բռնակի ձեզի հետ , այս փառքը իր ճաճանչները պիտի ախուէ ձեր մնացորդ օրերուն վրայ :

Յետոյ խօսքը մեռելոց եղբարց և որդւոց ուղղելով .


Չեզի մեծ ասպարէզ մը բացուեցաւ , դուք աչքերնուդ առջեւն ունիք ձեր հարց և եղբարց օրինակը , բայց մի յուսաք անոնց համբաւոյն հասնիլ , վասն զի մարդ՝ մինչ կենդանի է նախանձօրդ ատոյեան ունի , և անոր հետահուտ եղող ասեւութիւնը միշտ կը ջանայ խլել անոր վառքը , սակայն մեռելոց իրաւունքը անբռնարարելի է , միայն մահը անհետ կընէ նախանձը և կուտայ մեծ մարդոց իրենց արժանաւոր տեղին :

2. - Նոր ազգաց մէջ դամբանականը քրիստոնէութեան կը պարտի իր դոյութիւնը և վսեմութիւնը : Մարդոց շարժումներէն շատն է զի անոնք իրենց անհատական շահերը առաջնորդելու համար կը զիջեն իրենց քրիստոնէութեանը : Եւ անոնք իրենց անհատական շահերը առաջնորդելու համար կը զիջեն իրենց քրիստոնէութեանը :

3. - Այս ճարտարխօսութիւնը ինչպէս իր բնութենէն իսկ կերելի ժողովրդոց զարմանքը գրաւելու , զանոնք հիացնելու և անոնց սիրտը միտքը յափշտակելու ամենէն յարմարն է : Թէ հին և թէ նոր ազգաց մէջ չկայ մէկը որ Պօսիւէի մօտեցած ըլլայ այս մասին : Իր դամբանականներուն թարգմանութիւնը ունինք շնորհիւ հայոց նոր գրագիտութեան պարծանք Հայր Արսենի : Կը յորդորենք դամբա-



նականի մասնաւոր կոչում ունեցող ան-  
ձինք որ իրենց հանապազօրեայ ընթերց-  
ման և ուսման նիւթ ընեն այս ճառերը :



## ԳԼՈՒԽ Ե.


### ԱԿԱԴԵՄԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԹՅՈՒԹԻՒՆ

1. - Ակադեմիան ճարտարութիւն կը կոչուին ուսումնական ընկերութեանց կամ ակադեմիաներու մէջ արտասանուած ճառերը : Այս գրուածները չորս կարգի կը բաժնուին . 1. Լեզուներէն ճարտար ակադեմիանց նորընտիր անդամակիցը կ'արտասանէ . 2. Անոնց որոնք ներքին զորս Ակադեմիան իբրեւ մրցանաց նիւթ կառաջարկէ գիտնոց . 3. Բաներէն ճարտար (harangue) որք կը խօսուին կամ կը գրուին շնորհակալութեան , մխիթարութեան կամ քաղաքավարութեան նպատակաւ . 4. Յիշատակներ , որք ուսումնական կամ արուեստական ծանօթութիւններ և տեղեկութիւններ են :

3. - Ակադեմիական ճարտասանութիւնը ոճոյ ամեն շնորհները և հրապոյրները պարտի ի գործ դնել . վասնզի այս տեսակ

ճարտարախօսին ունկնդիրը գեղեցիկ ճառ  
մտիկ ընելու նպատակաւ միայն ներկայ կը  
դանուի :

(Այս համառօտ ծանօթութիւնը կար-  
ծեմք կը բաւէ, վասն զի դժբաղդաբար  
մեր ազգը զուրկ է այսպիսի հաստատու-  
թենէ, հետեւաբար աս ճիւղին վրայ եր-  
կար գրելն աւելորդ) :



# ՀԱՐՏԱՐԻՍՍՈՒԹԻՒՆ

ՀԱՏՈՒԱԾ ԵՐԿՐՈՐԴ

ԳՐԱԻՈՐ ՀԱՐՏԱՐԻՍՍՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Ա.

1. - ԲԱՐՈՅԱԿԱՆ ՀԱՐՏԱՐԻՍՍՈՒԹԻՒՆ

1. - Բարոյական ճարտարիտեսական նիւթերն են . նախնականական , անհատական , ճարտարական , արտադրական , արդարական և այլն բարոյական խնդիրներ :

2. - Բերանացի կամ յանպատրաստից բանախօսութեանց մէջ զօրաւոր և ուժգին ձայն , յստակ արտասանութիւն , զարդարուն և ձեւաւոր բացատրութիւնք բաւական են ունկնդրին սիրտը և միտքը յափշտակելու , սակայն գրաւոր ճարտարխօսութեան մէջ հեղինակն աւելի մեծ պարտքեր ունի կատարելու . եթէ մարդկային սրտին , բնաւորութեան , օրինաց ոգւոյն և աշխարհային իրաց վիճակին վերայ խօրին հմտութիւն չունենայ՝ իւր գրը-

ուածը իրմէ աւելի չապրիր, և շատ անգամ իրմէ նուազ երկարակեաց կըլլայ:

Յ. - Բարոյական ճարտարախօսը շատ անգամ թատերական ձեւով քանի մ'անձինք կը խօսեցնէ՝ դրական, ուսումնական, կամ ծաղրաշարժ նիւթոց վրայ. ասոր կըսուի *հարստահար* խօսակցութեան: Կիկերոն և Ֆլենելոն՝ շատ նշանաւոր խնդիրներ լուսաբաններ են իրենց տրամախօսութեանց մէջ:

## ԳԼՈՒԽ Բ.

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՐՏԱՐԻՍՍՈՒԹԻՒՆ

### 607-ՈՒԱԾ Ա.

1. - ՅԱՂԱԳՍ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ  
ԵՒ ՀԱՐՏԱՐԻՍՍՈՒԹԵԱՆ ՆՈՐԱ

Ա. - Պատմութիւնը իրաց և դիտուածոց վաւերական և հարազատ նկարագիրն է: Ըստ Կիկերոնի պատմութիւնը ժամանակաց վկայն, ճշմարտութեան լոյսը, յիշողութեան կեանքը, կենաց վարժոցը, հընութեան սուրհանդակն է:

2. - Բանաստեղծութեան անմիջական նպատակն է հրապուրել, ճարտարխօսութեանն է համոզել, փիլիսոփայութեանը՝ իրաց բնութեան և գոյութեանը մէջ ճշմարտութիւնը որոնել. իսկ պատմութեան նպատակն է ստոյգ իրերը նկարագրելով մարդիկ կրթել: Ասկէ կը հետեւի որ ճշմարտախօսութիւնը պատմագրին հիմնական յատկութիւնն է:

3. - Պատմագիրը ճշմարտութեան հասնելու համար պարտաւոր է միեւնոյն դիպուածին վրայ դրող հեղինակները իրարու հետ բազդատել, աւանդութիւնները, յիշատակարանները, հատակոտոր գրքուածք մանրախոյզ մտօք քննել. պէտք չէ մոռնալ որ կիրքը շատ մեծ դեր կը խաղայ պատմագրութեան մէջ, ուստի պատմագիրը պարտի անկողմնասէր ըլլալ:

4. - Սակայն անկողմնասիրութիւն և ճշմարտախօսութիւնը բաւական չեն պատմագիր մ'անմահացնել, նա պարտաւոր է կարեկից սիրտ մ'ունենալ իր պատմած իրաց վրայ: Թշուառին հետ արտասուել, որրին հետ հեծել, զրկեալին հետ խռովիլ և զայրանալ, միտլ բանիւ բռնաւորին

արհամարհանք ցուցընել և արդարութեան վրայ զմայլիլ :

5. - Պատմագիրը իր գործոց մէջ կատարելալ միութիւն նիւթոց պահելու է , ամեն մանր և աննշան դիպուածներ հարկ չէ պատմել :

6. - Պատմագիրը մարդիկ կրթել յաջողելու համար փիլիսոփայի տաղանդ ունենալու է . բարոյականը անոր առաջին և վերջին նպատակը պարտի ըլլալ :

7. - Պատմագրին ոճը վեհ միանգամայն արագ , սահուն , ինքնազարգ և անոյշ պարտի ըլլալ : Մեր անմահ եղիշէն այս մասին հայոց գրականութեան պարծանքն է :

8. - Պատմագիրը իր յառաջ բերած խօսակցութեանց մէջ կրնայ ճարտարախօսութեան հրապոյրներ գործածել՝ միշտ ճշմարտութեան մէջ սահմանափակ մնալով :

9. - Պատմագիրը ճարտարախօս կրլայ՝ մերթ մարդկային կենաց ստորին աստիճանները նկատած ատեն իր գութը գորովը արտասուքը նուիրելով անոր աղետից մերթ կատարելութեան բարձրագոյն աստիճանաց վրայ ամբառնալով՝ վեհագոյն

առաքինութեանց և մարդկային մեծութեան նկարագիրը մարդոց աչաց հայելիի նման անդրադարձելով, Լսենք, ինչ անոյշ և ճոխ բարբառով Եղիշէ մեզ կը պատմէ հայոց տիկնանց կրած տառապանքները և անոնց առաքինութիւնը .

Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին որ գրդեալք և գղուեալք էին յւրաքանչիւր բաստեռունս և ի դահաւորակս՝ հանապազ բոկ և հետի երթային ի տունս աղօթից անձանձբոյթ խնդրեալ ուխտիւք զի համբերել կարասցին մեծի նեղութեանն : Ար ի մանկութենէ իւրեանց սնեալք էին ուղղովք զուարակաց և ամճովք երէոց, խստարուտ կենօք իրրեւ ըզվայրենիս ընդունէին զկերակուրն մեծաւ խընդութեամբ՝ և ոչ յիշէին ամենեւին զսովորական խորտիկսն : Սեւացեալ ներկան մորթք մարմնոց նոցա, քանզի ցերեկ արեւակէզք էին և զամենայն գիշերս գետնաբեկք : Սաղմոսք էին մշտնջենաւորք մրմունջ ի բերանս նոցա, և մխիթարութիւն կատարեալ ընթերցուածք մարդարէից եւոյն :

Ո՛վ յայտնի շտեմներ այս գրուածին մէջ Եղիշէի մաքուր ոգին քաղցր բնաւորութիւնը, և անհերքելի տաղանդը :

ՅՕԴՈՒԱՆ Բ.

2. - ԲԱԺԱՆՈՒՄՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ.

1. - Պատմութիւնը ընդհանուր բաժանմամբ նկատելով երկու տեսակ է՝ «ըբ-բ-ը» և «բ-բ-բ» պատմութիւն :

2. - Սրբազան պատմութեան նիւթն են կրօնից վերաբերեալ դիպուածները , աշխարհիս ստեղծումէն մինչեւ մեր օրերը :

7. - Սրբազան պատմութիւնը երկու տեսակաց կը բաժնուի , բնա՝ «ըբ-ըբ-ըբ-ըբ» որ երկու մաս կը պարունակէ՝ այսինքն հին և նոր կտակարան , և եկեղեցի-նոր-բ-ըբ-ըբ-ըբ» որ եկեղեցւոյ հիմնադրութենէն սկսեալ քրիստոնէից հալածանքը , աղէտները և Մարտիրոսաց առաքինութիւնք կը պատմէ :

4. - Հին և նոր կտակարանները պատմագրութեան՝ և դրադիտութեան ամեն ճիւղերուն կատարելութիւնները անհամեմատ կերպով ունին յինքեանս :

5. - Արտաքին պատմութիւնը երեքի կը բաժնուի՝ «ըբ-ըբ-ըբ» , «բ-բ-բ-ըբ» և «բ-բ-ըբ-ըբ-ըբ» :

6. - «ըբ-ըբ-ըբ» պատմութեան



մէջ պատահած զանազան անցքերը կը պատմէ : Ասիկա կը բաժնուի Գրեգորիոս շահաբանի և Վահագնի պատմութեան :

7. - Տիեզերիքի գիտնականաց աշխարհիս վրայ գտնուած բոլոր ազգաց ծագման , մեծութեան և անկման պատմութիւնը կընէ : Այս պատմութիւնը երեք մասի կը բաժնուի Հին Հայաստան և Նոր : Հին գիտնականաց կը պատմէ հին ազգերը մինչեւ քրիստոսի 476 թուականը . Հայաստան՝ այս ժողովրդոց վերայ կը խօսի մինչեւ 1453 թուականը Նոր Հայաստան պատմութիւնը վերոգրեալ թուականէն մինչեւ մեր օրերը կը հասնի :

8. - Տիեզերական պատմութիւն կատարեալ և արժանաւոր կերպով գրելու համար մեծ տաղանդ և սովորականէն աւելի երկար կեանք մը պէտք է : Կրնամք ըսել որ այս հանգամանքներն իսկ չեն բաւեր , վասնզի լաւ Տիեզերական պատմութիւն մը գրելու համար քանի մը գիտնական ընկերութեանց յաջորդութիւնը հաղիւ կը բաւէ :

9. - Քաղաքական պատմութիւնը շահաբանի կըսուի երբ մէկ թուականի մը կամ տէրութեան մ'ամբողջ պատմութիւնը պարունակէ :

10. - Ազգի մը պատմութիւնը կատարեալ դրելու համար պէտք է անով ծագման ելնել, անոր կրօնից, բարուց և սովորութեանց, արհեստից հաստութեան, մեծութեան և անկման պատճառներուն թափանցել :

11. - Պատմութիւնը մասնաւոր կըլլայ երբ մեծ դիպուած մը միայն նկարագրէ ինչպէս են, Եղիշէ Ղազար փարպեցի ևն :

12. - Պատմութիւնը կենսագրութիւն կըսուի իրեն մէկ երեւելի անձի մը կեանքը նկարագրէ :

13. - Վրէ երեւելի որոշ ըսուած գործերն ալ մեծ օգուտ կընծայեն մարդոց կրթութեան և դաստիարակութեանը . հոն մարդիկ իրենց նմանեաց առաքինութիւնները տեսնելով անոնց նմանելու և անոնց հետ մրցելու խանդ մը կզգան :

14. - Հայտնի պատմութիւնք ալ մեծ օգտակարութիւն ունին, վասնզի տգէտներուն խորհրդական են և գիտնոց յուշարար : Համառօտ պատմութիւն գրողը պարտի ամփոփ և յստակ ոճ մ'ունենալ :

15. - Յիշատակներ մասնաւոր դիպուածոց նկարագիրներ են : Ասոնց մէջ հեղի-

նակըն շատ մեծ տաղանդ և հետազոտութիւն չպահանջուիր, բաւական է որ սլարդ կերպով տեսածները կամ լրածները իդիր առնու:

16. - Գրգիտիւնն ուրիշները կը պարունակէ գպրութեանց, գիտութեանց և արհեստից ծագման, կատարելագործութեան, անկման և վերանորոգութեան պատմութիւնները:

Գրագիտական պատմութիւն գրելու համար գպրութեանց վրայ խորին հմտութիւն, առողջ և խորազննին միտք ունենալու է: Բարևոք գրագիտական պատմութիւն մը ճաշակի համար անհամեմատ ուսուցիչ մ'է:

17. - Բնիւնն ուրիշները է երկրագնաթս վրայ՝ բնութեան Արարչին ստեղծած բոլոր էակաց նկարագիրը: Ասիկա կը բաժնուի Կենդանիւն, Բուսական և Դարձանի պատմութեան:

Հնոց մէջ Պիլիսիոս և նորոց մէջ Պիւֆոն կատարելապէս յաջողած են այս ճիւղին մէջ:

## ՅՕԴՈՒԱԾ Գ.

Ծ. - ՎԵՊ (roman)

1. - Վէրչ ճշմարտանման պատմութիւն մ'է ժողովուրդները զբօսցնելու կրթելու նպատակաւ գրուած :

2. - Վէպին առաջին յատկութիւնը բարոյականութիւնն է : Այն վիպասանութիւնները որոնք այս նպատակաւ գրուած չեն՝ ժողովրդոց բարոյականութիւնը եղծանելէ ի դատ ուրիշ բանի չեն ծառայեր :

3. - Վիպաց ոճը ներդաշնակ սահուն և հրապուրիչ պարտի ըլլալ : Օգտակարը և հաճելին իմի լծորդուելով՝ ընթերցման հետաքրքրութիւնն արթնցնելու է :

4. - Վիպասանութեանց՝ ինչպէս թատերգութեանց մէջ՝ ջանալու է հզօրանորանձը լաւ որոշել և իրողութիւնները անով աւարտել :



# ՄԱՍՆ ՎԵՅԵՐՈՐԳ

ՕՐԻՆԱԿԲ

ԳԼՈՒԽ Ա.

ՅՍՏԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԳ ՀԱՅՐԵՆԻ (ՆՄԱՆՈՒԹԻՒՆ)

Մինչդեռ յուսով խայտայ բնութիւն ,  
Յետ դառնաշունչ ձրմերայնոյն .  
Եւ ի գաւառն իմ հայրենի ,  
Գեղածիծաղ դառնայ գարուն .  
Մինչ բոյր ի բոյր փրթթին ծաղկունք ,  
Եւ ճրուողեն նորեկ ծիծաունք .  
Ի քեզ ես գարձ առնեմ յայնժամ ,  
Ո՛վ ցանկալիդ իմ Հայաստան :

Ոչ Հեւուետեան ինձ դաշտավայրք ,  
Եւ կամ զուարթ մարդադետինք .  
Ոչ քան ըղբեղ չքնաղադեղ ,  
Իտալական պայծառ երկինք .  
Հեռի ի քէն պանդուխտ գոլով ,  
Քոյովըդ յար տապիմ անձկով .  
Ի խանձարուրդ իմոց կենաց ,  
Ո՛վ Հայաստան առնեմ ես գարձ :

Գայցենն աւուրք ուր մանկութեան ,  
 Անկցի տիոցս իմ գեղ դալար .  
 Եւ յինէն խոյս տացեն վայելք ,  
 Կենաց թեթեւ ի դարչապար .  
 Ուր հէգ Մուսայս մատն ի յերեր ,  
 Մուանայցէ երգել ըզսէր .  
 Ըզնինջ ի ծոցդ առնում յայնժամ ,  
 Ո՛վ ցանկալիդ իմ Հայաստան :

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

### ՇՆՈՐՀ

ԱՌ ԶԵՓԻՒՌՆ ԱԼԷՄՏԱՂԻԻ

Դու փափկաթեւ մանկիկ զերիւռ ,  
 Ազբերց վրայէն լուսակարկաջ .  
 Անուշ հոտով ծաղկանց ըսփիւռ ,  
 Ի՞նչպէս թռչիս ինձ ընդ առաջ .  
 Ու խունկ և զով ընծայելով ,  
 Զիս ողջունես հեզիկ շնչով :  
 Ոհ կըսիրեմ գքեզ հողմիկ ,  
 Երբ դու փութաս ինձի դալու .  
 Ի պար ի թռիչ ի սոյլ մեղմիկ ,  
 Այրած ճակտիս իմ այցելու .  
 Ծաղիկ հոգւոյս քեւ զովացած ,  
 Բացուի ի լոյս ախորժ կենաց :

Սլացիր փափկիկ դու սուրհանդակ ,  
 Լուր տար հովտին ու ծործորին .

Ու անտառոց բարձրադիտակ ,  
 Ուր երամով սոխակք թառին .  
 Թէ մտերիմն իւրեանց եկաւ ,  
 Բիւր ըզմայլմանց յիշատակաւ :

Ո՛հ կորսըւած իմ հաճոյքներ ,  
 Հոս վերստին գըտնեմ ըզձեզ .  
 Ծառոց չքքով էք ծածկըւեր ,  
 Ու վըրվըրով առուակին հեզ .  
 Ահա կայտռէք ի յայս ծըմակ ,  
 Ի յայս թըփուտ հովանոցակ :

Հոս դառն հոգեր մէկիկ մէկիկ ,  
 Ճակտէս ի բաց հեռանային .

Ու փունջք ժամուց գեղատարիկ ,  
 Սիրտս թեթեւ օրօրէին .

Եւ բընու թիւն՝ մայր սրդեսէր ,  
 Քնքուշ դրկաց մէջ զիս գըգուէր :

Հոս ճէմէին երեկոյեան ,

Ի զով բստուեր պար մի կուսից .

Մազերն հովուն բազմաբուրեան ,

Սիրտք ընծայուած հեշտ վայելից .

Շող լուսնակին , կոյսն ու ծաղիկ ,

Զիրար շոյեն սիրատարիիկ :

Մտերմութիւն , Սէր կրակուբոց ,  
 Ինչ անուշ էք . յայտ տեսարան ,  
 Ուր բիւր դալարք ձեզ հանգըստաց ,  
 Ու՛ անհուն դաշտեր դբօսարան .  
 Մտերմութիւն , ինձ երանի ,  
 Թէ հոս ծոցէդ հոգիս թռանի ,  
 Դու փափկաթեւ մանկիկ զեփիւռ ,  
 Աղբերց վրայէն քաղցրակարկաջ .  
 Անուշ հոտով ծաղկանց ըսփիւռ ,  
 Թռիւր , թռիւր ինձ ընդ առաջ .  
 Ու խունկ և զով ընծայելով ,  
 Պարէ չորսդիս հեզիկ շնչով :

Մ. ՊԵՏԻԿԹԱՇԼԵԱՆ

ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹԻԻՆ

ՎԵՐԱԴԱՐՁ

Ասէր ոգեակ մանուշակին ,  
 « Թերթք իմ անկան , բեկաւ ծըղօտ .  
 Գոյր իմ , երթամ , և ցօղադին ,  
 Լացցէ վաղիւ դիս առաւօտ .  
 Այլ ոչ ընդ բաղդն իմ հառաչեմ .  
 Որ զիս ընկճէ ի դալարւոջ ,  
 Յորժամ դարուն դայ ծաղկաճեմ .  
 Նազիմ դարձեալ ես յիմ բողբոջ » :



Իսկ ես , ասէր , այգուց ցօղիկ ,  
 « Ի տերեւոց գգուիմ ի ծոց .  
 Ինձ փարելի ծաղկանց ցեղիկ ,  
 Նոցա այտեր ինձ հանգստոց .  
 Այլ զիս կիզու ո՛հ , արեւակ . . .  
 Մի , մի տխրիր վարդ սիրեցեալ ,  
 Գայցէ գիշեր և կարմրորակ .  
 Ի քո ծոցիկ եկից դարձեալ » :

Անդուստ սոխակ ի պուրակին ,  
 Յետին նուազ զայս յեղյեղէր .  
 « Ողջամբ մընայք ջուրք առուակին ,  
 Ողջամբ ծըմակք նըսեմաստուեր .  
 Այլ մինչ նորոգ գայ Ապրիէլ ,  
 Եւ զարթիցեն գեղ գալարիք .  
 Յիմ հովանի եկից թառել ,  
 Սլասցին դարձեալ իմ գայլայլիք » :

Եւ գու վտակ տխրակարկաջ ,  
 Ձի այդ մրմունջ քո սրտացաւ ,  
 « Լուարուք գաշտք ո՛հ , զիմ հառաչ .  
 Վըճիտ աղբիւրս ցամաքեցաւ ,  
 Այլ ձիւնաբերք մինչ ի լերանց .  
 Գայցեն զերկիր արբուցանել ,  
 Ես ի միջոյ փափուկ ծըղեաց .  
 Եկից դարձեալ հեղիկ սահել » :

Շողն արփենւոյն ընդ երեկոյս ,  
 Յիւրն օրհասին ամպոց վերայ .  
 Աղօտափայլ գողգոջ մի լոյս ,  
 Տայր ընդ ոլորտըս բացակայ .  
 « Սակայն , ասէր , երկիր ծաւալ ,  
 Ծով ծիրանի , առնում ձեզ այց .  
 Ընդ աշալուշ վաղիւ դարձեալ ,  
 Յոյժ առաւել ես փայլեցայց » :  
 Այսպէս ահա ծաղիկ և ցօղ ,  
 Սոխակն անոյշ , անոյշ առուակ .  
 Եւ արփենւոյն կենսաբեր շող ,  
 Մեկնին , սակայն դառնան երազ .  
 Եւ դո՛ւ կուսիկ , դու որ դեռ նոր ,  
 Ծածկեալ ի հող մատաղ ըզտիս .  
 Տարեր ըզգեղգ , ըզբոյր և շնորհ ,  
 Ա՛հ , դո՛ւ միայն ո՞չ եւս դարձցիս :  
 Մ. ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ՓԱՓԿՈՒԹԻՒՆ

ԳԱՐՈՒՆ

Ո՛հ , ինչ անուշ և ինչպէս զով  
 Առաւօտուց փըչեա հովիկ ,  
 Ծաղկանց վրայ գուրգուրալով  
 Եւ մազերուն կուսիկ փափկիկ ,

Բայց չես հովիկ իմ հայրենեաց  
 Գրնա անցիր սըրտէս ի բաց :  
 Ո՛հ , ինչ աղու և սրտագին  
 Մառոց մէջէն երգես թռչնիկ ,  
 Սիրոյ ժամերն ի յանտառին  
 Ըզմայլեցան ի քօ ձայնիկ ,  
 Բայց չես թռչնիկ իմ հայրենեաց  
 Գրնա երգէ սրտէս ի բաց :  
 Ո՛հ ինչ մրմունջ հանես վըտակ  
 Ականակիտ և հանդարտիկ ,  
 Քու հայելոյդ մէջ անապակ  
 Նային զիրենք վարդն ու աղջիկ ,  
 Բայց չես վըտակ իմ հայրենեաց  
 Գրնա , հոսէ սըրտէս ի բաց :  
 Թէպէտ թռչնիկն ու հօմն Հայոց  
 Աւերակաց շրջին վերայ ,  
 Թէպէտ պղտոր վըտակն Հայոց  
 Նոճիներու մէջ կը սողայ ,  
 Նօքա հառայք են հայրենեաց  
 Նօքա չերթան սըրտէս ի բաց :

Մ. ՊԵՏԻԿԹԱԵԼԵԱՆ

## ՆՈՅՆ

ԲԱԺԻՆ ԻՄ

Իբր ըզթիթեռնիկ՝

Որ ի ծաղկէ թըռչի ծաղիկ ,  
 Սլանալ ճախրել զըւարթագին .  
 Խընդից ի խինդ անմեղ սըբտին ,  
 Այս է քո բաժին :

Իոր ըզտերեւիկ՝

Որ ի բունոյն արտալածիկ ,  
 Հողմոց ի հողմ վարի ցըբտին .  
 Վըչտաց ի վիշտ բախել ուժգին ,  
 Այս է իմ բաժին :

Իբր ըզշուշանիկ՝

Վէտ վէտ ի ջուրց ծըփինս մեղմիկ ,  
 Բուրել անոյշ յառաւօտին .  
 Եւ ըզմայլել զակն և զոգին ,  
 Այս է քո բաժին :

Իբրու զեղէգնիկ՝

Մեռեալ լըծին յափ տըզմասիկ ,  
 Առ տըխրութեանց լըճաւ խորին .  
 Կալ ծըփծըփել երերագին ,  
 Այս է իմ բաժին :

Իբր ըզծըմակիկ՝

Լըցեալ ի լոյս և ի ցօղիկ ,

Բըխել աղբերըս զովագին .  
 Փըթթել ծաղկունս բիւր ի ծոցին ,  
 Այս է քո բաժին ,

Իբր ամուլ դաշտիկ՝  
 Անկեալ խոսան տըրտմազգեցիկ ,  
 Ուր ո՛չ դալար հըրճուէ զոգին .  
 Ո՛չ մի ըստուեր ուղեւորին ,  
 Այս է իմ բաժին ,

Իբր ըզսոխակիկ՝  
 Վարդից յուղէշ ցօղածըփիկ ,  
 Երգել զոգւոյն քո կուսային .  
 Գարուն զըւարթ և երկնային ,  
 Այս է քո բաժին ,

Իբր ըզբու մէնիկ՝  
 Որ ջայլս առնու սըգազգեցիկ ,  
 Մընչել , հեծել , լալ մըթագին .  
 Ըզցայգ ցերեկ մահ՛ ՚ի սըրտին . . . . .  
 Վահ , այս իմ բաժին ,

ԽՈՐԷՆ ԵՓԵՍՎՈՊՈՍ

ՆՈՅՆ

Ասացեալ զայս տարածեաց Հեկտոր ահեղ  
 գիրկս առ որդեակն  
 Եւ մանկիկն յետս ի ծոց գեղեցկամէջ իւ-

րոյ ստընտուին  
 ձիչ բարձեալ խոնարհեցաւ՝ ի տես սիրուն  
 հօր զարհուրեալ,  
 Պակուցեալ ի պղընձոյն ու ձիագէտ գարգ-  
 մանակէն .  
 Չահաւոր տեսեալ ճօճեղն ի դագաթանց  
 գլխանոցին ,  
 Ընդ որ հայրըն սիրելի և մեծարոյն ժըմ-  
 տեցաւ մայր :  
 Եւ անդէն բարձ ի գլխոյն ըզսաղաւարան  
 ահեղ Հեկտոր ,  
 Եւ առեալ զայն ի վայր՝ ճաճանչաւէտ եդ  
 ի գետնի .  
 Եւ զմանկիկն սիրուն ողջագուրեալ ճօճ-  
 եալ ի ձեռսն ,  
 Յաղօթս եկաց և ասէ առ Արամազդ և  
 առ այլ դիւ .  
 Արամազդ և այլ աստուածք , տուք և  
 զսա զիմրս որդեակ  
 Լինեւ , որպէս և եսս արժանափառ ի Տը-  
 րովացիս ,  
 Այսպէս հըզօր զօրութեամբ և քաջաբար  
 տէր յիլինն ,  
 Եւ իցէ ոք ասացէ , բամ սա քան զհայրն  
 արիագոյն ,

Ի մարտէն յորժամ դարձցի և արիւնոտ  
 բերցէ կասուտ .  
 Սատակեալ զախոյեանն , և մայրն ի սիրտ  
 խընդասցէ :  
 Զայս ասաց և ամուսնոյն զորդեակն ի ձե-  
 ոքս ետ սիրայնոյ ,  
 Որ առեալ ընկալաւ ըղնա ի գիրկս իւր  
 բուրազուարթ  
 Արտասուախառնն խընդութեամբ , առն  
 յայն տեսիլ խանդաղատեալ .  
 Փայփայեաց ձեռօքն ըղնա , կարդաց զա-  
 նուն իւր և ասէ .  
 Նազելիդ իմ , մի այնչափ զինէն ի սուգ  
 հարցի քո սիրտ ,  
 Զի յառաջ քան ըղհրամանսն ոչ ոք ի դը-  
 ժոխս ընկեսցէ զիս ,  
 Իսկ յօրհասէն՝ և ոչ զոք ի մարդկանէ կար-  
 ծեմ փախել ,  
 Ոչ ըզվատ և ոչ ըղքաջ , յետ միանգամ ի  
 լոյս դալոյ :  
 Այլ երթեալ քո ի տուն՝ քոյոց իրաց առ-  
 նիջիր պէտ ,  
 Ոստայնոյդ և իւրոյդ , և աղախնայցըդ  
 տուր հրաման  
 Ըզգործուիք գալ իւրեանց . հոգասցեն ի

պատերազմ  
 Որ ծնեալքն են յիլիոն ամենեքին, ևս  
 մանաւանդ :  
 (ՀՈՄԵՐ ԻԼԼԻԱՒ ԵՐԳ Զ.)

ՆՈՅՆ

Կ Ա Ղ Ա Ն Դ

ՈՒՐԱԽ ԼԵՐ

Կէս գիշերոյս թանձր ի ստուեր,  
 փոխեաց տարին զիւր պատկեր .  
 Հին գլխոյն ի նոր գիմակ,  
 Զայտըս ներկեալ կարմրորակ .  
 Ի սեթեւեթս թոյր ի թոյր,  
 Յաչս և՛ ի շարժուածս բիւր հրապոյր .  
 Բաժակ ի ձեռն ջահալոյս,  
 Գայ զմեօք վարիլ իբրեւ հարս կոյս .  
 Ասէ « Մարդ, որ ցարդ կեցեր,  
 Արբ դու զբաժակս ուրախ լեր » :  
 Զիք վերադարձ ի կենցաղ,  
 Մինչդեռ հասակդ է մատաղ .  
 Պատանիդ կամ օրիորդ,  
 Շնչեա՛ ազատ զկենաց օդ .  
 Քեզ սէր անուշ կեանք անուշ,  
 Փոյթ չէ թէ չիք վարդ անփուշ .



Չեւ արեւդ ի միջօրէ ,  
 Իսկ թէ ի կորն իջանէ .  
 Մինչեւ մտեալ չէ գիշեր ,  
 Արբ դու զբաժակդ՝ ուրախ լեր ,  
 Ձիք վերագարձ ի կենցաղ ,  
 Վնող և օրհաս գայ վաղվաղ . . .  
 Արդ թէ հրաման անընդդէմ ,  
 Շրջէ տարւոյս քեզ ընդդէմ  
 Խնճ Գր - Ար - - - ձ + եւ հ - ւր Է - ւ  
 Ե - Վ - ր - անիւ եք բ - Է - ւ .  
 Ե - + եւ հ - ւր Է - ւ . և իցիւ  
 Ձի հրաւէրդ առեալ դու խնդիւ՝  
 Մահու հրեշտակդ քեզ ասէր .  
 « Արբ զայս բաժակ ուրախ լեր , »  
Յ . Ո .

ՃՈՒՍՈՒԹԻՒՆ

ԼՈՅՍ ՏՈՒՐ ՏԷՐ ԱԶԱՅ ԻՄՈՑ ԶԻ ՄԻ ԵՐԲԷՔ  
 ՆՆԶԵՑԻՑ Ի ՄԱՀ

Իբրեւ նըժգեհ , իւր հայրենեացն ի խըն-  
դ իր ,  
 Յեցեալ ի թեւս ժամանակի ի նանիր .  
 Քանի ամք են ես թափառիմ անօգուտ ,  
 Փախստական երջանկութեան հետամուտ .  
 Մինչեւ հասեալ անկայց արդեօք ապիկար ,

Յերկիր ի ստոր իբրեւ արծու ի նետահար .  
 Եւ ննջեցից ես ի մահ .  
 Տես , ճոխութիւնք , թըշուառութիւն և  
 հասակ ,  
 Չեն ինձ մնայուն պարծանք , ամօթ կամ  
 սլոսակ .  
 Քաջաց իսկ փառք ժամանակի են աւար ,  
 Յընդեալ ընդ օդ իբրեւ տերեւք հողմա-  
 վար .  
 Նա դահք բարձունք կան առ մահուն դա-  
 հավէժ ,  
 Սուր ի վերոյ կախեալ ընդ թել ի վըրէժ .  
 Ո՞չ նընջեցից ես ի մահ ,  
 Ո՛հ , այսօր իսկ միւս եւս իջի աստիճան ,  
 Ընդ երերուն սանդուխս ամաց առ դամ-  
 բան .  
 Չօտն իմ ի ստոր արդ կարկառեմ ընդ խար-  
 խափ ,  
 Եւ թէ դըթեմ՝ աւուրցն իմոց լընու չափ . . .  
 Անկայց , այժմ , անկայց անշուշտ ես ի ստոր ,  
 Խաւարամած յանելն ի դուք կորակոր .  
 Ուր նընջեցից ես ի մահ ,  
 Յարդ որ առ ի զունայնութեան ըղճաշակ ,  
 Ի՛նչիրտ հեղեալ դառն արտասուացս ըղ-  
 կայլակ .

Ըզնայն քեզ, Տէր, խոնարհաբար տամ նը-  
 ւէր,  
 Միշտ քոյդ սիրոյ յիշատակաւն ի ճենճեր .  
 Թէ հաճեցիս, ի լոյս շնորհացդ ասպատան,  
 Թէ և մեռայց մի, մի երբէք, յաւիտեան  
 նընջեցից ես, Տէր, ի մահ :  
 Յ. ՈՍԿԱՆ

ՆՐԻՈՒԹԻԻՆ

ԱՍՏՈՒԱԾ ՍԷՐ Է

ՄԱՂԹԱՆՔ ԱՌ ՍԷՐՆ

Որ զբարձրելոյն ամ շանթազէն  
 ի գլուխ մարդոյ՝ արդեւեր,  
 Եւ զկայծակունս յայն՝ ի պահուն  
 Յանդունդս ի խոր թափեցեր .  
 Ո՛ր բարեկամ՝ մարդկան ազգի,  
 Սէր նազելի, գեղանի՝  
 Աղէ, ասսի, ընդէր լըքեր  
 Դու զիմ աշխարհն հայրենի .  
 Ո՛չ ասպաքէն երբեմն դու անդ  
 Գահ քեզ առեր զԱյրարատ,  
 Եւ երփնագեղ աղեղամբ քով  
 Պըսակեցեր ըզճակատ  
 Բարձանց Մասեաց, և՛ անդ խնամեցեր

Ըզմարդկութեանս նոր օրրան ,  
 Ուր և յառաջ զնա գըգուեցեր  
 Յեղեմական կոյս խորան .  
 Ո՛չ ապաքէն երբ շրջեցար  
 Մեղուցելոյն ՚ի պատկեր  
 Զերախայրիս փայտին կենաց  
 Դու յիմ աշխարհն յըղեցեր ,  
 Միթէ այգիդ՝ զոր տնկեցեր  
 Ի Հայաստան երբ փուշ .  
 Զի՞ է աւեր . նա՞ զքեզ եթող ,  
 Թէ դու ըզնա շածես յուշ :  
 Շըքեղ տաճարքդ կան գետնամած  
 Քաղաքք և գիւղք մարդաշատ  
 Անսուրբ զեռնոց և դաղանաց  
 Ահա որջք են , և չէ շատ :  
 Ո՛հ աղետիս , ժողովուրդս այս՝  
 Զոր դու , Սէր , քեզ ըստացար ,  
 Զանձն իւր հերձէ , և համարի  
 Քո դրօշակիդ կալ պատկառ :  
 Այլ ի հողի թշնամութեան  
 Իցէ պաշտօն քեզ հաճոյ ,  
 Միթէ մարդոյ կամ քաղաքի  
 Ետ՞ուր երբէք ըզիառս քո . . .  
 Խնայեա՛ ի սա , Սէր , պաղատիմ՝  
 Եւ տուր կուրիս տեսանել

Չճշմարտութիւնդ ոչ աստ կամ անդ ,  
 Այլ սուրբ սրտիւ քեզ հայել ,  
 Չհուրդ և կայծակ արձակեա , սէր՝  
 Ի գողգոթա աջով քո ,  
 Եւ սպառ ի սպուռ զատելութեան  
 Բարձ ըզմնայլն ի միջոյ .  
 Եւ եղիցուք մեք և երկիրս  
 Այն դրօշակաւ քեզ ստացուած ,  
 Յորոյ վերայ ուխտին արեամբ  
 Դրօշմեալ կայ միշտ Սէր - Ա - Գ - Գ - Գ - Գ :

Յ. Ո.

ՊԱՐԶՈՒԹԻՒՆ

Ի ՔԵԶ ՏԷՐ ՅՈՒՍԱՅԱՅ

ՆՉԴԵՋ Մ'ԵՄ ԵՍ

Բազդ ոխերիմ իմ հայրս երկրէն հալածեց ,  
 'Ի օտար ավանց վըրայ մայրըս զիս երկնեց  
 Աչքս արտասուաց համար միայն տեսան  
 Լոյս . . . :

Հարցս յիշատակ ոգիս խամբեց տոչորեց .  
 ՆՉԴԵՋ մ'եմ ես .

Տէր , դու իմ սիրտըս գիտես :

Հայրենիքն իմ քառավըտակ էր մի դը-  
 րախտ ,

՚Դ ազգն իմ գըլխոյ , ում գեղեցկին գիպառ  
 բաղդ .  
 Հարաւ խորշակ , և Հիւսիս ձիւն փոթոր-  
 կեց . . . .  
 Եւ Հայ զիւր սէրն յօտարութեան ողբաց  
 գաղտ :

Նժգեհ մ'եմ ես ,  
 Մի առներ զիս , Տէ՛ր , անտես :

Նպատակ մ'է սիրտըս նետից խորամուխ ,  
 Վաանի կորովս իբր կիսասպառ հրոյ ծուխ .  
 Իբր եղջերու որջէս փախչիմ վիրաւոր .  
 Ա՛ւր հանգչեցնեմ մեռելտտի զիմ գըլ-  
 լուխ . . . .

Նժգեհ մ'եմ ես ,  
 Բաղդ , հերիք զիս հալածես :

Միթէ չ'էր բաւ ինձ թշնամեաց բիւր վոհ-  
 մակ ,  
 Ինչ կը գրգռես յոստիտութիւն գըժնդակ  
 Զիմ ընտանին . թո՛ղ որ սիրենք մենք զի-  
 բար ,  
 Եւ ըսենք դառն հեղլով յաչաց մեր վը-  
 տակ

«Նժգեհ մ'եմ ես  
 «Եւ դո՛ւ , գըժբաղդ , եղբայրս ես »

Քաղցր ինձ անունդ մօրս կաթին պէս ,  
 Հայաստան ,  
 Բայց ինչո՞ւ հարքս հալածեցան խուժաս-  
 տան . . . .

Նթէ սրտից խորանին տեղ մի բազին  
 Դնէին նոքա , գոնէ կ'ողբա՞ր իմ բերան  
 «Նժդեհ մ'եմ ես  
 «Հեռ.ի հայրենի երկրէս»

Զի՞նչ քաղցր քան զքեզ . Աղատութիւն  
 Հայրենի ,  
 Ոսկի կամ կին , աւաղութիւն , դահ յերկ-  
 րի . . . .

Ո՛հ , հինգ դար է քեզմէ զուրկ եմ , բայց  
 Ազգ եմ .  
 Ինչո՞վ արդեօք . . . Աղատութեամբ իմ  
 [սղծի

Նժդեհ մ'եմ ես ,  
 Բայց զիս դերի չկարծես :

Կայ զօրութիւն գլխուս վերև . Աստուած է .  
 Կայ զօրութիւն ստիցս ստորև՝ այդ մահ է .  
 Բայց երկուց մէջ կայ մէկ երրորդ զօրու-  
 թիւն ,

Որ Անմահին մի սպտկերն է , այդ խիղճս է .  
 Նժդեհ մ'եմ ես  
 Տէ՛ր , զիս քենէ չիզատես :

Իմ խիղճ կ'ըսէ , « պաշտես Աստուածդ  
 հարցրդ պէս ,  
 « Ի ազգիդ պատիւը մինչև ցմահ պաշտ-  
 պանես ,  
 « Սիրես ընկեր Ազգակիցըդ , իսկ թէ նա  
 « Մուռ համոզմամբ զքեզ խըտրէ , դու ը-  
 սես

« Նժդեհ մ'եմ ես՝

« Բայց միշտ ներող Հայ մ'եմ ես » :

Շատ դար առաջ իմ հօրս ըսին . « թող 'ի  
 բայց

« Դու զայդ խորհուրդ , և մնայ որդւոյդ  
 քու ստացուած . »

Նա գլուխ դրդուեց , և ձեռքերը կար-  
 կառեց

Շղթայներու , որ ինձ Սուրբ են համար-  
 ուած .

Նժդեհ մ'եմ ես .

Բայց միթէ զիս վա՞տ կարծես ,

Ո՛ւր են դրացիքս . . . կորեա՞ն արդեօք .  
 ո՛ւր են փառք . . .

Ո՛ւր զօրութիւնք . . . խորտակեցան իբրև  
 լարք .

Բայց տե՛ս , միակ և յաւերակս իսկ  
 կ'ապրի



Խորհուրդ Նախնեացս շիրմաց վերայ կեն-  
դանի ,

Նժդեհ մ'եմ ես .

Յոյս իմ , լոյս իմ , Տէ՛ր , դու ես ,

Դատաւոր Սուրբ և Սուր Տեառն՝ է ժա-  
մանակ .

Համբերութիւն առաքինեաց է պըսակ ,  
Յալիս շարժուն ունիմ ես յոյս հաստա-  
տուն ,

Եւ դիմ բևեռն՝ ուր հայի միշտ սրտիս սը-  
լաք :

Նժդեհ մ'եմ ես ,

Բայց դեռ մըցիմ յասպարէզ ,

Փոքր միւս ևս , դուցէ երկինք ինձ ժըպ-  
տի ,

Առաւօտ դայ սև ամպն ու մութն հա-  
լածի . . .

Շատ՝ թէ բացուստ իմ հարցս շիրիմ նըշ-  
մարեմ ,

Եւ զայս կըտակ ընեմ զաւկիս . «լուր , ս'ը-  
դի .

«Նժդեհ մ'եմ ես .

«Հօրդ ոսկորները հօն թաղես :»

Յ. ՈՍԿԱՆ

## ՈՒԺՔՆՈՒԹԻՒՆ

## ՈԳԻ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ

Գ Ո Ւ Թ

ՆՈՒԷՐ ԱՌԻՆԱՄԱԿԱԼ ՏԻԿՆԱՅՍ  
ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՅԻ

Եղեալն յաղեղ հաստատուածեան լայնալիր  
Նեա տեառն՝ ի դու՛նոս ուղղեալ պատ-  
րաստ էր ի թիւ .

Եւ մահացուաց համակերպ յահ ու դող ,  
Հայէին ոչ աչքն ի շանթ հերձն երկնից քող :  
Սեաւ էր օր , կամ՝ սեաւ արեւ . . . . նա՛  
գայր Տէր .

Յերկունս մահու երկիրս հեծէր տաղնա-  
պէր :

«Մի , մի ի սա , այլ յիս Տէր , յիս » , գոչ-  
եաց ձայն

Լուռ յաշխարհէս , ՚նդ ամպս և ամպրոտս  
ամենայն .

Մինչ Անմահին աչքն ուղղեցան մերս ի կոյս  
Ո՛հ հրաշալեացս , մատաղատունկ կայր մի  
կոյս

Իջեալ ի դու՛նս , աղերսարկու ի ժայռն  
անդ

Ուր զառաջինն գիպելոց էր երկնից շանթ :

Բարձրաւանդակ էր վայրն՝ և սեպ զառ ի  
 վեր ,  
 Ուր հողմն նդ կուսին խտարտսն անցեալ  
 թրուանէր .  
 Մինչ ձիւնափայլ այտիցն եկեալ ընդ բո-  
 լոր ,  
 'Նդ ականողիս գնային ոլոռն շիթքն ի  
 ստոր  
 Անգ զառաջեաւ , ուր կայր սպիտակ մի  
 կուտակ  
 Ոսկերց մարդոյ , և որդնալիբ սկաւառակ ,  
 Գիծին աստեղք աչացն այսպէս գէտ ի  
 վեր ,  
 Մի ձեռն ի կուրծս , ուր սիրտ արտիէր  
 բարասէր ,  
 Բարձրացուցեալ միւսովն ըզդառն ըզբա-  
 ժակ՝  
 Ուր գեռ ծըխէր դառինն ուխտի սուրբ  
 վիժակ ,  
 « Երդ մեկցուցեալ ըզքեզ ի սա , գոչէր ,  
 Տէր .  
 « Յիս ըզշանթիսդ և մի զաշխարն սատա-  
 կէր » ,  
 Եւ նոյնհետայն գըղըրդեցաւ երկրիս  
 գունտ ,

Փայլ և խաւար , նետ տեառն յերկնից էջ  
 յանդունդ ,

Իբր ծիր հըրոյ շուրջ բոլորեալ զաշխար-  
 հաւ

Անց առ կուսիւն , 'ւի հրատըն կոյս շեղե-  
 ցաւ :

Հողմք , շանթք , եթերք , նա՛ տիեզերք  
 կացին լուռ :

Շուարեալ պահ մի յահ և մահու ի սար-  
 սուռ :

Ապա յամպոց որոտաձայն ել բարբառ .

« Տամքեզ , ահա , ժառանգութիւն զայդ  
 աշխարհ ,

« Ո՛ր դուստր իմ դութ . զայդ յիմ վրիժուց  
 կապտեցեր՝

« Լեալ քառութիւն մեղուցելոյն ընդ ե-  
 պեր » :

Յայս ձայն ուխտի երկիրս թնդաց կրկնակի ,

Եւ անմահից գունդք կրկնեցին « Եդիցի » :

Ել ապա կոյսն և եդ զբաժակն ի վէմն անդ  
 Ուր խորանն էր ուխտի Տեառըն անվը-  
 կանդ .

Եւ երիցըս երկիր եպագ մինչ ի հող ,  
 'ի անդէն բարձաւ յաչաց մարդկան սեաւ  
 մի քող . . .

Յետ միջաւուր նոր օր էր և նոր արեւ ,  
 Ի գողգոթա երփըն կամար շուրջ զիւրեւ :

Յ. ՈՍԿԱՆ

ՊԼՍՊԻՍՈՒԹԻԻՆ

ԱՌ. Է. ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ

Ո՛վ գերաթուիչ արծիւըդ վեհ օդապար .  
 Երկնասլացիկ բնակեալ Մասեաց ի կատար ,  
 Անտի զօդոցն հատեալ զամբաւն յասպա-  
 րէզ .  
 Ճախր յանդիման առնուս արփւոյն բոցա-  
 կէզ ,  
 Զանմահն յերկնից ծըծեալ ըզսիւգ եթե-  
 րաց ,  
 Հուր ի ծոցոյդ ժայթքես և շանթ կայծա-  
 կանց .  
 Դու զբոցաշունչ պարզեալ քոյին ըզլեզու ,  
 Արիւնտուոգ թըռչիս ընդ դաշտն Արտազու .  
 Անդ ի միջի դըժոխըմբեր արհաւրաց ,  
 Պաշտօնէից մռնչես ընդդէմ տարերաց .  
 Դու և երբեմն հեղամընչիկ աղաւնեակ ,  
 Եւ կուսական կամ թէ փողար ողբերգակ .  
 Վըտակահոս ի վարդագոյն ճապաղիս ,  
 Ողորմ ողորմ մընչես մընչիւնա դառնաղիս .

Մերթ դու սոխակ քաղցրախօսիկ ի մըր-  
մունջ ,

Աւետաւոր դաս մեզ օգոց բարեշունչ .

Եւ ի կարմիր վարդին բուրեան տերեւոց ,

Յարազըւարճ մաղթես դարունըս Հայոց .

Ո՛հ յիրաւի հաս ք-ք-նիկ աւասիկ ,

Ի փունջ վարդից ողնեաց Հոյոց -չ-բնիկ .

Յարեաւ սոխակդ որ քեզ ըղնոյն գեղգեղէ ,

Չխարդ փափուկ ըղգայլայլիկն յօրինէ .

Մերթ դու հրեշտակ խաղաղութեան ի  
համբոյր ,

Մեռելաստիպ սլատեալ ի քօղ սեւաթոյր .

Ի Է-ք-նի տըխուր վիմին ի -ը-բ-

Ողբանըւադ եղերերգես ի քընար՝

Նա զինչ ասեմ , թողեալ զերկիր դու ի  
վեր ,

Թեւս ի թեթեւ սաւառնացեալ ընդ ե-  
թեր ,

Թըռեար ի գլուխ անդ-մանդեոյ -ի-ն-կն .

Եւ խօսակից եղեր ընդ վեհ գիւցաղին .

Ըղհոյլս հոգեացն ըղմայլեցոյց անմահից՝

Քաղցրածաւալ ծորանք երգոցդ անուշից .

Անդ ի տախտակ մըտացդ էլցըս տիպար .

Հանեալ ճըշգրիտ գեղեցկաթոյր ի նըկար ,

Անդ ի թաւալ խուժէ ի ներքս ովկիան ,

Եւ վրվրադէզ ցայտէ ի գուրս միւսանգամ,  
Մերթ գու հեղեղ ուղխահոս ճոխ աւա-  
րաւ .

Եռանդնաչարժ գըլլես զայլիս սուրարչաւ .  
Եւ մերթ յանգորր ոլորտացեալ անապակ ,  
Զերթ բիւրեղեայն ծիծաղածայիտ ջինջ վը-  
տակ .

Եւ յայնժամ ոչ գեղեցկատիպ բընաւ էք ,  
Քոյդ քաղցրութեան հաւասարեն ինչ եր-  
բէք .

Ոչ ծաղկասէր վըթթեալ չքնաղըն դարուն ,  
Գողարիկ շուշան , յասմիկ և վարդ ցօղա-  
սուն .

Ոչ զեփիւռիկ դարնան խընդից պարառաջ ,  
Ոչ օդաթռիչ հաւուց մըրմունջք քաղցրա-  
ւաչ .

Այրարատեան ուղ դիւցաղունք իմ Հայոց ,  
Զոյս ոխերիմ ծածկէ դեռ հող յիւրն ի ծոց .  
Յն զաղջամուղջ լըքեալ մահուն ըղգամբան ,  
Անմահութեան վերաթեւէք յօթեւան .

Եւ ոսկեփունջ առէք ի գլուխ պերճ պրուակ ,  
Զոր ձեղ Ղեւոնդ հիւսէ մատամբք գերու-  
նակ ,

ՎՍԵՄ

Մեծ հառաչեալ Արամազդ ամալրոպայինն՝  
 ասէ ցնա ,  
 Գործ գըժնեայ՝ թէ գըրդիցես զիս գալ  
 Հերայ յատելու թիւն .  
 Եւ նա զիս սանգաստակաց բանիւք գըր-  
 գըռեալ զայրացուսցէ ,  
 Որ և այսպէս իսկ յանմահ գիտն ի հենդնի  
 կայ միշտ ընդիս .  
 Ասել զինէն թէ ի մարտըս տրովացւոց լի-  
 նիմ՝ նըպաստ :  
 Այլ արդ գու գարձեր ի բաց , մի գքէն  
 Հերա գիտասցէ ինչ ,  
 Այլ ահա և գըլխովս ակնարկեցից քեզ  
 յերաշխիս .  
 Որ այն ինքն է մեծագոյն նըշան յանմահս  
 յինէն կուսէ .  
 Ձի չէ իմ ինչ յեղյեղուկ , և ոչ պատիր ,  
 ոչ անկատար .  
 Զո՛ր և ինչ միանգամ գըլխովս իմով ակ-  
 նարկիցեմ :  
 Ասաց և ակնարկեաց կապոյտ յօնիւքըն  
 Զըրուանեանն .  
 Յանմահ գլխոյ թագաւորին աստուածե-



դէն շարժեցան վարսքն ,  
 Եւ ըզմեծըն տատանեալ գըղըրդեցոյց զՈ-  
 լիմպոս :  
 (ՀՈՄԵՐ ԻԼԼԻԱ. ԵՐԳ Ա.)

ՆՈՅՆ

Առաւօտըն քըրքմազգեստ տիեզերաց սը-  
 փըռէր յօլորտս ,  
 Եւ ժողովեաց Արամազդ փայլակնազուարճ  
 ըզդիցն ատեան ,  
 Անդր ի գլուխ ի բարձրածայր սարաւանդ-  
 եալն Ոլիմպոսի :  
 Նա նոցա ճառ արկանէր , համօրէն գիք  
 դընէին միտ ,  
 Ունկն ինձ մատուցէք , գիք ամենայն և  
 գիցանոյշք .  
 Զի խօսեցայց յոր ի լանջըս իմ հոգիս յոր-  
 դորէ զիս :  
 Մի ոք արդ յաստուածոց , եթէ յիգաց և  
 թէ յարուաց .  
 Հնարեսցի խըղել զպատուէրս , այլ միա-  
 ձոյլ հաւանութեամբ  
 Զեռն յիս տուք , զի վաղադոյն գործոյս  
 ժաման եղէց յամբովկ :  
 Իսկ զոր ի դից ոք տեսից ժըտեալ ի կամս

Ինչ ինքնօրէն .  
 Դիմել երթալ յօգնութիւն Տրալագացոյ  
 կամ Աքայեանց ,  
 Հարուածեալ նըշաւակ դարձցի այսրէն նա  
 յՈլիմպոս .  
 Կամ բուն հարեալ ընկեցից ի Տարտա-  
 րոսըն խաւարչուտ ,  
 Քաջ ի բաց , ուր խորխորատ է յանդընդոյ  
 սանդարամետա .  
 Ուր դըրունք են երկաթիք , սեամք և  
 գըրանդք պըղընձակուռք ,  
 Ի դժօխոց այնչափ ի խոր , որչափ երկինք  
 բարձր են յերկիրէ .  
 Անդ ի միտ առցէ քանի դից բընաւից եմ  
 բըռնադոյն :  
 Օն արիք , դիք , ի հանդէս , զի դփօրձ  
 առջիք ամենեքեան ,  
 Առէք խաղաղացուցէք յերկնուտ շըղթայ  
 մի ոսկեղէն .  
 Բուն հարեալ յայն դիք բոլոր և դիցա-  
 նոյշք կախեցարուք ,  
 Սակայն ոչ բաւեսջիք դըրդուել բընաւ  
 յերկնից յերկիր՝  
 ՂԱրամադդ վեհն հանճարեղ , թէ և սաս-  
 աիկ գընիցէք գուն :

Իսկ թէ ես ինչ կամիցիմ յորդոր փութով  
 ձըդել ի վեր Կ  
 Երկրաւ հանդերձ միալուծ, հանդերձ ծո-  
 վուն քարչեալ հանեմ.  
 Եւ ապա զՈլիմպեայ գագաթանէն պըր-  
 կեմ զշղթայն,  
 Եւ կախեսցի բովանդակ տեսիլ ընդ օդս  
 ըզբօսուցիկ.  
 Այսչափ ես քան ըղդիս և քան զմարդիկ  
 եմ վեհագոյն,  
 (ՀՈՄԵՐ ԻԼԼԻԱ. ԵՐԳ Ը.)

Վ. ԵՐՁ ԳՐԱԳԻՏՈՒԹԵԱՆ

# Յ Ա Ն Կ Ն Ի Ի Թ Ո Յ

## Մ Ա Ս Ն Ա Ռ Ս Շ Ի Ն

### Տ Ր Ա Մ Ա Ր Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն

— Ի՞նչ է տրամաբանութիւնը . . . . .	7
— Չգայունութիւն . . . . .	15
— Իմացողութիւն . . . . .	15
— Լուծումն և բաղադրութիւն . . . . .	20
— Սահման , բաժանում և Դասակարգութիւն . . . . .	22
— Յաղագս իմաստասիրութեան կամ արբանախոհութեան և զանազան տեսակաց նորա . . . . .	25
— Յաղագս իմաստակութեանց . . . . .	52
— Յաղագս նշանաց , լեզուի և մտաց հետանոնց ունեցած վերաբերութեանը . . . . .	59

## Մ Ա Ս Ն Ե Ր Կ Ր Ո Ր Դ

### Ո Ճ

— Յաղագս գեղեցիկ և բարի գրոց կամ դպրութեանց . . . . .	46
— Յաղագս գեղեցիկ և ճաշակի . . . . .	48
— Յաղագս բանադատութեան և կանոնաց . . . . .	54
— Յաղագս հանճարոյ , տաղանդի և երեւակայութեան . . . . .	58
— Յաղագս պատկերաց կամ ձեւոց . . . . .	62

— Յաղագս ոճոյ ընդհանրապէս . . . . .	75
— Հասարակ յատկութիւնք ոճոյ . . . . .	73
— Մասնաւոր յատկութիւնք ոճոյ . . . . .	85
— Պարզ ոճ . . . . .	85
— Բարեխառն ոճ . . . . .	86
— Վսեմ ոճ . . . . .	94
— Ընդհանուր ծանօթութիւն . . . . .	101
— Չեւք բառից . . . . .	102
— Չեւք իմաստից . . . . .	109
— Թէ ի՞նչպէս պէտք է ինքզինք գրութեան արուեստին պատրաստել . . . . .	121
— Յաղագս ընթերցման մատենագրաց . . . . .	122
— Յաղագս նմանութեան . . . . .	125
— Յաղագս թարգմանութեան . . . . .	150

## ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

### ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

— Յաղագս շարադրութեան ընդհանրապէս . . . . .	135
— Յաղագս նկարագրութեան ընդհանրա- պէս . . . . .	139
— Յաղագս մանրասպատմութեան . . . . .	147
— Ստեղծումն . . . . .	149
— Առաջարկութիւն . . . . .	152
— Նախարան կամ առաջադրութիւն . . . . .	152
— Հանդոյց . . . . .	152
— Եւք կամ լուծում . . . . .	158
— Թէ ի՞նչպէս պէտք է զարդարել իրերը . . . . .	162

— Մանրասպատմութեան յատկութիւնները	169
— Մանրասպատմութեան զանազան տեսակները . . . . .	172
— Յաղագս նամակադրութեան ընդհանրապէս . . . . .	175
— Յաղագս նամակի և նամակադրութեան ոճոյ . . . . .	174
— Նամակադրութեան հեղինակք . . . . .	176

ՄԱՍՆ ԶՈՐՐՈՐԳ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

— Տաղ կամ ոտանաւոր . . . . .	182
— Զալի . . . . .	185
— Զեղչումն . . . . .	188
— Հանգիստ . . . . .	189
— Յանգ . . . . .	192
— Թոյլտուութիւն . . . . .	195
— Դիրք . . . . .	194
— Յաղագս բանաստեղծութեան, նրկարագրաց, ձեւոց և սեռից նորա . . . . .	197
— Բանաստեղծութեան գեղեցկութիւնը . . . . .	202
— Յաղագս քնարական բանաստեղծութեան ընդհանրապէս . . . . .	205
— Երգ . . . . .	204
— Դիւցազներգութեան բարոյական մասը . . . . .	206
— Դիւցազներգութեան բանաստեղծական մասը . . . . .	209

— Դիւցաղներդական գործոյն յատկու- թիւնները . . . . .	209
— Դիւցաղներդութեան դերասանք կամ անձինք . . . . .	212
— Դիւցաղներդութեան ձեւը . . . . .	216
— Դիւցաղներդութեան ոճը . . . . .	217
— Դիւցաղնական վէպ . . . . .	218
— Զուարթ և ծաղրաշարժ դիւցաղներդու- թիւն . . . . .	218
— Յաղագս թատրերդութեան ընդհանրա- պէս . . . . .	219
— Թատերական գործողութեան յատկու- թիւնք . . . . .	222
— Թատերական գործոյն ուղղութիւնը կամ ընթացքը . . . . .	226
— Թատերական անձինք . . . . .	229
— Թէ քանի՞ բաժանում ունի ողբերգու- թիւնը . . . . .	250
— Բուն ողբերգութիւն . . . . .	250
— Թատերախաղ և գուսաներդութիւն . . . . .	245
— Յաղագս կատակերդութեան . . . . .	246
— Բուն կատակերդութիւն . . . . .	246
— Ֆարս կամ ժողովրդական կատակեր- գութիւն, անկցորդ տեսարանք, խեղ- կատակութիւն և նուազաւոր կատա- կերդութիւն . . . . .	247
— Յաղագս խրատական բանաստեղծու-	

Թեան ընդհանրապէս . . . . .	248
— Բուն խրատական բանաստեղծութիւն	249
— Խրատական առասպել կամ առակ . .	250
— Յաղագս հովուերդութեան ընդհանրապէս . . . . .	255
— Հովուական Մրմունջք . . . . .	254
— Յաղագս եղերերդութեան ընդհանրապէս . . . . .	255
— Թռուցիկ բանաստեղծութիւնք . . . .	257
— Հանելուկ . . . . .	258

## ՄԱՍՆ ՀԻՆԳԵՐՈՐԳ

### ՀՌԵՏՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՃԱՐՏԱՐԻՍՈՍՈՒԹԻՒՆ

— Յաղագս ճարտարխօսութեան ընդհանրապէս . . . . .	260
— Յաղագս հռետորութեան ընդհանրապէս	262
— Յաղագս երկց պատճառաց . . . . .	264
— Բաժանումն հռետորութեան . . . . .	265
— Յաղագս ստեղծման ընդհանրապէս . .	265
— Չեանարկութիւնք կամ փաստք . . . .	268
— Բարք . . . . .	271
— Կիրք . . . . .	279
— Յաղագս տրամադրութեան ընդհանրապէս . . . . .	287
— Յառաջարան . . . . .	288
— Առաջարկութիւն . . . . .	295
— Ճարտասանական մանրապատմութիւն .	297



— Ապացուցութիւն կամ մաստ . . . . .	299
— Հերքումն . . . . .	302
— Վերջարան . . . . .	303
— Յատակագիծ . . . . .	308
— Գեղեցկաստութիւն կամ վայելչարանութիւն . . . . .	313
— Գործողութիւն . . . . .	314

ՃԱՐՏԱՐԻԹՍՈՍՈՒԹԻՒՆ

ԲԵՐԱՆԱՅԻ ԿԱՄ ԱՐՏԱՍԱՆԵԱԼ

— Ատենական կամ քաղաքական ճարտարաստութիւն . . . . .	317
— Զինուորական ճարտարաստութիւն . . . . .	320
— Դատաստանական ճարտարաստութիւն . . . . .	320
— Յաղագս սրբազան ճարտարաստութեան ընդհանրապէս և քարոզի . . . . .	322
— Ներբողականն . . . . .	325
— Դամբանականն . . . . .	324
— Ակադեմական ճարտարաստութիւն . . . . .	327

ՃԱՐՏԱՐԻԹՍՈՍՈՒԹԻՒՆ

ԳՐԱԻՈՐ

— Բարոյական ճարտարաստութիւն . . . . .	329
— Յաղագս պատմութեան ընդհանրապէս և ճարտարաստութեան նորա . . . . .	330
— Բաժանումն պատմութեան . . . . .	334
— Վէպ . . . . .	338

## ՄԱՍՆ ՎԵՑԵՐՈՐԴ

## ՕՐԻՆԱԿԲ

— Յստակութիւն . . . . .	539
— Շնորհ . . . . .	540
— Ներդաշնակութիւն . . . . .	542
— Փափկութիւն . . . . .	544
— Նոյն . . . . .	546
— Նոյն . . . . .	547
— Նոյն . . . . .	550
— Ճշտութիւն . . . . .	551
— Նրբութիւն . . . . .	555
— Պարզութիւն . . . . .	555
— Ուժղնութիւն . . . . .	560
— Պէսսիմիստութիւն . . . . .	565
— Վսեմ . . . . .	566
— Նոյն . . . . .	567

## ՎԵՐՋ ՆԻԻԹՈՅ

# Վ Ր Ի Պ Ա Կ Ք

Երէ-	Տ-ւ	ՍԻԱՆ,	ՈՒՂԻՂ
11	9	արքայեցւոց	արքայեցւոց
11	12	հետադայ	յետադայ
15	19	թանցրացում	թանձրացում
21	6	մին	միոյն
21	6	միւսն	միւսին
21	8	մասնաւոր	ի մասնաւոր
25	8	իմաստակութեան	իմաստասիրութեան
25	10	տեսականաց	տեսակաց
25	19	սօսիղ	սօսիղ
29	4	էքիքէրմ	էքիքէրէմ
29	22	ով	օ՛վ
52	22	որուն	որոնց
52	22	ստուգութիւն	ստութիւն
56	24	սկզբունքի մը	սկզբունքին
45	20	հաշուող	հաշուոյ
49	19	զաղափար	զաղափար
50	12	խարխուլ է	խարխուլ է
51	17	ըսելը	ըսելը՝
57	18	ի՛րաբար	չ՛րաբար
61	10	նաւաստիները՝	նաւաստիներէն
64	5	թափանծկութիւնը	թափանցկութիւնը
65	8	թարգմանուիլ	թարգմանել
69	7	առիւծ իպոչ	առիւծի պոչ
71	9	այս	այն

72	4	կը ձանցրացնեն	կը ձանձրացնեն
95	24	քեզզ	քեզն
106	12	գարնան	գարնան մէջ
126	18	լեզուովը	լեզուով
151	17	հեղինակները	հեղինակութիւնները
159	12	պէտք	պէտք է
148	17	գրուած	գրուած
168	16	կոնտակեալ	կուտակեալ
171	15	ի ծախտեալն	ի ծխտեալն
171	1	հուկ	հուսկ
172	1	անդրադարձին	անդրադարձեն
184	17	անբառ	անբառ
188	11	ճշտութիւն	ճշդութիւն
190	5	դժբժկամակ	դըժկամակ
190	15	երկին	ընդ երկին
198	24	diavine	divine
200	9	սարասպաքը	սարսպաքը
204	2	նիւթը	նիւթերը
207	17	դիւցազներդական	դիւցազներդական
210	22	անուանեն	ունենան
262	1	կատարելու պէս	կատարելապէս
510	25	իմացողութեանն	իմացողութեան
520	20	ատենական	դատաստանական
559		Գլուխ Ա.	

